



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ
ԺԲ. ՏԱՐԻ
Բացառիկ

Առաջին 25

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ՑԱԿՈՒ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
1980-2005

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»
Մր 10.14

Մաշտոցի Արձագանգ 2005 Տարեկան բացառիկ թիւ

Բովանդակութիւն

- Շնորհակալութեան խօսք մեր ընթերցողներուն, Շաղիկ Պոյաճեան
- Առաջնորդ Սրբազանի խօսք, Խաժակ Արք. Յակոբեան
- Խօսք Հովիւին եւ հոգաբարձութեան, Գառնիկ Քհնյ. Գոյունեան
- 25-ամեակ արժաթեա՛յ, Արմէն Աւագ քահանայ Իշխանեան
- Կիրակնօրեայ դպրոցի քանըհինգամեակ, Վեր. Դոկտ. Մանուէլ Մ. Ճինպաշեան
- Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Տնօրէն Մաշտոց Վրդ. Զօպանեանի խօսքը
- Մեր խօսքը
- Ողջոյն «Մաշտոցի արձագանգ»-ի 12- ամեակին Արմէն Աւագ քահանայ Իշխանեան
- Ծանօթացում «Մաշտոցի Արձագանգ»-ի հետ, Շաղիկ Պոյաճեան
- Հակիրճ տեղեկութիւններ **2004-2005** տարեշրջանի մասին
- Ծնողի տեսանկիւնէն դիտուած, Սօսի Գրիգորեան Դանիէլեան
- Մանուկներու եւ պատանիներու հոգեւոր սնունդը, Շաղիկ Պոյաճեան
- Մարդկային խիղճը, ընթերցում Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսէն
- Եղիցի լոյս... նկար, Հրաչ Թօքաթլեան
- 25 տարիներու աշակերտական ներկայութեան պատկեր
- 25 տարիներու ուսուցչական կազմ

Շնորհակալության խօսք մեր ընթերցողներուն

Մեծ գոհունակությամբ «Մաշտոցի արձագանգ»-ի տարեկան այս բացառիկ թիւով կու գանք անարտելի ամսաթերթիս հրատարակման 12-րդ տարին: Գոհունակութիւն՝ կանոնաւորապէս ամսական հերթականութեամբ մեր հանդէս գալուն համար եւ անգամ մը եւս մեր ընթերցողներուն շնորհակալության եւ քաջալերանքին արժանի եղած ըլլալու համար:

Այս տարի «Մաշտոցի Արձագանգ»-ին բացառիկ առիթ ընծայուեցաւ հրապարակային ներկայացում կատարել: Թէեւ շատ սեղմ թիւով ներկաներու առջեւ ներկայացանք, բայց այդ առթիւ ամփոփեցինք մեր կոչումը, մեր նպատակն ու առաջ տարած աշխատանքը ու այս տուեալները սահմանելով մենք մեզի առաւել եւս ուղղութիւն տուինք:

«Մաշտոցի արձագանգ»-ը տարի մը եւս ուրեմն հանրութեան ներկայացաւ իբր ամբողջութեամբ հայերէն լեզուով, հայկական ինքնութեան ընդհանրապէս եւ հայաստանեայց եկեղեցւոյ յատկապէս վերաբերող նիւթերու մասին տարրական եւ յստակ տեղեկութիւններ հայթայթող ամսաթերթ: Յարգեցինք մեր ժողովրդական ինքնութիւնը եւ մնացինք պարզ լեզուով արտայայտուող եւ ոչ վերլուծական բովանդակութեամբ հրատարակութիւն մը: Մեր լայնատարած եւ տարբեր տարիքի եւ մակարդակներու ընթերցողներ ունենալը կը պարտինք այս ժողովրդական նկարագրին ու կը շարունակենք այդ ուղղութեամբ:

Սակայն մեր գոյութիւնն ու յարատեւութիւնը իմաստ եւ նպատակ պիտի չունենային եթէ չըլլային մեր հաւատարիմ ընթերցողները, Գանատայի մէջ թէ ալլուր, որոնց մենք կը հասնինք մեր օրինակներու բաշխումով կամ համացանցի ցրումով: Մեր ընթերցողները մեր գոյութեան՝ իսկ իմաստ տուողներն են եւ անոնք են որ կեանք եւ հոգի կու տան մեր ալլապէս անկենդան գրութիւններուն: Եւ այդ իսկ պատճառաւ խորին շնորհակալութեամբ կ'ուզենք արտայայտուիլ, սիրելի ընթերցողներ: Շնորհակալութիւն որ ժամանակ տրամադրեցիք մեզ ընթեռնելու, ձեզմէ շատեր ժամանակ տրամադրեցին մեզ ունկնդրելու, իսկ ուրիշներ ժամանակ տրամադրեցին գրութեամբ կամ խօսքով իրենց կարծիքն ու ընդհանրապէս քաջալերանքը փոխանցելու:

Շնորհակալութիւն եւ նորէն զիրար ընթեռնելու սպասումով, ձեզի կը մաղթենք բարի արձակուրդ:

Շաղիկ Պոյաճեան

Գիր Օրհնութեան Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի 25-ամեակին Առիթով

Ազգային կարեւոր իրադարձութիւններով եւ հոգեւորոգ վերանդարձումներով լի տարի մըն է 2005 թուականը՝ Հայոց Գրերու Գիտի 1600-ամեակ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի եւ Կիրակնօրեայ Դպրոցներու հաստատման 75-ամեակ, Մեծ Եղեռնի ցեղասպանութեան եւ Հայոց Նահատակութեան 90-ամեակ եւ նաեւ Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ համայնքին համար յատկապէս՝ Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի հաստատման 25-ամեակ:

Այս բոլոր տարեդարձները անշատաբար եւ հաւաքական կերպով կոչուած են մեզ հրաւիրելու յատուկ խորհողութեան անոնց հայ կեանքին մէջ ունեցած կենսական նշանակութեան եւ դերակատարութեան եւ մեր այսօրուան ու վաղուան առողջ կազմակերպումին մէջ ունենալիք կենսական կարեւորութեան:

Այս բոլոր իմաստներով այս տարին յոյժ նշանակալից տարի մըն է:

Յաճախ եւ շատերս վերոյիշեալ այս կենսական դէպքերուն եւ դարեր ու տարիներ շարունակ մեր հայու ինքնութիւնն ու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ զաւակը ըլլալու իրողութիւնը դրոշմող, զսպանակող ընծայաբերութեանց քովէն պիտի անցնիք անտեղեակ կամ անտարբեր թաղուած մեր կեանքի առօրեայ եռուզերին ու թոհուփոհին մէջ:

Նոր օրերու մեր կեանքին ցաւագին ու դժբախտ իրականութեանց մաս կը կազմէ այս երեւոյթը, որ աննշմար կը սղոսկի մեր համայնքներէն ներս եւ թագուն՝ կը սպառնայ մեր գոյապայքարին:

Մեր ազգի եւ գաղութի կարեւորագոյն իրադարձութիւններուն եւ տօներուն ճշմարիտ անդրադարձումն ու նշումը ոչ դասախօսութեանց եւ ոչ ալ խրախճալից տօնախմբութիւններ կազմակերպելու մէջ կը կայանայ, այլ ամէն բանէ առաջ եւ վեր անոնց դարաւոր խորհուրդը, անոնց հաստատութեան եւ գոյութեան նպատակը՝ անհատապէս ու հաւաքականօրէն մերը ընելն է, անոնց շունչով եւ պատգամով ապրիլն ու գործելն է:

Մեր Տէր Քրիստոս ըսաւ.

«Ես եւ Հայր իմ մի եմք» (Յովհ. Ժ. 30):

Խորունկ պատգամ մը կայ այս կարճ ու պարզ նախադասութեան մէջ:

Մէկ ըլլալու համար մեր հօրը հետ պէտք է լսենք մեր հօր ձայնը, այնքան հարազատօրէն պէտք է լսենք որ կարենանք մեզ շրջապատող աղմուկին մէջ զանազանել ու ճանչնալ անոր ձայնը ու այնքան մտերմօրէն պէտք է ճանչնանք այդ ձայնը, որ կարենան անոր հաւատամօրէն հետեւիլ՝ այսինքն անոր պէս հաւատալ եւ անոր պէս գործել:

Ազգային իրադարձութիւն մը կամ տօն մը նշել իր խորքին մէջ կը նշանակէ անոր դարաւոր խորհուրդը, անոր գաղափարական նշանակութիւնը մերը ընել, մեր կեանքին միախառնել, մեր կեանքին ընթացքը դարձնել՝ այլ խօսքով մեր Տիրոջ պատգամին համաձայն՝ Մէկ ըլլալ մեր Հայրերուն հետ:

Մեր հայրերուն հետ մէկ ըլլալ՝ երբ գրեթէ գիտով եւ Աստուածաշունչի թարգմանութեամբ անոնք կը պայքարին ուժացումին եւ օտարամոլութեան դէմ, երբ անոնք կը պայքարին հեթանոսութեան կեղծ աստուածներուն դէմ: Մեր հայրերուն հետ մէկ ըլլալ՝ երբ անոնք Աւարայրէն մինչեւ Մեծ Եղեռն ու մինչեւ Սարդարապատ եւ Արցախ անոնք իրենց կեանքով եւ արիւնով կը պայքարին իրենց ազգային ինքնիրոյնութեան եւ արժանապատուութեան համար, իրենց կեանքի եւ ընտանիքի բարոյական արժէքներուն համար, հայրենիքին համար, ազատութեան համար, մեր պատմութեան ու մեր հաւատքին համար: Մեր հայրերուն հետ ըլլալ կը նշանակէ անոնց իտեալներով, անոնց տեսիլքներու եւ անոնց սրտի զգացողութեամբը ապրիլ եւ մանաւանդ գործել՝ ստեղծագործել:

Այս բոլորը առաջին հերթին կ'ենթադրեն ընտանեկան կեանք, ընտանեկան դաստիարակութիւն եւ ազգային գիտակից եւ յստակ ուղղութիւն, որու մաս պիտի կազմեն ընտանիքը, դպրոցը, կազմակերպութիւններն ու եկեղեցին: Առանց այս բոլորին միասնական եւ համադաշնուած գործակցութեանը եւ ճիգին մեր աշխատանքները պիտի ջլատուին եւ դառնան ապարդիւն:

Հոս կ'ուզեմ վերջիշեցնել իմ անցեալ տարուայ գրութեանս կարեւոր հատուած մը, որովհետեւ կը հաւատամ, որ հոն արտայայտուած մտածումները նոյնքան իրաւ եւ պատշաճ են նաեւ այսօր երբ կը տօնախմբենք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի հիմնադրութեան եւ առաքելութեանի նուիրեալ ծառայութեան 25-ամեակը:

Մանուկի մը առողջ աճումին ու ազգին ու մարդկային ընկերութեան արժանաւոր զաւակը ըլլալու գրաւականը անոր առողջ դաստիարակութիւն մը ջամփելուն մէջն է:

«Դաստիարակութիւն» հասկացողութիւնը բարդ ու շարունակական ընթացք

մըն է, իրականութեան մէջ մարդ էակը իր կեանքի ամբողջ տեսողութիւնը գիտակից ու անգիտակից դաստիարակութեան հոլովոյթին ենթակայ է:

Սակայն այդ դաստիարակութեան բեղմնաւոր ու կենսական շրջանը մանկութիւնն ու պատանեկութիւնն է, եւ կ'իրագործուի ընտանիք, դպրոց ու եկեղեցի երրորդութեան ճշմարիտ ու դաշն համագործակցութեամբը:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ ու հոն ջամբուած քրիստոնէական դաստիարակութիւնը կը կազմեն հանդիպման վայրը այդ երրորդութեան: Ընտանիքը, դպրոցն ու եկեղեցին՝ իւրաքանչիւրը պէտք է ստանձնէ իր պատասխանատուութիւնը:

Յստակ եւ հասկնալի են, որ ծնողները ծանրաբեռնուած են կենսապայքարի պարտաւորութիւններով, դպրոցները՝ խնդուած ծրագիրներով ու եկեղեցին ու եկեղեցականները առօրեայ պարտաւորութիւններով, սակայն եկէք անկեղծ ըլլանք՝ ո՞ր մէկ ծնողքը կարելիութիւն չունի Կիրակի օրը կէս ժամ իր զաւկին տրամադրելու եւ զայն Կիրակնօրեայ Դպրոց բերելու, ո՞ր մէկ դպրոցը անկարելիութեան դիմաց կը գտնուի կրօնական ու բարոյական դաստիարակութեան տեղ գտնելու իր ծրագրին մէջ, եւ վերջապէս ո՞ր եկեղեցին ու եկեղեցականը դժուարութիւնը պիտի ունենայ ժամանակ գտնելու իր առաքելութեան ամէնէն կենսական հարցովը՝ հաւատաւոր մարդու պատրաստութեամբը զբաղելու, անկեղծօրէն՝ ոչ մէկը:

Քրիստոնէական դաստիարակութեան նուիրուած մարմիններուն, Կիրակնօրեայ Դպրոցի նուիրեալ ուսուցիչ-ուսուցչուհիներուն ու երախտարժան ու մեծապէս գնահատելի տղոց ու աղջիկներուն, որ ի զարմանս շատերուն, այս անտեսուած առաքելութեան նուիրած են իրենց հոգին ու ժամանակը, կը ներկայացնենք մեր անխառն գնահատանքն ու խոր երախտագիտութիւնը, մեծ սիրոյ մը արդիւնքն ու արտայայտութիւնը եղող իրենց նուիրումին համար:

Մեր լաւագոյն բարեմաղթութիւններն ու Օրհնութիւնները Ս. Յակոբ 25-ամեայ Կիրակնօրեայ Դպրոցին, անոր անցեալի ու ներկայի տնօրէններուն եւ ուսուցիչ-ուսուցչուհիներուն եւ սիրելի աշակերտութեան, Աստուծոյ հովանին անպակաս ըլլայ եւ բեղմնաւորէ անոնց հաւատքն ու առաքելութիւնը Ի սպաս Հայ Եկեղեցւոյ պայծառութեան:

Աղօթարար՝

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ

Առաջնորդ

Փանատայի Հայոց Թեմին

Խօսք Հովհիմն եւ հոգաբարձութեան

Ս. Յակոբ Կիրակնօրեայի սիրելի տնօրէնութիւն, ուսուցչական կազմ եւ աշակերտ-աշակերտուհիներ,

Այս տարեշրջանը եւս կրցաք դարձնել հոգեւոր իմաստի ծաղկման ժամանակ մը:

Համայն աշխարհի հայութեան հետ մեր համայնքն ալ Մեծ Եղեռնի 90-ամեակը եւ Հայ Գիրերու Գիւտին 1600-ամեակը յիշատակեց զանազան ձեռնարկներով: Ու տակաւին մինչեւ տարեվերջ որոշ ծրագիրներ պիտի շարունակեն մեզ անոնց ծիրին մէջ պահել:

Մեծ Եղեռնը ոչ թէ միայն հայութեան ահաւոր աղէտը եղաւ, այլեւ անիկա ահաւոր աղէտը եղաւ համայն մարդկութեան, ներառեալ թուրքին: Մեր աղօթքը եւ ճիգը ըլլայ, որ հոգեւոր իմաստութեամբ դարմանուին հոգիները բոլոր մարդոց. մարդ էակը արժանի է սիրոյ, յարգանքի եւ խաղաղ կեանքի:

Հայ Գիրերու Գիւտին 1600-ամեակը ըստ էութեան ուրիշ բան չէ, եթէ ոչ իրաւ աղբիւր մը հոգեւոր իմաստութեամբ ներշնչուելու, դարմանուելու: Վստահաբար մեր Կիրակնօրեան Հայ Գիրերու Գիւտին հաղորդութեամբ սնանեցաւ նաեւ այս տարի:

Համայնքիս համար յատուկ ուրախութիւն է, որ Ս. Յակոբ Կիրակնօրեան այս տարի բոլորեց իր ստեղծման 25-ամեակը: Ան իր առաջին օրէն մինչեւ այս օրս օրինութիւն մըն է համայնքիս: Ի՞նչ լաւ պիտի ըլլար, որ համայնքէս աւելի մեծ թիւով երախաներ ամէն Կիրակի կանոնաւորաբար յաճախէին Կիրակնօրեայ եւ այնտեղ թրծուելով՝ գային ու ծառայէին եկեղեցւոյ հոգեւոր բազմաթիւ եւ բազմազան կարիքներուն: Ամէն պարագայի, այդ յոյսը վառ կը պահենք եւ կը քաջալերենք մեր Կիրակնօրեան, անոր տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին նախանձախնդիր աշխատանքը, ծնողներուն վստահութիւնը եւ աշակերտներուն սէրը:

Գիտենք, որ Կիրակնօրեայ հնոցէն ոսկիները իրենց մաքրութեան պիտի հասնին:

*Հովիւ եւ Հոգաբարձութիւն
Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ*

25-ամեակ արծաթեա՞յ

Արծաթեային վրայ հարցման նշան դրի գիտակցաբար. արդարեւ՝ երբ մեր Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ դպրոցի 25-ամեակը կը տօնենք, կ'ըսենք Արծաթեայ տարեդարձ եւ շարունակաբար՝ որեւէ հաստատութեան կամ ամուսնութեան 50-ամեակը եթէ պիտի նշենք, կ'ըսենք Ոսկեայ եւ 75-ամեակը՝ Ադամանդեայ։ Ու սա պահուս երբ աչքիս աղջեւ կը պատկերանայ այն ահա՛որ դժուարութիւնները, որոնց քաջաբար դիմագրաւեց Կիրակնօրան իր սկզբնական շրջանին, ամենայն իրաւունքով այս տարեդարձը պիտի կոչեմ Ադամանդեայ։

Հոս չեմ ուզեր դարձեալ կրկնել թէ ինչպիսի դժուարութիւններ էին անոնք որոնց ընդմէջէն կատարեալ համբերութեամբ եւ անսահման նուիրումով նահատակուեցան եկող ու գացող բոլոր տնօրէններն ու ուսուցիչները։ Միայն սաքանը կրնամ ըսել թէ եթէ Աստուծոյ հովանին ու առաջնորդութիւնը չըլլար, մարդկային միջոցներով անկարելի էր որ այս սուրբ եւ նուիրական գործը շարունակուէր 25 տարի եւ հասնէր այսօրուան համեմատաբար բարգաւաճ վիճակին։

Անցնող այս դժուարին տարիներուն ո՞վ կրնար երեւակայել թէ օր մը, շնորհիւ տնօրէնութեան եւ ափ մը նուիրեալներու, մեր կիրակնօրեան իր կայքէջը պիտի ունենար եւ հազարաւոր տուններէ ներս մուտք գործելով Աստուծոյ պատգամը պիտի փոխանցէր ոչ միայն փոքրերու եւ պատանիներու, այլ ամէն տարիքի մարդոց։ Այո, առանց բառերը ծամծմելու կ'ըսեմ թէ հրաշք է այս, որ մեր ժողովուրդէն կը պահանջէ առաւել հետաքրքրութիւն եւ գործօն մասնակցութիւն՝ որպէսզի շատ աւելի թիւով փոքրեր ուղղակի, ամէն կիրակի յաճախեն Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ դպրոցը, ու այնտեղէն ստանան արտաքին աշխարհի ապականութեան դէմ պայքարելու ընտիր նկարագիր եւ գիտակից քաջութիւն։

Աստուծոյ փառք տալով այս հանգրուանին համար, ի խորոց սրտի կ'աղօթեմ ամենակալին որ իր օրհնութիւնը անպակաս ընէ թէ՛ Կիրակնօրեային եւ թէ՛ բոլոր նուիրեալներու վրայէն։ Վարձքը կատար բոլոր աշխատողներուն եւ բազմաթիւ 25-ամեակներ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ դպրոցին ։

Հայրական օրհնութեամբ աղօթարար՝
Տէր Արմէն Աւագ Քահանայ Իշխանեան

Կիրակնօրեայ դպրոցի քսանըփինգամեակը

Աստուծոյ փառք կու տանք Սուրբ Յակոբ Եկեղեցիի Կիրակնօրեայ դպրոցին քսանըփինգ տարիներուն համար որ մեզի շնորհեց: Այս կարելոր է իմաստալից դէպք մըն է: Սակայն նոյն ատեն հարց տալու ենք թէ ի՞նչ է իմաստը եւ արժէքը կիրակնօրեայ դպրոցին՝ որ անոր քարոզող դարու ծառայութիւնը կը յիշատակենք:

Առաջին, կիրակնօրեայ դպրոցին իմաստը եւ արժէքը կը կայանայ այն բանին մէջ թէ հոն է որ մանուկը կը սկսի սորվիլ մեր գեղեցիկ ու երկնահամ լեզուով՝ Աստուածաշունչի եւ Յիսուսի մասին: Կիրակնօրեայ դպրոցին մէջն է որ ան կը սորվի Սուրբ Գիրքի պատմութիւնները՝ աշխարհի ստեղծագործութեան, ջրհեղեղի, Բաբելոնի աշտարակին եւ մարդոց լեզուներու բաժանումին մասին: Հոն է որ կը սորվի իր հայրերուն եւ նախնիքներուն հաւատքին մասին, Հայ ազգի հաւատքի հերոսներուն մասին՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի մասին, Վարդանի եւ քաջարի զինուորներուն մասին:

Երկրորդ, Կիրակնօրեայ դպրոցն է որ կը պատրաստէ եկեղեցի յաճախողներու նոր սերունդը: Իրենց զաւակները կիրակնօրեայ դրկելով ծնողները իրենք եւս կը կապուին եկեղեցիին: Այն եկեղեցին որ կիրակնօրեայ դպրոց չունի մեռած եկեղեցի մըն է կամ մեռնելու վրայ է: Անոր համար Աստուծոյ փառք կու տանք Սուրբ Յակոբ Եկեղեցիի Կիրակնօրեայ դպրոցին համար:

Աստուած զօրացնէ կիրակնօրեայ դպրոցին տեսուչն ու ուսուցչական կազմը, հոգեւոր հովիւ տէր հայրը, եւ Գանատահայոց բարեջան առաջնորդ սրբազանը: Մանաւանդ կ'աղօթեմ որ Աստուած օրհնէ մեր Հայ ազգը ի սփիւռս աշխարհի եւ պահէ զայն սատանային բոլոր չար հնարքներէն:

Վեր. Դոկտ. Մանուէլ Մ. Ծինպաշեան
Միացեալ Աստուածաշնչական ընկերութիւններ
Թարգմանութեան խորհրդական

Պատուարժան Տեսչութիւն եւ Ուսուցչական կազմ
Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի
Որ ի Մոնթրէալ - Գանատա

Սիրելի Տեսչութիւն եւ Ուսուցչական կազմ,

Սրտի անհուն ուրախութեամբ եւ ցնծութեամբ իմացայ, թէ արդէն հասած է պահը նշելու Գանատայի, Մոնթրէալ քաղաքի մէջ գործող եւ ներգործող Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի 25 ամեակը:

Սա գաղափարը անմիջապէս կը յիշեցնէ իւրաքանչիւրիս, մանաւանդ որպէս Աւետարանի աշակերտներ, Քրիստոսի առակ խօսքը, որ կ'ըսէր՝ մէկի փոխարէն երեսուն, վաթսուն եւ հարիւր արդիւնք պիտի տայ: Սա կը նշանակէ, այնպէս ինչպէս Սերմնացանը իր ափին մէջ առած սերմը ցանեց, ու այդ սերմը ինկաւ պարարտ հողի մէջ, որպէսզի կարենար երեսուն, վաթսուն եւ հարիւրապատիկ պտուղ տալ, այնպէս ալ Դուք սիրելի Տեսչութիւն եւ Ուսուցչական կազմ, Դուք ալ ձեր սրտերուն մէջ եղած Աստուծոյ խօսքը որպէս սերմնահատիկ ցանեցիք այն անդաստանին մէջ, որ մեր փոքրիկներն են:

Սիրելի Աստուծոյ գործակիցներ, Պօղոս Առաքեալի բառերով՝ շարունակեցէք ցանել, որովհետեւ՝ «վերջին հաշուով բոլորս ալ Աստուծոյ պաշտօնեաներն ենք, որոնց վստահուած է Աստուծոյ գործը: Այլեւս ո՛չ տնկողը կարելորութիւն մը կը ներկայացնէ, ո՛չ ալ ջրողը, այլ աճեցնողը՝ Աստուած»:

Այս մտածումներով, թող Աստուծոյ օրհնութիւնը ընդմիշտ Ձեզի հետ ըլլայ: Սուրբ Զոգիին շնորհքները առատապէս թող Ձեզ պայծառացնեն, որպէսզի աւարտին Աստուծոյ պաշտօնեան ամչնալիք բան չունենայ, այլ ըսէ. «Ձոր ինչ պարտ է առնել, արարաք»:

Զետեւաբար, «Թող մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Զօր Աստուծոյ սէրը եւ Սուրբ Զոգիին հաղորդութիւնը ձեր բոլորին հետ ըլլան: Ամէն»:

Աղօթարար՝
Մաշտոց Վրդ. Զօպանեան

Վարիչ Տնօրէն Զայց. Եկեղեց.
Կիրակնօրեայ Դպրոցներու

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ աւարտել մեր 25րդ տարեշրջանը: Այս տարի նաեւ 12րդ տարեդարձն է մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ 5րդ տարեդարձն է մեր Կայքէջին՝ www.sourphagop.org ին: Այս տարի նաեւ, առաջին անգամ ըլլալով ունինք Երկրորդականի աւարտական մը:

Այս 25 տարիներու ընթացքին հակառակ զանազան խոչընդոտներու եւ շնորհիւ անձնուէր եւ անշահախնդիր ուսուցչուհիներու եւ ուսուցիչներու, տնօրինուհիներու եւ տնօրէններու, Եկեղեցւոյ Հոգաբարձութիւններու, եւ օժանդակ մարմիններու՝ մեր Կիրակնօրեայ Դպրոցը հարիւրաւոր հայ մանուկներու Քրիստոնէական Դաստիարակութիւն ջամբեց՝ Աստուածաշունչի ոգիով, գաղափարներով, բարոյական սկզբունքներով եւ ճշմարտութիւններով. Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հարազատ շունչով, աղօթքներով եւ շարականներով: Եւ տարածուելով Կիրակնօրեայի սահմաններէն շատ անդին, ամսաթերթի եւ կայքէջի միջոցաւ հասաւ հայերու աշխարհի հինգ ձամաքամասերուն վրայ:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»

Մարկոսի Աւետարանին 10.14 ին մէջ կը կարդանք Յիսուսի այս խօսքերը, որոնք 76 տարիներ առաջ դարձան նշանաբանը Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներուն: Երջանկայիշատակ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսը շատ լաւ գիտէր թէ Եղեռնին եւ Կիլիկիոյ պարպումին յաջորդող սերունդին փրկութիւնը կը կայանար դէպի Քրիստոս երթալուն մէջ: Եւ այսպէս, Կիլիկիոյ պարպումէն 6 տարի ետք կը հիմնուէր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները: Իր սկզբնական օրերուն Կիրակնօրեայ Դպրոցները կ'ունենան իր հակառակորդները սակայն Սահակ Կաթողիկոս իմաստութեամբ առաջը կ'առնէ եւ 1930 Յունիս 28-ին կը հրապարակէ իր Կոնդակը ու կը յորդորէ եւ կը հրահանգէ որ ամէն տեղ Կիրակնօրեայ Դպրոցներ հաստատուին՝ հայ մանուկներու կրօնաբարոյական դաստիարակութեան համար:

Մեր Սուրբ Յակոբ Եկեղեցիի հիմնադրութենէն մօտաւորապէս 20 տարի ետք միայն կարելի կ'ըլլար հիմնել մեր Կիրակնօրեայ Դպրոցը: Սակայն իր հիմնադրութենէն ի վեր Կիրակնօրեայ Դպրոցը շարունակած է իր առաքելութիւնը ընդլայնելով իր աշխատանքի դաշտը ժամանակի ընթացքին, հակառակ շատ մը արգելքներու:

Հայ Գիրերու Գիւտի 1600- ամեակ եւ «Մաշտոցի Արձագանգ»

Այս տարի, երբ կը տօնենք Հայ Գիրերու Գիւտին 1600-ամեակը ուրախութեամբ կը հաստատենք թէ մենք տակաւին մեր դասաւանդութիւնները հայերէնով կ'ընենք: Եւ երթալով անկէ անդին մենք 12րդ տարին ըլլալով կը հրատարենք «Մաշտոցի Արձագանգ»ը եւ այսպիսով մեր հաւատարմութիւնը կը ցուցնենք հանդէպ մեր Այբուբենին: Մեզի համար նախապայմանն է Հայերէնով աղօթել, Հայերէնով կարդալ մեր Հայագրեալ Աստուածաշունչը: Մենք կ'ուզենք եւ կ'աշխատինք որ մեր աշակերտներու շրթունքները հայերէնով բացուին եւ սորվին մեր հայանուագ շարականները:

Հայ Գիրերու Գիւտի 1600- ամեակ եւ www.sourphagop.org

Մեզի համար Հայ Գիրերու Գիւտի 1600- ամեակը խրախճալից տօնախմբութիւններ

կազմակերպելու դրդապատճառ չէ, այլ մղիչ ուժ աւելի եւս Հայերէնով հաղորդակցելու իրարու հետ: Մենք մեր 1600-ամեակի պատրաստութիւնները սկսանք 5 տարիներէ ի վեր, երբ որոշում առինք մեր կայքէջը Հայերէնով ընելու: Մենք մեզի պատասխանատւութիւն տուինք յաւելեալ աշխատանք տանելու որպէսզի հայ պատանին եւ երիտասարդը առիթը ունենայ Հայերէնով սորվելու Իր Եկեղեցւոյ եւ Սուրբերոն մասին եւ հայերէնով կարդալու իր Հայրերուն թարգմանած Աստուածաշունչը:

Մեծ Եղեռնի 90-ամեակ եւ Կիրակնօրեայ Դպրոց

Մենք կը հաւատանք թէ Հայօրէն ապրիլն է մեր մեծ Եղեռնի զոհերուն անմահ յիշատակը ոգեկոչելու լաւագոյն եղանակը: Այսօր հիւսիսային ամերիկայի մէջ երբ օրէ օր մենք աւելի եւ աւելի կը նախընտրենք հիւսիսային ամերիկեան բարքերը, մեր հայկականութիւնն է որ տեղի կու տայ: Մեր Կիրակնօրեայ Դպրոցը այս բոլորին մէջ ովասիս մըն է ուր մանուկն ու պատանին շաբաթական երկու ժամուայ համար կը հեռանան աշխարհի իրականութենէն, հասնելու համար Քրիստոսի ճշմարտութեան: Որովհետեւ Յիսուս կ'ըսէ «Ես եկայ՝ որպէսզի կեանք ունենան եւ լեցուն կեանք ունենան»:

Կիրակնօրեայ Դպրոց 25-ամեակէն առի՞ն

Անցեալի փառքերը ապագայ յաջողութիւններ չեն կրնար երաշխաւորել: 1,700 տարիներ առաջ Հայաստանի մէջ Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօնք ընդունիլը մեր ներկայ սերունդին Քրիստոնէական Դաստիարակութիւնը չի կրնար երաշխաւորել: Մեր Կիրակնօրեայ Դպրոցին 25-ամեակի տօնակատարութիւնը չի կրնար վստահեցնել թէ մենք 25 տարիներ ետք դարձեալ հոս պիտի հաւաքուինք տօնելու համար դպրոցին 50-ամեակը:

Հեռու եւ միջին ապագայի համար մտապատկեր (vision) կամ ծրագիրներ ունենալը չի բաւեր, այլ պէտք է նաեւ գործադրութեան դնել: Մենք որպէս Կիրակնօրեայ Դպրոց կ'ընենք մեր կարելին, սակայն շատ բաներ մեր պիտոճէի սահմաններէն դուրս են եւ կը պահանջեն մասնակցութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ պատկանող տարբեր մարմիններուն: Հոս կը ներկայացնենք, մեր Կիրակնօրեայ Դպրոցին պէտքերը յաջորդ 25 տարիներուն:

- Նոր Ծրագիրներու մշակում եւ գործադրութիւն օգտագործելով արդի միջոցներ
- Նոր դասագիրքերու պատրաստութիւն
- Ուսուցիչներու կազմաւորման յատուկ նախաձեռնութիւններ
- Կիրակնօրեայ Դպրոցի ժամերէն դուրս, պատանիներու եւ երիտասարդներու համար կազմակերպուած ընկերային համախմբում Եկեղեցւոյ շուրջն տակ:

Մեր փափաքն ու մաղթանքն է, որ այս 25-ամեակը առիթ մը ըլլայ մեր Եկեղեցւոյ բոլոր մարմիններուն ստանցնելու իրենց պարտականութիւնը՝ պաշտպանելու, պահպանելու եւ նոր իրագործումներով դէպի նոր հորիզոններ ու նոր բարձունքներ առաջնորդելու մեր Կիրակնօրեայ Դպրոցը:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ

Ողջոյն «Մաշտոցի Արձագանգ»-ի 12-ամեակին

Երբ աչքիս առջեւ կը բերեմ «Մաշտոցի արձագանգ»-ի սկզբնաւորութիւնը եւ այսօրուն ներկայացուցած պատկերը, հոգիս հրճուանքով կը բերկրի ի տես անոր արձանագրած բացառիկ յաջողութեան՝ ըլլայ տեսքով եւ բովանդակութեամբ, ու չեմ կրնար զսպել գնահատանքի ամենաջերմ զգացումներս արտայայտելու բոլոր անոնց որոնք աշխատեցան եւ դեռ կ'աշխատին «Մաշտոցի Արձագանգ»-ը դարձնել իսկապէս ամէն դասակարգի պատկանող անձանց հոգեւոր պահանջները գոհացնող բեմի: Վարձքը կատար բոլորին, բայց յատկապէս խմբագիր Ծաղիկ Պոյաճեանի որ իր մասնագիտական բոլոր կարելիութիւնները ի սպաս դրած է այս նուիրական գործին:

Արդարեւ, հարուստ գանձարան մըն է «Մաշտոցի Արձագանգ»-ի բովանդակութիւնը իր բազմակողմանի նիւթերով, որու շնորհիւ ընթերցողը շատ դիւրութեամբ կրնայ իր Աստուածաշնչական գիտելիքները ճոխացնել՝ որովհետեւ թերթին պատասխանատուները կը դրսեւորեն բացառիկ կարողութիւն, շօշափուած նիւթերը հաճելի եւ դիւրահասկնալի կերպով ներկայացնելու:

Որքան պիտի ցանկայի որ այս պարբերականը կարենար հասնիլ մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, որպէսզի անոր էջերէն ճառագայթող պայծառ լոյսով ու կենսաբեր սնունդով կազդուրուած շարականագրին հետ գոչէին. – Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր: Այո, ամէն մէկս ճաշակենք եւ անպայման պիտի տեսնենք թէ «Մաշտոցի Արձագանգ»-ը քաղցր է՝ Աստուծոյ խօսքով եւ շունչով յագեցած:

Ապրին այս աստուծահաճոյ եւ նուիրական գործին զինուորագրուած բոլոր աշխատողները. թող Ամենակարողն Աստուած վարձահատոյց ըլլայ բոլորին, իսկ երկար երկար կեանք պարգեւէ «Մաշտոցի Արձագանգ»-ին որպէսզի ան ընդերկար լուսատու փարոս դառնայ Աստուծոյ խօսքին կարօտ մեր ժողովուրդին:

Աղօթարար՝
Տէր Արմէն Աւագ Քահանայ Իշխանեան

Ծանոթացում «Մաշտոցի Արձագանգ»-ի հետ

«Մաշտոցի արձագանգ»-ը իր ներկայ ձեւին տակ ծնունդ առաւ պարզ հետաքրքրութեան մը որ շինի հանդիսացաւ ըլլալ: Հետաքրքրութիւն տարրական եւ պարզ, եւ միաժամանակ յստակ պատասխան գտնելու համար հայկական ինքնութեան շուրջ դարձող հարցումներու:

Սակայն որովհետեւ հետաքրքրութիւնը շատ տարբեր եւ թիւով մեծ նիւթերու շուրջ կրնայ դառնալ, «Մաշտոցի արձագանգ»-ը իր հետաքրքրութեան տուաւ յատուկ ուղղութիւն, կեդրոնացնելով քրիստոնէութեան եւ մեր եկեղեցւոյ վերաբերող նիւթերուն: Եւ այսպէս, մեր ամսաթերթին մէջ արծարծուող նիւթերը կը վերաբերին առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին, պատարագին եւ հոգն կատարուող ծիսակատարութեան, կրօնապատմական դէմքերուն եւ տօնելի սուրբերուն:

Իւրաքանչիւր անհատ որ պիտի մեկնի այսպիսի հետաքրքրութեան մը անմիջապէս պիտի անդրադառնայ թէ Հայաստանեայց եկեղեցւոյ մասին տեղեկութիւնները առհասարակ չեն տարածուած եւ մանաւանդ մատչելի եւ դիւրահաս ձեւով չեն ամփոփուած:

«Մաշտոցի անձագանգ»-ը որոշ չափով այս պակասը կ'ամբողջացնէ: Մենք ալ գիտենք եւ մեր ընթերցողներն ալ վստահաբար կ'անդրադառնան թէ «Մաշտոցի արձագանգ»-ը Համայնագիտարանի մը գիտական մօտեցումն ու ճշգրտութիւնը չունի, եւ թէեւ համացանցի միջոցաւ լայնօրէն սփռուած է բայց համացանցի ամբողջ տարածքը չունի: Այս բոլորով հանդերձ համոզուած ենք որ կը պատասխանէ այս պակասին: Ան հայերէն լեզուով, հայկական ինքնութեան ընդհանրապէս եւ հայաստանեայց եկեղեցւոյ յատկապէս վերաբերող նիւթերու մասին տարրական եւ յստակ տեղեկութիւններ կը հաշթայթէ:

«Մաշտոցի արձագանգ»-ը իբրեւ բովանդակութիւն

«Մաշտոցի արձագանգ»-ը վերլուծական բովանդակութիւն գրեթէ չունի: Ան համադրական է- synthetic եւ ոչ վերլուծական- analytic: Տեղեկատուական կ'ուզէ մնալ եւ այդ պատճառաւ ընդհանրապէս սահմանումներով եւ տարրական գիտելիքներով կը բաւարարուի: Կ'ուզենք նաեւ ժողովրդային ամսաթերթ մը ըլլալ, եւ մատչելի մնալ բոլոր մակարդակի մարդոց, թէ՛ գիտութեան մակարդակի, թէ՛ հայերէն լեզուական մակարդակի տեսակետէ:

«Մաշտոցի արձագանգ»-ի ներկայացման ձեւը

Ինչպէս տեսանք, ամսաթերթի ձգտումն է ըլլալ տեղեկատուական, տարրական, ժողովրդային: Յարգելու համար այս նպատակը կը փորձենք ներկայացման ձեւը պատշաճեցնել այս յատկանիշներուն:

Ամենէն առաջ եւ նախապայման է որ լեզուն պահենք պարզ եւ խուսափինք ընդհանուրին անհաս կամ յաւակնոտ բառամթերք գործածելէ: Նկատի կ'առնենք մեծ կարեւորութեամբ որ «Մաշտոցի արձագանգ»-ը ձեռքը կ'անցնի ամէն տարիքի անձերու, մանուկ, պատանի եւ չափահաս եւ այդ իսկ պատճառաւ կ'ուզենք զայն ընդհանուրին կողմէն հասկնալի պահել:

Մեր ամսաթերթի ներկայացման ձեւին մէջ նաեւ նկատի կ'առնենք այն իրողութիւնը որն է տարբեր տարիքի եւ կարողութիւններով ընթերցողին կեդրոնացումն ու ուշադրութիւնը լարուած պահել: Այդ նպատակով յօդուածները կարճ են, կէս կամ մէկ էջ, ներառ եւս նկարը:

Գալով Էջադրման կ'ուզենք զայն շարժուն պահել, աչքին միօրինակությունէն խուսափելու համար:

Այս բոլորի պայմաններու գումարման շնորհիւ «Մաշտոցի արձագանգ»-ը մատչելի է տարբեր տարիքի եւ լեզուական տարբեր մակարդակներ եւ կարողութիւններ ունեցող անձներու:

«Մաշտոցի արձագանգ»-ի տարածման միջոցները

«Մաշտոցի արձագանգ»-ը ուղղուած է առաջին հերթին Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն, անոնց ծնողներուն, ընտանիքի միւս անդամներուն, ընտանեկան աւելի լայն շրջանակին:

Այսպէս «Մաշտոցի արձագանգ»-ը ունի թուղթի վրայ որոշ տպաքանակ, շուրջ 150 օրինակներ, սակայն մեր ամենէն աւելի եւ տարածուն, գրեթէ համաշխարհային սփռման միջոցը կը մնայ համացանցը: Մենք ունինք մնայուն կերպով աճող ցրումի ցանկ- mailing list մը: Մեր հասցէն, www.sourphagop.org կը գտնուի այլ կայքէջերու վրայ իբր կապ կամ link այսպիսով կարելիութիւն ընծայելով այլ կայքէջերու ընդմէջէն հասնիլ մեր կայքէջին: Ծնորհիւ ասոր, «Մաշտոցի արձագանգ»-ը արձագանգ գտած է Տուպայ, Աւստրալիա, Սիւրբալ Նահանգներ, Լիբանան, Սուրիա, Եգիպտոս, հնդկաստան, եւ այլուր:

Պատմական

Բայց «Մաշտոցի արձագանգ»-ը միշտ այս ձեւը եւ հերթականութիւն չէ ունեցած: Մեր կիրակնօրեայ դպրոցի պաշտօնական պարբերաթերթը առաջին անգամ լոյս տեսած է Դեկտեմբեր 20, 1992-ին, դպրոցին իսկ աշակերտներուն գործակցութեամբ: Գրեթէ երկամսեայ դրութեամբ լոյս տեսան 13 թիւեր մինչեւ Դեկտեմբեր 1994: 1995-էն մինչեւ

2002, «Մաշտոցի արձագանգ»-ը կանոնաւորապէս հրատարակուեցաւ տարեկան թիւով մը որ կը զուգահիշէր դպրոցական տարեշրջանի աւարտին:

«Մաշտոցի արձագանգ»-ի ծննդեան 10-րդ տարեդարձին առթիւ, Տնօրէնին եւ ուսուցչական կազմին առաջարկն էր «Գործէական» ձեւով յիշատակել այս տարեդարձը: Առ այդ, «Մաշտոցի արձագանգ»-ը վերսկսաւ ամսական հերթականութեամբ հրատարակուիլ ու ստացաւ իր ներկայի ձեւը:

«Մաշտոցի արձագանգ»-ը զուտ հայերէն լեզուով բովանդակութեամբ կը ներկայանայ այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ ուր հայերէնը հայկական շրջանակներուն մէջ իսկ պահպանելը մարտահրաւերի վերածուած է:

«Մաշտոցի արձագանգ»-ը կը ներկայանայ իբր արդի ժամանակաշրջանի արուեստագիտութեան- technology հետ քայլ պահող գրականութիւն տարածող միջոց, յատկապէս իր համացանցի վրայ հրատարակուելու շնորհիւ:

Վերջապէս «Մաշտոցի արձագանգ»-ը հաւատարիմ կը մնայ մեր ազգային երկու յատկանիշներու. հայ՝ իր գործածած լեզուին շնորհիւ եւ Քրիստոնեայ՝ իր նիւթերու բնոյթին շնորհիւ:

ՀԱԿԻՐԾ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ 2004-2005 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

**Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան հովանաւորութիւնը:
Հոգաբարձութեան ներկայացուցիչն է Պրն. Լեւոն Պոյաճեան:**

25-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2004-2005 տարեշրջանը դպրոցին 25րդ տարեշրջանն է: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնները Խաչվերացի Կիրակին՝ Սեպտեմբեր 14, 1980 ին եւ յաջորդական 25րդ տարեշրջանը կը բոլորէ այս տարի: Իւրաքանչիւր տարեշրջան կը սկսի Խաչվերացի Կիրակին եւ կը տեւէ մինչեւ Յունիսի երկրորդ Կիրակին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի Օրերը 10:30-1:00: Դպրոցը ունի մանկապարտէզի 3, Նախակրթարանի 6 եւ երկրորդականի դասարաններ:

12-ամեակ «Մաշտոցի Արձագանգ» ին

Մեր 2004-2005 տարեշրջանի ընթացքին նաեւ հրատարակեցինք, 12րդ տարին ըլլալով, մեր պարբերաթերթը «Մաշտոցի Արձագանգ» Ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգը»-ը կը տպուի եւ կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասներուն վրայ: «Մաշտոցի Արձագանգ»-ը PDF ձեւով կը գտնուի Համացանցի հետեւեալ էջին վրայ www.sourphagop.org/period/barper.htm.

5-ամեակ www.sourphagop.org ին

10 Դեկտեմբեր 2000 ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Ճաշու Աւետարան, Church Timeline, Daily Bible, Տօներ, Բառարան, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Զարգացման Մրցում եւ Խաղեր: 2004-2005 տարեշրջանի ընթացքին մեր կայքէջը ունեցաւ 4,000 է աւելի այցելութիւն:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2004 – 2005 տարեշրջանի իրենց կամաւոր մասնակցութիւնը կը բերեն հետեւեալները.-

Վերժին Գեպթանճեան
Սալբի Բակլայեան
Յասմիկ Նաճարեան
Երան Լոշխանեան
Վերա Կարապետեան
Գարոլ Գաթթանճեան
Ծողիկ Նաճարեան
Աշխէն Իշխանեան
Յասմիկ Գանաճեան
Թորոս Պապիկեան
Ծաղիկ Պոյաճեան
Նիկոլ Դանիէլեան

Մանկապարտէզի Ա. կարգի դաստիարակ
Մանկապարտէզի Բ. կարգի դաստիարակ
Մանկապարտէզի Գ. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Ա. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Բ. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Գ. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Դ. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Ե. կարգի դաստիարակ
Երկրորդականի Զ. կարգի դաստիարակ
Երկրորդականի կարգերու դաստիարակ, Տնօրէն
Խմբագիր «Մաշտոցի Արձագանգ» ի
Լուսանկարիչ

Կազմը գումարեց ժողովներ որոնց ընթացքին արժարժուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներ եւ այլ նիւթեր:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2004-2005 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 100 է, իսկ շաբաթական ներկայութեան միջինն է 59 աշակերտ՝ բաժնուած 10 կարգերու:

ԴՊՐՈՑԻՆ ԱՌՕՐԵԱՆ

2004-2005 տարեշրջանին կիրակնօրեայ դպրոցի առօրեայ յայտագիրը կ'ընթանայ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր կը դասաւանդուին Ս. գրական, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքի եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները կը բաժնուին 4 խումբերու:

- Մանկապարտէզի Ա., Բ., Գ.
- Նախակրթարանի Ա. Բ. եւ Գ. դասարաններ
- Նախակրթարանի Դ. Ե. եւ Զ. դասարաններ
- Երկրորդականի Ա., Բ., Գ. Դ. եւ Ե. դասարաններ

Պահը կ'ընթանայ հետեւեալ ձեւով՝


- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսի ուսուցում:
- Բարոյալից պատմուածքներու պատմութիւն:
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում:
- Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն:

Դասարանային բաժին


Կը դասաւանդուի ըստ դասագիրքերու:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔՈՎ

5 Սեպտեմբեր 2004	Արձանագրություն
12 Սեպտեմբեր 2004	Տարեսկիզբ եւ վերամուտ
19 Սեպտեմբեր 2004	Վարժարանի աշակերտությունը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդուեցաւ:
9 Հոկտեմբեր 2004	Թարգմանչաց տօնի յատուկ յայտագիր:
18 Դեկտեմբեր 2004	Դպրոցի աշակերտությունը գեղարուեստական յայտագրով իր մասնակցությունը բերաւ Ս. Յակոբի Տօնին առիթով կազմակերպուած հաւաքական ճաշի ընթացքին:
2 Յունուար 2005	Ամանորի եւ Ս. Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով:
6 Փետրուար 2005	Վարդանանց եւ Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն: Դպրոցը Մեծ պահքի շրջանին ունի իր աշակերտական պահքի ժամանակացոյցը:
13 Փետրուար 2005	25 Աշակերտներ իրենց մասնակցությունը բերին Գանատայի Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան կազմակերպած Նկարչական մրցումին
20 Փետրուար 2005	Նախակրթարանի եւ Երկրորդականի աշակերտները ներկայ գտնուեցան Նկարչական Յուզահանդէսին
20 Մարտ 2005	Դպրոցս փակ էր Ծաղկազարդի առթիւ:
27 Մարտ 2005	Սբ. Զատկուայ յատուկ նշում:
12 Յունիս 2005	Ամաւերջի հանդէս



2004 - 2005 Տարեշրջանի իրաքանչիւր Դասարանի Արձանագրություն և միջին ներկայություն



2004 - 2005 Տարեշրջանի իրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայություն

Ծնողի տեսանկյունէն դիտուած...

Սրտի անհուն հրճուանքով այսօր ականատես կ'ըլլանք Սուրբ Յակոբ Հայաստանեայց առաքելական Մայր եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի 25-ամեակին:

25 տարիներ առաջ սկսուած գործի մը կանգուն մնալը սիրտս կը լեցնէ խառն զգացումներով... Պահ մըն է, մեր յարգանքի տուրքը տալու բոլոր այն երախտաւորներուն որոնք, մեկնած քրիստոնէաւանդ սիրոյ եւ ծառայութեան սկզբունքէն, դաստիարակեցին ու կրթեցին մոնթրէալահայ մատղաշ սերունդը, տոհմային ամուր կրթութեամբ ու քրիստոնէական եւ հոգեւոր դաստիարակութեամբ:

Անառարկելի ճշմարտութիւն է որ հայ դպրոցը ազգին միջնաբերդն է, որ լծուած է մարդ անհատին մէջ վեհ նկարագրով հայը պատրաստելու, բարոյական մնայուն արժէքներ փոխանցելու եւ անխառն հայրենասիրութիւն շեփորելու: Նման նպատակներ իրագործելու համար, իրենց ուրոյն դերակատարութիւնը ունին հայ եկեղեցին ու կիրակնօրեայ վարժարանը:

Հսկայ առաքելութեան մը կարեւորութիւնը անփոխարինելի է: Կարելի՞ է առաքելութեան մասին խօսք առնել երբ չունինք առաքեալներ: Կիրակնօրեայ դպրոց յաճախող երեխաներն ու պատանիները վկաներն են առաքեալներու ողջ ներկայութեան: Այս շէնքին մէջ անոնք սորվեցան սաղմոսներ, շարականներ, Սուրբ գրային ընթերցումներ եւ այս բոլորին ընդմէջէն՝ սորվեցան որ իրենց մարմինները Աստուծոյ տաճարներն են, հետեւաբար զանոնք պէտք է պահեն մաքուր ու անաղարտ:

Սոյն դպրոցի նպատակներէն մին է նաեւ քրիստոնէական տեսիլքով անհատականութիւն եւ նկարագիր կերտել, հասնելու բարիին, գեղեցիկին ու ճշմարիտին, որպէսզի իւրաքանչիւր անձ յաջողի ունենալ ազնիւ ու մաքուր ընկերային շրջանակ մը:

Իբրեւ ծնողք քաջ կը հաւատամ որ կիրակնօրեայ դպրոցի շրջանաւարտներ պիտի ըլլան մեր տոհմիկ աւանդութիւնները պահպանողները: Անոնք նաեւ պիտի ըլլան պաշտպանը ընտանեկան մեր սրբութիւններուն, յարգելով իրենց հայրերն ու մայրերը: Առաւել, կիրակնօրեայ դպրոցի շրջանաւարտ սերունդի առօրեայ առաջնահերթ պարտաւորութեանց մէջ կ'իյնայ բաժին վերցնել այս կառոյցի տարբեր աշխատանքներուն մէջ, իբրեւ գործունեայ եւ դրական ներդրում կատարող հայորդիներ:

Այս առթիւ կը շնորհաւորեմ գովելի գործունէութիւնը այն բոլոր նուիրեալ աշխատողներուն, տնօրէնութեան եւ դաստիարակներուն, որոնք ի գին մեծ զոհողութեանց եւ ի դէմ ալլազան հոսանքներու, տէր կանգնեցան ու կը շարունակեն անսակարկ աշխատանք տանիլ, կանգուն պահելու այս 25-ամեայ փարոսը:

Ծնորհաւորանքի խօսք ունիմ նաեւ ծնողաց, որոնք իրենց սրտահատորները վստահելով Կիրակնօրեայ դպրոցին, այսօր արդար ցնծութեամբ կը տօնախմբեն սոյն դպրոցի հիմնադրութեան քառորդ դարու տարեդարձը:

Խօսքս կ'ուզեմ ւարտել մեր հայ դասական բանաստեղծութեան ներկայացուցիչներէն Վահան Թէքեանի տողերով.-

«Ինչ որ տուիր, կը դարձնեմ զայն քեզի, ահա, Աստուած:
Հունտեր տուիր, եւ ես զանոնք ցանեցի եւ ահա հունձքն...»

Սօսի Գրիգորեան Դանիէլեան

Մանուկներու եւ պատանիներու հոգեւոր սնունդը

Ներկայ ժամանակաշրջանի յեղաշրջումներէն մէկն է ընտանիքներու մօտ առողջ եւ հաւասարակշռուած սննդականոցներու ստեղծումը: Արդի պրպտումներէն մեկնելով օրէ օր աւելի կը խօսուի առողջապահական սնունդներով սնանելու եւ վնասակար եւ «արագ» կոչուած ուտեստեղէններէն խուսափելու կարեւորութեան մասին:

Սննդականոցի վերաբերեալ այս առողջ ընթացքին զուգահեռ, հարկ է նաեւ մտածել մեր մանուկներուն եւ պատանիներուն... հոգեւոր սնունդի առողջութեան եւ հաւասարակշռութեան մասին: Եւ ճիշդ այնպէս ինչպէս սննդականոցի ծիրէն ներս մենք կը զանազանենք տարբեր տեսակի սննդական խումբեր որոնց զուգահեռ գոյութիւնն ու ներդաշնակութիւնը նախապայման է, այնպէս ալ, հոգեւոր սնունդի պարագային կարելի է ճշդել եւ ճշել յստակ եւ առաջնահերթ տուեալներ որոնց գոյութիւնը անհրաժեշտ է: Ահա անոնցմէ մի քանի օրինակներ.-

Խաղաղութիւն

Բոլոր մանուկներն ու պատանիները կարիքը ունին խաղաղ եւ հանդարտ մթնոլորտի մը մէջ աճելու: Հայր-մայր փոխյարաբերութիւններու խաղաղ բնոյթը- որքան որ մարդկայնապէս կարելի է- ինչպէս նաեւ ծնողք-զաւակ կապի հանդարտ բնոյթը միայն առաւելութիւններ կրնան ներկայացնել ընտանիքի ընդհանուր մթնոլորտին համար, հոն աճող զաւակներուն շնորհելով ներքին ապահովութեան եւ խաղաղութեան անսահման զգացում մը:

Ժամանակ

Ամենէն սուղ եւ ներկայիս հագուագիւտ «սնունդ»ներէն մէկը: Մեզմէ ո՞վ կրնայ սակայն հակառակն ըսել թէ ծնողներ պարտին առաւել եւս ժամանակ տրամադրել իրենց զաւակներուն, անկեղծօրէն եւ իսկական հետաքրքրութեամբ բաժնելու համար անոնց հետ իրենց ժամանակէն մէկ բաժինը:

Ճշմարտութիւն

Ինչ որ ըլլայ պարագան, ծնողները պարտին իրենց զաւակներուն փոխանցել ճշմարտութիւնը, խուսափելով կեղծիքէն: Նկատի առնելով սակայն թէ ամէն ճշմարտութիւն ըսելն ալ լաւ չէ անպայման, կարելի է միշտ ճշմարտութիւնը ըսել, բայց ոչ ամբողջ ճշմարտութիւնը: Քիչ մը փորձով...

Ողջ օրինակ

Մանուկները ինչպէս նաեւ պատանիները, նուազ ակնյայտ ձեւով, կը սորվին դիտելով իրենց ծնողները: Ծնողքը իր զաւակին առաջին կարգի եւ ազդեցիկ օրինակն է: Եթէ անկեղծ զաւակներ կ'ուզենք ունենալ, պարտինք ըլլալ անկեղծ: Եթէ հանդարտաբարոյ զաւակներ կը ցանկանք, պարտինք ըլլալ հանդարտաբարոյ: Եւ այսպէս շարունակ...

Գուրգուրանք

Ի՞նչ կայ աւելի սննդարար եւ հոգի պարարտացնող մանուկի մը համար եթէ ոչ զաւկի հանդէպ ծնողքին գուրգուրանքը: Թէեւ տարիներու ընթացքին եւ զաւակներու տարիքին համեմատ սէր եւ գուրգուրանք արտայայտելու ձեւերը կը փոխուին ընդհանրապէս նուազ բացաչայտի վերածուելով, ամէն ծնողք պարտի գտնել ձեւը իր զաւկին փոխանցելու սէր եւ գուրգուրանք, խօսքով, շարժումներով, անդրադարձներով կամ այլ արարքներով:

Կարգապահութիւն

Թէեւ կրնայ այս տարօրինակ թուիլ, բայց մանուկները մանաւանդ կը սիրեն կարգապահութիւնը, ընդհանուր առմամբ. շատեր պիտի անմիջապէս աչքի առջեւ բերեն իրենց ծանօթ բացառութիւններ: Յստակ սահմանները արտօնուածին եւ արգիլուածին միջեւ միշտ ալ ապահովութիւն կը ներշնչեն մանուկներուն մօտ եւ յստակ ձեւով կը գծեն կեանքի օրէնքներուն յատակագիծը ըստ որուն մանուկը կ'ապրի ներդաշնակ: Պատանիներու պարագային դժուար է հաւատալ թէ որեւէ ձեւի կարգապահութիւն կարելի է կիրարկել, սակայն կարելի է մտածել թէ գաղտնիքը կարգապահութիւնը հաստատելու ձեւին եւ մօտեցումին մէջն է աւելի քան հաստատուած օրէնքները իրենք: Հոս ալ... յաջողութիւն մեր բոլորին...

Այստեղ տրուած են Հայոց այբուբենի «Ա» Էն մինչեւ «Ս» տառերը: Քանի՞ վարկեանէն կրնաս գտնել տրուած բոլոր տառերը՝ ըստ այբուբենի հերթականութեան:



Մարդկային խիղճը

Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, «Աստուածաբանություն», Գանատա 2005, էջ 307:

Աստուծոյ ներկայութիւնը մարդ արարածի կեանքէն ներս տարբեր տարբեր ձեւերով կ'արտայայտուի: Աստուածայինն ներկայութիւնը մարդկային արարքներուն մէջ կարելի է ի յայտ բերել մարդոց գործելակերպէն, մտածելակերպէն կամ ապրելակերպէն:

Այս բոլոր իրողութիւններու կարգին, կայ այլ իրականութիւն մը որ բարձրապէս կը վկայէ աստուածային ներկայութեան մասին մարդկային կեանքէն ներս, այդ ալ մարդկային խիղճն է: Խիղճը կարելի է նկատել իբր Աստուծոյ կամ Սուրբ Հոգիին ձայնը մարդուն մօտ: Սակայն ճիշդ ինչ է խիղճը, ինչպէս կը գործէ ան եւ ինչ ձեւով կ'արտայայտուի:

Այս հարցականներուն պատասխանին հանդիպեցայ վերջերս, Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի վարդապետ եղած օրերուն գրած «Աստուածաբանություն» հատորին մէջ, «Քրիստոնէական բարոյագիտություն» գլուխին տակ: Վեհափառը, կամ այդ օրերուն «վարդապետը», այսպէս կը գրէ մարդկային խղճին մասին:

«Ի՞նչ է խիղճը

Խիղճը մեր մէջ իրողութիւն եղող ներկայութիւն մըն է, որ անկախաբար մեր մտքէն, կը հրահանգէ մեզի, կ'ուղղէ մեր կամքը, կը դատէ մեր արարքները: Ներքին ձայն մըն է կարծէք անհիկա, զոր կը լսենք յաճախ, բայց մանաւանդ՝ երբ իր հրահանգին դէմ գացած ենք, իր մատնանշած ուղղութեան հակառակ շարժած: Կը զգանք զայն իբր խայթի կսկիծը. այդ զգացումը խղճահարութիւն կամ խղճի խայթ կը կոչենք:

Տեսակ մը արթուն պահակն է անհիկա մեր մէջ, միշտ մեր պարտականութիւնը մեզի յիշեցնող եւ անոր ուղիղ գործադրութեան վրայ հսկող: Բարոյական կեանքին մէջ մեր ընելիքին կողմնացոյցն է. ձեւով մը աստիճանաշափը նաեւ: Իր տարբերութիւնը բանականութենէն կը կայանայ անոր մէջ, որ մեր արարքներուն կատարման ատեն բանականութենէն շատ առաջ ան իր վճիռը, հրահանգը կու տայ,

մինչ միտքը բանականութեան պէտք ունի՝ մտածելու, խորհրդածելու, կշռադատելու, պարագաները քննելու, օրէնքները վերլուծելու, եւ այլն: Հետեւաբար, խիղճը մեր մէջ տեսակ մը բնական եւ անմիջական վճիռ արձակող ոյժ մըն է, մեր կամքին ուղղութիւն տուող, մեր արարքները դատող:»

Աւելի հեռու, Վեհափառ հայրապետը այսպէս կը նկարագրէ խիղճը իբր Աստուծոյ ներկայութիւն մարդուն կեանքէն ներս:

« Խիղճը՝ Ձայն Աստուծոյ

Երբ ուշադրութեամբ եւ սերտ մտերմութեամբ ունկնդրենք խղճի ձայնը, կը զգանք անմիջապէս, որ անհիկա մեր մէջէն կու գայ, բայց մեզի չի պատկանիր: Մեր ներսէն կը խօսի, բայց կ'արձագանգէ կարծէք մեր մէջ իբրեւ ուրիշ ձայն մը: Որովհետեւ յաճախ կը նկատենք որ անհիկա անձին փափաքներու, կամքի բնական մղումներուն հակառակ կ'երթայ, նոյնիսկ երբեմն մեր բանականութեան մատնանշած ուղիէն տարբեր ուղի ցոյց կու տայ մեզի:

Եւ միւս կողմէ, երբ անդրադառնանք, որ իր մատնանշած ուղին բարիքի կ'առաջնորդէ, այն ատեն մենք բնականօրէն կը տարուիմք մտածելու, որ խիղճը կը բերէ մեզի բարիին, կատարելալին ներկայութիւնը. մեր մէջ է եւ մեր արարքներուն մէջ կը ցոլացնէ զանոնք:

Ահաասիկ ասոր համար է, որ խղճին համար յաճախ կը գործածուի «Աստուծոյ ձայն» բացատրութիւնը: Գեղեցիկ է Օգոստինոսի այս միտքը.

«Աստուած հոգիի մէջ է: Ան բարիներուն խիղճը իբրեւ աթոռ ունի սրտին մէջ, Աստուծոյ աթոռը մարդոց սրտերուն մէջ է: Քու խղճիդ մէջ որեւէ մարդ չի կրնար մտնել, հոն կան Աստուած եւ դուն»:»

Երջանկայիշատակ վեհափառին այս միտքերը ընթեռնելէ ետք, մեզմէ իւրաքանչիւրը կրնայ հարց տալ ինքն իրեն թէ ի՞նք ինչ ձեւով կը յարաբերի իր խղճին հետ երբ ան իր ձայնը լսել կու տայ առօրեայի ընթացքին:

Եղիցի լոյս... Գկար

Առակը կ'ըսէ թէ մէկ պատկեր հազար խօսք կ'արժէ... Բայց երբ մտածենք այս իրողութեան մասին, շատ մը հարցականներու առջեւ կը գտնուինք երբ խօսքը կը վերաբերի Հայաստան աշխարհի աղօթավայրերուն՝ ըլլան անոնք վանքեր, պատմական եկեղեցիներ թէ շատ համեստ եւ պարզ մատուրներ: Վերջին Հայաստան այցելութեանս ընթացքին, գտնուեցայ նոյն այն իրականութեան առջեւ որուն դիմաց գտնուած էի նախորդի, երբ մեր հայրենիքի զանազան եկեղեցիները կ'այցելէի: Իսկապէս խորհրդաւոր եւ անզուգական մթնոլորտի մէջ կը մտնէ իւրաքանչիւր հաւատացեալ: Միայն մօտենալով իսկ միջնադարեան խորանի մը, ուղղակի հաղորդակից կ'ըլլանք Ամենակալին եւ Ստեղծիչին հետ: Նոյնիսկ անհաւատը չի կրնար անտարբեր մնալ այդ խորհրդաւոր կոթողներուն առջեւ եւ կարծես թէ տեղը քեզ կը մղէ ինքնամփոփումի եւ աղօթքի:

Նորէն կը մտածեմ առակին մասին եւ կու գամ այն եզրակացութեան թէ հազար Գկար իսկ չի բաւեր արտայայտելու համար այդ խորհրդածութեան պահը որ մարդ կրնայ ապրիլ երբ մտնէ իւրաքանչիւր ճարտարապետական կոթողէ ներս, կոթողներ որոնք կու գան իմաստաւորելու մեր դարաւոր քրիստոնէական ժառանգութիւնը:

Ճարտարապետական կ'ըսեմ որովհետեւ այդ ժամանակի հասկացողութեամբ արուեստագէտ բառը գոյութիւն իսկ չունէր: Իտալացի ճարտարապետ Ֆիլիփո Պրիմելեսքիէն (1377-1446) ետք է որ արուեստագէտ-մտաւորականի հասկացողութիւնը տարածուեցաւ արեւմուտքի մէջ: Սակայն 10-րդ դարուն եւ մինչեւ Բագրատունեաց եւ Կիլիկեան թագաւորութիւնները, հայ ճարտարապետը կամ արուեստագէտը արդէն իսկ մտածած եւ իրագործած էր յուշակոթողներ, եկեղեցիներ, պալատներ, բերդեր որոնք կը պարունակէին ծրագրուած եւ պատմողական քրիստոնէական պատկերագիտութիւն (iconographie):

Կը մէջբերեմ պատմական Վասպուրականի Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցիին օրինակը, որ տեսակին մէջ, իւրաքանչիւր կոթող մըն է արեւելեան քրիստոնէական ճարտարարուեստի իրագործումներու շարքին: Դասուած Իւնէսքոյի համաշխարհային ժառանգութեան կոթողներու ցանկին վրայ, այս եկեղեցին դժբախտաբար օրէ օր երթակալ է քանդումի եւ ամէն տեսակի սրբապղծումի: Յիշեցի այս եկեղեցին պարզապէս օրինակ մը տալու համար հայկական եկեղեցիի մը որ իր խորքով եւ շինարարական արուեստով կը հանդիսանայ իբրեւ 10-րդ դարու Վասպուրականի հայ քրիստոնէաներուն լաւագոյն միջոցը՝ հաւատացեալ ժողովուրդը հաղորդակից դարձնելու հին եւ նոր կտակարաններու տարբեր պատմութեան: Ճարտարապետ եւ քանդակագործ Մանուէլի ծրագիրը կը հանդիսանայ իբրեւ ներկայացում մը Աստուածաշունչին, որմնաքանդակուած եկեղեցւոյ արտաքին պատերուն վրայ եւ որմնակարուած եկեղեցւոյ ներքին կառուցուածքին վրայ:



Նոյնանման օրինակ մըն է Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան Գանձասարի վանքի Սուրբ Յովհաննու Մկրտիչ եկեղեցին (1216-1260) որուն ներքին պատերուն վրայ կրնանք կարդալ, մոմերու լոյսով, վանքի՛ն ընդհանրապէս եւ եկեղեցւո՛յ մասնաւորաբար, պատմականը: Այցելուն ինքնաբերաբար հաղորդակցութեան մէջ կը մտնէ բանական, իմացական եւ հոգեմտաւոր աշխարհի մը հետ, որ կը հասնի անցեալ դարերէն: Այս պարագային կը զգացուի թէ պայման չէ իսկապէս ըլլալ հայ, քրիստոնեայ կամ հաւատացեալ, ըմբռնելու համար վայրին կախարդական հմայքը: Բայց եւ այնպէս, հայ հաւատացեալ քրիստոնեային համար, Գանձասարի վանքը ուխտագնացութեան եւ խորհրդածութեան իտէալ վայր մըն է:

Հայաստանի Հանրապետութեան տարածքին անթիւ են այսպիսի ուխտավայրերը: Իւրաքանչիւր եկեղեցի ունի իր պատմութիւնը, միացած հայ մշակոյթի տարբեր ժամանակաշրջաններու: Նաեւ կարելոր է յիշել թէ իւրաքանչիւր կրօնական կեդրոն ունի իր սեփական սուրբը, մարտիրոսը կամ նահատակը, սովորոյթ մը որ կու գայ վաղ քրիստոնէական սովորութենէն, անուանակոչելու աղօթատեղի (martyrium) մը մարտիրոս սուրբի մը անուամբ : Սուրբ Էջմիածնի պարագան կրնայ լաւագոյն օրինակը ըլլալ այս անուանակոչութեան հայկական ըմբռնումին, Սուրբ Հռիփսիմէ եւ Սուրբ Գայեանէ զոյգ եկեղեցիներով:

Պատմական եւ ճարտարապետական գոհար մըն է նաեւ Ամաղու Նորավանքի Սուրբ Աստուածածին եկեղեցին (ճարտարապետ Մոմիկ), որ իր երկարկանի մատուրներով ձօն է ոչ միայն Սուրբ Աստուածածնին, այլեւ Սիւնիքի Օրբէլեաններուն, որոնց շնորհիւ Եղեգնաձորը ապրեցաւ իր ոսկեդարը:



Անձնական եւ զգացական աշխարհի սահմաններէն դուրս կու գայ այս բոլորը երբ կը փորձէք պարզ զբօսաշրջիկի լուսանկարչական գործիքով կասեցնել այս կամ այն կոթողը, յուշարձանը կամ համեստ խաչքար մը ծառի մը շուքին: Կը փորձէք ներկայ ժամանակը կեցնել լուսանկարչութեամբ եւ արեւմտեան քաղաքակրթութեան եւ արդի ժամանակներու քառասլին արագութեան հոսանքին մէջ, պահել քանի մը յիշատակ negatif-ի մը վրայ: Կարծես կը փափաքիք անկարելին... կասեցնել աստուածային ժամանակը որ կու գայ անցեալէն եւ կը մեկնի յաւիտենականութեան գիրկը:

Հրաչ Թօքաթեան

Պահուած բառ

հ	ե	ո	ա	տ	ե	ս	ի	լ	ք	ո	լ	ն
ա	ր	ս	ի	ն	է	պ	կ	ա	ն	չ	ե	ն
մ	ա	ր	մ	ի	ն	չ	ե	լ	ջ	ի	ն	ջ
ա	մ	ա	ն	ո	ր	ա	ո	լ	ո	ն	կ	ա
ր	ա	մ	ա	կ	ր	կ	ա	ն	ա	չ	ա	ր
ձ	տ	ի	ց	ա	ն	ց	ս	ա	տ	ա	ր	ա
ա	ն	տ	ո	լ	ն	ի	է	պ	ա	ր	ա	ն
կ	կ	ա	ղ	կ	ա	ն	ձ	ե	լ	ա	հ	ա
ն	ա	պ	ո	լ	չ	զ	ն	կ	ա	տ	ա	կ
ո	տ	ա	ր	պ	ա	հ	ա	ր	ա	ն	ն	ա
ց	ա	ն	կ	ա	պ	ա	տ	ո	լ	հ	ա	ն

ահա
աննա
ամանոր
արսիճէ
անտունի
ապուշ
ատակ
ակնոց
կատակ
կանչեն
կանաչ
կաղկանձել

կամար
կեռաս
հեռատեսիլ
համարձակ
մարմին
մնացող
մինչեւ
ննջարան
նկարահան
նուռ
ողորկ
ոչինչ

պատուհան
պարան
պահարան
ջինջ
սատար
սրամիտ
տապան
տանձ
ցանկապատ
ցանց
քուն

**Պահուած բառ՝
ծաղկանոց**

Պահուած բառ

հ	ա	յ	ե	լ	ի	ն	չ	պ	է	ս	ա
ա	պ	ա	կ	ի	պ	ա	պ	ա	ր	ա	ն
ս	ո	լ	ր	բ	ա	թ	ն	ն	լ	ո	տ
ո	բ	ա	ն	ա	լ	ի	ի	ն	չ	ր	է
լ	ա	ր	ո	ն	տ	լ	յ	օ	ժ	ա	ր
ն	պ	ա	տ	ա	կ	ր	ա	ք	ա	ր	ա
կ	ի	մ	ի	ն	ս	ր	լ	ի	ն	ա	ա
ն	մ	օ	ն	թ	ր	է	ա	լ	ե	ա	կ
դ	ա	տ	ա	ր	ա	ն	ր	ե	կ	ա	ծ
ի	ն	ա	տ	ա	մ	կ	ա	ծ	յ	ա	կ
ր	ա	ր	ա	տ	շ	ա	հ	ա	լ	ո	ր
ա	յ	ր	ե	լ	ա	կ	ա	ղ	ե	տ	ք

արամօ
ահաւոր
անտէր
ապակի
ալեակ
ապարան
ածելի
այրել
անիւ
արար
դատարան


բանալի
ելակ
թիւր
իմանայ
իցչպէս
իմինս
ինչ
լիբանան
կայծակ
կրաքար
հայելի

հաշտարար
հարաւային
մօնթրէալ
մատանի
յօժար
նոր
նպատակ
ծակեր
ուրբաթ
ունկնդիր
սուրբ

սունկ
տուն
տեղակալ
օտար

**Պահուած բառ՝
արարողութիւն**

25 տարիներու Աշակերտական Ներկայութեան Պատկեր



'80-'97 տարիներուն աղբիւրը, Տէր Հօր տեղեկագիրն է

'97-'05 տարիներուն աղբիւրը, Կիրակնօրեայ Դպրոցի տոմարն է

25 տարիներու Ուսուցչական կազմ

Մականուն	Անուն	Առաջին Տարեշրջան	80	81	82	83	84	85	86	87	88	89	90	91	92	93	94	95	96	97	98	99	00	01	02	03	04
Ապտալեան	Վալա	1980	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ										
Ապտալեան	Զաւէն	1980	Դ	Դ	Դ	Դ	Դ	Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ										
Պաղչեմեան	Այտա	1980	Օ																								
Քիւփեան	Պէթի	1980	Դ	Դ																							
Մանուկեան	Պայծառ	1980	Դ	Դ																							
Փալանեան	Ծարուբին	1980	Տ	Տ	Տ	Տ	Տ																				
Ինճեմիկեան	Թամիկ	1981		Դ	Դ	Դ	Դ																				
Քիւփեան	Հոուի	1982			Դ	Դ	Դ	Դ	Դ																		
Երեցեան	Սօսի	1982			Դ	Դ	Դ																				
Տէր Աղամեան	Աղամի	1983		Դ	Դ																						
Թաթեան	Գլարա	1984					Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ										
Թաթեան	Գարրիէլ	1984					Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ										
Չինչիեան	Անի	1986							Դ	Դ	Դ	Դ	Դ														
Տիրատուրեան	Գառնիկ	1987							Դ																		
Շէլալեան	Արտեմիս	1987							Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ						
Զարգաւաթեան	Վիքի	1987							Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ							
Տեմիրճեան	Մարօ	1991												Դ													
Պապիկեան	Թորոս	1994															Դ			Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Եաղմեան	Անի	1994															Օ	Դ									
Արթինեան	Սիլվա	1995															Դ										
Նաճարեան	Շողիկ	1995															Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
Բանոնեան	Անտիս	1995															Դ	Դ									
Զարգաւաթեան	Հուրի	1995															Դ										
Ալախալտոնեան	Մարի-Ռօզ	1995															Դ										
Քասապեան	Թակոր	1995															Դ										
Տէկիրմեմեան	Հուրի	1996															Օ	Դ									
Գանաճեան	Թամիկ	1996															Դ	Դ				Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
Գըլըմեան	Անի	1996															Օ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
Լոշխանեան	Երան	1996															Օ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
Նաճարեան	Թամիկ	1996															Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
Հատիտեան	Ներսէս	1997																Դ	Դ	Դ	Դ	Օ					
Թակորեան	Անի	1997																Օ									
Թակորեան	Դաւար	1997																Օ	Դ	Դ							
Քէօսէեան	Մարիա	1997																Օ	Օ								
Լոշխանեան	Գէորգ	1997																Օ	Օ								
Մարտիրոսեան	Գօգօ	1997																Օ	Ա								
Մարտիրոսեան	Սալբի	1997																Դ	Դ								
Նիլեան	Անի	1997																Դ	Դ								
Թաշմեան	Զարմինէ	1997																Օ	Օ	Դ							
Նոյսուտեան	Կարօ	1998																	Դ	Օ							
Իշխանեան	Վարուժ	1999																			Դ	Դ					
Գէպթեանեան	Գարու	1999																			Դ			Դ	Դ	Դ	Դ
Գէպթեանեան	Մակի	1999																			Դ	Օ					
Նիլեան	Նանօր	1999																			Դ	Օ					
Բակլալեան	Անի	2000																				Օ					
Օֆաննէսեան	Զարի	2000																				Օ					
Զարբազեան	Անահիտ	2000																				Օ					
Կարապետեան	Վերա	2000																				Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
Խշիշեան	Անի	2000																				Դ	Օ				
Պոյաճեան	Ծաղիկ	2000																				Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ
Պապիկեան	Բաֆֆի	2000																				W	W	W	W		
Քէօսէեան	Մարիա	2002																						Դ			
Ասատուրեան	Սարգիս	2002																						Դ			
Բակլալեան	Սալբի	2002																					Օ	Դ	Դ		
Գէպթեանեան	Վերժին	2003																							Դ	Դ	
Իշխանեան	Աշխէն	2003																							Դ	Դ	
Քուլուքեան	Իզապէլ	2003																								Դ	

Դ դաստիարակ, Տ Տնօրէն, Օ Օգնական, Մ Մաշտոցի Արձագանգ, W Webmaster

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ԺԲ. Տարի

Խմբագրական Կազմ

Խմբագիր՝
Աշխատակիցներ՝

Ծաղիկ Պոյաճեան
Յասմիկ Նաճարեան
Գարուլ Գաթթանճեան
Երան Լոշխանեան
Ծողիկ Նաճարեան
Նիկոլ Դանիէլեան
Թորոս Պապիկեան

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»-ը Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք
www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն
«Պարբերաթերթ»-ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք **www.sourphagop.org**, ձախ
կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»-ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր
օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

*Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ
Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը.-*

*Ուսուցիչներ՝ Վերժին Գէպթանճեան, Սալբի
Բակլաեան, Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխանեան, Վերա
Կարապետեան, Գարուլին Գէպթանճեան, Ծողիկ
Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան,
Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ
Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Ծաղիկ Պոյաճեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 1



Սեպտեմբեր 2004

Խաչվերաց

Կամ խաչ
բարձրացնելու տօն:
Ինչպէ՞ս մեզի
հասած է այս տօնը:
Աւելիին տեղեկացիր
այս թիւով:



Արագածոտնի մարզի Տեղեր գիւղի
վանքը, 13րդ դար

Հայաստանի Արագածոտնի մարզին
մասին ընդհանուր տեղեկութիւններ
«Ծանօթութիւն Հայաստանի հետ»
յօդուածով:

«Հետեւաբար,
ինչպէս որ մէկ
հոգիին յանգանքով
բոլոր մարդիկ
դատապարտութեան
ենթակայ եղան,
այնպէս ալ մէկ
հոգիին արդար
գործով բոլոր
մ ա ռ դ ի կ
կ'արդարանան ու
կեանք կ'ունենան»:

Ծարունակութիւնը
կարդա՛ այս
ա մ ս ու ա յ
Ա լ ե տ ա ր ա ն ի
հատուածին մէջ:

Մեզմէ ո՞վ ծանօթ չէ Սուրբ
Գեորգ զօրավարի անունին: Ինչո՞ւ այս
սուրբը առհասարակ «վիշապասպան»
անուան տակ ճանչցուած է... այս
մասին կարդա՛ Մաշտոցի արձագանգի
այս թիւով:

Այս թիւով

- Ադամ եւ Քրիստոս
- Ծանօթացում
- Հայաստանի հետ
- Արագածոտնի մարզ
- Սուրբ Գեորգ զօրավար
- Խաչվերաց
- Պահուած համարը
- Աւետարանը պատմուած փոքրերուն
- Խաչքառ
- Ո՞րն է ճիշդ պատասխանը
- 24-րդ տարեշրջանի ամսվերջի հանդէս

Սեպտեմբեր 2004

Վերսկիզը

Կիր.	Բշ.	Գշ.	Դշ.	Եշ.	Ուր.	Շաբ.
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

12	Խաչվերաց
21	Հայաստանի հանրապետության տօն
25	Սուրբ Գեորգ
26	Վարագայ Սուրբ խաչ

Առաքինություն խնդրելու աղօթք

Սուրբ Աստուած, անմահ եւ հզօր դուն որ սրբաբանութեամբ եւ անդադրում օրհնաբանութեամբ կը պաշտօնիս հրեղէն եւ անմարմին հրեշտակներուն կողմէ: Մենք, քու ձեռքովդ ստեղծուած բանաւոր հօտդ, քու առատաբաշխ գթութիւնդ կը հայցենք:

Ընդունէ՛ մեր շրթներէն ու մեր սրտերէն դուրս եկած բանաւոր ընծաները: Ով Տէր, մեր մտքերուն մաքրութիւն տուր, սրտերուն՝ գղջում, շրթներուն՝ ճշմարտութիւն, աչքերուն՝ արցունք, հոգիներուն անբծութիւն եւ մարմիններուն սրբութիւն:

Լեցո՛ւր մեզ ամէն առաքինութեամբ, պայծառ հաւատքով, աներկբայ յոյսով եւ մաքուր սիրով: Եւ զարդարէ՛ մեզ խոհեմութեամբ, ողջախոհութեամբ, արիութեամբ եւ արդարութեամբ:

Մեծ ուրախութեամբ Մաշտոցի Արձագանգ ամսաթերթը ահա կը վերսկսի իր հրատարակման աշխատանքները 2004-2005 թուականին համար: Ամառնային դադարը մեզի առիթ ընծայեց որ արժեւորենք մեր ամսաթերթը, անոր ներկայացման ձեւն ու նիւթերը: Շարունակեցինք ստանալ մեր ընթերցողներուն կողմէ դրկուած գնահատական գիրերն ու խօսքերը որոնք միշտ ալ դրական եւ քաջալերական հանդիսացան:

Այս տարի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի 25-ամեակն է: Մեր համոզումը այն է որ տարեդարձ մը յիշատակելու լաւագոյն ձեւը արդիւնաբեր գործ մը տանիլն է եւ այդ ուղղութեամբ փորձեցինք Մաշտոցի Արձագանգի էջերէն ներս տեղ տալ նոր նիւթերու: Այսպէս այս տարի յաւելեալ տեղ պիտի տրամադրենք մանկապատանեկան պատշաճումով Աստուածաշունչէն քաղուած պատմութիւններու: Նաեւ, տեղ պիտի տանք Հայաստանի հետ ծանօթացման վերաբերող յօդուածներու եւ տեղեկատուական էջերու: Աւետարանէն հատուածներու ընթերցանութիւնը կը մնայ նախապայման, ինչպէս նաեւ Հայաստանեայց եկեղեցւոյ տօներու եւ աւանդութիւններու մասին բացատրական յօդուածները:

Մաշտոցի Արձագանգի պարբերաթերթը ամսաթերթի դրութեան վերածուելուն երրորդ տարին է այս: Ամսական հերթականութիւնը յարգելը՝ ինչպէս անցեալին եւ նաեւ այսօր, մեզ դէմ հանդիման կը դնէ մեծ մարտահրաւերի մը. նիւթ գտնել, հետաքրքրաշարժ եւ հակիրճ կերպով շարադրել, լեզուն պարզ պահել, գրութիւնները էջադրել եւ էջերը նկարազարդել: Մենք յոյսով ենք որ պիտի ընդունինք մարտահրաւերը եւ յաղթահարենք շնորհիւ կամաւոր հաւատաւոր աշխատակիցներու ճիգերուն:

Սիրելի ընթերցողներ, ձեզի կը ներկայացնենք ուրեմն Մաշտոցի Արձագանգի 2004-2005 տարեշրջանի առաջին թիւը: Յոյսով ենք որ տարին միասին կ'անցնենք ու ամսական մեր կանոնաւոր հանդիպումները կը շարունակենք, տպուած էջերու թէ համացանցի վրայի էջերու միջնորդութեամբ:

Ադամ եւ Քրիստոս

Մէկ անձի մը պատճառով էր որ մեղքը աշխարհի մտաւ, եւ մեղքին պատճառով աշխարհի մտաւ մահը: Եւ այսպիսով մահը տիրեց բոլոր մարդոց. որովհետեւ բոլորն ալ մեղք գործեցին: Մեղքը աշխարհի մէջ էր, ուրեմն, դեռ Օրէնքը չեկած. բայց մեղքը նկատի չէր առնուեր, քանի Օրէնք չկար: Եւ սակայն Ադամէն սկսեալ մինչեւ Մովսէս մահը թագաւորեց նոյնիսկ անոնց վրայ՝ որոնք Ադամի գործած անհնազանդութեան մեղքը չգործեցին: Իսկ Ադամ նախօրինակն էր անոր՝ որ պիտի գար:

Բայց նախ՝ յստակ տարբերութիւն մը կայ մեղքին եւ շնորհքին միջեւ. որովհետեւ եթէ ճշմարիտ էր որ մէկուն յանցանքով բոլորը մեռան, շատ աւելի ճշմարիտ է՝ որ Աստուած միակ մարդու մը՝ Յիսուս Քրիստոսի շնորհիւ իր շնորհքն ու պարգեւը առատացուց բոլորին վրայ: Ապա՝ դարձեալ տարբերութիւն կայ մէկուն մեղանշումով յառաջ եկած արդիւնքին եւ շնորհքին միջեւ. որովհետեւ մինչ մէկուն մեղանշումով աստուածային դատաստանը դատապարտութեան տակ կ'առնէր բոլորը, շնորհքը՝ հակառակ բոլորին մեղանշումին՝ կ'արդարացնէ զանոնք: Որովհետեւ, եթէ ճշմարիտ է որ միակ մարդու մը պատճառով, մէկ հոգիին յանցանքով մահը թագաւորեց, ո՛րքան աւելի ճշմարիտ է՝ որ Աստուծոյ առաջ շնորհքն ու արդարութեան պարգեւը ստացողները պիտի թագաւորեն կեանքի մէջ, միակ անձի մը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Հետեւաբար, ինչպէս որ մէկ հոգիին յանցանքով բոլոր մարդիկ դատապարտութեան ենթակայ եղան, այնպէս ալ մէկ հոգիին արդար գործով բոլոր մարդիկ կ'արդարանան ու կեանք կ'ունենան: Որովհետեւ, ինչպէս մէկ մարդու անհնազանդութեամբ բոլորը մեղաւոր եղան, այնպէս ալ մէկ հոգիին հնազանդութեամբ բոլորը պիտի արդարանան: Մինչ այդ, Օրէնքը գալով՝ յանցանքը շատցաւ: Միւս կողմէ, ուր որ մեղքը շատցաւ՝ այնտեղ Աստուծոյ շնորհքը աւելի առատացաւ: Որպէսզի, ինչպէս որ մեղքը թագաւորեց՝ մահ պատճառելով, այնպէս ալ շնորհքը թագաւորէ՝ մարդիկը արդարութեամբ յաւիտենական կեանքի սահմանելու համար, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:



Հոռմայեցիներուն 5.12-21

**Աւետարանի կազմ 1693 Վան
Կազմի հեղինակ Տէր Սահակ 19X12 սմ**

Ծանոթացում Հայաստանի հետ

2004-2005 տարեշրջանի վերամուտին առիթով, Մաշտոցի Արձագանգը այս տարի կը ներկայանայ նոր նախաձեռնությամբ մը: «Ծանոթութիւն հայաստանի հետ» վերնագրով յօդուածներու շարքով մը պիտի փորձենք, ինչպէս վերնագիրը կը պարզէ, ծանօթանալ Հայաստանի: Սակայն անշուշտ ամբողջական ծանոթութիւն կարելի պիտի չըլլայ իրականացնել ամսական երկու էջերու մէջ խտացնելով դարաւոր հարստութիւն եւ տեղեկութիւն: Հայաստանի հետ այս ծանօթացումը առաջին ծանօթացում մը կը միտի ըլլալ, արագ եւ ընդհանուր նայուածք մը նետելով մեր հայրենիքի իւրաքանչիւր վարչամարզին վրայ, անդրադառնալով հոն գտնուող գիւղերուն, քաղաքներուն, եկեղեցիներուն, սովորութիւններուն եւ այլ ընդհանուր տեղեկութիւններու: Այս ծանօթացման ակնարկը թերեւս քաջալերէ հետաքրքրուողները աւելի մօտէն ու աւելի մանրամասն ձեւով ծանօթանալու Հայաստանի հետ:

Բայց նախ եւ առաջ... Ի՞նչ են «մարզ»երը

Մարզ կը կոչուի Հայաստանի հ ա ն ր ա պ ե տ ու թ ե ա ն սահմանադրութեամբ սահմանուած հանրապետութեան վարչատարածքային միաւորներէն իւրաքանչիւրը: Մարզ մը կազմուած է գիւղական եւ քաղաքային համայնքներէ: Իւրաքանչիւր մարզ կը ղեկավարուի մարզպետի մը կողմէ, որը կը նշանակուի եւ կ'արձակուի կառավարութեան կողմէ:

Հայաստանի հանրապետութիւնը բաժնուած է տասը մարզերու. Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռիի, Կոտայքի, Շիրակի, Սիւնիքի, Վայոց Ձորի եւ Տաւուշի մարզերը: Իսկ հանրապետութեան մայրաքաղաք Երեւանը ունի առանձին մարզի կարգավիճակ:

Մաշտոցի Արձագանգի Սեպտեմբեր ամսուան թիւով կը ծանօթանանք Արագածոտնի մարզին հետ: Այս այն մարզն է ուր կը գտնուի այս ամիս իսկ յիշատակուող Սուրբ Գէորգի անուան կառուցուած եկեղեցին որուն հիմնաքարերուն տակ թաղուած են Սուրբին մասունքները:

Արագածոտնի մարզ

Արագածոտնի մարզի անունէն իսկ դիւրին է կռահել թէ ան կը գտնուի Արագած լեռան ստորոտին, Երեւանի հիւսիս արեւմուտքը: Անոր կեդրոնն է Աշտարակ քաղաքը. հոն են նաեւ Ապարան եւ Թալին քաղաքները: Աշտարակ քաղաքի եկեղեցիները թիւով շատ են: Անոնցմէ յիշենք 7-րդ դարու կիսուն կառուցուած Կարմրաւոր եկեղեցին որուն փոքր չափը ենթադրել կու տայ թէ ան եղած է ընտանեկան մէկ ժամատուն: Աւելի եւս հին կառուցներէն է սեւ տուֆէ շինուած ամրոցանման Ծիրանաւոր եկեղեցին: Այս եկեղեցին 19-րդ դարու սկիզբին վերածուեր է ամրոցի:



Արագած լեռ

Աշտարակէն կը բարձրանանք Բիրական գիւղ, ուր կը գտնուին Ամենայն Հայոց Կաթողիկոսներու ամառանոցն ու հանրապետութեան աստղադիտարաններէն մէկը:

Եթէ Բիրականէն Արագած լեռ բարձրանանք, լերան ձախ լանջին կը տեսնենք Ամբերդ բերդաքաղաքը (10-13 դդ դար):

Աշտարակէն Էջմիածին երկարող ճամբուն վրայ կը գտնուի Հայաստանի հնագոյն գիւղերէն՝ Օշականը, ուր կը գտնուի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանն ու հայ գիրերու նուիրուած կոթողը: Անշուշտ, հոն է նաեւ Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ սրբավայր դարձած Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին:



Արագածոտնի մարզի Մուղնի գիւղի Ս. Գեորգ եկեղեցին, 14րդ դար



Սաղմոսաւան գիւղի վանքը՝ Սաղմոսավանք

Ասք Աշտարակի մասին

Աշտարակ քաղաքի ձուկ որսալու տօնը

Տարւում մէջ մէկ օր ամբողջ Աշտարակի բնակիչները, մեծ ու փոքր դուրս կու գան ձուկ որսալու: Այդ որսը կը դառնայ տօնախմբութիւն: Կ'ըսուի թէ տարի մը Աշտարակի կենդանիները համաճարակի ենթարկուեցան ու բոլորը կոտորուեցան: Աստուած աշտարակի բնակիչներուն ըսաւ. - «Ես Քասաղ Գետը լեցուցած եմ ձուկերով, որսացէք եւ ձուկ կերէք որքան որ ուզէք»: Եւ այս օրէն սկսեալ, ձուկ որսալը մնացած է աւանդութիւն եւ ուխտագնացութեան օր Աշտարակցիներուն համար:

Սուրբ Գեորգ զօրավար

Հայ առաքելական եկեղեցւոյ տօնելի սուրբերէն մէկը, Դիոկղետիանոս հռոմէացի կայսրի օրով զինուորագրուած ու իր արիութեան ու իմաստութեան շնորհիւ հասած զօրավարի աստիճանի:

Երբ սկսան սակայն Դիոկղետիանոս կայսրի հալածանքները քրիստոնեաներուն դէմ, Գեորգ զօրավար պատուած է կայսրին հրապարակած հրովարտակը Նիկոմեդիա քաղաքին մէջ: Իր այդ արարքին պատճառաւ ան ենթարկուած է չարչարանքի սակայն ոչ միայն չէ ուրացած իր հաւատքը այլ քաջալերական եւ Աւետարանէն ներշնչուած խօսքերով խրատեր է բոլոր քրիստոնեաներուն չվախնալ անոնցմէ որոնք կարող են մարմինը կոտորել բայց ոչ ոգին:

Աւանդութիւնը կ'ըսէ թէ Գեորգ զօրավարի խօսքերու շնորհիւ դարձի եկած է նոյնիսկ կայսրին կինը՝ Աղեքսանդրիա թագուհին: Կայսրը հրամայած է սպաննել իր իսկ կինը, սուրբին հետ: Ըստ այլ աւանդութեան մը, զօրավարը սպաննած է նաեւ վիշապ մը ազատելու համար երիտասարդուհի մը, ու այնուհետեւ կոչուած «վիշապասպան սուրբ»:

Սուրբ Գեորգի յիշատակը կը տօնուի Վարագայ Սուրբ խաչի նախօրէի Ծաբաթ օրը, ընդհանրապէս Սեպտեմբեր ամսուան վերջը:

Ըստ Հրաշեայ Աճառեանի «Հայոց անձնանունների բառարան»-ին, Գեորգ կը նշանակէ «երկիր մշակող» կամ «հողագործ»:



**Ս. Գեորգ Ջօրավար մանրանկար
14րդ դար: Ծաղկող Գրիգոր Տաթեւացի**

Նարեկ

Բան ԾԳ. հատուած

Երախտապարտ հոգիով քննեցի իմ նոր փրկութեանս շնորհները ու տեսնելով անոնց անչափելի յաճախութիւնը՝ պապանձեցայ մնացի անոնց առջեւ: Հիմա նորէն յիշելով լոյսէդ իմ անողոք թշուառութեանս եղած անսպառ բարիքները, Քու սորվեցուցած աղօթքովդ Քեզի կ'աղաչեմ, այս գլուխին մաղթողական խօսքերուն հետ հիսնելով թախծութեամբ եւ հառաչանքով լցուած ողբեր: Բայց պարգեւողիդ հաճութիւն պատճառելու համար, ցաւերուն հետ պիտի խառնեմ դեղը, վստահութեան հետ՝ խրախոյսը, յուսահատութեան հետ՝ Ստեղծողիդ անուան յիշատակութիւնը, տխրութեան հետ՝ սփոփանքդ, դառնութեան հետ՝ Կենսարարիդ քաղցրութիւնը, Հին Օրէնքին պատիժին հետ՝ Նորին շնորհքը, անէծքի դատապարտութեան հետ՝ ազատարար օրհնութիւնդ, մարմինին մահուան հետ՝ ամէն կերպով շնորհած օրհնութիւնդ:

Խաչվերաց

Սուրբ խաչի վերացման տօն, հայ եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն եւ խաչի նուիրում չորս տօներէն ամենէն հինը: Ունի ութօրեայ հանդիսութեամբ նաւակատիք եւ մեռելոց:

Խաչվերաց տօնի սկզբնաւորութիւնը կը հասնի մինչեւ քրիստոնէութեան առաջին օրերը, որովհետեւ խաչը վերացնելու, այսինքն բարձրացնելու եւ փառաւորելու առաջին արարքը կը վերագրուի Յիսուսի առաքելներէն

Յակոբոսին որ խաչը Երուսաղէմի ժողովուրդին առջեւ վեր բարձրացնելով օրհնութիւն եւ աղօթք ըսած է:

Նաւակատիք անունը բառական իմաստով կը նշանակէ «նոր շինել, նոր կերտել»: Ընդհանուր սովորութիւն եղած է որ նոր կերտուած ու նոր աւարտած շէնքի մը բացումը հանդիսաւոր ձեւով կատարուի եւ այս նուիրագործութեան հանդէսը կոչուած է Նաւակատիք: Մեր եկեղեցին նաւակատիք կը կատարէ մեծ տօներու նախընթաց օրերուն ուր պահք կը բռնուի:

* * *

Տաղաւար կը կոչուին հայ եկեղեցւոյ հինգ մեծ տօները՝ Ծնունդ, Զատիկ, Խաչվերաց, Վերափոխում Ս. Աստուածածնի եւ Պայծառակերպութիւն-Վարդավառ:



Մուղնիի Ս. Գեորգ եկեղեցին

Պահուած համարը

Հետեւեալ հարցումներէն իւրաքանչիւրին պատասխանը թիւ մըն է: Գումարէ այդ թիւերը: Ապա, Մատթէոս 28-ի մէջ փնտռէ գումարիդ արդիւնքին համապատասխանող համարը, ամբողջացուր եւ ճանշիր զայն:

- 1- Յիսուսի առաքելներուն թիւը առանց Յուդային «Մատթ. 28-16»
- 2- Քանի՞ կիներ Յիսուսի գերեզմանը այցելեցին Կիրակի առտու «Մատթ. 28-1»
- 3- Յիսուս քանի՞ օրէն Յարութիւն պիտի առնեմ կ'ըսէր «Մատթ. 27-63»
- 4- Մոգերը թիով քանի՞ էին
- 5- Քանի՞ հրեշտակներ կային Յիսուսի գերեզմանին մօտ «Մատթ. 28-2»

Պատասխաններ. -

1-

2-

3-

4-

5-

Գումար:-----

«Եւ ահա միշտ ձեզի-----»

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն

Աստուած մեզի գեղեցիկ տուն մը տուաւ



Ես Ադամն եմ. առաջին մարդը զոր Աստուած ստեղծեց: Աստուած ինծի գեղեցիկ պարտէզ մը տուաւ որպէսզի մէջը ապրիմ: Ուր որ նայեցայ տեսայ ծառեր, բոյսեր եւ ջուր: Երբ անօթեցայ պտուղ մը կը քաղէի ծառէ մը եւ կ'ուտէի:

Պարտէզը լեցուն էր կենդանիներով եւ թռչուններով: Աստուած նոյնիսկ արտօնեց որ ես անուանեմ զանոնք:



Աստուած աշխարհը ստեղծեց 6 օրուայ ընթացքին եւ 7րդ օրը հանգստացաւ:

Ա. օր - Աստուած Լոյսը ստեղծեց

Բ. օր - Աստուած Երկինքը ստեղծեց

Գ. օր - Աստուած երկիրը, ծովերը, ծառերն ու բոյսերը ստեղծեց

Դ. օր - Աստուած Արեւը, լուսինը եւ աստղերը ստեղծեց

Ե. օր - Աստուած թռչունները եւ ձուկերը ստեղծեց

Զ. օր - Աստուած կենդանիները եւ Ադամը ստեղծեց:

Աստուած նաեւ Եւան, առաջին կինը, ստեղծեց:




Աստուած գիտէր թէ ես
պէտք ունէի ինծի յարմար
մէկու մը: Աստուած ինծի
համար իմ ոսկորէս կին մը
շինեց որուն անունը Եւա էր:

Աստուած մեզի պատուիրեց
թէ մենք կրնայինք պարտէզին
բոլոր ծառերուն պտուղներէն
ուտել, բացի մէկ մասնաւոր
ծառի պտուղէն: Աստուած ըսաւ
«Եթէ ուտէք այդ ծառին
պտուղէն, պիտի մեռնիք»:
Ես եւ Եւան չէինք ուզեր
մեռնիլ:



Այն ծառը որուն պտուղէն արգիլուած էր ուտել կը կոչուէր
«բարին եւ չարը գիտնալու ծառ»: Աստուած ըսաւ
Ադամին եւ Եւային թէ եթէ այդ ծառի պտուղէն ուտեն,
պիտի մեռնին:



Օր մը,
խորամանկ օձ մը
սկսաւ խօսիլ
Եւային հետ:
«Իրա՞ն Աստուած
ըսաւ թէ
«պարտէզին որեւէ
ծառէն մի՛
ուտէք»» հարցուց
օձը:

Եւան բացատրեց «Կրնանք բոլոր ծառերուն պտուղէն ուտել
բացի բարին եւ չարը գիտնալու ծառին պտուղէն: Եթէ այդ
ծառին պտուղէն ուտենք, կը մեռնինք»:

«Չէք մեռնիր» ըսաւ իրեն օձը. այլ Աստուծոյ պէս կ'ըլլաք:
Եւան հաւատաց օձին եւ կերաւ այդ ծառին պտուղէն: Ես ալ
կերայ:

Յետոյ, երբ պարտէզին մէջ շրջող Տէր Աստուծոյ ձայնը
լսեցինք, փախանք եւ պահուրտեցանք:

«Ո՞ր ես» հարցուց Աստուած: Եւան եւ ես գիտէինք թէ պէտք
է պատասխանելինք:

«Պարտէզին մէջ քու ձայնը

Օձը, իրականութեան մէջ
Սատանան էր: Անիկա կը
փորձէր Ադամը եւ Եւան
անհնազանդ ընել Աստուծոյ
եւ տակաւին կը փորձէ բոլոր
մարդոց անհնազանդ ընել
Աստուծոյ: Սատանան
չարունակ կը փորձէ:



լսեցի ու վախցայ
որովհետեւ մերկ էի, ու
պահուրտեցայ»
պատասխանեցի:
«Արդեօք կերա՞ր ան ծառէն
որուն մասին քեզի
պատուիրեցի՝ որ անկէ
չուտես:» հարցուց
Աստուած:



Անմիջապէս անդրադարձայ որ Աստուած գիտէր. չէինք կրնար
շարունակել պահուրտիլ:
«Եւան ինծի ծառէն պտուղ տուաւ ու ես կերայ» ըսի: Ես ուզեցի
իմ կինս մեղադրել:
«Ինչո՞ւ այդպէս ըրիր» հարցուց Աստուած Եւային:
«Օձը զիս խաբեց ու ես կերայ» պատասխանեց Եւան:

Աստուած ստիպեց որ մենք այս գեղեցիկ պարտէզը ձգենք: Ինք
պատժեց նաեւ օձը: Մենք Աստուծոյ անհնազանդ գտնուած
էինք:

**Մտածէ՛
ասոր
մասին**

Աստուծոյ Խօսքը կը նշանակէ այն ինչ որ
կ'ըսէ: Աստուած ըսաւ Ադամին եւ Եւային
որ կրնան ուտել բոլոր ծառերուն
պտուղներէն բացի մէկ ծառի պտուղէն,
բայց Ադամը եւ Եւան մտածեցին թէ
Աստուծոյ Խօսքին նշանակութիւնը ուրիշ
բան էր, ուրեմն կերան արգիլուած
պտուղէն: Սակայն Աստուած պատժեց
զիրենք իրենց անհնազանդութեան
պատճառաւ:

խաչքան

	1	2	3	4	5	6	7	8	9	10
ա										
բ										
գ										
դ										
ե										
զ										
է										
ը										
թ										
ժ										

- 1- Տախտակէ առարկաներ շինող արհեստավոր
- 2- Պակսեցնել, գինը կտրել
- 3- Առանց վերջի աղեղ- կենդանի
- 4- Առնելու հակառակը- Ականջի կակուղ մասը
- 5- Բացագանչություն- Կաթիլ, գ. դէմք, եզակի անցեալ կատարեալ
- 6- Շրջուած թռչունի տեսակ- ժխտական
- 7- Երկու բաղաձայններ- Եկեղեցույ գլխավոր տօն
- 8- Յորենը յարդէն բաժնելու տեղ- Հրամայական մղել
- 9- Շրջուած թիւ- Առանց վերջաւորութեան ածել
- 10- Շրջուած ան -օտար տղու անուն -

- ա- անկախություն
- բ- Տէղէն հանուած, տարագրուած երկու ձայնավոր
- գ- Աղ ցանել, համեմել- կրկնուած բաղաձայն
- դ- Երկու բաղաձայններ- կատարել, ներկայ ժամանակ, գ. դէմք, եզակի
- ե- Բռնել, բանտարկել
- զ- Բայերու վերջաւորություն - երկու ածական
- է- Շրջուած եթէ
- ը- Յապաղում, ձգձգում
- թ- Շատախօս թռչուն
- ժ- կոնդ եւ ճիւղեր ունեցող բոյս- Շրջուած օծել, անցեալ անկատար, գ. դէմք, եզակի

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Դուկաս 10.27 ին

սրտովդ, մտքովդ, հոգիովդ, զօրութեամբդ, քու անձիդ պէս

Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ -----, ամբողջ
-----, ամբողջ ----- եւ ամբողջ
----- եւ Սիրէ՛ ընկերդ
----- :

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին հիմնուեցաւ
«Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ
Դպրոցներ»-ը :

ա.- 1900

բ.- 1929

գ.- 1979

դ.- 1980

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ Մոնթրէալի
Հայաստանեայց Առաքելական
Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցը:

ա.- 1900

բ.- 1929

գ.- 1979

դ.- 1980

3.- Քանի՞ օրուայ մէջ Աստուած
աշխարհը ստեղծեց:

ա.- 5

բ.- 6

գ.- 7

դ.- 8

4.- Քանի՞ րօրի օրը Աստուած Լոյսը
ստեղծեց:

ա.- 1

բ.- 2

գ.- 3

դ.- 4

5.- Քանի՞ րօրի օրը Աստուած Ադամը
ստեղծեց:

ա.- 4

բ.- 5

գ.- 6

դ.- 7

6.- Սատանան ի՞նչ կերպարանքով
մօտեցաւ Եւային:

ա.- Առիւծ

բ.- Օձ

գ.- Կապիկ

դ.- Կոկորդիլոս

7.- Ի՞նչ կը կոչուէր այն ծառը որուն
պտուղէն արգիլուած էր ուտել:

ա.- Խնձոր

բ.- Տանձ

գ.- Սալոր

դ.- բարին եւ չարը գիտնալու ծառ

8.- Ադամ եւ Եւան ի՞նչ յանձանք
գործեցին Աստուծոյ հանդէպ:

ա.- շատ խնձոր կերան

բ.- շատ վազեցին պարտէզին մէջ

գ.- անհնազանդ եղան

դ.- շատ խաղող կերան

9.- Ո՞վ կենդանիները անուանեց:

ա.- Ադամը

բ.- Եւան

գ.- Օձը

դ.- Աստուած

10.- Աստուած ի՞նչ ըրաւ 7րդ օրը:

ա.- Զուկերը ստեղծեց

բ.- Հանգստացաւ

գ.- Երկինքը ստեղծեց

դ.- Ծովերը ստեղծեց

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

1.- Ո՞ր տարին հիմնուեցաւ
«Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ
Դ ա ղ ո յ ն ե ռ » ը :

ա.- 1900

բ.- 1929

գ.- 1979

դ.- 1980

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ Մոնթրէալի
Հայաստանեայց Առաքելական
Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցը:

ա.- 1900

բ.- 1929

գ.- 1979

դ.- 1980

3.- 2004-2005 տարեշրջանը Սուրբ
Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցին
քանիերորդ տարեդարձն է:

ա.- 10

բ.- 25

գ.- 50

դ.- 75

4.- Թուէ՛ Հայաստանի այն 3
մարզերուն անունները որոնք Ա տառով
կը սկսին:

ա.- Ա-----

բ.- Ա-----

գ.- Ա-----

5.- Հայաստանի ո՞ր լեռը կը գտնուի
Արագածոտն մարզին մէջ:

6.- Ո՞ր գիւղին մէջ կը գտնուի Սուրբ
Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը եւ Հայ
գիրերու նուիրումը կոթողը:

7.- Ո՞ր գիւղի Սուրբ Գեորգ Եկեղեցւոյ
հիմնաքարերուն տակ թաղուած են
Սուրբին մասունքները:

8.- Ո՞ր Աւետարանին մէջ կը կարդանք
Բարի Սամարացիին առակը:

ա.- Մատթէոս

բ.- Մարկոս

գ.- Լուկաս

դ.- Յովհաննէս

9.- Յիսուս ո՞ր օրը խաչուեցաւ:

ա.- Հինգշաբթի

բ.- Ուրբաթ

գ.- Ծաբաթ

դ.- Կիրակի

10.- Երբ կը տօնենք Յիսուսի Ծնունդը:

ա.- Յունուար 1

բ.- Յունուար 6

գ.- Դեկտեմբեր 25

դ.- Սեպտեմբեր 12

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1.- Ո՞ր տարին հիմնուեցաւ «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ»-ը :

- ա.- 1900
- բ.- 1929
- գ.- 1979
- դ.- 1980

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ Մոնթրէալի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը:

- ա.- 1900
- բ.- 1929
- գ.- 1979
- դ.- 1980

3.- 2004-2005 տարեշրջանը Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցին քանիերորդ տարեդարձն է:

- ա.- 10
- բ.- 25
- գ.- 50
- դ.- 75

4.- Թուէ՛ Հայաստանի այն 7 մարզերուն անունները որոնք նշուած տառով կը սկսին:

- ա.- Գ-----
- բ.- Լ-----
- գ.- Կ-----

5.- Աստուած քանիերորդ Օրը ստեղծեց Ադամը:

6.- Ե՞րբ եւ ո՞ր տեղի ունեցաւ Առաջին Տիեզերական ժողովը:

- ա.- 325 Նիկիա
- բ.- 389 Կոստանդնուպոլիս
- գ.- 431 Եփեսոս
- դ.- 381 Կոստանդնուպոլիս

7.- Ո՞ր գիւղի Սուրբ Գեորգ Եկեղեցւոյ հիմնաքարերուն տակ թաղուած են Սուրբին մասունքները:

8.- Ո՞ր Աւետարանին մէջ կը կարդանք Բարի Սամարացիին առակը:

- ա.- Մատթէոս
- բ.- Մարկոս
- գ.- Դուկաս
- դ.- Յովհաննէս

9.- Յիսուս ո՞ր օրը խաչուեցաւ:

- ա.- Հինգշաբթի
- բ.- Ուրբաթ
- գ.- Ծաբաթ
- դ.- Կիրակի

10.- 2004 թուականը Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու քանիերորդ տարեդարձն է:

- ա.- 100
- բ.- 25
- գ.- 50
- դ.- 75

24-րդ Տարեշրջանի ամավերջի հանդես



Մոնթրեալի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցի 2003-2004 (24րդ) տարեշրջանի ամավերջի հանդեսը տեղի ունեցավ Կիրակի, 13 Յունիս 2004 ի կեսօրէ ետքը, ժամը 1:30 ին, Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Բաստրմանեան սրահին մէջ, շուրջ հարիւր-յիսուն ծնողներու եւ ընտանիքներու անդամներու ներկայութեան:

Հանդեսը իրենց ներկայութեամբ պատուեցին Գերշ. Խաժակ Արք. Յակոբեան, Առաջնորդ Գանատայի Հայոց, արժանապատիւ Տէր Արմէն աւագ Քահանայ Իշխանեան եւ արժանապատիւ Տէր Գառնիկ Քահանայ Գոյունեան:

Հանդեսը սկսաւ Աշակերտներուն կողմէ ներկայացուած Տէրունական աղօթքի, մաղթանքի եւ Հայաստանեայց Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգի յոտնկայս ունկնդրութեամբ:

Ապա Երկր. Դ կարգի ուսանողուհի՝ **Թամար Գիզիրեան** իր բացման խօսքին մէջ ըսաւ :
«Այս տարի մենք պիտի անդրադառնանք Հայաստանեայց Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցներուն 75 ամեակին: 75 տարիներէ ի վեր Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցաւ Քրիստոնէական Դաստիարակութիւն տրուեցաւ մեզի պէս հազարաւոր հայ մանուկներու ու պատանիներու որպէսզի մենք

- Վառ պահենք Հայաստանեայց Եկեղեցույ տօներն ու ազգային աւանդութիւնները
- լսե՛նք, մտի՛կ ընենք եւ երգե՛նք մեր հայանուագ շարականները

- կարդանք ու կեանքի վերածենք մեր Հայագրեալ Աստուածաշունչը
- ամո՛ւր կառչած մնանք մեր հայավայել բարի՛ բարքերուն ու սովորութիւններուն
- եւ մանաւանդ, սորվելով սիրել զԱստուած եւ մեր ընկերը՝ ըլլանք հայասէր:»

անցնելով յայտագրի գործադրութեան Նախակրթարանի Ա., Բ. եւ Գ. դասարաններու աշակերտները ներկայացուցին 10 Ոսկեղէն Համարներ որուն յաջորդեց Նախակրթարանի Բ. եւ Գ. դասարաններու Սաղմոս 99 (100) Ի եւ Սաղմոս 22 (23) ի ներկայացումը:



Ծարունակելով յայտագիրը, Մանկապարտէզի եւ Նախակրթարանի Ա. Բ. եւ Գ. դասարաններ միասին ներկայացուցին շաբթ մը աղօթքներ եւ երգեր որմէ ետք Մանկապարտէզի եւ Նախակրթարանի աշակերտներէն խումբ մը ներկայացուցին Ս. Ներսէս Շնորհալիի «Հաւատով Խոստովանիմ» աղօթքին 24 համարները հաւատալով որ իւրաքանչիւր հայ, որպէս հետեւորդը իր նախնիքներու սրբազան հաւատքին, պէտք է գոց սորվի «Հաւատով Խոստովանիմ» ի 24 տուները եւ անոր միջոցաւ բանայ իր սիրտը Բարձեալն Աստուծոյ:

Ապա Նախակրթարանի Դ. Ե. եւ Զ. դասարաններու աշակերտները յիշելով թէ իրենք պարտին հաւատարիմ մնալ Սահակ-Մեսրոպեան այբուբենին եւ Վարդանանց հաւատքին ներկայացուցին 2 երգ նուիրուած Սահակ-Մեսրոպի եւ Վարդանի:

Աշակերտուհիներ **Լորի Քէօսէյեան** «Երկր. Բ.» եւ **Քրիստին Լոշխանեան** «Երկր. Գ.» ներկայացուցին **Կիրակնօրեայ Դպրոցը եւ Անոր մուտքը Հայաստանեայց Եկեղեցւոյ Ծիրէն ճերս** որմէ ետք աշակերտներ **Կարօ Կարապետեան** «Երկր. Գ.» եւ **Փօլ Գիզիրեան**

«Երկր. Գ.» ներկայացուցին **Կոնդակ Կիրակնորեայ Դպրոցներու** անդրադառնալով 1930 Յունիս 28ի Սահակ Կաթողիկոսի Կոնդակին:

Ապա խօսք առաւ Կիրակնորեայ դպրոցի Տնօրէն պրն. Թորոս Պապիկեան որ հակիրճ կերպով անդրադառնալէ ետք Դպրոցի ընդհանուր կեանքին մասին, յատուկ կերպով անդրադարձաւ Կիրակնորեայ Դպրոցներու 75 ամեակին ըսելով թէ **« Մեր փափաքն ու աղօթքն է որ այս 75 ամեակը խթան մը ըլլայ մեր բոլորին, պաշտպանելու, պահպանելու եւ նոր իրագործումներով դէպի նոր հորիզոններ ու նոր բարձունքներ առաջնորդելու Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնորեայ Դպրոցները »:**

Տնօրէնը նաեւ անդրադարձաւ կաթէջին www.sourphagop.org ին եւ անոր այցելւումներուն որոնք կը գտնուին աշխարհի 4 ծագերուն եւ **«Մաշտոցի Արձագանգ»** ի ԺԱ տարուան տասը թիւերուն, որուն 210 էջնոց պատկերազարդ հաւաքածոն դրան մուտքին ցրուեցաւ ներկաներուն:

Նուէրներ տրուեցան այն աշակերտներուն որոնք տարեշրջանի 36 կիրակիներէն առնուազն 35-ին մասնակցած էին դպրոցի գործունէութեան:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Գերշ. Խաժակ Արք. Յակոբեանը որ նախ քան հանդէսը փակելը, իր սրտի խօսքին մէջ անդրադարձաւ **Ընտանիք, Դպրոց եւ Եկեղեցի** գործակցութեան անհրաժեշտութեան եւ ըսաւ **«Կիրակնորեայ Դպրոցը ու հոն ջամբուած Քրիստոնէական Դաստիարակութիւնը կը կազմեն հանդիպման վայրը այդ երրորդութեան»:**

Սրբազան հայրը բարձր գնահատեց ուսուցչական կազմին տարած գործը որ մեծ զոհողութիւն կ'ենթադրէ, եւ իր ներկայութեան գեղեցիկ ծաղկեփունջ մը յանձնուեցաւ իւրաքանչիւրին:

Հանդէսը փակուեցաւ Սրբազան հօր Պահպանիչով եւ ընդհանուրին կողմէ երգուած Կիլիկիա երգով:

Հանդէսէն ետք ներկաները հիւրասիրուեցան զովացուցիչով եւ կարկանդակներով պատրաստուած ծնողներու կողմէ:



Կարճ Լուրեր

Կիրակնօրեայ Դպրոցի 2004-2005 տարեշրջանի Սեպտեմբեր ամսուայ ժամանակացույցը

Սեպտեմբեր 5 ժամը 10:30 – 1:00 Արձանագրություն

Սեպտեմբեր 12 ժամը 10:30 ին Վերամուտ

Սեպտեմբեր 19 Սբ. Հաղորդություն

Ցանկեալ տեղեկություններու համար հեռաձայնել Թորոս Պապիկեանին՝ (514) 956-1277

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝

Ծաղիկ Պոյաճեան

Աշխատակիցներ՝

Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարուին Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը. – Ուսուցիչներ՝ Իզապէլ Քուլլութեան, Սալբի Բակլաեան, Վերժին Գէպթանճեան, Վերա Կարապետեան, Երան Լոշխաճեան, Գարուին Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Ծողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Ծաղիկ Պոյաճեան:



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՋԱԳԱՆԳ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցու
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ



ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 2
Հոկտեմբեր 2004

Քրիստոնեային Ապրելակերպը

Արդ, Տիրոջ կողմէ կ'ազդարարեմ ձեզի. - չըլլայ որ կրկին դառնաք այն կենցաղին, որմով հեթանոսները կ'ապրին անմտօրէն: Անոնց միտքը խաւարած է:

Էջ 3

Թարգմանչաց շարժում

Հայաստանեայց Եկեղեցին Սբ. Թարգմանչաց օրը կը տօնէ վեց գլխաւոր թարգմանիչներու յիշատակը որոնք են, Մեսրոպ Մաշտոցի գլխաւորութեամբ...

Էջ 6

Գիտ Խաչը

Ինչպէս անունը կը նշէ, Գիտ Խաչը առաքելական եկեղեցու խաչին նուիրուած տօներէն այն տօնն է որ կը յիշատակէ Յիսուս Քրիստոսի խաչափայտը գտնուելուն դէպքը:

Էջ 6

Գիտէի՞ր թէ

Արմաւիրի մարզին մէջ կը գտնուի հարիւրաւոր հեկտարներու վրայ երկարող Որդան Կարմիրի դաշտեր: Իսկ ի՞նչ է Որդան կարմիրը...

Էջ 5

Ծանօթացում Հայաստանի հետ ` Արմաւիրի մարզ

Հայ գիրերու գիտէն վերջ, երբ թափ առին թարգմանութեան աշխատանքները, Հայաստանի մշակութային կեդրոնի վերածուեցաւ Վաղարշապատ քաղաքը: Հոկտեմբեր ամսուան այս թիւով կը ծանօթանանք Հայաստանի Արմավիր մարզին, որուն պատմամշակութային կեդրոնն է Վաղարշապատ քաղաքը, հիմնուած հայոց Վաղարշ թագաւորին կողմէ 117 թուին:

Էջ 3

Աստուածաշունչը՝ պատմութեան փոքրերուն

Անունս Նոյ է:


Ես Աստուած շատ կը սիրեմ: Ընտանիքս եւ ես կ'ապրէինք այն շրջանին երբ ամէն մարդ Աստուծոյ անհնազանդ էր: Աստուած շատ նեղացած էր:

Էջ 8,9,10,11

Հայ գրչութեան կեդրոնները

Հայ առաջին գրչութեան կեդրոնը Վաղարշապատն է:

Էջ 6



Էջմիածնի Մայր տաճարը Վաղարշապատի մէջ:
301-303

Սուրբ Թարգմանիչներ

Գրիգոր Նարեկացի Նարեկ գիտ մըն էր Վանայ ծովուն հարաւ կողմը, Ռշտունեաց գաւառին մէջ: Անանիա Վարդապետ, որ իր ժամանակին ամենէն զարգացած հոգեւորականներէն էր...

Էջ 7

Ներսէս Ընդհանրալի Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսէս Դ. Կլայեցի կոչուէր է 'Ընդհանրալի' իր բացառիկ գիտութեան, առաքինի վարքին համապատասխան

Էջ 7

Ասք

դէպի Վաղարշապատ ուխտագնացներու մասին:

Էջ 5

Պահուած Բառ

Էջ 12

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Էջ 13,14,15,16,17

Կարճ Լուրեր

Էջ 18

Մենք ալ ըլլանք Թարգմանիչներ

Էջ 2

Հոկտեմբեր 2004

Մենք ալ ըլլանք թարգմանիչներ

Կիր.	Բշ.	գշ.	Դշ.	Եշ.	Ուր.	Ծբ.
					1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24/- 31	25	26	27	28	29	30

2	Տօն Քրիստոսի 72 սուրբ աշակերտներուն
9	Թարգմանչաց
16	Ս. Մատթէոս, Ս. Մարկոս, Ս. Ղուկաս եւ Ս. Յովհաննէս աւետարանիչներու յիշատակ
24	Գիւտ Խաչի

ԾԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ ԻՄԱՆԱԿ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ

Առաջին հայերէն տողերը, առնուած Հին կտակարանի սողոմոն Իմաստուն Թագաւորի Առակներու գիրքէն, գրուած Մեսրոպ Մաշտոցի կողմէ Գիրերու գիւտի առթիւ, ինչպէս կը վկայէ Կորին, աշակերտ եւ կենսագիր Մեսրոպի

Հայաստանեայց եկեղեցին իր տօներէն իւրաքանչիւրին համար ունի արարողութիւններ եւ ծէսեր, ինչպէս նաեւ յիշատակութեան այլ հանդիսաւոր ձեւեր որոնցմով կը պատուէ իր սուրբերուն կամ այլ պատմակրօնական դէպքեր:

Այս տարի, Հոկտեմբեր ամսուան 9-րդ օրը կը յիշատակուի թարգմանչաց տօնը: Կազմակերպութիւններ հանդիսութիւն եւ ձեռնարկ կազմակերպելով, կը յիշեն Մեսրոպ Մաշտոցի եւ իր թարգմանիչ աշակերտներուն սուրբ գործը, գործ մը որուն շնորհիւ հայ ժողովուրդը բախտը ունեցաւ գիր եւ գրականութիւն ունենալով իր մշակոյթը յաւերժացնելու:

Սակայն ինչպէս միշտ, կիրակնօրեայ մեր դպրոցի սկզբունքներէն մէկն է խօսքն ու տեսականը վերածել գործի: Այսինքն չբաւարարուիլ տօնախմբութեամբ մը պատուելով սուրբ թարգմանիչներուն յիշատակը այլ աւելին՝ գտնել ձեւը գործէական կերպով շնորհակալութիւն եւ պատիւ յայտնելու մեր հայ գիրերու հօր եւ անոր աշակերտներուն: Եւ ո՞ր ձեւը աւելի արժանաւոր պիտի ըլլար եթէ ոչ Մաշտոցի ի՛նչ գտած գիրերուն հանդէպ մեր սէրն ու հաւատարմութիւնը արտայայտել, հայերէն գրաւոր լեզուն ամենուրեք գործածելով:

Մաշտոցի Արձագանգը այս գործը կը տանի տարիներէ իվեր: Ամենէն աւելի կը մշտնջ մեր կալքէջին գրեթէ հարիւր առ հարիւր հայերէն բովանդակութիւնը, երեւոյթ մը որ այսօր տակաւին հազուագիւտ կը մնայ: Հայկական նիւթեր արծարծող կալքէջերը շատ, բայց հայերէն լեզուով ներկայացողները՝ գրեթէ անգտանելի: Այսպէս է որ մենք, մեր կալքէջը յատկապէս եւ մեր պարբերաթերթն ու դասաւանդութիւնները ընդհանրապէս, զուտ հայերէնով հրամցնելով կ'ուզենք պատուել մեր թարգմանիչներուն սուրբ յիշատակը, ոչ միայն Հոկտեմբեր ամսուան ընթացքին, այլ՝ ամբողջ տարուած տնտեսութեամբ:

Կ'ուզենք մենք ալ ըլլալ մէջ մէկ թարգմանիչ, խօսելով, գրելով ու կարդալով Հայերէն:

Քրիստոնեային ապրելակերպը

Արդ, Տիրոջ կողմէ կ'ազդարարեմ ձեզի.- Չըլլայ որ կրկին դառնաք այն կենցաղին, որմով հեթանոսները կ'ապրին անմտօրէն: Անոնց միտքը խաւարած է. իրենց տգիտութեան եւ յամառ անտարբերութեան պատճառով՝ օտարացած են Աստուծոյ կեանքին, եւ քանի այդ կեանքին յոյսը չունին, իրենք զիրենք անառակութեան տուած՝ ամէն պղծութիւն կը գործեն անյագօրէն: Բայց ես ձեզի սորվեցուցի, թէ այն չէ՝ Քրիստոսի ճամբան: Դուք լսեցիք իր պատգամները եւ իրեն միանալով սորվեցաք՝ թէ Յիսուսի մէջ է ճշմարտութիւնը: Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եղէք նոր մարդ մը՝ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած, եւ ապրեցէ՛ք ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ ու սրբութեամբ:

Հետեւաբար ստախօսութենէն հրաժարեցէ՛ք: *«Ամէն մարդ ճշմարտութիւնը թող ըսէ իր ընկերոջ»*, ինչպէս կ'ըսէ մարգարէն, որովհետեւ Քրիստոսի միացած ըլլաով՝ իրարու անդամներ ենք: Եւ ինչպէս սաղմոսերգուն կ'ըսէ՝ *«Նոյնիսկ երբ բարկանաք՝ չըլլայ որ մեղանշէք»*. Եւ բարկացած չմնաք մինչեւ իրիկուն: Բնաւ առիթ մի՛ տաք Սատանային: Ով որ գողութեամբ կ'ապրէր՝ թող այլեւս չգողնայ, այլ՝ վարժուի արդար վաստակով ո՛չ միայն իր հացը շահելու, այլ նաեւ բարիք գործելու, օգնելով անոնց՝ որոնք կարօտ են: Ուեւ տգեղ խօսք չելլէ՝ ձեր բերանէն: Խօսեցէ՛ք միայն ինչ որ պէտք է, ինչ որ բարի է՝ ուրիշներուն հաւատքը ամրապնդելու համար, որպէսզի լսողները Աստուծոյ շնորհքովը լեցուին: Մի՛ տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով կնքուեցաք՝ փրկութեան օրուան հասնելու համար: Ձեզմէ արմատախի՛լ ըրէք ամէն դառնութիւն, բարկութիւն ու զայրոյթ, պոռչտութեւն հալոյթիւն, եւ առաջը առած կ'ըլլաք անոնց չար հետեւանքներուն: Իրարու հանդէպ քաղցր ու գթած եղէք եւ ներեցէ՛ք իրարու, ինչպէս Աստուած ալ Քրիստոսի միջոցաւ ներեց մեզի:

Եփեսացիներուն 4.17-32

Գիւտ Խաչի

Ինչպէս անունը կը նշէ, Գիւտ Խաչը առաքելական եկեղեցւոյ խաչին նուիրուած տօներէն այն տօնն է որ կը յիշատակէ Յիսուս Քրիստոսի խաչաբայտը գտնուելուն դէպքը:

326 թուին, Կոստիանդիանոս հռոմէացի կայսրին մայրը, Հելինէ, կ'այցելէ Երուսաղէմ ու հոն, Քրիստոսի գերեզմանափոսին վրայ շինել կու տայ Սուրբ Յարութիւն եկեղեցին: Ապա, հետեւելով Յուդա անունով հնագէտ հրեայ անձնատրութեան մը ցուցմունքներուն, ան պեղումներ կատարելով մէջտեղ կը բերէ նաեւ Յիսուսի եւ անոր հետ խաչուած երկու գողերուն խաչափայտերը: Ըստ աւանդութեան, ճշդելու համար թէ այդ երեք փայտերէն որ մէկն էր Յիսուսի խաչափայտը, նորեկ մահացած պատանեակ մը կը դրուի երեք խաչափայտերուն վրայ: Անոնցմէ մէկուն հպումովը, պատանեակը յարութիւն կ'առմէ ու կը կենդանանայ, այսպիսով ի յայտ բերելով թէ որն է Քրիստոսի ճշմարիտ խաչը:

Այս գիւտն է ահա որ կը յիշատակուի ամէն տարի, Գիւտ Խաչի տօնի օրը:

Ծանոթացում Հայաստանի հետ Արմաիրի մարզ

Հայ գիրերու գիտէն վերջ, երբ թափ առին թարգմանութեան աշխատանքները, Հայաստանի մշակութային կեդրոնի վերածուեցաւ Վաղարշապատ քաղաքը: Հոկտեմբեր ամսուան այս թիւով կը ծանօթանանք Հայաստանի Արմաիր մարզին, որուն պատմամշակութային կեդրոնն է Վաղարշապատ քաղաքը, հիմնադրած հայոց Վաղարշ թագաւորին կողմէ 117 թուին:

Արմաիրը Երեւանի սահմանակից մարզ մըն է: Անոր կեդրոնն է Արմաիր քաղաքը: Այս մարզը ամենէն աւելի ծանօթ է Ամենայն Հայոց Կաթողիկոսի նստավայր Էջմիածնի Մայր աթոռով:

Էջմիածին-Վաղարշապատը կարելի է նկատի առնել իբր հայկական ճարտարապետութեան բացօդեայ եւ լայնատարած թանգարան: Որովհետեւ, Էջմիածինէն անկախ, Արմաիր մարզի մէջ են նաեւ ճարտարապետական յայտնի այլ յուշարձաններ: Անոնցմէ մէկն է Սուրբ Հռիփսիմէ վսեմ տաճարը կառուցուած Կոմիտաս Ա կաթողիկոսի կողմէ 618-ին, Հռիփսիմեան կոյսերու նահատակման տեղը:

Սուրբ Հռիփսիմէի վեհ եւ հանդիսաւոր երեսօթին առջեւ, Կոստան Զարեան զայն որակած է «Քարէ երաժշտութիւն»:

Արմաիր մարզի մէջ են նաեւ Սուրբ Գայանէ տաճարը եւ Զուարթնոց տաճարի փլատակները, Սուրբ Շողակաթ եկեղեցին՝ ինչպէս նաեւ հայ ժողովուրդի պատմութեան նուիրուած յուշարձաններ: Անոնցմէ կը նշենք իբր օրինակ Մուսա լեւան պաշտպաններու յուշարձանը, կառուցուած Երեւանէն դէպի Վաղարշապատ գացող ճամբուն վրայ, Մուսա լեռ գիւղին մէջ: Հանրածանօթ է նաեւ Սարգարապատի ճակատամարտին նուիրուած յուշահամալիրը Արմաիր քաղաքէն 10 Ժմ հեռաւորութեան վրայ, նոյն այն տեղը ուր 1918-ին հայերը պարտութեան մատնեցին թուրք բանակը:

1871 թուականին, Հայաստան այցելեց Գերմանացի անուանի բնագէտ եւ բուսաբան Ռատտեն: Ան իր ուղեւորութիւնը ամբողջացնելէ վերջ եւ անդրադառնալով Էջմիածնի նշանակութեան եւ արժէքին, զայն անուանեց «Հայկական Հոռոմ»:



Ս. Գայանէ



Ս. Հռիփսիմէ



Ասք դէպի Վապարշապատ ուխտագնացներու մասին

Կ'ըսուի թէ Հայ եկեղեցւոյ պատմութեան բոլոր մեծերու ոգիները կը հաւաքուին Արարատեան դաշտի երկնքին մէջ, ուրկից մտիկ կ'ընեն Էջմիածին զանգերու ղողանջը: Այն ժամանակ, ոգիները մէկ մէկ կ'իջնեն, կը մօտենան հողին ու կը շոյեն հոն գտնուող ուխտաւորներու երեսները: Ու կը կարծուի թէ այդ է պատճառը որ ամէն հաւատացեալ հայ կը փափաքի անպայման մէկ անգամ գոնէ այցելել Վաղարշապատը ու դպնալ Էջմիածնի քարերուն:

Գիտէի՞ր թէ...

Արմավիրի մարզին մէջ կը գտնուի հարիւրաւոր հեկտարներու վրայ երկարող Որդան Կարմիրի դաշտեր: Իսկ ի՞նչ է Որդան Կարմիրը...

Հայկական պարի ընթացքին հագցուող տարազներուն մէջ գտնուող կարմիր վառ գոյնը կը կոչուի «որդան կարմիր»: Այդ կարմիր գոյնը որդան կը կոչուի որովհետեւ ժամանակին կը ստացուէր նոյն անունը կրող, 4-էն 12 մմ մեծութեամբ եւ Արարատեան դաշտին մէջ տարածուած միջատէ մը:

Հայկական որդան կարմիրը ընտիր ներկ մըն է որ կոչուած է նաեւ «արքայական ծիրանի» որովհետեւ զայն կը գործածէին թագաւորներն ու իշխանները:

Թարգմանչաց շարժում

Հայաստնեայց եկեղեցին Թարգմանչած օրը կը տօնէ վեց գլխաւոր թարգմանիչներու յիշատակը որոնք են, Մեսրոպ Մաշտոցի գլխաւորութեամբ, Գրիգոր Նարեկացի եւ Ներսէս Շնորհալի, Եղիշէ, Մովսէս Բերթող եւ Դաւիթ Անյաղթ:

Այս տարի Թարգմանչաց տօնը կը զուգադիպի Հոկտեմբեր 9-ին:



Հայ գիրերու գիտէն ետք ծնունդ առաւ թարգմանչաց շարժումը որուն առաջին եւ գերագոյն նպատակն էր Աստուածաշունչը թարգմանել հայերէնի եւ եկեղեցական ծեսերը հայացնել:

Թարգմանիչ անուան տակ ծանօթ են հայ գիրերու հեղինակ Մեսրոպ Մաշտոցի եւ հայոց կաթողիկոս Սահակ Ա. Պարթեւի շուրջ հաւաքուած 100 սաները, որոնք անմիջական աշակերտները եղած են անոնց: Իսկ այս աշակերտներու աշակերտները իրենց կարգին կոչուած են «կրտսեր թարգմանիչներ»:



Հայ Գրչութեան Կեդրոնները

Հայ առաջին գրչութեան կեդրոնը Վաղարշապատն է: Այստեղ Հինգերորդ դարէն սկսաւ գրուած, ընդօրինակուած եւ հայաստանի տարբեր կողմերը ղրկուած են հայերէն ձեռագիրներ: Ասոնք իրենց կարգին կ'ընդօրինակուէին ընդօրինակուելով բազմացուած են գրչութեան նոր կեդրոններըմէջ:

Միջնադարեան հայաստանի մէջ եղած են աւելի քան 1500 գրչութեան կեդրոններ, որոնք գործած են տարբեր ժամանակներու մէջ եւ ունեցած տարբեր ընդգրկումներ:

Առաւել նշանաւոր էին Վաղարշապատի, Սիւնեաց, Անձեւացեաց, Տաթեւի, Վարագի, Նարեկի, Հաղպարի, Սանահինի եւ այլ գրչութեան կեդրոններ:

Սուրբ թարգմանիչներ...

Գրիգոր Նարեկացի

Նարեկ գիւղ մըն էր Վանայ ծովուն հարաւ կողմը, Ռշտունեաց գաւառին մէջ: Անանիա Վարդապետ որ իր ժամանակին ամենէն զարգացած հոգեւորականներէն էր եւ որ հօրեղբայրն էր Նարեկացիին մօր, 10-րդ դարու սկիզբները հոն հիմնեց վանք մը: Հո՛ն դաստիարակուեցաւ ու ապրեցաւ այսպէս որակուած « մարմնաւոր հրեշտակն ու հսկող զուարթունն» Գրիգոր, եւ այդ իսկ պատճառաւ կոչուեցաւ Նարեկացի:

Բանաստեղծ, երաժիշտ, հայ առաքելական եկեղեցւոյ տօնելի սուրբերէն: Անոր ամենէն աւելի ծանօթ ստեղծագործութիւնն է «Մատենան Ողբերգութեան»ը, որ աւելի հանրածանօթ է իբր «Նարեկ» աղօթագիրք:

Նարեկացիի «Մատենան Ողբերգութեան»ը հրատարակուած է գրաբար, աշխարհաբար՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն եւ թարգմանուած է բազմաթիւ լեզուներու ինչպէս ֆրանսերէն, անգլերէն, պարսկերէն, իտալերէն, գերմաներէն, սպաներէն: Հետաքրքրական է նաեւ թէ նոյն այս գլուխ գործոցի գրչագիր ընդօրինակութիւններէն մեզի հասած է 150-էն աւելի օրինակներ:



Ս. Գրիգոր Նարեկացի մանրանկար 1173 ի Գրիգոր Մլիճեցիի պատկերազարդած «Մատենան Ողբերգութեան» ձեռագրէն

Ներսէս Ծնորհալի

Ամենայն հայոց կաթողիկոս Ներսէս Դ. Կլայեցի, կոչուէր է «Ծնորհալի» իր բացառիկ գիտութեան, առաքինի վարքին համապատասխան: Ան կրած է նաեւ բազմաթիւ այլ որակաւորներ, որոնցմէ են «Երկրորդ լուսաւորիչ», «Եռամեծ վարդապետ», «Երանաշնորհ սուրբ», «համահրեշտակ», եւայլն:

Ներսէս Ծնորհալիի հոգեւոր բանաստեղծութիւնները թիւով շատ են: Անոնցմէ ամենէն աւելի ծանօթ է «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, որ 24 տուներէ բաղկացած գեղեցիկ բանաստեղծութիւն մը կարելի է համարել: Այս տուններէն իւրաքանչիւրը կը վերագրուի օրուան 24 ժամերէն իւրաքանչիւրին, ու պարզ բայց նոյնատեղ խորաթափանց աղօթք մըն է: Ահա անոր առաջին երկու համարները.-

« Հաւատքով կը խոստովանիմ ու կ'երկրպագեմ Քեզի՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, անեղ եւ անմահ բնութիւն, արարիչը հրեշտակներուն, մարդոց եւ բոլոր արարածներուն. ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:

Հաւատքով կը խոստովանիմ ու կ'երկրպագեմ քեզի, անբաժանելի՛ լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մէկ Աստուածութիւն, արարիչ լոյսի եւ հալածող խաւարի, հալածէ՛ իմ հոգիէս մեղքի եւ անգիտութեան խաւարը, եւ լուսաւորէ՛ միտքս, որ այս պահուս Քեզի հաճելի ձեւով աղօթեմ եւ Քեզմէ՛ ընդունիմ իմ խնդրանքներս. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:»



Ս. Ներսէս Ծնորհալի մանրանկար 1352 Սուրխաթ

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն

Նոյեան տապանը կամ... Աստուած մեզի կը պաշտպանէ



Անունս Նոյ է: Ես Աստուած շատ
կը սիրեմ: Ընտանիքս եւ ես
կ'ապրէինք այն շրջանին երբ ամէն
մարդ Աստուծոյ անհնազանդ էր:
Աստուած շատ նեղացած էր:



Օր մը Աստուած հետս խօսեցաւ. «Այս
աշխարհը շատ չարութեամբ լեցուեցաւ.
հսկայ նաւ մը շինէ դուն քեզի համար,
որովհետեւ ջրհեղեղ պիտի դրկեմ եւ ամէն
ինչ եւ ամէն մարդ պիտի ոչնչացնեմ:»

Աստուծոյ ուզած հսկայ նաւը կը կոչուի
 Նաեւ «տապան»: Ան գրեթէ երկու ֆութպոլի
 դաշտերու չափ երկար է եւ նոյնքան լայն:
 Հասակը հինգ յարկանի շէնքի մը չափ է:
 Ի՛մ իսկ շինած տապանս իմ անունովս
 կոչուեցաւ «Նոյեան տապան»:



Աստուած ըսաւ. «Ընտանիքդ բե՛ր նաւուդ մէջ. Ես քեզի պիտի
 փրկեմ որովհետեւ դուն հնազանդ ես. Հետդ բե՛ր նաեւ ամէն
 տեսակի կենդանիներէն երկու հատ՝ մէկը առու, միւսը՝ էգ»: Ես
 հնազանդեցայ: Երբ բոլորս ներս մտանք Աստուած դուռը գոցեց:
 Եւ անձրեւեց, անձրեւեց, անձրեւեց եւ նորէն անձրեւեց...



40 օրեր անդադար անձրեւեց: Օր մը աղաւնի մը արձակեցի: Երբ ան վերադարձաւ գիտցայ թէ ցամաք հող չէր գտած ան:

7 օրեր ետք, նորէն արձակեցի աղաւնին: Այս անգամ ան վերադարձաւ կտուցին մէջ բռնած տերեւով մը: Յաջորդին, երբ անձակեցի աղաւնին, ան գնաց ու չվերադարձաւ: Աշխարհը ցամքած էր: Կրնայինք մեր տապանէն դուրս գալ:

Ջրհեղեղէն վերջ, Աստուած գեղեցիկ ծիածան մը ստեղծեց երկնքին մէջ: Ան ըսաւ. «Այս ծիածանը ձեզի կը դրկեմ որպէսզի միշտ յիշէք որ անգամ մը եւս ջրհեղեղ պիտի չի պատահի: Այս իմ խոստումն է ձեզի:»

Մեր տապանը հանգչած էր Արարատ լեռան գագաթին: Մենք դուրս եկանք մեր նաւէն եւ իջանք, տարածուեցանք եւ տեղաւորուեցանք արարատեան դաշտին վրայ: Մեր առաջին գործը եղաւ երկրպագել եւ փառք տալ Աստուծոյ:



Մտածէ՛
ասոր
մասին

Դուռն տեսե՛ր ես Ծիածան մը:
Ընդհանրապէս անձրեւէն ետք կը
տեսնենք զայն: Ծիածանը քեզի
ի՞նչ կը յիշեցնէ

Ո՞վ
ըսէր է

Աշխարհի անցի՛ր, Արարատի
նման ճերմակ գագաթ չկայ.

Պահուած բառ

ա	ր	դ	ա	ր	ն	ո	ւ	ի	ր	ե	լ
ն	ա	ա	ր	ծ	ա	բ	ր	ա	հ	ր	յ
ա	ջ	ռ	դ	ա	ս	ա	ր	ա	ն	ե	ա
հ	ա	ն	է	պ	բ	կ	բ	յ	ա	կ	ր
ի	ն	ա	ն	շ	ա	ր	ո	ց	ա	ա	ձ
տ	ա	լ	կ	ր	ա	բ	ա	ւ	ե	տ	ա
բ	ն	ա	կ	ա	ր	ա	ն	ե	մ	ա	կ
մ	ի	ա	ն	ա	լ	ր	ա	ր	ի	ր	ո
մ	ա	պ	ա	կ	ի	ձ	ա	ր	ս	ե	ւ
բ	ռ	ն	ե	լ	բ	ա	ր	ե	կ	ա	մ
ր	ւ	ո	ջ	տ	գ	ա	յ	լ	ա	լ	է
ց	ի	ց	ա	ռ	ա	բ	գ	ձ	մ	ե	ռ

Արդար	բառացի	հարբած	պետ
Արդէն	գալ	ձմեռ	օձ
Անահիտ	դասարան	միանալ	
Անանիա	դռնալ	միակ	
Ապակի	երեկ	միս	
Անաջար	իրար	յարձակում	
Բարի	լալէ	նուիրել	
Բարեկամ	կալք	շարոց	
Բարձ	կամենար	ջուր	
բռնել	կատարեալ	տեւաբար	
բնակարան	կրակ	ցից	պահուած բառը 4 գիր

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Ղուկասի Աւետարանին 9.12-13
**կ'իրիկնանար, Արձակէ՛, գտնեն, ամայի, ուտելիքը,
ձուկ, հաց, բաւականաչափ**

Երբ օրը -----, տասներկու աշակերտները
մօտեցան Յիսուսի եւ ըսին.

- ----- ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերն
ու ագարակները, հանգչին եւ ուտելիք -----, որովհետեւ
հոս ----- տեղ ենք:

Յիսուս անոնց ըսաւ.

- Դո՛ւք տուէք անոնց -----:

Անոնք ըսին.

- Ամբողջ մեր ունեցածը հինգ ----- եւ երկու ----- է.
բայց եթէ կ'ուզես, կ'երթանք ժողովուրդին համար
----- կերակուր կը գնենք:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ հայ գիրերու գիտը:

- ա.- 301
- բ.- 405
- գ.- 451
- դ.- 1

2.- 2005 թուականը հայ գիրերու գիտին քանի՞երորդ ամեակն է:

- ա.- 1700
- բ.- 2005
- գ.- 75
- դ.- 1600

3.- Հայաստանի ո՞ր մարզին մէջ կը գտնուի Սուրբ Էջմիածինը:

- ա.- Երեւան
- բ.- Արմաւիր
- գ.- Արագածոտն
- դ.- Արարատեան

4.- Ո՞ր գիրքը առաջին անգամ հայերէնի թարգմանուեցաւ:

- ա.- մեր հայերէնի գիրքը
- բ.- կարմիր գլխարկիկը
- գ.- Աստուածաշունչը
- դ.- Յայսմաուորքը

5.- Ո՞վ ստեղծեց հայ Գիրերը:

Սուրբ Մ-----g

6.- Նոյեան տապանը ո՞ր լեռան վրայ հանգչեցաւ:

7.- Քանի՞ օր անդադար անձրեւ եկաւ:

- ա.- 7
- բ.- 40
- գ.- 3
- դ.- 14

8.- Աստուած ասկէ ետք ջրհեղեղ պիտի դրկէ՞:

- ա.- այո
- բ.- ոչ
- գ.- կրնայ ըլլալ
- դ.- մէկը չի գիտէր

9.- Աստուած ի՞նչ նշան տուաւ Նոյին որպէսզի Նոյն գիտնայ թէ այլեւս ջրհեղեղ պիտի չըլլայ:

10.- Նոյան Տապանին մէջ քանի՞ մարդ կար:

- ա.- 2, Նոյն եւ իր Կինը
- բ.- 8, Նոյ, իր կինը, իրենց 3 տղաքը եւ անոնց կիները
- գ.- 28, Նոյ, իր կինը, իրենց 3 տղաքը անոնց կիները եւ անոնց զաւակները
- դ.- 280, Նոյն եւ իր ամբողջ դրացիները

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ հայ գիրերու գիտը:

ա.- 301
 բ.- 405
 գ.- 451
 դ.- 1

2.- 2005 թուականը հայ գիրերու գիտին քանի՞երորդ ամեակն է:

ա.- 1700
 բ.- 2005
 գ.- 75
 դ.- 1600

3.- Հետեւեալներէն ո՞վ Սուրբ թարգմանիչներուն մաս չի կազմեր:

ա.- Եղիշէ
 բ.- Մովսէս Քերթոզ
 գ.- Դաւիթ Անյաղթ
 դ.- Թորոս Ռոսլին

4.- Գրէ՛ հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնը

Ճ----- զ----- եւ
 զ-----
 իմանալ զ----- հ-----

5.- Այս տարի ե՞րբ կը տօնենք 4 Սուրբ աւետարանիչներուն տօնը:

6.- Նոյան Տապանին մէջ քանի՞ մարդ կար:

ա.- 2, Նոյն եւ իր Կինը
 բ.- 8, Նոյ, իր կինը, իրենց 3 տղաքը եւ անոնց կիները
 գ.- 28, Նոյ, իր կինը, իրենց 3 տղաքը անոնց կիները եւ անոնց զաւակները
 դ.- 280, Նոյն եւ իր ամբողջ դրացիները

7.- Սուրբ Ներսէս Կլայեցի կաթողիկոսը Ո՞ր հանրաժանօթ աղօթքը գրած է որ կը բաղկանայ 24 տուներէ:

8.- Հին կտակարանի ո՞ր գիրքով է որ Սուրբ թարգմանիչները սկսան Աստուածաշունչը թարգմանել:

ա.- Սաղմոս
 բ.- Առակներ
 գ.- Ժողովող
 դ.- Ծննդոց

9.- Գրէ՛ հետեւեալներուն անունները:

ա.- ----- Անյաղթ
 բ.- ----- Քերթոզ

10.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Յիսուսի 72 աշակերտներուն տօնը:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ Հայ
գիրերու գիտը:

ա.- 301
բ.- 405
գ.- 415
դ.- 451

2.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ
Քրիստոսի Խաչին գիտը:

ա.- 301
բ.- 351
գ.- 326
դ.- 381

3.- Ո՞ր կը կադանք հետեւեալը
«Իրարու հանդէպ քաղցր ու գթած եղեք
եւ ներեցէ՛ք իրարու, ինչպէս Աստուած
ալ Քրիստոսի միջոցաւ ներեց մեցի:»

4.- Հայաստանի ո՞ր մարզին մէջ կը
գտնուի Սարդարապատի
յուշահամալիրը:

5.- Թուէ՛ 6 Սուրբ Թարգմանիչները
որոնց տօնը ամէն տարի կը տօնենք
Հոկտեմբեր ամսուան ընթացքին:

ա. -----
բ. -----
գ. -----
դ. -----
ե. -----
զ. -----

6.- 6 Սուրբ Թարգմանիչներէն ո՞ր
երկուքը 5րդ դարու թարգմանիչներու
խումբին չեն պատկանիր:

ա. -----
բ. -----

7.- Ո՞ր քաղաքն է հայ գրչութեան
առաջին կեդրոնը:

8.- Ո՞ր սուրբ թարգմանիչն է
«Մատեան Ողբերգութեան» հեղինակը:

9.- Ո՞ր սուրբ թարգմանիչն է
«Հաւատով Խոստովանիմ» աղօթքին
հեղինակը:

10.- Ի՞նչ են Նոյի երեք զաւակներուն
անունները որոնք հետագային
մարդկութեան ցեղերը կազմեցին:

ա. -----
բ. -----
գ. -----

Սեպտեմբեր ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ

Պատասխաններ

Մանկապարտեզի անկիւն

Սրտովդ, մտքովդ, հոգիովդ, զօրութեամբդ,
քու անձիդ պէս

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. ք. 1929
2. դ. 1980
3. ք. 6
4. ա. 1
5. գ. 6
6. ք. Օձ
7. դ. բարին եւ չարը գիտնալու ծառ
8. գ. անհնազանդ եղան
9. ա. Ադամը
10. ք. հանգստացաւ

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ք. 1929
2. դ. 1980
3. ք. 25
4. Արմաւիր, Արագածոտն, Արարատեան
5. Արագած
6. Օշական
7. Մուղնի
8. գ. Ղուկաս
9. ք. Ուրբաթ
10. ք. Յունուար 6

Երկրորդականի անկիւն

1. ք. 1929
2. դ. 1980
3. ք. 25
4. Գեղարքունիք, Լոռի, Կոտայք
5. 6
6. ա. 325 Նիկիա
7. Մուղնի
8. գ. Ղուկաս
9. ք. Ուրբաթ
10. դ. 75

Մասնակցողներ

Մանկապարտեզ

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Խշիշեան Արշակ,
Յուլեր Անթեպեան, Կրէյս Նարեկեան,
Խշիշեան Ռիթա, Ճեսիքա
Մաթէոսեան:

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

Թամար Արուսի, Զոհրապ
Կարապետեան, Ալեք Կարապետեան,
Սերենա Քուլլութեան, Դալար
Գաբթանճեան, Մհեր Մաթէոսեան,
Արազ Գաբթանճեան, Ռիթա
Մամիրոյեան:

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Սեւան Մելեքեան,
Լորի Զուխանճեան, Անի Զուխանճեան,
Արին Անթեպեան:

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Յարութ Քուլլութեան, Ռիթա Գօճեան,
Թամար Պուլիքեան, Գօգօ
Մատթէոսեան, Անի Մելեքեան,
Վարդան Մելիտոնեան

Երկրորդականի անկիւն

Արշօ Մելիտոնեան , Կարօ
Կարապետեան:

Կարճ Լուրեր

- Մեր 25-րդ տարեշրջանի արձանագրությունները տեղի ունեցան 5 Սեպտեմբեր 2004-ին: Արձանագրուեցան 24 աշակերտներ:
- Վերամուտը տեղի ունեցավ 12 Սեպտեմբեր 2004-ին: Աշակերտության թիւն էր 49 :
- 19 Սեպտեմբեր 2004-ին Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտութիւնը ծնողներով, ուսուցչական կազմով եւ տնօրէնին հետ Սուրբ Յակոբ մայր եկեղեցւոյ մէջ յաւարտ Սուրբ պատարագի հաղորդութիւն ստացան:
- Մինչեւ 26 Սեպտեմբեր 2004, արձանագրուած աշակերտներուն թիւն է 66:
- Մեր 25-րդ տարեշրջանի կազմը

Տիկ. Վերժին Գաթանճեան	դաստիարակ Բողբոջ դասարանին
Տիկ. Սալբի Բակլայեան	դաստիարակ Կոկոն դասարանին
Օրդ. Յասմիկ Նաճարեան	դաստիարակ Ծաղիկ դասարանին
Օրդ. Երան Լոշխանեան	դաստիարակ Նախ. Ա. դասարանին
Տիկ. Վերա Կարապետեան	դաստիարակ Նախ. Բ. դասարանին
Օրդ. Գարոլ Գաթանճեան	դաստիարակ Նախ. Գ. դասարանին
Տիկ. Աշխէն Իշխանեան	դաստիարակ Նախ. Դ. դասարանին
Տիկ. Շողիկ Նաճարեան	դաստիարակ Նախ. Ե. դասարանին
Տիկ. Յասմիկ Գանաճեան	դաստիարակ Նախ Զ. դասարանին
Պրն. Թորոս Պապիկեան	Տնօրէն եւ դաստիարակ Երկրորդական բաժնին
Տիկ. Շաղիկ Պոյաճեան	Խմբագիր «Մաշտոցի Արձագանգ» ի
Պրն. Նիկոլ Դանիէլեան	Լուսանկարիչ

Յաւելեալ տեղեկութիւններու համար՝ հեռաձայնել Թորոս Պապիկեանին 956-1277

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝ Շաղիկ Պոյաճեան
Աշխատակիցներ՝ Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխանեան, Գարոլին Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցու
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

director@sourphagop.org www.sourphagop.org



ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 3

Նոյեմբեր 2004

Հաւատքը ինչպէ՞ս կը գոյանայ

Քրիստոնէական
դաստիարակութիւն տալն
ու ստանալը զանազան
տարրերէ կազմուող
ամբողջութիւն մըն է։...
Էջ 2

Խրատ բոլոր քրիստոնեաներուն Հաւատքի մասին

Ինչպէս որ լոյսին շողը
արեւէն իջնելով կը մտնէ
բոլոր երկինքներէն ու
լուսամուտներէն ներս...
Էջ 2

Որդեակներ՝, մեր սէրը միայն խօսքով ու

լեզուով թող չըլլայ,
այլ՝ գործով
արտայայտուած
ճշմարիտ սէր։ Ահա
այսպէ՛ս կը գիտնանք
թէ ճշմարտութեան
հետեւող կը մնանք։
Այսպէս նաեւ մեր
սիրտերը վստահութիւն
կ'ունենան Աստուծոյ առ
ջեւ կանգնելու։
Էջ 3

Պահուած բառ Էջ 14

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 15,16,17,18

Ծ ա ն օ թ ա ց ու լ մ Հայաստանի հետ՝ Ա ր ա ր ա տ ե ա ն մարզ

Արարատ մարզի փոքր
Վեդի մօտակայ բլուրին
վրայ կը բարձրանայ Խոր
Վիրապ Վանքը։...
Արարատեան մարզի մէջ
կը գտնուի մեծածառն
բանաստեղծ Պարոյր
Սեւակի ծննդավայր
Զ ա ն գ ա կ ա տ ու լ
գիւղը։...
Արարատեան մարզի մէջ
կը տարածուի «Խոսրովի
Անտառ»ը։...
Էջ 4,5

Գաւազանի մասին

Գաւազան կը նշանակէ
ձեռք բռնուելիք որեւէ
փայտի երկար կտոր։ Բայց
Եկեղեցու մէջ, նոյն այդ
«գաւազան» բառը կը
ստանայ բոլորովին տարբեր
նշանակութիւն։...
Էջ 6

Անունս Աբրամ էր։ Աստուած Աբրահամ կոչեց զիս։

Անունս կը նշանակէ
« Բ ա զ մ ա թ ի լ
Ժ ո ղ ո վ ու թ դ ն եր ու
հայր »։ Աստուածաշունչը
պատմուած փոքրիկներուն։
Էջ 10, 11, 12, 13



Գ աւ ա զ ա ն ը Աստուածաշունչին մէջ

Հին Կտակարանին մէջ շատ
մը դրուագներ կան որոնց մէջ
գաւազանը դեր կը կատարէ,
բուժիչ, փրկիչ կամ
պարգապէս ոչ
խորհրդանշող։
Էջ 7

Եօթանասնից Septuagint / LXX

Աստուածաշունչի
թարգմանութիւններէն
ամենէն հինն է
«Եօթանասնից
թարգմանութիւն»ը, որմէ
կատարուած է
Աստուածաշունչի հայերէն
առաջին թարգմանութիւնը։
Էջ 8

Աստուած կ'ընէ անսպասելի

Իսրայէլի ժողովուրդը կը
սպասէր թագաւոր մը։ Ան
կը հաւատար Հին
Կ տ ա կ ա ր ա ն ի
մարգարէութիւններուն, բայց
կը մոռնար կամ չէր հասկնար
մարգարէութիւններու ճիշդ
իմաստը։
Աստուած յարգեց Իր
խոստումը եւ ղրկեց թագաւոր
մը։ Բայց ոչ սպասուած
տեսակի թագաւոր մը այլ
բոլորովին անսպասելի։...
Էջ 7

Հոկտեմբեր ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ Էջ 19

Նոյեմբեր 2004**Հաւատքը ինչպէ՞ս կը գոյանայ**

Կիր․	Բշ․	Գշ․	Դշ․	Եշ․	Ուր․	Շբ․
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

6	Սուրբ Բրեշտակապետներ Գաբրիէլի եւ Միքայէլի
20	Տօն Ամենայն Սրբոց «բոլոր Սուրբերու»
27	Սուրբ Գրիգոր Սքանչելագործի, Նիկողայոս Բայրապետին եւ Միլոնայ եպիսկոպոսին

Խրատ բոլոր քրիստոնեաներուն Հաւատքի մասին

Ինչպէս որ լոյսին շողը արեւէն իջնելով կը մտնէ բոլոր երկինքներէն ու լուսամուտներէն ներս եւ կը ձեւաւորուի Բամաձայն տան մեծութեան կամ փոքրութեան՝ լուսաւորելով այնտեղ գտնուածները. նոյնպէս Բաւատքը Աստուծմէ մարդոց մէջ կ'իջնէ եւ անոնց սրտերուն ու հոգիներուն մէջ կը բնակի եւ զայն ընդունողներուն ընկալման չափով կը բովանդակուի: Եւ ինչպէս որ կնիքի նմանութիւնը կը տեսնուի մոմին վրայ, այսպէս ալ Բաւատքը Աստուծոյ կողմէ մարդոց մէջ կը տպաւորուի եւ անոնց սրտերուն ու հոգիներուն մէջ կերպաւորուելով կը կնքուի:

Յովհաննէս Երզնկացի

Քրիստոնէական դաստիարակութիւն տալն ու ստանալը զանազան տարրերէ կազմուող ամբողջութիւն մըն է: Ան կարգ մը տեղեկութիւններու փոխանցում կը նշանակէ, որովհետեւ կարելոր է որ քրիստոնէական դաստիարակութիւն փնտռող անհատը ծանօթ ըլլայ իր կրօնի պատմութեան, եկեղեցւոյ ծեսերուն, պատմակրօնական դէպքերուն եւ դէմքերուն: Ան կը նշանակէ նաեւ սերտողութեան աշխատանքներ, որովհետեւ անհատը պէտք է սերտէ, ճանչնայ, ծանօթ ըլլայ իր Սուրբ Գիրքին, անոր բովանդակութեան եւ կառոյցին:

Սակայն այս բոլորէն աւելի կայ Քրիստոնէական դաստիարակութեան մէկ այլ երեսը, ամենէն աւելի կարելորն ու դժուարը փնտռող անհատին մէջ Բաւատքի ծնունդը: Ու այս կարելի չէ ուսուցանել, կամ տեղեկութեանց, զրոյցներու, վերլուծումներու միջոցաւ փոխանցել մէկը միւսին:

Հաւատքը իրաքանչիւր անհատին յատուկ մէկ փորձառութիւնն է, հոգեւոր եւ զգացական մէկ ապրում որուն ընթացքին, անձը, իրեն իրայատուկ կերպով մը, կապի մէջ կը մտնայ իր Տիրոջ հետ:

Աստուծոյ հետ «հանդիպման» փորձառութիւնը շատ կը տարբերի անհատէ անհատ: Ան կը պատահի տարբեր ժամանակի մէջ, տարբեր կացութեան մը առջեւ, տարբեր ոյժով, տարբեր պատճառներով եւ կ'ունենայ տարբեր ազդեցութիւն մարդոց վրայ: Սակայն բոլորին համար ալ այդ հանդիպումը կ'ըլլայ ինքնագիտակցութեան պահ, ինքնաճանաչման առիթ եւ մանաւանդ մարդուն մէջ աստուած աշխին ներկայութեան անուրանալի փաստ:

Սիրենք իրար՝ գործով եւ ո՛չ խօսքով

Ա. Յովհաննէսի 3.11-24

Նոր Կտակարանը կը սկսի չորս Աւետարաններով, գրուած Մատթէոս Առաքեալի, Մարկոսի, Ղուկասի եւ վերջապէս Յովհաննէս Առաքեալի կողմէ: Այս չորս Աւետարաններուն կը յաջորդէ այլ գիրք մը, «Գործք առաքելոց» կամ առաքեալներուն գործերը, որ ինչպէս անունը կը նշէ, կը պատմէ թէ ինչպէս ապրեցան եւ ինչպէս քարոզեցին առաքեալները Յիսուսի յարութենէն վերջ:

«Գործք Առաքելոց»-ին կը հետեւի այլ բաժին մը, բաղկացած նամակներու շարքէ մը: Այս նամակներէն առաջին 14-ը գրուած են Պօղոս առաքեալի կողմէ եւ ուղղուած զանազան ազգերու եւ ընթերցողներու, ինչպէս Հռոմայեցիներուն, Եփեսացիներուն, Տիմոթէոսին, Տիտոսին եւայլն:

Պօղոս առաքեալի 14 նամակներուն կը յաջորդեն «ընդհանրական» կոչուած եօթը այլ նամակներ եւ վերջին գիրքը՝ Յովհաննէս առաքեալի յայտնութիւնը: Այս նամակները ընդհանրական կոչուած են որովհետեւ ուղղուած են ընդհանուրին, մինչ Պօղոս առաքեալի նամակները, ինչպէս որ ըսինք, ուղղուած են յատուկ անհատներու, եկեղեցիներու կամ ազգերու:

Ահա այս ընդհանրական նամակներուն մէկուն մէջէն քաղուած է այն համարը որ կը ներկայացնենք «Մաշտոցի Արձագանգ»-ի Նոյեմբեր ամսուան թիւով: Ան Յովհաննէս Առաքեալի գրած առաջին նամակին մէկ հատուածն է:

Պատուիրանը, որ սկիզբէն իսկ լսեցիք, սա էր որ սիրենք իրար: Հետեւաբար չըլլա՛նք Կայէնին պէս, որ Զարին օրինակին հետեւելով՝ իր եղբայրը սպանցեց: Եւ ինչո՞ւ սպանցեց. որովհետեւ իր գործերը չար էին, մինչ եղբօր գործերը՝ բարի:

Եղբայրներ՛ր, մի՛ զարմանաք երբ աշխարհը ձեզ ատէ: Մենք գիտենք՝ թէ մահէն կեանքի անցած ենք. ապացոյց՝ որ մեր եղբայրները կը սիրենք: Ով որ իր եղբայրը չի սիրեր, մահուան ենթակայ կը մնայ: Ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան մըն է. եւ գիտէք թէ ոեւէ մարդասպան յաւիտենական կեանքը չունի իր մէջ:

Մենք սէրը ճանչցանք անով որ Քրիստոս իր կեանքը զոհեց մեզի համար: Հետեւաբար մե՛նք եւս մեր կեանքը պէտք է զոհենք մեր եղբայրներուն համար: Այն մարդը որ նիւթական ամէն բարիք ունի, եւ տեսնելով հանդերձ թէ իր մէկ եղբայրը օգնութեան կարօտ է իր գութը չի շարժիր, ի՞նչպէս կրնայ ըսել թէ Աստուծոյ սէրը ունի իր մէջ:

Որդեակներ՛ր, մեր սէրը միայն խօսքով ու լեզուով թող չըլլայ, այլ՝ գործով արտայայտուած ճշմարիտ սէր: Ահա այսպէ՛ս կը գիտնանք թէ ճշմարտութեան հետեւող կը մնանք: Այսպէս նաեւ մեր սիրտերը վստահութիւն կ'ունենան Աստուծոյ առջեւ կանգնելու: Նոյնիսկ եթէ մեր խիղճը ոեւէ յանցանքով մեզ մեղադրէ, չմոռնանք՝ որ Աստուած մեր խիղճէն աւելի մեծ է եւ ամէն բան գիտէ: Իսկ եթէ մեր խիղճը մեզ չի մեղադրեր, սիրելիներ՛ր, համարձակ կերպով, կրնանք դիմել Աստուծոյ, եւ ինչ որ ալ խնդրենք իրմէս կը ստանանք, որովհետեւ իր պատուիրանները կը գործադրենք եւ կը կատարենք ինչ որ հաճելի է իրեն: Եւ իր պատուիրանը սա է, որ հաւատանք իր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի, եւ սիրենք իրար, ինչպէս որ մեզի պատուիրեց: Արդ, ով որ Աստուծոյ պատուիրանները կը գործադրէ, Աստուծոյ միացած կը մնայ եւ Աստուած ալ՝ իրեն: Իսկ Աստուծոյ մեզի միացած մնալուն ապացոյցը Սուրբ Հոգին է, որ Աստուած մեզի տուաւ:

Ծանոթացում Հայաստանի հետ Արարատի մարզ

Արարատի մարզը կը գտնուի Երեւանի հարաւ արեւելքը: Անոր կեդրոնն է Արտաշատ քաղաքը: Անոր այլ ծանոթ քաղաքներէն են Արարատ, Մասիս եւ Վեդի:



Արարատ մարզի փոքր Վեդի գիւղի մօտակայ բլուրին վրայ կը բարձրանայ Խոր Վիրապ վանքը: Ըստ աւանդութեան, վանքի տեղը կը գտնուէր Հայաստանի նախկին մայրաքաղաք Արտաշատի միջնաբերդի բանտը, ուր 13 տարիներ բանտարկեալ եղած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը:

Վիրապը, այսինքը փոսը, ինքնին կը գտնուի վանքի Սուրբ Գեորգ եկեղեցիին մէջ, 4,4 մետր տրամագծով, 6 մետր խորութեամբ: 25 աստիճաններ այցելուն կը տանին վար, վիրապի խորը:

Արարատեան մարզի մէջ կը գտնուի մեծանուն բանաստեղծ Պարոյր Սեւակի ծննդավայր Զանգակատուն գիւղը: Մինչեւ 1948, Զանգակատունը կոչուած էր Զանախշի, ապա Սովետաշէն: Երբ Պարոյր Սեւակ գրեց «Անլուելի Զանգակատուն» բանաստեղծութիւնը, իր ծննդավայր գիւղը որպէս խորհրդանիշ ընդունեց վերնագիրը եւ անունը փոխելով դարձաւ Զանգակատուն գիւղ:



Արարատ մարզի մէջ կը տարածուի «Խոսրովի անտառ»ը: Այս արհեստական «բուսական թանգարանը», հարուստ կաղնի ու սոճի ծառերով, տնկել տուած է Խոսրով Կոտակ թագաւորը 330 թուականին:

Խոր վիրապի խորհրդանիշը...

Խոր Վիրապը քրիստոնէական հաւատքի փորձութեան խորհրդանիշն է: Գրիգոր Լուսաւորիչ հոն ապրած է 13 տարիներ շարունակ, իբր սնունդ ունենալով միայն այն հացը որ օրուան թագաւոր Տրդատի քոյր Խոսրովադուխտը վար կը ձգէր գաղտնաբար: Բոլոր չարչարանքներով հանդերձ Գրիգոր Լուսաւորիչ հաւատարիմ մնացած է իր հաւատքին ու մնացած անոր կառչած:

Խոր Վիրապը նաեւ խորհրդանիշն է հայ ժողովուրդի դարձի գալուստին: Այսպէս, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ոչ միայն ինք անձնապէս մարմնով դուրս եկաւ վիրապէն այլ դուրս բերաւ ամբողջ հայ ժողովուրդը հեթանոսութեան խաւարէն դէպի քրիստոնէութեան լոյսը:

Գաւազանի մասին

Գաւազան կը նշանակէ որեւէ ձեռք բռնուելիք փայտի երկար կտոր: Բայց եկեղեցւոյ մէջ, նոյն այդ «գաւազան» բառը կը ստանայ բոլորովին տարբեր նշանակութիւն:

Եկեղեցական ըմբռնումով Գաւազանը հոգեւոր իշխանութեան եւ կրօնական աստիճանի կամ պաշտօնի նշան է:

Հայ եկեղեցւոյ մէջ ընդունուած երկու կարգի գաւազաններ կան. –

Վարդապետական եւ եպիսկոպոսական: Այս վերջինը կը կոչուի նաեւ Հովուական:

Հովուական գաւազանին կը տրուի նաեւ «Ասա» անունը որ նմանութիւն ունի արաբերէն «ասա» բառին հետ որ նշնալէս կը նշանակէ գաւազան: Ասա կը կրեն կաթողիկոսները, պատրիարքներն ու առաջնորդները:

Հայ եկեղեցւոյ գաւազանները շինուած կրնան ըլլալ զանազան նիւթերէ, ինչպէս փայտէ, մետաղէ կամ ոսկորէ: Կան նոյնիսկ ապակիէ գաւազաններ որոնք սակայն կը մնան հազուագիւտ: Ընդհանրապէս, գաւազանի մը կոթն ու գլուխը իրարմէ տարբեր նիւթերէ շինուած կ'ըլլան:



Եպիսկոպոսական գաւազան
17-րդ դար



Վարդապետական գաւազան
1824 Փիլիպպէ

Ի՞նչ ձեւ ունին եկեղեցական գաւազանները:

Կոթը ընդհանրապէս գլանաձեւ կլորակ կ'ըլլայ կամ, կլորի մօտ բազմանկիւն: Հասակը ընդհանրապէս մարդու մը հասակին չափ, կամ անկէ քիչ մըն ալ աւելի բարձր: Սակայն մեր եկեղեցական գաւազաններուն ամենէն աւելի հետաքրքրաշարժ բաժինը կը մնայ անոնց գլուխը որ ինչպէս կը տեսնենք այս նկարներուն մէջ՝ օձաձեւ է: Օձագլուխ գաւազաններուն վրայ կը տեսնենք երկու կամ չորս օձեր: Իսկ ինչո՞ւ օձ եւ ոչ այլ կենդանի: Որովհետեւ օձը հմտութիւն կը խորհրդանշէ եւ առաքինութիւն մըն է որմով հոգեւոր հայրեր իրենց հաւատացեալ ժողովուրդը պէտք է առաջնորդեն:

Գաւազանը Սուրբ Գիրքին մէջ

Հին կտակարանին մէջ կան շատ մը դրուագներ որոնց մէջ գաւազանը դեր կը կատարէ, բուժիչ, փրկիչ կամ պարզապէս ոյժ խորհրդանշող:



Աստուած Մովսէսը կը կանչէ Ելից 4.1-5

Անապատին մէջ, Մովսէս ոչխարներ կ'արածէր: Աստուած յայտնուեցաւ իրեն ու ըսաւ. - «Քեզ եգիպտացիներուն արքային՝ փարաւոնին մօտ պիտի դրկեմ եւ իսրայէլացիները ազատեմ եգիպտացիներու երկրէն:» Մովսէս ըսաւ թէ ինք չի համարձակիր երթալ փարաւոնին մօտ, որովհետեւ սովորական մարդ էր: Աստուած ըսաւ անոր. -

«Ես քեզի հետ պիտի ըլլամ, եւ պիտի օգնեմ քեզի. Ի՞նչ բռնած ես ձեռքիդ մէջ:»

- Գաւազան մը, կը պատասխանէ Մովսէս:

- Գաւազանդ նետէ գետին:

Մովսէս հնազանդեցաւ: Գաւազանը վերածուեցաւ օձի: Աստուած հրահանգեց. -

«Մօտեցիր եւ վեր առ այս օձը»: Մովսէս մօտեցաւ ու օձը բռնեց պոչէն: Հազիւ անոր դպած, կենդանին ահա վերագտաւ իր սկզբնական ձեւը ու նորէն դարձաւ գաւազան:

«Ահա այսպէս պիտի համոզես եգիպտացիները ու փաստես որ ես երեւցայ քեզի», ըսաւ Աստուած:



Պղինձէ օձը Թուոց 21

Տարիները անցան: Իսրայէլացիները տակաւին կը թափառէին անապատին մէջ՝ չհասնելով Քանանու երկիրը, որ Տէրը խոստացած էր անոնց տալ:

Ժողովուրդը դժգոհ էր: Այսպէս անոնք կը դժգոհէին նաեւ այն ժամանակ երբ կը քալէին կարմիր Ծով տանող ճամբով: Մարդիկ յուսահատած էին Աստուծմէ եւ Մովսէսէն: Անոնք կ'ըսէին. «Ինչո՞ւ մեզ հանցեցիր Եգիպտոսէն. որպէսզի այս անապատին մէջ կոտորես: Ո՛չ հաց կայ եւ ո՛չ ջուր: Մենք զգուած ենք այս խեղճուկ սնունդէն»:

Տէրը բարկացաւ եւ օձեր դրկեց իսրայէլացիներուն դէմ: Օձերը կը խայթէին մարդերը: Ծառ իսրայէլացիներ մեռան: Ժողովուրդը գալով Մովսէսի մօտ ըսաւ. «Մեղք գործած ենք, որովհետեւ չարախօսեցինք Տէրոջ ու քեզի դէմ: Աղօթէ՛ Աստուծոյ, որ ան մեր մէջէն վերցնէ այդ օձերը»: Մովսէս աղօթեց ժողովուրդին համար: Տէրը ըսաւ Մովսէսի. «Դու չպղինձէ օձ մը պատրաստէ, եւ զայն դիր փայտէ ձողի մը վրայ: Երբ օձը մէկը խայթէ, եւ օձէն խայթուողը նայի քու պատրաստած օձիդ՝ կը փրկուի»:

Մովսէս այդպէս ալ ըրաւ: Ան պղինձէ օձ պատրաստեց եւ զայն դրաւ փայտէ ձողի մը վրայ: Օձէն խայթուած մարդիկ կը նայէին պղինձէ օձին եւ կը փրկուէին:

Եօթանասնից (Septuagint / LXX)

Աստուածաշունչը աշխարհի վրայ ամենէն աւելի ընթերցուած ու ամենէն աւելի մեծ թիով լեզուներու թարգմանուած գիրքն է:

Աստուածաշունչի թարգմանութիւններէն ամենէն հինն է «Եօթանասնից թարգմանութիւն»ը: Անկից է որ կատարուած է Աստուածաշունչի հայերէն առաջին թարգմանութիւնը:

Երջանկայիշատակ Զարեհ Եպս. Ազնաւորեան իր «Աստուածաշունչ, թարգմանութիւն եւ սերտողութիւն» գրքին մէջ ահա այս կը գրէ Եօթանասնից թարգմանութեան մասին. –

«Հինէն ի վեր Եգիպտոս հաստատուած (հրեաներու) գաղութ մը կար:... Աղեքսանտր Մեծի օրերէն սկսեալ, այս գաղութը աստիճանաբար սկսած էր յունախօս դառնալ, մոռնալով իր լեզուն: Նորագոյն սերունդները հնարաւորութիւնը չունէին Աստուածաշունչը իրենց մայրենի լեզուով հասկնալու, եւ ատիկա կը դժուարացնէր անոնց դաստիարակութիւնը, իրենց հայրերուն կրօնքով եւ աւանդութեամբ: Մտահոգ այս իրողութեամբ, համայնքին պատասխանատուները նախաձեռնեցին թարգմանութեան գործին, Ք.Ա. շուրջ 280 թուականին:

Ք.Ա. շուրջ 100 թուականէն եկող աւանդութեան մը համաձայն, այդ թարգմանութիւնը կատարուած է Եգիպտոսի Պտղոմէոս Բ. Ֆիլատելֆոս թագաւորին պահանջքով, որպէսզի իր նշանաւոր մատենադարանին մէջ ունենայ զայն: Այդ նպատակով ալ, կ'ըսուի, Պաղեստինէն 72 Ռաբբիներ կանչել տուաւ, Իսրայէլի իւրաքանչիւր ցեղէն 6 հոգի, եւ զանոնք Փարոս կոչուած կղզիին վրայ առանձնարաններու մէջ փակել տուաւ 72 օր, որպէսզի առանձին-առանձին կատարեն սրբազան գիրքերուն թարգմանութիւնը: 72 օրերու աւարտին, երբ իւրաքանչիւրը իր



թարգմանութիւնը բերաւ եւ անոնք բաղդատուեցան, տեսնուեցաւ՝ որ բոլոր թարգմանութիւններն ալ բառացիօրէն նոյնն էին:

Այս աւանդութենէն կու գայ յունարէն սոյն թարգմանութեան տրուած «Եօթանասնից» անունը, որ կը նշանակէ «Եօթանասուն անձերու կողմէ կատարուած թարգմանութիւն»:

Աստուած կ'ընէ անսպասելին

Իսրայէլի ժողովուրդը կը սպասէր թագաւոր մը: Ան կը հաւատար Հին Կտակարանի մարգարէութիւններուն, բայց կը մոռնար կամ չէր հասկնար մարգարէութիւններու ճիշդ իմաստը:

Աստուած յարգեց իր խոստումը եւ ղրկեց թագաւոր մը: Բայց ոչ սպասուած տեսակի թագաւոր մը այլ բոլորովին անսպասելի:

Աստուածաշունչի օգնութեամբ ամբողջացուր նախադասութիւնները ու տե՛ս թէ Աստուծոյ ղրկած թագաւորը ինչպիսին էր:

Ժողովուրդը կը կարծէր թէ ... —————> Աստուած ղրկեց...

Թագաւոր մը պալատի մէջ պէտք էր ծնէր...

Թագաւոր մը
.....«Ղուկաս 2.7»

Թագաւոր մը հարուստ ծնողք պէտք էր ունենար...

Թագաւոր մը
« Մատթէոս 13.55»

Թագաւոր մը գեղեցիկ զգեստներ պէտք էր հագուէր...

Թագաւոր մը
« Ղուկաս 2.7»

Թագաւոր մը ոչժ եւ պատիւ պէտք էր ունենար...

Թագաւոր մը
«Մատթէոս 27.29-30»

Թագաւոր մը գահ եւ մեծ պալատ պէտք էր ունենար...

Թագաւոր մը
«Ղուկաս 9.58»

Թագաւոր մը թագաւորութիւն պէտք էր ունենար...

Թագաւոր մը
«Յովհաննէս 18.37»

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն

Աբրահամի փորձութիւնը կամ՝ Աստուած կը յարգէ իր խոստումները



Անունս Աբրամ էր: Աստուած
Աբրահամ կոչեց զիս: Անունս կը
նշանակէ «Բազմաթիւ ժողովուրդներու
հայր»: Աստուած ինծի բազմաթիւ
ժողովուրդներու հայր ըրաւ:

Օր մը Աստուած ըսաւ ինծի. – «Ես
պիտի օրհնեմ կիցդ՝ Սառան եւ անոր
զաւակ մը պիտի պարգեւեմ»: Ես
ծիծաղեցայ: Կիցս ու ես գրեթէ 90 եւ
100 տարեկան էինք ու զաւակ
ունենալու համար շատ ծեր էինք:



Աստուած իր խոստումը յարգեց: Ժամանակ մը վերջ, Սառային ու Աբրահամին պարգեւեց զաւակ մը՝ Իսահակ: Երբ Իսահակ ծնաւ, հայրը՝ Աբրահամ, 100 տարեկան էր:



Սակայն տարօրինակ բան մը ալ պատահեցաւ: Աստուած կրկին խօսեցաւ Աբրահամին ու ըսաւ. – «Տա՛ր միակ զաւակդ ու ինձի համար զոհէ՛ զինք:»

Թէեւ շատ տխրեցաւ Աբրահամ ու չհասկցաւ Աստուծոյ պատուէրին նշանակութիւնը, հնազանդեցաւ որովհետեւ զԱստուած շատ կը սիրէր:

Աստուած այդպէս ըսաւ Աբրահամին
որպէսզի փորձէ զինք ու տեսնէ թէ
Աբրահամ որքան կը սիրէր զԱստուած:
Ան Աբրահամը փորձութեան մատնեց:



Աբրահամ բարձրացաւ լերան գագաթը ու պատրաստուեցաւ իր միակ որդին զոհելու Աստուծոյ: Այդ վայրկեանին Աստուած միջամտեց ու ըսաւ. – «Խնայէ միակ որդիդ, Աբրահամ. գիտեմ հիմա որ նոյնիսկ մէկ հատիկ զաւակդ կը զոհես ինձի համար:

Գիտե՞ս թե՛ ինչու Աստուած ուզեց որ Աբրահամ իր զաւակը զոհէ: Որպէսզի գիտնայ թե՛ ինչ կը զգայ հայր մը երբ իր որդին կը ստիպուի զոհել:

Աբրահամի պատմութենէն
բաւական վերջ, Աստուած իր
Մտածէ՛ միակ որդին՝ Յիսուս զոհեց մարդոց
ասոր շատ սիրելուն պատճառաւ: Ան
մասին կ'ուզէր որ իր զաւակին մահով բոլոր
ժողովուրդներուն յանցանքները
ներուին ու մեղքերը քաւուին:

Պահուած բառ

ա	ս	տ	ո	լ	ա	ծ	ո	լ	ա	ր	Ի
կ	ա	ռ	ա	տ	ո	լ	ն	ր	ա	ք	ձ
ռ	մ	կ	ա	մ	ա	լ	ո	ր	ս	ն	գ
գ	լ	խ	ա	լ	ո	ր	ց	ն	ա	ծ	ա
տ	ե	պ	ռ	հ	գ	ր	ա	գ	է	տ	լ
կ	ա	ր	ա	պ	ր	լ	ո	ր	մ	ա	հ
հ	յ	ա	ն	կ	ա	ր	ծ	ե	ց	Ի	ն
ս	ա	ն	ձ	Ի	լ	ն	ա	ծ	ա	ծ	կ
տ	ա	ր	Ի	ո	ո	մ	ա	ն	ա	ա	ա
ջ	ր	ա	ն	ե	ր	կ	ա	խ	ր	ա	տ
ն	պ	ա	ր	ա	պ	լ	է	է	ա	յ	ե
դ	յ	ա	ն	ձ	ն	ա	ր	ա	ր	ե	լ

Աստուած
առանձին
ամբան
այդ
աւան

գծէ
գանձ
գրաւոր
գրագէտ
գլխաւոր

խրատ

ծախէ
ծեր

ծոմապահ
ծուարի

կառատուն
կամաւոր
կարապ
կարէ

հիանալ

ձիւնածածկ
ձոր

մաս
մրուր

յանկարծ
յանձնարարել

նաւ
նկատել
նոցա

որս

պարապ
պետ

ջրաներկ

սանձ

տարի
տառ

ցաւ

**Պահուած
բառը 7 գիր**

**Նախորդ
պահուած
բառը
«պարզ»**

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացուր պատմութիւնը:

« Յովսէփ – Յակոբ – իսմայէլացիներուն – գոյնզգոյն – կը
նախանձէին »

Իսահակի որդին -----իր տասներկու որդիներէն
ամենէն շատ կը սիրէր----- : Իր սէրը յայտնելու համար
ան Յովսէփի -----պատմունճան մը նուիրեց: Յովսէփի
եղբայրները այդ պատճառաւ ----- եւ զինք
----- ծախեցին քսան արծաթ դրամի:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1. Աստուած ստեղծեց կենդանիները ճորդ օրը: Ի՞նչ ստեղծեց Աստուած 5րդ օրը:

Ա. Զուր
Բ. Մարդ
Գ. Արեւ
Դ. Ծովային կենդանիներ

2. Ի՞նչ անուանեց Աստուած առաջին տղամարդը:

Ա. Արմէն
Բ. Արամ
Գ. Ադամ
Դ. Արա

3. Ի՞նչ է առաջին կնոջ անունը:

Ա. Եւա
Բ. Երօ
Գ. Ռեբեկա
Դ. Եսա

4. Ո՞վ խաբեց Եւային:

Ա. Ադամը
Բ. Առիւծը
Գ. Աղուէսը
Դ. Օձը

5. Ի՞նչ կը նշանակէ Եւա:

Ա. Կեանք
Բ. Ոչինչ
Գ. Աշխարհ
Դ. Աղջիկ

6. Ի՞նչ էր Իսահակի անդրանիկ զաւակին անունը:

ա. - Յակոբ
բ. - Աբրահամ
գ. - Եսաւ
դ. - Մովսէս

7. Ամբողջացուր աղօթքը:

Ես կ'աղօթեմ ով _____
Դուն մեզ _____ պաշտպանես
Հայրս _____ եղբայրս
Եւ _____ հայ ազգս:

8. Ի՞նչ ըրաւ անառակ որդիին հայրը երբ զինքը տեսաւ:

ա. - պատժեց զինք:
բ. - գթաց, իր որդին գրկեց ու համբուրեց:
գ. - մերժեց զինք տեսնել:
դ. - բոլոր ունեցածը առաւ իրմէ:

9. Յիսուս քանի անգամ փորձուեցաւ Սատանայէն:

ա. - չորս անգամ
բ. - երկու անգամ
գ. - հինգ անգամ
դ. - երեք անգամ

10. Ի՞նչ էր Ադամին պատիժը:

ա. - ճակտի քրտինքով շահիլ հացը:
բ. - Աստուած դժոխք ղրկեց զինք:
գ. - «Հող Պիտի ուտես» ըսաւ իրէն:
դ. - արգիլեց դրախտ մտնել

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

1.- Հայաստանի ո՞ր մարզին մէջ կը գտնուի Խոր Վիրապ վանքը:

2.- Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ ընդունուած են երկու կարգի գաւազաններ: Որո՞նք են:

ա. -----

բ. -----

3.- Հետեւեալներէն ո՞րոնք չեն կրնար «Ասա» կրել:

ա.- Տէր Հայրը

բ.- Վարդապետը

գ.- Կաթողիկոսը

դ.- Պատրիարքը

4.- Ո՞ր կենդանիին գլուխը կը զարդարէ գաւազաններուն գլուխը:

ա.- Առիւծ

բ.- Արծիւ

գ.- Օձ

դ.- Աղաւնի

5.- Հին Կտակարանին մէջ, Ելից 4.1-5 կը կարդանք Մովսէսի գաւազանին մասին: Ո՞ր կենդանիին վերածուեցաւ այդ գաւազանը:

ա.- Առիւծ

բ.- Արծիւ

գ.- Օձ

դ.- Աղաւնի

6.- Հին Կտակարանի Թուոց գիրքին մէջ կը կարդանք Պղինձէ Օձին մասին: Օձէն խայթուողները ի՞նչ պէտք է ընէին որպէսզի փրկուէին:

ա.- Պղինձէ օձին դանային

բ.- Պղինձէ օձին նայէին

գ.- Իրենց խայթուածքը մաքուր ջուրով լուային

դ.- Օձէն խայթուողները չէին կրնար փրկուիլ

7.- Եօթանասնից Թարգմանութիւնը ի՞նչ լեզուէ ի՞նչ լեզուի թարգմանութիւն է:

ա.- Յունարէնէ Հայերէն

բ.- Եբրայերէնէ Հայերէն

գ.- Եբրայերէնէ Յունարէն

դ.- Ասորերէնէ Եբրայերէն

8.- Ի՞նչ կը կոչուի Աստուածաշունչի առ աջին հայերէն թարգմանութիւնը:

9.- Աբրահամ նախապէս ի՞նչ կը կոչուէր:

10.- Աբրահամ քանի՞ տարեկան էր երբ իր Իսահակ որդին ծնաւ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1.- Ըստ աւանդութեան, ո՞ր քաղաքի միջնաբերդի բանտին մէջ կը գտնուէր Խոր Վիրապը:

2.- Նոր կտակարանի 4 աւետարաններէն որ մէկը համատեսական չէ միւս երեքին հետ:

3.- Նոր Կտակարանին մէջ քանի՞ հատ ընդհանրական նամակ կայ:

4.- Ո՞ր Սուրբ Աւետարանիչը գրած է նաեւ 3 հատ ընդհանրական նամակներ

5.- Ըստ Յովհաննէս Երզնկացիի, հաւատքը ի՞նչ չափով կը բովանդակուի:

6.- Եպիսկոպոսական գաւազանը կը կոչուի նաեւ

----- գաւազան
կամ -----:

7.- Հին Կտակարանի պղինձէ օձը Նոր Կտակարանի ո՞ր իրականութիւնը կը խորհրդանշէ:

8.- Ի՞նչ կը նշանակէ Septuagint կամ LXX:

9.- Հին Կտակարանին բնագիրը Եբրայերէն է: Մեր Սուրբ թարգմանիչները ո՞ր լեզուէն հայերէնի թարգմանեցին Աստուածաշունչը :

10.- Աբրահամ քանի՞ տարեկան էր երբ իր Իսահակ որդին ծնաւ:

Հոկտեմբեր ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ

Պատասխաններ

Մանկապարտեզի անկիւն

Կ'իրիկնանար, արձակէ՛, գտնեն, ամայի,
ուտելիքը, հաց, ձուկ, բաւականաչափ

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. ք. 405
2. դ. 1600
3. ք. Արմաիր
4. գ. Աստուածաշունչը
5. Սուրբ Մեսրոպ Մաշտոց
6. Արարատ
7. ք. 40
8. բ, Ոչ
9. Ծիածան
10. ք. 8 Նոյը, իր կինը, իրենց 3 տղաքը եւ անոնց կիները

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ք. 405
2. դ. 1600
3. դ. Թորոս Ռոսլին
4. Ճանաչել զԻմաստութիւն եւ զԽրատ Իմանալ զԲանս հանճարոյ
5. Հոկտեմբեր 16
6. ք. 8 Նոյը, իր կինը, իրենց 3 տղաքը եւ անոնց կիները
7. Հաւատով Խոստովանիմ
8. ք. Առակներ
9. Դաւիթ Անյաղթ, Մովսէս Քերթոյ
10. Հոկտեմբեր 2

Երկրորդականի անկիւն

1. ք. 405
2. գ. 326
3. Եփեսացիս 4.32
4. Արմաիր
5. Սուրբ Մեսրոպ Մաշտոց, Եղիշէ, Դաւիթ անյաղթ, Մովսէս Քերթոյ, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի
6. Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի
7. Վաղարշապատ
8. Գրիգոր Նարեկացի
9. Ներսէս Շնորհալի
10. Սէմ, Քամ եւ Յաբեթ

Մասնակցողներ

Մանկապարտեզ

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Խշիշեան Արշակ,
Արին Անթեպեան, Խշիշեան Ռիթա,
Ճեսիքա Մաթեոսեան, Անդո
Նասոյեան, Անդրանիկ Նասոյեան, Արա
Միրզոյեան, Յակոբ Գապթանճեան,
Նշան Կիրակոսեան, Թամար
Տեմիրճեան:

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

Թամար Արուսի, Զոհրապ
Կարապետեան, Ալեք Կարապետեան,
Դաւար Գաթթանճեան, Մհեր
Մաթեոսեան, Արագ Գաթթանճեան,
Ռիթա Մամիրոյեան, Սեւան Մելեքեան,
Լորի Զուխանճեան, Անի Զուխանճեան, :

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Կարօ Պալուզեան:

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Յարութ Քուլլուքեան, Ռիթա Գօճեան,
Թամար Պուլքեան, Գօգօ
Մատթեոսեան, Անի Մելեքեան, Հրայր
Մատթեոսեան, Արի Միրզայեան,
Պետրոս Նազարեան, Թամար
Պուլքեան, Լորա Սարիմանուկեան:

Երկրորդականի անկիւն

Արշօ Մելիտոնեան , Կարօ
Կարապետեան, Յովիկ Կարապետեան,
Փօլ Գիզիրեան:

Արտա-դպրոցական

Ճորճիկ Պարսէմեան Նախակրթարան Բ.

Կարճ Լուրեր

- Մինչև Հոկտեմբեր 31 2004, արձանագրուած աշակերտներուն թիւն է 88 եւ իւրաքանչիւր Կիրակիի միջին ներկայութիւնը՝ 62:
- Դասախօսութիւն Հինգշաբթի, 11 Նոյեմբեր 2004 Երեկոյ ժամը 8:00 ին Եկեղեցւոյ մէջ:

Հայ Եկեղեցւոյ Բարեկարգութեան Տեսութիւնները 20-րդ դարուն

կը դասախօսէ

Արժ. Տ. Գառնիկ Քճնյ Գոյունեան

Կիրակնօրեայ Դպրոցը պէտք ունի ուսուցիչի մը:

**Յաւելեալ տեղեկութիւններու համար՝ հեռաձայնել Թորոս Պապիկեանին
514-956-1277**

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝

Ծաղիկ Պոյաճեան

Աշխատակիցներ՝

Յասմիկ Նաճարեան, Երան Լոշիաճեան, Գարուին
Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս
Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան
Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.-

*Ուսուցիչներ՝ Սալբի Բակլաեան, Վերժին Գէպթանճեան, Վերա Կարապետեան, Երան Լոշիաճեան,
Գարուին Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Ծողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ
Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթի խմբագիր՝
Ծաղիկ Պոյաճեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ



ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 4

Դեկտեմբեր 2004

Նոր տարի Նոր տարուան շուրջ հիսուած ու ստեղծուած աւանդութիւններն ու սովորութիւնները տարիներու ընթացքին զարգացած են...

Էջ 2

Ս. Պետրոս եւ

Ս. Պօղոս

Առաքեալներ Սուրբ Ծնունդի տօնէն 10 օրեր առաջ, Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ Պետրոս եւ Պօղոս առաքեալներուն տօնը:

Էջ 3

Մի՛ ալլալիք՝ ո՛չ փառքէն եւ ո՛չ

անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն: Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի. մենք գիտենք թէ ճշմարտութենէն չենք շեղած:

Էջ 4

Այս օրացոյցին երբ
նայիս՝ մտածէ
պահ մը, որ «*ըսած խօսքերը*» այնպէս ըլլան, որ քեզի վերադառնան ուրիշին պատճառած երջանկութեան խնդութեամբը.

Էջ 5

Ծանօթացում
Հայաստանի հետ,
Վայոց Ձորի

մարզ: Կը գտնուի Հայաստանի հանրապետութեան հարաւը: Անոր կեդրոնն է Եղեգնաձոր քաղաքը որ կը գտնուի Երեւանէն 122 Թիլմեթր հեռաւորութեան վրայ: Այս մարզին մէջ կը գտնուին նաեւ Զերմուկ եւ Վայք քաղաքները եւ Նորավանքը ----->

Էջ 6,7

Հին ժամանակ,
հայ ժողովուրդը
ունէր Նաւասարդ
կոչուող ամիսը:

Էջ 5

Ստեփանոս
Նախավկայի տօնը
տօնն է նաեւ Հայց.
եկեղեցույ բոլոր
սարկաւազներուն

Ս. Ստեփանոս քրիստոնէական հաւատքի համար նահատակուած առաջին անձն է:

Էջ 10

Կարդա՛ Գործք
Առաքելոցին 9.1-

19 ու հոն կը գտնես պատասխանները Սողոմ դարձին վերաբերող հետեւեալ հարցումներուն:

Էջ 20



Յիսուս Քրիստոսի
առաքեալներու
կողմէ կատարուող Քրիստոնէական քարոզչութիւնը հասաւ նաեւ մինչեւ Հայաստան: Սուրբ Թադէոս եւ Բարթողիմէոս Առաքեալներ:

Էջ 8,9

Էջ 8,9

Ես Յովսէփն եմ:
Յակոբի 12

զաւակներէն

մէկը: Շատ ժամանակ առաջ ինձի սարսափելի բան մը պատահեցաւ, բայց Աստուած զիս հոգաց:

Էջ 12,13,14

Յակոբ Մծբնացի
Հայրապետ

Մաքուր շուրի նուիրական աղբիւր, Հեզ հոգիի հանդարտ կերպարան: ին նուիրուած ներքող:

Էջ 11

Պահուած բառ եւ
կաղանդի երգերու
խաղ:

Էջ 16

Ո՞րն է ճիշդ
պատասխանը:

Էջ 17,18,19,20,21

Նկարչական
Մրցում

Էջ 15

Դեկտեմբեր 2004

Նոր Տարի

Կիր.	Բշ.	Գշ.	Դշ.	Եշ.	Ուր.	Շբ.
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

4	Առաջին Սուրբ Առաքելներու՝ Թադէոսի եւ Բարթողիմէոսի յիշատակ
11	Տօն Սուրբ Նիկողայոս սքանչելագործ հայրապետին
18	Սուրբ Յակոբ Մօքնալ հայրապետին, Մարուգէի ճգնաւորին եւ Մելիտոսի եպիսկոպոսին
25	Սուրբ Ստեփանոս Նախավկային
27	Պետրոս եւ Պօղոս առաքելներու յիշատակի տօն



Նամակ Կաղանդ պապային Մուշեղ Իշխան Հատուած

Կաղանդ պապա,
որքան կրնաս շուտ եկուր
ալ չեմ վախճար, ես կը սիրեմ քեզ հիմա.
դուն մի նայիր իր բառերուս կցկտուր,
դէմքիս գոյնին եւ քայլերուս դողահար:
Ձեռքդ վստահ մօտեցուր
իր բոցավառ շրթներուն.
որքան ատեն զայն երկարես լեւի-լեցուն՝
կը համբուրեմ անպատճառ,
նոյնիսկ կ'երգեմ քեզ համար
ու չեմ դպիր քու մօրութիդ թելերուն...

Նոր Տարուան շուրջ հիստուած ու ստեղծուած
աւանդութիւններն ու սովորութիւնները տարիներու
ընթացքին զարգացած են
ժամանակաշրջաններուն հետ քաջ պահելու
միտումով: Այս սովորութիւններէն ամենէն հիմն
ու կայուն մնացածն է նուէրի փոխանակման
աւանդութիւնը, ու թէեւ նուէրին բնոյթն ու
տարողութիւնը ժամանակի ընթացքին շատ
փոփոխութեան ենթարկուած են, բայց տալու
փափաքն ու հաստատ կամքը մնացած են
անխախտ: Այսպիսով ուրեմն, Ամանորը կու գայ
շեշտելու մարդուս մօտ տալու, նուիրելու, ուրիշին
հանդէպ առատաձեռնութիւն ցուցաբերելու
պատուական զգացումը:

Տալու ու նուիրելու կերպերը շատ են:
Քրիստոնէական առումով, տալն ու նուիրելը,
ընծայելը ուղղակի մարդկային արժէքի մը կարգին
կարելի է դասել: Քրիստոնէական դասանաքը
կը քաջալերէ մարդուս որ իր ունեցածէն միշտ
բաժին հանէ ուրիշին, թէ՛ նիւթական եւ թէ՛
բարոյական առումով: Այս երկուքէն սակայն
բարոյական ընծաները առաւել նշանակութիւն
ունին, որովհետեւ կը փխին մարդուն ամենէն
մարդկային բաժնէն՝ հոգիէն, ու կ'ուղղուին
դիմացինին ամենէն մարդկային բաժնին՝
հոգիին: Այսպիսի ընծայի օրինակ մըն է
Աւետարանին մէջ պարզուած այս տարրական
սկզբունքը ըստ որուն մեզմէ իւրաքանչիւրը
Աստուծոյ կողմէ իրեն բաժին հանուած շնորհները
դնելու է իր նմաններուն ծառայութեան, կամ թէ
մեզմէ իւրաքանչիւրը սէր տալու է իր
շուրջիններուն:

Տանք եւ ընծայենք մեր շուրջիններուն մեր
կարելին: Վերջ ի վերջոյ, ինչպէս Վահան
Թէքէեանը պիտի ըսեր,
«Հաշուեյարդար. ի՞նչ մնաց, կեանքէն ինծի ի՞նչ
մնաց.

Ինչ որ տուի ուրիշին, տարօրինա՜կ, այն միայն:

**ԾՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ
ԾՆՈՒՆԴ**

Յիսուս Քրիստոսի «Մեծ առաքելներէն» Պետրոս եւ Պօղոս Առաքելներ

Առաքելալ կը նշանակէ պատգամատուր, Յիսուսի Քրիստոսի կողմէ ուղղարկուածներ, տարածելու համար աշխարհի վրայ Աստուծոյ թագաւորութեան բարի լուրը:

Յիսուս իրեն հետ շրջող 12 առաքելներ ընտրած էր: Սուրբ Ծնունդի տօնէն 10 օրեր առաջ, Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ անոնցմէ երկուքին՝ Պետրոս եւ Պօղոս առաքելներուն տօնը:

Պետրոս առաքելի մասին

Նշանակելի է անոր երբեակ անգամ Քրիստոսն ուրանալը, բայց ատով հանդերձ Քրիստոսի եկեղեցւոյն «վեմբ», «ժայռը» նկատուիլը: Իսկապէս ալ Պետրոս յունարէնով կը նշանակէ ժայռ:

Պետրոսի շնորհուած էր ներկայ գտնուելու Յիսուսի կողքին յատկանշական ու կարեւոր դէպքերու ընթացքին: Այս դէպքերէն մէկն է Գեթսեմանիի պարտէզին մէջ Քրիստոսի վերջին աղօթքին ներկայ գտնուիլը: Ահա, ըստ Մարկոսի աւետարանին, այդ դրուագը:

Յիսուս Գեթսեմանիի մէջ

Եկան տեղ մը, որ կը կոչուէր Գեթսեմանի: Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.

- Հո՛ւս նստեցէք, մինչեւ որ ես աղօթեմ:

Եւ իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը: Խռոված էր ու կը տագնապէր: Այն ատեն ըսաւ անոնց.

-Հոգիս մեռնելու աստիճան տրտմած է. հո՛ւս կեցէք եւ արթո՛ւն մնացէք:

Ապա քիչ մը առաջ գնաց եւ երեսին վրայ գետին փռուելով կ'աղօթէր, որ եթէ կարելի է՝ հեռանայ իրմէ տառապանքի այս ժամը:

Մարկոս 14.32-35

Պօղոս առաքելը կը համարուի

«Հէթանոսներուն Առաքելալը» որովհետեւ Պօղոս Քրիստոնէութիւնը տարածեց Եւրոպայի տարբեր քաղաքներուն մէջ:

Պօղոսի մասին յատկանշական է թէ ան քրիստոնեաներ հալածող ու մատնող Եղած է: Նոյնիսկ մասնակից եղած է Ստեփանոս ճախավկայի սպանութեան: Սակայն Պօղոս որ նաեւ ծանօթ է Սօղոս անուան տակ, Տամասկոսի ճամբուն վրայ հանդիպած է յարուցեալ Քրիստոսին ու Սուրբ Հոգիով լեցուելով դարցած Քրիստոսի քարոզիչ:

Գիտէ՞ր թէ...

Սուրբ գրքին մէջ առաքելներու դրուագները թիով շատ են: Նախ եւ առաջ կան մարգարէներու առաքումը, որոնք ղրկուած են տարբեր տարբեր նպատակներով: Կայ նաեւ Գաբրիէլ հրեշտակի առաքումը Մարիամ Աստուածածնի մօտ, Յովհաննէս Մկրտիչի առաքումը Յիսուս Քրիստոսէն առաջ: Իսկ կայ վերջապէս Աստուծոյ ամենէն մեծ առաքելալ՝ Իր Միածին որդին, Քրիստոսը, մարդոց փրկութեան համար:

Պօղոս Առաքելի երկրորդ նամակը կորնթացիներուն Բ. Կորնթացիներուն 6.1-10

Կորնթացիներուն ուղղուած Պօղոս Առաքելի երկրորդ նամակին մէջ, առաքելը ճիգ կ'ընէ ճշմարիտ Աւետարանը ընդունիլ տալ բոլորին, որպէսզի բոլորն ալ Քրիստոսը ճանչնան եւ ընդունին որպէս Տէր: Ան գրուած է Պօղոսի առաքելական երրորդ ճամբորդութեան ընթացքին:

Արդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծմէ ձեր ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուած կ'ըսէ.–

**«Երբ յարմար ժամանակը եկաւ լսեցի քեզ,
երբ փրկութեան օրը հասաւ՝ օգնեցի քեզի»:**

Ահա հիմա՛ է յարմար ժամանակը. հիմա՛ է փրկութեան օրը:

Ոեւէ բանով պատճառ մի՛ ըլլաք որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ՝ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզի ցոյց տուէք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խռովարաններու վայրագութիւնները, յոգնութիւնը, անքնութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարէք՝ մաքուր սրտով, գիտակցօրէն, համբերութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութիւնը քարոզելով, Աստուծոյ զօրութեամբ եւ արդարութեամբ զինուած՝ չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ ալալիք՝ ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն:

Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի.

մենք գիտենք թէ ճշմարտութենէն չենք շեղած:

Թող չուզեն մեզ ճանչնալ.

մենք գիտենք թէ մեզ լաւ կը ճանչնան:

Թող մեռած սեպեն մեզ–

մենք ահա կենդանի ենք:

Թող մեզ պատժապարտ համարեն.

մենք գիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք:

Թող մեր կեանքը տխուր կարծեն.

մենք միշտ ուրախ ենք:

Աղքատ թող սեպեն.

մենք շատերու կեանքերը կը ճոխացնենք:

Այո՛, կը թուի թէ ոչինչ ունինք,

մինչդեռ ամէն ինչ ունինք:

Ժամանակը նուաճել

«Տարի մը անցաւ»․ «Հին տարին գնաց», «Նոր տարին եկաւ»։ Այս եւ նման արտայայտութիւնները որքան ալ ըստ ինքեան խաբուսիկ ըլլան՝ գիտակցութեան վաւերական պահ եմ սակայն մարդ էակի կեանքին մէջ։ Անշուշտ, ժամանակին համար «տարի» չկայ։ Ոչ ալ «տարի»ին «հին»ը կամ «նոր»ը։ Բայց մարդ երբ իր պատկերը կը դիտէ ժամանակի հայելիին մէջ՝ կը զգայ հինն ու նորը ի՞ր մէջ, միտքը կը սեւեռի ի՞ր կեանքին վրայ․ կը փնտռէ ինքզինքն եւ ինքզինքին մէջ այն ինչ որ ողջունելի է որպէս երջանկացուցիչ ապրում եւ ափսոսալիք որպէս ինքնավատմուն, ինքն-ստուերացում, իղձերու դիմաց՝ իրագործումներու նահանջ, կարիքներու դիմաց՝ գոհացումներու պակասութիւն, երազներուն դիմաց՝ յուսախաբութիւն։

Ըսուած է․-

«Չորս բաներ կան, որոնք չեն վերադառնար՝

- Ըսուած խօսքը,
- Արձակուած նետը,
- Անցած կեանքը,
- Զանց առնուած պատեհութիւնը։

Այս օրացոյցին երբ նայիս մտածէ պահ մը, որ «ըսած խօսքերը» այնպէս ըլլան, որ քեզի վերադառնան ուրիշին պատճառուած երջանկութեան խնդութեամբը․ «արձակուած նետը», ձեռքէդ դուրս եկած գործը, մնայ որպէս անանց բարիք քու եւ նմանիդ կեանքին մէջ․ «անցուցած օրդ» տարրանայ քու մէջ, ապրումներու եւ արարքներու հետքերովը անջինջ, եւ վերջապէս՝ *զանց չընես այն պատեհութիւնները*, զորս ժամանակը քեզի կ'ընձեռէ ներկայով, որպէսզի չունենաս զոյգումի խայթը սրտիդ մէջ, այլ ձեռք բերես գոհութեան, լիութեան եւ ճառագայթումի ապրումը կեանքիդ եւ կեանքերուն մէջ հարազատներուդ եւ հարազատներուն հարազատին՝ Հայ Եկեղեցւոյ եւ Հայ Ազգին եւ անոնց ծնուցիչ ու բարեխնամող Աստուծոյ։

Գարեգին Ա.

Ամենայն Հայոց Կաթողիկոս

(1984 ին Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ)

Նոր Տարի, ամանոր կամ Նաւասարդեան օրեր

Բոլորիս համար յստակ է թէ Նոր Տարին կը սկսի Դեկտեմբեր 31-էն Յունուար 1 լուսցող գիշերը։ Սակայն հին ժամանակ, հայ ժողովուրդը ունէր Նաւասարդ կոչուող ամիսը որուն սկիզբն է որ ան կը նշէր նոր տարուան մը սկիզբը։ Եւ հետաքրքրական է թէ Նաւասարդ ամիսը չէր զուգահիսէր ձմրան եղանակին, այլ՝ աշնան, երբ տերեւները կը դեղնէին ու խաղողը կը հասունանար։

Նաւասարդ բառը ինքնին, պարթեւ իրանական լեզուով կը նշանակէ «նոր տարի»։ Նաւասարդեան օրերուն հայ իշխաններն ու թագաւորները կը կազմակերպէին մարզախաղերու մրցոյթներ։ Նոյն շրջանին Հայաստանի չորս կողմերէն ժողովուրդը կը հաւաքուէր Բագաւան քաղաքին մէջ ուր տեղի կ'ունենային Նաւասարդեան այդ խաղերը եւ այլ տօնակատարութիւններ։ Իսկ ինչո՞ւ Բագաւանի մէջ։ Որովհետեւ Բագաւանը հեթանոսական շրջանի հայ ժողովուրդին սուրբ քաղաքն էր։ Այսպէս, ժողովուրդը մի քանի օրուան ընթացքին երգով, պարով, թատերախաղով, զոհաբերութիւններով եւ գուշակութիւններով կը նշէր նոր տարուան մը գալուստը։

Ներկայիս, Նոր տարուան հայ աւանդական սովորութիւն է ընտանեկան սեղանի շուրջ հաւաքուիլ եւ նոր տարին դիմաւորել միրգերով հարուստ եւ ճոխ սեղանով մը, մաղթելով որ այդ ճոխութիւնն ու բարիքը երկարի ամբողջ նոր տարուան վրայ։

Ամանորը կրօնական տօն մը չէ։ Սակայն ան անբաժան կը մնայ Սուրբ Ծննդեան տօնէն որ մեր մօտ կը յիշատակուի քիչ մը աւելի ուշ՝ Յունուար 6-ին։ Այդ իսկ պատճառաւ մաղթանքը կ'ըսէ․-

**ԾՆՈՐՀԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ
ԾՆՈՒՆԴ**


Ծանոթացում Հայաստանի հետ Վայոց ձորի մարզ



Արեւիկի Ս. Աստուածածին
Եկեղեցին

Վայոց Ձոր մարզը կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան հարաւը: Անոր կեդրոնն է Եղեգնաձոր քաղաքը որ կը գտնուի Երեւանէն 122 քիլոմէթր հեռաւորութեան վրայ:

Վայոց Ձոր մարզի մէջ կը գտնենք միջնադարեան Հայաստանի հոյակապ յուշարձաններէն Նորավանքը: Հայաստանի բոլոր վանքերուն պէս Նորավանքը եւս կառուցուած է դժուարահաս վայրի մը մէջ: Ներկայիս Նորավանքը դարձած է զբօսաշրջիկներուն մատչելի շնորհիւ նոր ճամբու մը գոյութեան: Նորավանքի ամբողջ տարածքին կառուցուած են բազմաթիւ վարպետներու խաչքարերէն, որոնցմէ ամենէն աւելի ուշագրաւ են Մոմիկի խաչքարերը:



Մոմիկ «Վարդապետ», գրիչ, մանրանկարիչ, քանդակագործ, ճարտարապետ որուն ծննդեան թուականը կը մնայ անյայտ, իսկ մահուանը կ'ենթադրուի ըլլալ 1339 կամ 1340, Նորավանք:

Մոմիկի լաւագոյն գործը 1302-ին Նորավանքի մէջ նկարազարդած Աւետարանն է, Ստեփանոս Օրբելեանի պատուէրով, որ կը կոչուի նաեւ «Պատերազմի Աւետարան»:



Գլաձորի համալսարանը

Նորավանքէն ոչ շատ հեռու կը գտնուի միջնադարեան Հայաստանի լուսաւորութեան կեդրոններէն ամենէն մեծը, Գլաձորի համալսարանը: Համալսարանէն ներս դասաւանդուած է գիտական նիւթեր ինչպէս նաեւ աստուածաբանութիւն ու հոգն ուսանած են շուրջ 350 վարդապետներ:

1984 թուականին տօնուեցաւ Գլաձոր համալսարանի 700-ամեակը:

Վերնաշէն գիւղին մէջ բացուեցաւ թանգարան մը որ նուիրուեցաւ Գլաձորի համալսարանի եւ հայ միջնադարեան գիտական մտքի պատմութեան:



Հայ ազգի առաջին լուսավորիչներէն...

Սուրբ Թադէոս առաքեալ

Յիսուս Քրիստոսի առաքեալներու կողմէ կատարուող Քրիստոնէական քարոզչութիւնը հասաւ նաեւ մինչեւ Հայաստան:

Առաջին անգամ Հայաստան այցելող առաքեալը եղաւ Սուրբ Թադէոս, որ երկրին չորս կողմերը պտտելով քարոզեց ու հրաշքներ կատարեց: Մեծ թիւով հայեր անտարբեր չմնացին այս քարոզչութեան եւ քրիստոնէայ մկրտուեցան:

Թադէոս Առաքեալի քարոզչական գործունէութիւնը յատկապէս կեդրոնացաւ Վասպուրական նահանգի Արտազ գաւառը, ուր կը գտնուէր հայոց Սանատրուկ թագաւորի պալատը: Առաքեալը յաջողած էր դարձի բերել պալատականներէն շատեր:

Թագաւորին աղջիկը՝ Սանդուխտ, գիշեր մը գաղտնաբար գնաց ներկայ գտնուելու Թադէոս առաքեալի քարոզներէն մէկուն: Առաջին հանդիպումէն իսկ, դժուար չեղաւ հաւատալը, ու թագաւորին դուստրը մկրտուեցաւ քրիստոնէայ: Այնուհետեւ, Սանդուխտ մշտական յարաբերութեան մէջ մնաց նորադարձ բոլոր քրիստոնէաներուն հետ, եւ աւելի՛ն, ուղղակի աջ բազուկ դարձաւ Թադէոս առաքեալին:

Քրիստոնէաներուն թիւը հետահետէ սկսաւ շատնալ: Այս երեւոյթը բնականաբար զայրացուց թագաւորը որ յատկապէս իմանալով իր իսկ զաւկին քրիստոնէայ դառնալը ստիպեց որ ան ուրանար իր նոր հաւատքը: Եւ երբ ան մերժեց վերադառնալ հեթանոսութեան, թագաւորը դիմեց պատժական խիստ միջոցներու, թէ՛ իր աղջկան եւ թէ՛ բազմաթիւ այլ քրիստոնէաներու համար: Ի վերջոյ, նոյնիսկ սպաննել տուաւ իր դուստրը:

Սանդուխտի նահատակութենէն երեք օրեր ետք, Սանատրուկ թագաւոր սպաննել տուաւ նաեւ Թադէոս առաքեալ:

Գիտէի՞ր թէ...

Կ'ըսուի թէ Սուրբ Թադէոսի քարոզչութեան հետեւելով քրիստոնէութիւնը ընդունեցին 3,400 հայեր, որոնք կարելի է նկատել Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ առաջին անդամները:



Հայ ազգի առաջին լուսավորիչներէն...

Սուրբ Բարթողիմէոս Առաքեալ

Սուրբ Թադէոս առաքեալի քարոզչութեան շրջանին, Հայաստան եկաւ նաեւ Յիսուսի առաքեալներէն Բարթողիմէոսը, որ նաեւ կը կոչուէր Նաթանայէլ:

Բարթողիմէոս Առաքեալ Հայաստանէն ներս յատկապէս կը քարոզէ Գողթն գաւառին մէջ, որուն Ծար անունով իշխանը կը հաւատայ քրիստոսի ու իր ընտանիքի միւս անդամներուն հետ մէկտեղ կը մկրտուի քրիստոնէայ:

Բարթողիմէոս եւ Թադէոս առաքեալներ զիրար կը հանդիպին Արտաշատ քաղաքը, որմէ մեկնելով, Բարթողիմէոս կ'ուղղուի դէպի Աղբակ:

Աղբակի մէջ, ան դարձի կը բերէ ու քրիստոնէայ կը մկրտէ Սանատրուկ թագաւորին քոյրը՝ Ոգուհին: Հայոց հեթանոս թագաւորը քոջ մօտ կը դրկէ իր հազարապետները Տերենտիոս, որպէսզի համոզէ զայն եւ ետ կոապաշտութեան դարձնէ: Հազարապետը ոչ միայն չի յաջողիր, այլ նաեւ ի'նք կը մկրտուի ու կը դառնայ քրիստոնէայ: Թագաւորին զայրոյթը այնքան մեծ կ'ըլլայ որ անխնայ ձեւով սպաննել կու տայ քոյրը, հազարապետն ու բազմաթիւ այլ քրիստոնէաներ:

Գիտէի՞ր թէ...

Սուրբ Բարթողիմէոս առաքեալի վերագրուած է «Նախադաւան» կոչումը, որովհետեւ ան առաքեալներէն առաջինն էր որ Յիսուս Քրիստոսի Աստուած ըլլալը ճանչցած էր ըսելով.- «Դուն ես Աստուծոյ որդին»:



Ծարական Բարթողիմէոս եւ Թադէոս Առաքեալներու

Հայրատունկ այգիին հրեղէն պարիսպներ, բարձր աշտարակներ, ոսկեղէն բաժակներ ու ժիր մատուռակներ, ո՛վ Հայաստանեայց հոգեւոր հայրեր Բարթողիմէոս եւ Թադէոս, Տիրոջ մօտ եղէք բարեխօս մեր հոգիներուն համար:

Ուրեմն եկէք, ո՛վ հայաստանեայց դուք մեր ժողովուրդը լուսավորուած, Տուէք օրհնութիւն Հօր՝ բարձունքներուն մէջ՝ միջոցովը Բարթողիմէոս Սուրբ Առաքեալին:

Ով ժողովուրդ, որ աշակերտեցար նաեւ Թադէոս սուրբ Առաքեալին, այն մութ խաւարէն լոյսին ելլելով.- փառաբանեցէք զայն որ մարմնացած բանն Աստուածն եղաւ:

Սուրբ Ստեփանոս Նախավկայ

Սուրբ Ստեփանոս քրիստոնեական հաւատքի համար նահատակուած առաջին անձն է: Անոր քաջութիւնն ու հաւատքի զօրութիւնը ազդեցիկ եղած են ամենէն մոլեռանդ հակաքրիստոնեաներուն մօտ իսկ, ինչպէս Սօղոսին, որ Դամասկոսի ճամբուն վրայ, Ստեփանոսի մահուան ականատես ըլլալէ ետք, հաւատաւորի դարձաւ, վերակոչուեցաւ Պօղոս Առաքեալ ու դարձաւ Քրիստոսի մեծագոյն քարոզիչներէն մէկը:

Սուրբ Ստեփանոսի տօնը իբրեւ եկեղեցական աւագ տօն կը յիշատակուի Դեկտեմբեր ամսուան վերջին շաբթուան մէջ, կանխելով Սուրբ Ծնունդն ու Նոր Տարին:

Ստեփանոս Նախավկայի տօնը տօնն է նաեւ Հայց. եկեղեցւոյ բոլոր սարկաւագներուն որովհետեւ ան եղած է հայ եկեղեցւոյ կողմէ ընտրուած առաջին սարկաւագներէն մէկը:




*Պարսկաստանի Ատրպատական նահանգին մէջ՝
Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքը*

Գիտէ՞իր թէ...

Սարկաւագները եկեղեցիէն ներս սուրբ խորանի ծառայութեան համար նշանակուած անձեր են: Անոնց համար սահմանուած աշխատանքի ուղեգիծը կ'ընդգրկէ հետեւեալ տարրերը.-

- Սպասարկել եկեղեցւոյ Ս. խորանին
- Աւետարանը կարդալ Ս. Պատարագի ընթացքին
- Հասցնել օգնութիւն եւ նպաստ աղքատներուն
- Հոգալ որբերուն եւ որբեւայրերուն պէտքերը

Յակոբ Մծբնացի հայրապետ



**Շնորհակալութեամբ
ստացանք**

**ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ
ՊԱՏԱՐԱԳ
Հայաստանեայց
Առաքելական Եկեղեցւոյ**

**Աշխարհաբարի Վերածում՝
Ջարեմ Արք. Ազնաւորեանի**

**Մոնթրէալ, 2004
«ստանալու համար դիմել
եկեղեցւոյ գրասենեակ»**

Առաքելական եկեղեցւոյ ամենէն աւելի ժողովրդականութիւն գտած սուրբերէն մէկն է Սուրբ Յակոբ Մծբնացի հայրապետը: Իր յիշատակի տօնը կանուխէն հաստատուած է Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին մէջ: Գրիգոր Նարեկացին «Յաղթող եւ Սուրբ Հայրապետ» անունով գեղեցիկ շարական մը գրած է անոր մասին: Հինէն ի վեր, կառուցուած մեծ թիով եկեղեցիներ կոչուած են Սուրբ Յակոբ, ինչպէս մեր իսկ Եկեղեցին:



**Ճաճանչ Ս. Յակոբի Մասունքին
«մեր Եկեղեցւոյ Խորանին վրայ»**
Ներբող Սուրբ Յակոբ Մծբնացիին
Հատուած

Մաքուր ջուրի նուիրական աղբիւր,
Հեզ հոգիի հանդարտ կերպարան,
Արփիափայլ կրակի կենդանի վառարան:
Անմաքուր բարբարոս զարմի ծնունդ,
Եւ մերձաւոր արեւակից երջանիկին,
Քեռորդի մեր Լուսաւորիչին Սուրբ Գրիգորի:

Գրիգոր Նարեկացի

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն


Յովսէփի փորձառութիւնը կամ՝ Աստուած Չարը Բարիի կը դարձնէ



Ես Յովսէփն եմ: Յակոբի տասներկու զաւակներէն մէկը: Շատ ժամանակ առաջ ինծի սարսափելի բան մը պատահեցաւ, բայց Աստուած զիս հոգաց:

Հայրս զիս աւելի կը սիրէր քան միւս եղբայրներս: Նոյնիսկ ինծի համար գոյնզգոյն վերարկու մը շինել տուաւ որ շատ բարկացուց եղբայրներս:

Օր մը հայրս ըսաւ՝ «գնա՛ նայիր եղբայրներուդ, կ'ուզեմ վստահ ըլլալ որ բոլորը լաւ են»: Անոնք ուրիշ քաղաքի մը մօտերը ոչխարները կ'արածէին:



«Ահա կու գայ երազկոտը», ըսին անոնք, «եկէք անոր հոգ տանինք»: Անոնք յարձակեցան վրաս, պատռեցին գունաւոր վերարկուս: Յետոյ զիս նետեցին պարապ փոսի մը մէջ:



Յովսէփին եղբայրները զինք «երազկոտ» կը կոչէին: Աստուած իրեն երազներ մեկնաբանելու շնորհքը տուած էր: Իր երազներէն մէկուն մէջ ան տեսած էր որ օր մը իր եղբայրները իրեն պէտք պիտի ունենային: Յովսէփին եղբայրները չէին հաւնած այդ մէկը, բայց իր երազը ճիշդ ելաւ:

Այդ ատեն հասան Եգիպտոս գացող անեւորակացներ: Եղբայրներէս մէկը ըսաւ՝ «փոխանակ Յովսէփը սպաննելու, զինք ծախենք ասոնց որպէս ստրուկ»: Այդպէս ալ ըրին:

Տարիներ ետք ընտանիքս ուտելիք հաց չունէր, որովհետեւ իրենց հողերը չորցեր էին: Հայրս եղբայրներուս կ'ըսէ՝ «գացէք Եգիպտոս եւ նայէցէք եթէ հոն քիչ մը ուտելիք կրնաք գտնել»:

Եղբայրներս գացին Եգիպտոս, հասան թագաւորին պալատը եւ հոն մարդու մը ուտելիքի մասին հարցուցին: Այդ մարդը ես էի,

Ստրուկը ան է որ ուրիշ մէկու մը կը պատկանի: Ան կ'աշխատի առանց վճարուելու: Մարդիկ կը գնեն ստրուկները եւ ետքը կը ծախեն ուրիշ մարդոց:



բայց եղբայրներս զիս չի ճանչցան. Աստուած օգնած էր ինձի. Եգիպտոսի մէջ որպէս ծառայ սկսած էի, բայց յետոյ շատ կարեւոր մէկը դարձած էի:

Օր մը, երբ եղբայրներս երկրորդ անգամ Եգիպտոս եկած էին, իրենց յայտնեցի որ ես իրենց եղբայրն եմ, Յովսէփը: Անոնք այնքան զարմացած էին որ չէին կրնար խօսիլ: Իրենց ըսի՝ «մի տխրի՛ք որ դուք զիս ծախեցի՛ք որպէս ստրուկ: Աստուած զիս Եգիպտոս ղրկեց որ ձեր կեանքերը ազատեմ»: Անոնք ուզած էին զիս ցաւ պատճառել բայց Աստուած ինձի համար ուրիշ պարտականութիւն մը ծրագրած էր:



**Մտածէ՛
ասոր
մասին**

Յովսէփին եղբայրները զինք որպէս ստրուկ ծախած էին, սակայն Աստուած տեղեակ էր այդ բոլորէն: Ան ապահով պահեց Յովսէփը որ աւելի ուշ ան կարենայ իր եղբայրներուն օգնել: Աստուած Իր բոլոր ըրածներուն համար պատճառ մը ունի:

Հովանաւորութեամբ՝
Գանատայի Ազգային Առաջնորդարանին

Կազմակերպութեամբ՝
Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին

ՆԿԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

**Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու
Հիմնադրութեան 75-ամեակի առթիւ**

Նիւթ՝
Աստուածաշունչէն առնուած նիւթ մը (1992-97) ծնունդ ունեցող փոքրերու
համար

«Հաւատք եւ Հրաշք» (1987-91) ծնունդ ունեցող պատանիներու համար

Փետրուար 19-20, 2005

**Ցուցահանդէս-մրցանքը տեղի պիտի ունենայ
Գանատայի Ազգային Առաջնորդարան**

բացում՝ Շաբաթ կ.ե. ժամը 6:00 ին
Արդիւնքներու յայտարարութիւն ժամը 7:30 ին

Օգտագործելի ներկեր՝ Crayola, ջրաներկ, գունաւոր մատիտ
Թուղթի չափ՝ 8.5" X 11"

Օրէնքներ՝ Անունը եւ Մականունը, ծննդեան թուականը եւ հեռաձայնի
թիւը գրել արուեստի գործի ետեւի կողմը
Յանձման ժամկէտ՝ **Ցունուար 21, 2005**

Արուեստի գործը ուղարկել կամ անձամբ ներկայանալ
Գանատայի Ազգային Առաջնորդարան

3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5

հեռաձայն (514) 856-1200 email prelacy@armenianprelacy.ca

Պահուած բառ

հ	տ	ք	ր	ի	տ	օ	ն	ս	մ
տ	ո	ս	կ	ի	ո	ս	ծ	ա	է
ճ	ա	վ	լ	ե	լ	յ	տ	ս	շ
ա	յ	տ	ի	ն	ե	ի	ը	տ	կ
ց	ր	ա	լ	լ	ա	ձ	ե	ղ	ու
ս	ո	զ	ի	մ	ո	գ	մ	ե	ր
ո	ն	զ	ո	ո	ծ	ն	ու	ն	դ
ու	ա	մ	ն	ու	է	ր	ի	մ	ն
մ	մ	ե	հ	ր	ե	շ	տ	ա	կ
զ	ա	ծ	ա	լ	ե	տ	ի	ս	ա

Հետեւեալ բառերը գտիր այս ցուցակին մէջ:
Մնացեալ չգործածուած գիրերը երբ շարես,
կը ստանաս Ծննդեան յատուկ մաղթանք մը:

Մարիամ
Մոգ
Հրեշտակ
Ծնունդ
աստղ
Հովիւ
Մսուր
Էշ
Տօն
Զմուռ
Ոսկի
Կնդրուկ
Ամանոր
Նուէր
Մոմ

ահ
ափ
ըսէ

Կաղանդի երգեր

Հետեւեալ բառերով ամբողջացուր
Նոր Տարուն նուիրուած այս երգերուն
տողերը եւ անոնցմէ մի քանին երգէ,
պատրաստուելով ընդունելու
Կապանդ պապային:

*սիրուն, զնգուն, հանդէս, եղնիկով,
տօնածառը, չամիչ, հնչեցէք,
կաղանդ պապան, մնացեր, սիրուն,
պայծառ,*

1- Կաղանդ պապան ուշ է, ուշ է
...

2- Կաղանդ պապան եկեր է, չիր ու
... բերեր է

3- Տես ինչ լաւն է ..., զարդեր
ունի անհամար

4- ... սահմակ մը կու գայ, մէջը
... կայ

5- Զանգակներ, զանգակներ ...
զանգակներ

6- Տօնածառ ջան տօնածառ, ինչ
... ես ու ...

7- Ամանորի ... զանգեր, կրկին
...

8- Պատրաստեր ենք մենք Նոր
տարուան ...

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն**



**Ամբողջացո՛ւր ըստ Դուկասի Աւետարանին 2.16-19
աճապարանքով, Մարիամն, մսուրին, հրեշտակը, կը
զարմանային, կը խոկար**

Անոնք ----- գացին եւ հոն գտան -----
ու Յովսէփը, ինչպէս նաեւ մանուկը՝ ----- մէջ
դրուած: Այս տեսնելով անոնք Մարիամի եւ Յովսէփի
յայտնեցին ինչ որ ----- ըսած էր իրենց՝
մանուկին մասին: Բոլոր անոնք որոնք կը լսէին հովիւներուն
պատմածը, կը զարմանային: Մարիամ բոլոր այս ըսուածները
միտքը կը պահէր եւ անոնց վրայ -----:

Երանի խաղաղարարներուն որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Գաբրիէլ հրեշտակը ի՞նչ ըսաւ
Մարիամին:

Ա.- Յովսէփին հետ պսակուիր

Բ.- Եգիպտոս գնալ

Գ.- Որդի պիտի ունենաս եւ անունը
Յիսուս պիտի դնես

Դ.- Աղջիկ պիտի ունենաս եւ անունը
Յիսուս պիտի դնես

2.- Այս պատահարէն ետք Մարիամը
որո՞ւն քով գնաց:

Ա.- Եղիսաբեթին քով

Բ.- Գաբրիէլին քով

Գ.- Դրացիին քով

Դ.- Քահանային քով

3.- Որո՞նք Յիսուս Մանուկին աստղը
տեսան արեւելքի մէջ:

Ա.- Հրեշտակները

Բ.- Հովիւները

Գ.- Մոգերը

Դ.- Գիւղացիները

4.- Յիսուս ո՞ր քաղաքին մէջ ծնաւ:

Ա.- Գանատա

Բ.- Երուսաղէմ

Գ.- Բեթլեհեմ

Դ.- Նազարէթ

5.- Հերովդէս ի՞նչ պատուիրեց
մոգերուն:

Ա.- Յիսուսի սպաննեցէք

Բ.- Յիսուսին քովս բերէք

Գ.- Ոչինչ

Դ.- Գտէք Յիսուս մանուկը որպէսզի
ես ալ գամ ու երկրպագեմ իրեն

6.- Մոգերը ի՞նչ նուէրներ բերին
Յիսուսի

Ա.- Ոսկի, արծաթ եւ պրոնզ

Բ.- Ոսկի, կնդրուկ եւ զմուռ

Գ.- Գառնուկ, ուլիկ եւ շնիկ

Դ.- Խաղալիկներ

7.- Յիսուս ո՞ր ծնաւ:

Ա.- Պալատին մէջի

Բ.- Պանդոկին մէջ

Գ.- Հիւանդանոցին մէջ

Դ.- Մսուրին մէջ

8.- Մենք ե՞րբ կը տօնենք Յիսուսի
Ծնունդը:

Ա.- Յունուար 6

Բ.- Դեկտեմբեր 25

Գ.- Յունուար 1

Դ.- Դեկտեմբեր 31

9.- Մենք ե՞րբ կը տօնենք Յիսուսի
մկրտութիւնը:

Ա.- Յունուար 6

Բ.- Դեկտեմբեր 25

Գ.- Յունուար 1

Դ.- Դեկտեմբեր 31

10.- Յիսուս քանի՞ տարեկան էր երբ
մկրտուեցաւ:

Ա.- 8 օրուայ

Բ.- 40 օրուայ

Գ.- 1 տարեկան

Դ.- 30 տարեկան

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

1.- Ե՞րբ կը տօնենք Ս. Պետրոս եւ
Ս.Պօղոս Առաքեալներուն յիշատակը:

Ա.- Յունուար 6
Բ.- Դեկտեմբեր 25
Գ.- Յունուար 1
Դ.- Դեկտեմբեր 27

2.- Հայաստանի ո՞ր մարզին մէջ կը
գտնուի Նորավանքը:

Ա.- Արարատեան
Բ.- Արագածոտն
Գ.- Արմաւիր
Դ.- Վայոց Ձոր

3.- Ի՞նչ կը կոչուի Մոմիկի 1302 ին
նկարազարդած Աւետարանը:

4.- Ե՞րբ տօնուեցաւ Գլաձոր
Համալսարանի 700 ամեակը:
Ա.- 2004 ին
Բ.- 1904 ին
Գ.- 1984 ին
Դ.- 1924 ին

5.- Յիսուսի ո՞ր առաքեալը կոչուեցաւ
նախադաւան:

6.- Յիսուսի ո՞ր առաքեալը միւսներէն
առաջ Հայաստան եկաւ:

7.- Ո՞վ է Քրիստոնէութեան համար
նահատակուած առաջին անձը:

8.- Ո՞վ գրած է «Յաղթող եւ Սուրբ
Հայրապետ» շարականը:

ա.- Ս. Յակոբ Մծբնացի
բ.- Ս. Գրիգոր Նարեկացի
գ.- Ս. Թադէոս
դ.- Ս. Բարթողոմէոս

9.- Որո՞նք մասին է «Յաղթող եւ Սուրբ
Հայրապետ» շարականը:

ա.- Ս. Յակոբ Մծբնացի
բ.- Ս. Գրիգոր Նարեկացի
գ.- Ս. Թադէոս
դ.- Ս. Բարթողոմէոս

10.- Յակոբի որդին Յովսէփը որպէս
ի՞նչ գնաց Եգիպտոս:

ա.- Փարաւոնի Օգնական
բ.- Առետրական
գ.- Ստրուկ
դ.- Հովիւ

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

Աւետարանի «Առաքեալներուն գործերը» գիրքի 9-րդ գլուխը կը պատմէ Սողոսի դարձին ու Պօղոս Առաքեալ վերակոչուելուն ու քրիստոսի քարոզչութեան նուիրուելու պայմանները: Կարդա՛ Գործք Առաքելոցի 9.1-19 ու հոն կը գտնես պատասխանները հետեւեալ հարցումներուն: 1-7

1.- Սօղոս ի՞նչ կ'ուզէր ընել Քրիստոսի հետեւորդներուն:

2.- Սօղոս ի՞նչ ըրաւ երբ երկինքէն լոյս մը փայլատակեց իր շուրջ:

3.- Սօղոս ի՞նչ լսեց:

4.- Ձայնը ի՞նչ ըսաւ որ ընէ Սօղոս:

5.- Ի՞նչ պատահեցաւ երբ Սօղոս ոտքի ելաւ:

6.- Դամասկոս հասնելէն ետք, Սօղոս երեք օրերու ընթացքին ի՞նչ ըրաւ:

7.- Սօղոս ի՞նչ ըրաւ երբ աչքերէն կեղեւանքները ինկան եւ սկսաւ տեսնել:

8.- Պօղոս Առաքեալ գրած է Սիրոյ Գլուխը: Ո՛ր կը գտնուի՞:

9.- Սուրբ Պսակի արարողութեան ընթացքին Պօղոս առաքեալի որ նամակէն կը կարդացուի 5.22-33 :

10.- Թուէ՛ այն նամակներ զոր Պօղոս Առաքեալ ուղած է անձերու:

ա. -----

բ. -----

գ. -----

դ. -----

Նույնիսկ ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ

Պատասխաններ

Մանկապարտէզի անկիւն

Յակոբ, Յովսէփ, գոյնզգոյն, կը
նախանձէին, Իսմայէլացիներուն

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. դ. Ծովային կենդանիներ
2. գ. Ադամ
3. ա. Եւա
4. դ. Օձը
5. դ. աղջիկ
6. գ. Եսաւ
7. Աստուած, պահես, մայրս, կորովի
8. բ. Գթաց, իր որդիին գրկեց եւ համբուրեց
9. դ. երեք անգամ
10. ա. Դրախտէն դուրս վոնտուեցան եւ գ. ստիպուեցան հող մշակել

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. Արարտեան
2. Վարդապետական եւ Եպիսկոպոսական
3. Տէր հայրը եւ Վարդապետը
4. գ. Օձ
5. գ. Օձ
6. բ. Պղինձէ օձին նայէին
7. գ. Եբրայերէնէ Յունարէն
8. Թարգմանութիւններու Թագուհի
9. Աքրամ
10. 100

Երկրորդականի անկիւն

1. Արտաշատ
2. Յովհաննէսի
3. 7
4. Յովհաննէս
5. զայն ընդունողներուն ընկալման չափով
6. Հովուական կամ Ասա
7. Յիսուս Քրիստոսի Խաչելութիւնը
8. Եօթանասնից
9. Յունարէնէ
10. 100

Մասնակցողներ

Մանկապարտէզ

Մասնակցողներ

Ճեսիքա Մաթէոսեան, Կրէյս Նարեկեան

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Խշխշեան Արշակ,
Արին Անթեպեան, Խշխշեան Ռիթա,
Թամար Տեմիրճեան, Թաթիանա
Քեհեայեան, Յակոբ Գեպթանճեան,
Յուլեր Անթեպեան

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

Թամար Արուսի, Զոհրապ
Կարապետեան, Ալեք Կարապետեան,
Դաւար Գաթանճեան, Մհեր
Մաթէոսեան, Ռիթա Մամիրոյեան,
Սեւան Մելեքեան, Լորի Զուխանճեան,
Անի Զուխանճեան, :

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Արազ Գաթանճեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Յարութ Քուլլութեան, Ռիթա Գօճեան,
Թամար Պուլիքեան, Գօգօ
Մատթէոսեան, Անի Մելեքեան, Հրայր
Մատթէոսեան, Արի Միրզայեան,
Պետրոս Նազարեան, Թամար
Պուլիքեան, Լորա Սարիմանուկեան,
Ճօրճ Արմաղանեան:

Երկրորդականի անկիւն

Արշօ Մելիտոնեան , Կարօ
Կարապետեան, Յովիկ Կարապետեան,
Փօլ Գիզիրեան:

Կարճ Լուրեր

- Կիրակնօրեայ Դպրոցը իր մասնակցությունը պիտի բերէ Սուրբ Յակոբի տօնին առթիւ կազմակերպուած աւանդական ճաշին յաջորդող Կիրակի Դեկտեմբեր 19, 2004:
- Կաղանդ Պապան խոստացաւ այցելել Կիրակնօրեայ Դպրոց Կիրակի 2 Յունուար 2005 ին մասնակցելու համար դպրոցիս Սուրբ Ծննդեան տօնակատարութեան:

**Կիրակնօրեայ Դպրոցը պէտք ունի ուսուցիչի մը:
Յաւելեալ տեղեկութիւններու համար՝ հեռաձայնել Թորոս Պապիկեանին
514-956-1277**

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝

Շաղիկ Պոյաճեան

Աշխատակիցներ՝

Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարուին
Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս
Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան
Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

*Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակր.-
Ուսուցիչներ՝ Սալբի Բակլաեան, Վերժին Գէպթանճեան, Վերա Կարապետեան, Երան Լոշխաճեան,
Գարուին Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ
Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթի խմբագիր՝
Շաղիկ Պոյաճեան:*



Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ Ձեզի մեզի մեծ աւետիս

2005 թուականի սեմին, ամանորեան որոշումներու պահը ահա հասաւ անգամ մը եւս: Եւ այս վարժութիւնը, որ մեզմէ իւրաքանչիւրը պէտք է կատարէ անհատապէս, օգտաշատ է բոլորին համար ու շահեկան:

Էջ 2

Քրիստոսի ծննդեան դրուագի այնքան նկարագրող աւետարանական պատումին մէջ ամենէն յատկանշական եւ գրաւիչ գիծերէն մէկն է պ ա ռ զ ու թ ե ա ն , ա ղ ք ա տ ու թ ե ա ն , համեստութեան երեւոյթը:

Էջ 3

Յունուար ամիսը կը յատկանշուի Քրիստոսի Սուրբ Ծննդեան տօնով: Եւ ամենէն աւելի ի՞նչ պատուիրեց Յիսուս իր հետեւորդներուն եւ համայն քրիստոնեաներուն եթէ ոչ սեր:

Էջ 4

Մեր բոլորին ծանօթ է եւ բացառիկ ժողովրդականութիւն ունի Ս.Սարգիս զօրավարի անուանակոչութեան տօնը որ այս տարի կը զուգադիպի Յունուար 22-ին:

Էջ 15



Կոտայքի մարզի Բջնի գիւղին Սուրբ Սարգիս փոքր եկեղեցին: Կառուցուած է վարդապոյն տուֆէ, բարձրադիր ժայռի մը վրայ:

Ինչպէ՞ս հիմնուեցաւ Ս. Յակոբ Մայր Ե կ ե ղ ե ց ւ ո յ Կ ի ր ա կ ն օ ր ե ա յ դպրոցը: Կը պատմէ Տէր Արմէն աւագ Քահանայ Իշխանեան:

Էջ 6-7

Հայց. եկեղեցին Յունուար 29-ին կը յիշատակէ Սուրբ Սահակ Պարթեւի անուան յիշատակը: Սուրբ Սահակ Պարթեւ յատկապէս ծանօթ է իր մատենագրական ժառանգով:

Էջ 14

Քրիստոս բառը առաջ կու գայ յունական «խրիստոս» բառէն որ կը նշանակէ «Օծեալ»: Այս բառին հայցական հոլովին, «խրիստոն» բառին աւելցնելով «եայ» մասնիկը, կազմուած է Քրիստոնեայ բառը:

Էջ 16

Ո՞րն է ճիշդ պատասխանը:

Էջ 17, 18, 19, 20, 21

Կարճ լուրեր: Էջ 22

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն

Յիսուսի Սուրբ ծնունդը կամ աշխարհի ամենէն աւելի պատմուած պատմութիւնը:

Էջ 10,11,12,13

Պահուած բառ պատրաստուած մեր աշակերտներէն՝ Առէն Պապիկեանի կողմէ:

Էջ 9

Յունուար 2005

Կիր.	Բ2.	Գ2.	Դ2.	Ե2.	Ուր.	Շբ.
						1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23/- 30	24/- 31	25	26	27	28	29

1	Ամանոր
5	Ծրագալոյց Սուրբ Ծննդեան
6	Սուրբ Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն
7	Մեռելոց
13	Տօն անուանակոչութեան Յիսուս Քրիստոսի
15	Սուրբ Յովհաննու Կարապետի
22	Սուրբ Սարգիս
29	Սուրբ Սահակ Պարթեւ

Տաղ Սուրբ Ծննդեան

Այսօր տօն է սուրբ ծննդեան, աւետի՛ս
Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետի՛ս:
Այսօր Արեւն արդարութեան, աւետի՛ս.
Երեւեցաւ ի մէջ մարդկան, աւետի՛ս:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

Այսօր սուրբ կոյսն անապական, աւետի՛ս
Ծընաւ երբեր զանմահ Արքայն, աւետի՛ս:

Այսօր հրեշտակք յերկնից իջեալ,
աւետի՛ս.

Ընդ մեզ օրհնեն զանմահ Արքայն,
աւետի՛ս:

Քրիստոս Ծընաւ եւ յայտնեցաւ:

Ամանորի որոշումներ

Ընդհանրացած սովորութիւն է որ մարդիկ ամէն տարեգլխի, նոր տարի մը ընդունելու պահուն որոշումներ առնեն, զանոնք յաջորդ տարուան ընթացքին իրականացնելու նպատակով: Մարդոց բնութեան, նկարագրին, սկզբունքներուն եւ նախապատուութիւններուն համեմատ, այդ որոշումները կրնան վերաբերիլ նիւթական, կենցաղային, նկարագրային, հոգեկան կամ այլ երեւոյթներու:

2005 թուականի սեմին, ամանորեան որոշումներու պահը ահա հասաւ անգամ մը եւս: Եւ այս վարժութիւնը, որ մեզմէ իւրաքանչիւրը պէտք է կատարէ անհատապէս, օգտաշատ է բոլորին համար ու շահեկան: Ան ոչ միայն որոշումներու շարք մը ստեղծելու կը ծառայէ այլ իսկական ինքնաքննութեան եւ ներհայեցողութեան: Ինչպիսի՞ անձ մը եղայ անցեալ տարի, եւ ինչպիսի՞ն պիտի ձգտիմ ըլլալ եկող տարուան ընթացքին: Ծրջապատիս հետ ինչպիսի՞ յարաբերութիւններ մշակեցի, ի՞նչ եւ որքա՞ն տուի ուրիշին, եւ որքա՞ն պիտի տամ եկող տարուան ընթացքին:

Բայց այս բոլորէն վեր, Ամանորի որոշումներու այս յարգի պահը եկէք օգտագործենք խորհելու համար Աստուծոյ հետ մեր մշակած կապին մասին: Որքանո՞վ տեղ տուինք Անոր մեր կեանքերէն ներս. ի՞նչ ձեւերով փորձեցինք քրիստոնէական սկզբունքները գործի վերածել մեր կենցաղի կողմնորոշման ընթացքին: Որքանո՞վ առաքինի անձեր ու տիպար քրիստոնեաներ եղանք:

Եկէք 2005 տարուան համար առնենք առաքինի կեանք մը վարելու որոշումը: Որովհետեւ առաքինութիւնները ամբողջութեամբ բարիք են, թէ՛ մեզի եւ թէ՛ մեր շրջապատին համար: Ըլլանք իմաստուն, արդար, ժուժկալ, համեստ ու վառ պահենք մեր հաւատքը, յոյսը եւ սէրը: 2005 տարուան ընթացքին ըլլանք արժանաւոր քրիստոնեաներ:

Պարզութեան մեծութիւնը

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի ծննդեան դրուագի այնքան նկարագեղ անտարանական պատումին մէջ ամենէն յատկանշական եւ գրաւիչ գիծերէն մէկն է **պարզութեան, աղքատութեան, համեստութեան** այն երեւոյթը, որ ծննդեան պատմութեան կու տայ բացառապէս խորհրդալի եւ վեհիմաստ նշանակութիւն մը եւ նկարագիր մը:

Աստուած իր բնութեանը մէջ ընմբռնուած է ՊԱՐԶՈՒԹԵԱՆ ստորոգելով: Ամէն ինչ որ իրմէ կը ճառագայթէ, սիրոյ ճաճանչումով, պարզ է եւ պարզութեանը մէջ գեղեցիկ: Սէրը, իսկական, վաւերական սէրը պարզ է, այսինքն ճառագայթում բարութեան, ծառայութեան՝ անստուեր, անխառն, անսակարկ: Ծշմարտութիւնը, աստուածաբուն իր բնութեանը մէջ, պարզ է. երբ հանդիպիս անոր, ամէն ինչ ջինջ է, խաղաղ ու բերկրալի հոգիիդ մէջ: Գեղեցկութիւնը, պարզութեան՝ եւ այլազանութեան շրջագիծէն ներս ներդաշնակութեան մէջ ունի իր աղբիւրը:

Մարդ էակն է որ յաճախ այդ պարզութիւնը կը մթագնէ զոն երթալով այնպիսի ճաշակներու եւ ձգտումներու, որոնք իր բնութեանէն եւ կոչումէն չեն բխիր, արուեստական են, կեղծ, խաբուսիկ, բայց յաճախ ու արտաքինապէս գրաւիչ: Մարդն է որ յաճախ անհրաժեշտով չի գոհանար եւ կ'երթայ անելորդին, վայելուչ ու պարզահիւս գեղեցկութեամբ չի յագեցնար, կամ կը ձանձրանայ, եւ կ'երթայ տարօրինակին, յաճախ այլանդակութեան, որ հովի եւ փրփուրի կեանք ունի: Մարդուն համար յաճախ բնական հաճելին կարծես բաւարար չի նկատուիր. կը մղուի երթալ անճոռնիին հասնող նորաձեւութեանց՝ որոնք արեւին պէս ամէն օր կը ծագին ու կը մարին այս աշխարհի երկու ծայրամասերուն վրայ, արեւելք ու արեւմուտք անուններով բնորոշուած:

...



Դա՛րձ դէպի պարզութիւն եւ բնականութիւն: Խուսափէ՛ արուեստական կենցաղակերպերէ, որոնք անելորդ տարրերով կը բեռնաւորեն քեզ եւ կը խճողեն կեանքդ: Մերժէ՛ բնականութեան սահմաններէն անդին անցնող եւ կեանքիդ պարզութիւնն ու խաղաղութիւնը խանգարող շռայլութիւնները եւ երջանկութիւնդ խափանող հաճոյապաշտութիւնները: Աշխարհը մեզ կը փորձէ եւ փորձանքի կը մատնէ եթէ տեղի տանք անոր: Աստուած աղքատ ծնաւ իր մարմնեղէն գոյառումին մէջ, որպէսզի հարստացնէ մարդը հոգեկան հարստութեամբ: Մենք մեր նիւթեղէն հարստութեամբը չաղքատացնենք զԱստուած մեր կեանքին մէջ այնպիսի ապրելակերպով որ դառնայ այլամերժ ու վատահաղորդ սիրոյն ու բարիքին եւ ըլլայ դիւրընկալ հաճոյքին, շահին ու շռայլին, սնամէջ արժէքներու, որոնք կրնան շատ դիւրաւ մեզ առաջնորդել դէպի հոգեկան եւ ազգային սնանկութիւն: Հեռո՛ւ մնացիր քու աստուածային պատկերն ու հայկական կնիքդ աղարտել փորձող ու գառան մորթ հագնող գայլերէն. մի՛ դառնար սիրամարգ. եղիր սիրոյ մարդ՝ մարդասէր եւ աշխարհաշէն:

Գարեգին Բ. Կաթողիկոս
«Անժամանակը ժամանակին մէջ»
Անթիլիաս 1989

Սէր

Յունուար ամիսը կը յատկանշուի Քրիստոսի Սուրբ Ծննդեան տօնով: Եւ ամենէն աւելի ի՞նչ պատուիրեց Յիսուս իր հետեւորդներուն եւ համայն քրիստոնեաներուն եթէ ոչ սէր: Սուրբ Ծննդեան առթիւ Մաշտոցի Արձագանգի Յունուար ամսուան թիւով կը տպենք Պօղոս առաքեալի Կորնթացիներուն գրած առաջին նամակէն 13-րդ գլուխը, «Սէր» խորագրով:

Եթէ մարդոց եւ հրեշտակներու լեզուները խօսիմ, բայց սէր չունենամ, ի՞նչ տարբերութիւն կ'ունենամ պղինձէ շեփորէն որ կը հնչէ, կամ ծնծղաներէն որ կը ղօղանջեն: Եթէ մարգարէութեան պարգելը ունենամ, կարենամ բոլոր խորհուրդներու խորքը թափանցել եւ հասնիմ ամբողջական գիտութեան, եւ նոյնիսկ լեռները տեղափոխելու չափ զօրաւոր հաւատք ունենամ, բայց սէր չունենամ, ոչինչ կ'արժեմ: Ի՞նչ օգուտ, եթէ բոլոր ինչքերս աղքատներուն տամ եւ նոյնիսկ մարմինս կրակի մատնեմ. եթէ սէր չունիմ, ոչինչով կ'օգտուիմ:

Սէր ունեցողը համբերատար կ'ըլլայ եւ քաղցրաբարոյ: Սէր ունեցողը չի նախանձիր, չի գոռոզանար, չի հպարտանար, անպատշաճ վարմունք չ'ունենար, միայն ինքզինք չի մտածեր, բարկութեամբ չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անհրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան: Սէր ունեցողը միշտ կը զիջի, միշտ կը հաւատայ, միշտ կը յուսայ եւ միշտ կը համբերէ:


Սէրը անվախճան է, մինչդեռ այս կեանքին հետ մարգարէական պատգամները վերջ պիտի գտնեն, հրեշտակներու լեզուներով խօսիլը պիտի դադրի, գիտութիւնն ալ վերջ պիտի գտնէ: Այժմ մեր գիտցածը անկատար է եւ մեր մարգարէութիւնն ալ՝ մասնակի: Բայց երբ կատարեալը գայ, այս անկատարութիւնը վերջ պիտի գտնէ:

Երբ երեխայ էի, երեխայի պէս կը խօսէի, երեխայի պէս կը խորհէի եւ երեխայի պէս կը տրամաբանէի. իսկ երբ տղամարդ դարձայ, բոլոր երեխայական բաները մէկ կողմ դրի: Նոյնպէս ալ, մենք այժմ զԱստուած կը տեսնենք աղօտ կերպով, կարծես հայելիի մը մէջէն. բայց երբ ամէն բանի կատարումը գայ՝ զայն պիտի տեսնենք դէմ առ դէմ: Այժմ միայն մասնակիօրէն կը ճանչնամ զԱստուած, բայց այն ատեն պիտի ճանչնամ ամբողջապէս, ճիշդ ինչպէս ի՞նք զիս կը ճանչնայ:

Ներկայիս, ուրեմն, միակ կարեւոր բաներն են, հաւատքը, յոյսը եւ սէրը. իսկ այս երեքէն մեծագոյնը սէրն է:

Յիսուս ըսաւ

Ես եմ **ճշմարիտ**
որթատունկը եւ Հայրս
մշակն է: Յովհաննէս 15.1



Ես եմ **աշխարհի լոյսը**: Ով որ
ինծի կը հետեւի՝ խաւարին մէջ
պիտի չքալէ, այլ պիտի ունենայ այն
լոյսը որ կեանքի կ'առաջնորդէ:
Յովհաննէս 8.12

Ես եմ **կեանքի**
հացը: Ան որ
ինծի կու գայ՝
բնաւ պիտի
չանօթենայ եւ ան
որ ինծի կը
հաւատայ երբեք
պիտի չծարաւնայ:
Յովհաննէս 6.35

Ե՛ս եմ **ճամբան**, **ճշմարտութիւնը** եւ
կեանքը: Միայն ինձմով կարելի է Հօրս
երթալ: Յովհաննէս 14.6


Եմ եմ **յարութիւնը** եւ
կեանքը: Ան որ ինծի կը
հաւատայ, թէպէտեւ մեռնի՝
պիտի ապրի: Իսկ ան որ
ողջ է եւ ինծի կը հաւատայ՝
երբեք պիտի չմեռնի:
Յովհաննէս 11.25-26

Պատմություն համար**Ինչպե՞ս հիմնուեցաւ Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ
Կիրակնօրեայ դպրոցը****Տ.Արմէն Աւ. Քհնյ. Իշխանեան**

1973-ի աշնան, երբ երջանկայիշատակ Գարեգին Ս.Արք Սարգիսեան, այն ատեն կաթողիկոսական փոխանորդ Կիլիկեան Ս. Աթոռի Մ.Նահանգաց արեւելեան թեմին՝ կը յայտնէր թէ որոշած է զիս քահանայութեան կոչել Մոնթրէալի ծովսին համար: Այդ օրէն իսկ, լաւ գիտնալով թէ Սրբազան Հայրը իր մտածումը անպայման պիտի իրագործէ, սկսայ նախապատրաստուիլ՝ մշակելով գործունէութեան լայն ծրագիր մը, որը կ'ընդգրկէր առաջին առթիւ իսկ Կիրակնօրեայ դպրոցի մը հիմնումը՝ քաջ գիտնալով Կիրակնօրեայի դերը անձի մը քրիստոնէական նկարագրի կազմութեան մէջ՝ շնորհիւ այն իրողութեան որ նկարագիրս կազմաւորուած էր Կիրակնօրեայ դպրոցի մը հնոցին մէջ, որուն համար միշտ օրհնութիւն կ'արտասանեմ թէ՛ իմ քայլերս Կիրակնօրեայ առաջնորդող մօրս եւ թէ՛ հոն պաշտօնավարող նուիրեալ ուսուցիչներու համար:

1974-ի Մարտին օծուեցայ եւ Ապրիլի 7-ին սկսայ քահանայագործութիւնս Մոնթրէալի մէջ: Առաջին օրէն իսկ վերահասու եղայ թէ ինչո՞ւ այս քաղաքը Կիրակնօրեայ դպրոց չէր ունեցած: Կային հիմնական երկու պատճառներ. առաջինը տեղի չգոյութիւնն էր, իսկ երկրորդը առաջինի պատճառաբանութեան ետին քողարկուած չկամութիւնն էր:

Այո, տեղ բացարձակ չկար. այն ատեն ունէինք միայն «Ահարոնեան» սրահն ու ներքեւի սենեակները, որոնցմէ մէկ մասը իբր գրասենեակ կը ծառայէր իսկ մնացեալը նորաբաց Ծաղկոցին էր յատկացուած: Հակառակ անոր որ Կիրակի օրեր Ծաղկոցի յատկացուած սրահները ազատ կ'ըլլային, ծաղկոցի պատասխանատուները անկարելի կը գտնէին որ իրենց զարդարած պատերը յանձնէին Կիրակնօրեայի անհանդարտ աշակերտներու բարեխղճութեան...



1979-ին, երբ Հայ Կեդրոնին երկրորդ բաժինը կը շինուէր, ես արդէն մեծ յոյսերով խանդավառ՝ Կիրակնօրեայ մը ունենալու հարցը դրի Հոգաբարձութեան սեղանին վրայ. ծրագիրը բնաւ խանդավառութեամբ չընդունուեցաւ: Դարձեալ կը պատճառաբանէին թէ տեղ չկայ, ամէն միութիւն իր տեղը ապահոված է նոր բաժնին մէջ, նաեւ թէ... փոքրիկներուն մեղք է, արդէն հինգ օր իրենց դպրոցները կը յաճախեն դասերով բեռնաւոր, վեցերորդ օրն ալ շաբաթօրեայ կ'երթան, թող եօթներորդ օրն ալ հանգիստ ընեն, եւայլն, եւայլն... Անգամ մը վիճաբանութիւնը այնքան սաստկացաւ որ ինքզինքէս ելած ըսի. – «Կը զարմանամ ձեր այս բացասական ընթացքին համար. ուրիշ գաղութներ կը ցանկան քրիստոնէական դաստիարակութիւն ջամբել իրենց զաւակներուն բայց միջոցը չունին, իսկ դուք փոխանակ ուրախութեամբ քաջալերելու զիս, առաջին արգելիչ պատը կը կանգնեցնէք դիմացս»:

Նոյն տարին, 1979-ի հոկտեմբերի տարեկան տեղեկագրիս մէջ արձարծեցի Կիրակնօրեայի հարցը՝ յոյս ունենալով որ ժողովականներու մտքին մէջ կրնայի հող պատրաստել ի նպաստ այս անյետաձգելի հարցին:

Մինչ այդ ես արդեն սկսած էի նախապատրաստական աշխատանքներու՝ ընդհանուր ծրագրումի եւ դասացուցակներու պատրաստութեան համար: Այն ատեն շուրջս կրնամ ըսել անապատ էր Քրիստոնէական դաստիարակութեամբ հետաքրքրուողներու տեսակետէ: Կողքիս միայն մասնագէտ ու նուիրեալ ունէի Պրն. Յարութիւն Փալանճեանը. սակայն Աստուած անակնկալ կերպով դիմացս հանեց Օր. Այտա Պաղէճեանը եւս: Գիտէի թէ ան Մաթեմաթիքի դասատու էր, քաղաքական գործիչ էր, մեր Կրթական Գործադիրին ալ անդամ էր, սակայն չէի գիտեր թէ նաեւ Քէպէքի կառավարութեան կողմէ վկայուած էր Կրօնական Դաստիարակութեան ճիւղէն...

Ուրեմն, երեքս՝ Յարութիւնը, Այտան եւ ես ժամադրուեցանք խորհրդակցելու, եւ որոշեցինք երկու շաբաթ ետք վերստին հանդիպիլ՝ ամէն մէկս որոշ բնագաւառի ուսումնասիրուած ծրագրով: Ներկայացուած զանազան աշխատասիրութեանց մէջ նպատակայարմար նկատուեցաւ օգտագործել հետեւեալները. - Բերիոյ թեմի հրատարակած «Կրօնի Դասեր» շարքը, Թորգոմ Աբել. Հանէշեանի նոր լոյս տեսած -1977- «Հայոց Կրօնի Պատմութիւն» Հայոց հոգիի, սրտի եւ մտքի լուսաւորիչներ եւ անոնց գործունէութիւնը», Sunday School Plus, Teachers Guide եւայլն:

Յաջորդ հանդիպումին հրաւիրեցի նաեւ Տէր եւ Տիկին Զաւէն եւ Վալանթին Ապտալեանները, որոնք պատրաստակամութիւն յայտնած էին սիրայօժար ծառայելու Կիրակնօրեայ դպրոցին: Ամիսներու բժախնդիր աշխատանքի արդիւնք՝ խնամեալ ծրագիրը կազմուած էր 3 բաժիններէ. -

1- Հայոց Կրօնի պատմութիւնը. Սուրբեր, Ծարականներ աւանդութիւններ եւայլն,

2- Կրօնի դաստիարակութիւն Հին Ուխտէն սկսեալ. մանաւանդ Տասնաբանեայ Պատուիրանները, Յովհաննէս Մկրտիչի եւ Յիսուսի ծնունդը կեանքն ու առակները,

3- Քրիստոնէական պատգամներու գործնականացման կարելորութիւնը՝ աշակերտներու ընտանեկան եւ ընկերային կեանքին մէջ եւայլն: Այս բոլորը լաւ, սակայն մեծագոյն հարցերը կը մնային նախ ծնողներու վերաբերումը, երկրորդ՝

դասասեռեակներու հարցը, երրորդ՝ կարող ուսուցիչներու որոնումը:

14 Սեպտեմբեր 1980-ին, Խաչվերացի Տօնին օրը սկսանք Կիրակնօրեան, 40-50-ի մէջ տարուբերող աշակերտներով եւ տնօրէնութեամբ Պրն. Յարութիւն Փալանճեանի, որ 5 տարի ձեռնհասօրէն ու տառապալից նահատակութեամբ տարաւ իր քաղցր լուծը. տառապալից կ'ըսեմ, որովհետեւ խոստացուած սեռեակները յաճախ գրաւուած ըլլալով, աշակերտները միջանցքներու մէջ պէտք էր հետեւէին դասի, մինչ իրենց ընկերները ազատ համարձակ շուրջերնին կը վազվզէին...

Նոյն անպատեհութիւնները կրեց նաեւ Պրն. Զաւէն Ապտալեանը, որ 1986-ի Սեպտեմբերէն մինչեւ 1995-ի Մայիսը վարեց տնօրէնի պաշտօնը:

1995-ի ընթացքին, Հոգաբարձութիւնը ընդառաջելով առաջարկիս, թէ կարիքը կը տեսնէի վերամշակելու Կիրակնօրեայի ընդհանուր կառոյցն ու դասացուցակը, կազմեց յատուկ յանձնախումբ մը՝ զբաղելու համար այս հարցով: Յանձնախումբի անդամներն էին Տիկնք. Տիրուկ Մանհիկեան, Վիքի Զաւաւաճեան, Տեառք Լեւոն Եաղճեան, Հայկ Գազանճեան, եւ Օր. Մարօ Տէմիրճեան, որոնք բժախնդրօրէն կատարեցին իրենց ստանձնած պարտականութիւնը, Ս. Յակոբ վարժարանի շէնքին մէջ եւս տեղ ապահովելով Կիրակնօրեայի: Յանձնախմբային դրութիւնը մինչեւ օրս կը շարունակուի, որմէ վստահ եմ լաւագոյնս կ'օգտուի Կիրակնօրեան:

1995-96 եւ 1996-97 տարեշրջաններուն տնօրէնութիւնը վարեց Օր. Մարօ Տէմիրճեան: Իսկ 1997 Սեպտեմբերէն սկսեալ մինչեւ օրս՝ Կիրակնօրեայի Տնօրէնութիւնը բացառիկ ձեռնհասութեամբ եւ արդիական միջոցներու լաւագոյնս օգտագործմամբ կը վարէ Տիար Թորոս Պապիկեան:

Վարձքը կատար Աստուծոյ փառքին եւ մեր փոքրերու ընտիր դաստիարակութեան համար նուիրեալ բոլոր տնօրէններուն, ուսուցիչներուն, ծնողներուն եւ բոլոր պատասխանատուներուն: Աստուած օրհնէ բոլորը:

Ծանոթացում Հայաստանի հետ Կոտայքի մարզ



Կոտայքի մարզի սահմաններէն ներս կը գտնուին Հրազդան, Արովեան, Բիրեղական, Եղուարդ, Ծաղկաձոր, Նոր Հանրն եւ Զարեմցաւան քաղաքները: Մարզին կեդրոնն է Հրազդանը: Մարզէն ներս կը գտնուին նաեւ Աժդահակ լեռը եւ Հրազդան գետին մէկ մասը: Մարզը հարուստ է մարմարով, կրանիթով, երկաթով եւ հանքային այլ շինանիւթերով, ինչպէս նաեւ հանքային եւ անուշահամ ջրերի աղբիւրներով:

Կոտայքի մարզը շատ հարուստ է տարբեր դարաշրջաններէն մնացած յուշարձաններով: Գառնիի հեթանոսական տաճարը, հայաստանի հելլենական դարաշրջանէն մեզի հասած միակ շինութիւնը, կառուցուած է Ա. դարուն իսկ, Տրդատ թագաւորի օրերով. Գեղարդի վանքը, որ նախապէս կը կոչուէր «Այրիվանք», մեզի կը հասնի 4-րդ դարէն. Կեչառիսի վանքը՝ 11-րդ դարէն. Եղուարդի եկեղեցիները 7-րդ դարէն:




Գեղարդ

Գեղարդի վանքը միջնադարեան հայկական ճարտարապետութենէն մեզի հասած գեղեցիկ յուշարձան-վանք մըն է, որ նախապէս կոչուած է «Այրիվանք», իր քարայրային կառուցներուն պատճառով:

Ըստ աւանդութեան, Գեղարդ կառուցուած է քրիստոնէութիւնը պետական կրօն ընդունուելէն անմիջապէս ետք՝ Դ. դարու սկիզբը: Եղած է հոգեւոր եւ մշակութային դաստիարակութեան կարեւոր կեդրոն: Ունեցած է դպրանոց, գրադարան, արհեստանոց, մթերանոց եւ ժայռափոր խուցեր՝ վանականներու կեցութեան համար:

Վանքի գլխաւոր եկեղեցին թէեւ Գեղարդինքն է, սակայն այցելուները յատկապէս կը տպաւորուին անոր կից յաժնափոր եկեղեցիներով: Զարմանալին այն է որ այս ժայռի մէջ կառուցուած եկեղեցիները բոլոր եկեղեցիներուն պէս օժտուած են գմբէթով, կամարներով եւ բեմերով:



Պահուած բառ

Պատրաստեց Առէն Պապիկեան, աշակերտ Կիրակնօրեայ Դպրոցի նախ. Գ. դասարանի

Անի

Առէն

Էլիզաբէթ Տէր

Նաւակ Լաւ

Նազ Առաքեալ

Բեն Ակն

Սենեակ Կաթ

Փրանսա Նօթ

Աւել Գին

Սեւակ

Իլիկ

Սառ Պահուած բառ՝

Սէր հինգ գիրով,

Նոր «երբ տանք,

Էջ կ'ուրախանանք»

Լակոտ

ա	ն	ի	ն	ա	ւ	ա	կ
ռ	ն	լ	ա	կ	ո	տ	ա
է	լ	ի	զ	ա	բ	է	թ
ն	ր	կ	գ	ե	լ	ր	օ
ու	ո	է	ն	ն	ե	է	ն
ր	շ	ր	ս	ե	ւ	ա	կ
ֆ	ր	ա	ն	ս	ա	ա	ա
ա	ռ	ա	ք	ե	ա	լ	լ

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն

Յիսուսի Սուրբ ծնունդը


Կամ աշխարհի ամենէն աւելի պատմուած պատմութիւնը



Իմ անունս Մարիամ է: Ես ծնայ
Աստուծոյ որդին՝ Յիսուսը: Բնաւ
չեմ մոռնար Յիսուսի ծնունդը: Օր
մը հրեշտակ մը այցելեց ինծի եւ
ըսաւ՝ «Ուրախացիր, Աստուած
հետդ է, դուն օրհնուած ես
կիներուն մէջ»: Երբ այս խօսքերը
լսեցի քիչ մը մտահոգուեցայ,
ինքզինքիս հարց տուի թէ ի՞նչ ըսել
կ'ուզէր հրեշտակը: Ապա ան
շարունակեց «Մի վախճար
Մարիամ, դուն պիտի ունենաս
զաւակ մը որուն անունը պիտի



դնես Յիսուս, եւ ան
պիտի կոչուի Աստուծոյ
որդի»: Հրեշտակը
ըսաւ նաեւ որ իմ
զարմիկս՝ Եղիսաբէթն
ալ զաւակ մը պիտի
ունենայ: Երբ այս
լսեցի անմիջապէս
գացի Եղիսաբէթին
քով. երբ ան իմ
ձայնս լսեց փոքրիկը
շարժեցաւ փորիկին
մէջ, եւ ան ըսաւ ինծի
«Օրհնեալ ես դուն
կիներուն մէջ»:



Այդ օրերուն Հոռմի Օգոստոս կայսրը հրամայեց որ ամէն մարդ իր ծննդավայրը վերադառնայ ընդհանուր մարդահամար մը կատարելու համար: Յովսէփը, որու հետ ես պիտի ամուսնանայի, եւ ես Բեթլեհէմէն էինք: Թէեւ զաւակս շուտով պիտի ծներ սակայն մենք վերադարձանք Բեթլեհէմ: Բեթլեհէմ շատ մարդ կար եւ բոլոր պանդոկներուն սենեակները լեցուն էին ուրեմն ստիպուեցանք ախոռի մը մէջ քնանալ: Այդ գիշեր մեր զաւակը ծնաւ, զինք դրինք մսուրին մէջ: Աւելի ուշ նոյն գիշերը հովիւներ եկան մեզի այցելութեան, եւ պատմեցին թէ ինչպէս երբ իրենց գառ նուկները կը հսկէին, փայլուն հրեշտակ մը երեւցեր է իրենց, հովիւները շատ վախցեր են, շուտով հրեշտակը ըսեր է անոնց «Մի վախճաք ձեզի լաւ

Եղիսաբէթ եւ իր ամուսինը Զաքարիա շատ ծեր էին եւ զաւակ չէին կրնար ունենալ, սակայն Աստուած հրաշք մը կատարեց եւ անոնք ունեցան զաւակ մը որու անունը դրին Յովհաննէս, ան աւելի ուշ կոչուեցաւ Յովհաննէս Մկրտիչ:

Օգոստոս կայսրը Հռոմեական կայսրության պետն էր եւ կը կառավարէր ամբողջ աշխարհը, երբ ան բան մը ըսէր ամէն մարդ կ'ենթարկուէր անոր:

Յովսէփ եւ Մարիամ երեք օր գալեցին Նազարէթ քաղաքէն Բեթլեհէմ հասնելու համար:

Օգոստոս կայսրը կ'ուզէր գիտնալ քանի հոգի կար իր կայսրության մէջ, եւ մարդիկ հաշուելու համար կատարեց մարդահամար մը, եւ գրի առնել տուաւ իւրաքանչիւր անձի անունը եւ ծննդավայրը:



Լուր մը պիտի տամ, Դաւիթի քաղաքին մէջ այսօր ծնաւ ձեր փրկիչը Յիսուս Քրիստոս»: Հրեշտակին միացան խումբ մը հրեշտակներ եւ բոլորը միասին ըսին «Աստուծոյ փառք երկինքի մէջ եւ խաղաղութիւն աշխարհի վրայ»:

Մտաւորին մէջ կը դնէին կովերուն եւ էջերուն ճաշը: Մտաւորը ընդհանրապէս կը գտնուէր ախոռին մէջ, ուր մարդիկ իրենց կենդանիները կը պահէին:



Մտածէ՛
ասոր
մասին

Յիսուս թագաւոր մըն է սակայն ան չէ ծնած
պալատի մէջ, ան ծնած է ախորի մը մէջ
կենդանիներու քով, եւ անոր առաջին
անկողինը մսուր մըն էր:

Աստուած այս բոլորը ծրագրած էր:

Յիսուսի այս ծնունդը կը ցուցնէ որ ան
բոլորին համար եկաւ աշխարհ աղքատին եւ
հարուստին համար:

Սուրբ Սահակ Պարթևի Հայրապետ

Սուրբ Սահակ մէկ հատիկ զաւակն էր Մեծն Ներսէս Հայրապետին: Ծնած է Կեսարիոյ մէջ, 348 թուին եւ իր ուսումը ստացած իր ծննդավայրին մէջ: Ապա, կատարելագործելու համար իր ուսումը մեկնեցաւ Բիւզանդիոն ուր կրօնական, եկեղեցական եւ այլ գիտութիւններու կողքին սորվեցաւ նաեւ օտար բազմաթիւ լեզուներ, ինչպէս յունարէն, ասորերէն եւ պարսկերէն:

Իբր Ամենայն Հայոց կաթողիկոս, Սուրբ Սահակի կոչումն էր ազգին եւ եկեղեցւոյ նուիրուած աշխատանքը: Ան իր շուրջը հաւաքելով բազմաթիւ աշակերտներ, սկսաւ Սուրբ Գրոց դասաւանդութիւններ եւ միատեղ Աւետարանի քարոզչութիւն կատարեց ժողովուրդին մէջ: Սուրբ Սահակն ու իր աշակերտները կը զբաղէին իրենց հետեւող ժողովուրդին հոգեւոր պէտքերով, օրինակ անոնց ուսուցանելով Սուրբ Գիրքի պատուէրները, հաւատք, մխիթարանք եւ հոգեւոր ոյժ ներշնչելով բոլորին:

Սուրբ Սահակ Պարթև յատկապէս ծանօթ է իր մատենագրական ժառանգով: Ան կարգաւորած է հայկական տօնացոյցը, գրած է եկեղեցական թէ աշխարհիկ կարգի մարդոց հետաքրքրող հարցերու շուրջ կանոններ, գրած եւ եղանակաւորած է շարականներ:



Գիտէի՞ր թէ...

Ղազար Փարպեցին կը գրէ թէ Մեսրոպ Մաշտոց եւ այլ թարգմանիչներ, Աւետարանի յունարենէն հայերէնի թարգմանութեան ընթացքին հայերէն եւ յունարէն հնչիւնաբանութիւնները բաղդատելու համար կը դիմէին Սուրբ Սահակ Պարթևին այս նիւթերուն շուրջ իր կատարեալ ծանօթութիւններէն օգտուելու համար:

Սուրբ Սարգիսի տօնի վերաբերեալ ժողովրդային աւանդութիւններ

Բոլորին ծանօթ է եւ բացառիկ ժողովրդականութիւն ունի Սուրբ Սարգիս զօրավարի անուանակոչութեան տօնը որ այս տարի կը զուգահիսի Յունուար 22-ին: Սուրբ Սարգիսի կեանքն ու մարտիրոսի նահատակութիւնը յանուն քրիստոնէութեան մեր բոլորին քաջաճանօթ է: Մեզմէ ո՞վ չի գիտեր «սուրբ» տիտղոսին արժանացած այս Հռոմէական բանակի սպարապետին անխախտ հաւատքը որուն ազդեցութեամբ քրիստոնէութիւնը ընդունեցին իր բանակի շարքէն ներս քանիներ:

Սուրբ Սարգիսի կեանքին վերաբերող Ասքերէն մէկը կը վկայէ թէ զօրավարը օրին իր սիրած երիտասարդունին փախցուցած է: Այս ասքը հիմքը կը հանդիսանայ աւանդութեան մը, ըստ որուն բոլոր երիտասարդները խիստ համակրանք կը զգան Սուրբ Սարգիսի հանդէպ հաւատալով որ ան լաւագոյն ձեւով կը հասկնայ զիրենք ու կրնայ օգնել զիրենք որպէսզի հասնին իրենց երիտասարդական երազներուն: Այս հիման վրայ, Սուրբ Սարգիսի տօնը նախորդող շաբթուան ընթացքին երիտասարդները, յատկապէս աղջիկներ, ծոմ կը բռնեն:

Այլ աւանդութեան մը համեմատ, Սուրբ Սարգիսի տօնի օրերուն մարդիկ իրենց տանիքին վրայ կը դնէին ալիւրի եւ ցորենի խառնուրդ մը, որուն վրայէն, գիշերը, զօրավարը պիտի անցներ իր ձիով: Յաջորդ օրը, տնեցիները կը ստուգէին ձիուն պայտին հետքերը ալիւրին վրայ, ու այդ ալիւրը շաղելով անկէ ելած հացը կը կերցնէին երիտասարդներուն որպէսզի անոնք ալ հասնին իրենց երազներուն:

Հայ Գիրերու
Գիւտ

1,600-Ամեակ

405 - 2005

Մոնթրէալի Սուրբ
Յակոբ Մայր
Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ
Դպրոցի

25-Ամեակ

1980 - 2005

Քրիստոս բաղադրիչով հայերէն բառերը

Քրիստոս բառը առաջ կու գայ յունական «խրիստոս» բառէն որ կը նշանակէ «Օծեալ»: Այս բառին հայցական հոլովին, «խրիստոն» բառին աւելցնելով «եայ» մասնիկը, կազմուած է Քրիստոնեայ բառը որ իր կարգին հիմը դարձած է տասնեակներով այլ հայերէն բառերու:

Այս մասին կը գրէ Դաւիթ Գյուրջիցեան իր «Կրօնակեղեցական լեզուական միաւորների քննութիւն» գիրքին մէջ: Ըստ հեղինակին, «քրիստոնեայ» բառին հետ առընչուող այլ բառերու մեծ մասը կազմուած ըլլալու է Ե. դարէն ի վեր: Այսպէս, Կորինի «Վարք Մաշտոցի» երկին մէջ կը հանդիպինք *Քրիստոսաբեր*, *քրիստոնոսադիր*, *քրիստոնոսազգեստ*, *քրիստոսական*, *քրիստոսակոչ*, *քրիստոնոսամեծար*, *քրիստոսասէր* բառերուն: Ազաթանգեղոս պատմիչին «Պատմութիւն Հայոց»-ին մէջ կը հանդիպինք *Քրիստոսագործ*, *քրիստոսագունդ*, *քրիստոսադիր*, *քրիստոնոսածանօթ*, *քրիստոնոսական*, *քրիստոնոսակեցոյց*, *քրիստոսակոչ*, *քրիստոսամուտ*, *քրիստոնոսանշան*, *քրիստոնոսապատուիմ*, *քրիստոնոսասէր*, *քրիստոնոսատուր*, *քրիստոսաւանդ*, ինչպէս նաեւ սուրբգրային *քրիստոնեայ* բառերուն:

Արդի ժամանակաշրջաններու մէջ, ծանօթ են Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բառային նորակազմութիւններու կարգին անոնք՝ որոնք կազմուած են Քրիստոս բաղադրիչով: Անոր բազմաթիւ նորակազմ բառերու շարքին կարելի է յիշել *քրիստոնոսաբարբառ*, *քրիստոնոսակառոյց*, *քրիստոնոսակոխ*, *քրիստոնոսահաստատ*, *քրիստոնոսահաւատ*, *քրիստոնոսապատկեր*, *քրիստոսատես* եւ *քրիստոսաքարոզ* բառերը:

Նորակառոյց բառերու շարքին նշելի է նաեւ *քրիստոսադաւ* բառը որ կը նշանակէ «քրիստոսը դաւող, քրիստոսը չընդունող», զորս գործածած է Ստեփան Զօրեան «քրիստոսադաւ թագաւոր» խօսքին մէջ:

Սակայն, Քրիստոս բաղադրիչով կազմուած բառերը երբեմն ալ շփոթի կրնան մատնել: Այսպէս է օրինակ «քրիստոսաշահ» բառը որ առաջին հերթին, բաղդատելով բառակազմութեան տեսակետէ նմանօրինակ *մեծաշահ*, *ազգաշահ*, *վաճառաշահ*, *հոգեշահ* բառերուն, պիտի նշանակէր քրիստոսի կամ Անոր անուան շահ բերող կամ օգտակար: Սակայն երբ կը կարդանք Նոր Հայկագեան եւ Մալխասեան բառարանները,

քրիստոսաշահ բառը կը սահմանուի հետեւեալ ձեւով.– «Քրիստոսին կամ քրիստոսի անունը շահագործող, քրիստոսի անունով մարմնաւոր շահ փնտռող»: Այս հակասական կացութիւնը կը փարատի երբ բառին կը հանդիպինք գրութեան մը մէջ ուր իմաստը կը յստականայ ու տարակարծութիւնը կը դադրի. «Մի՛ ըլլաք քրիստոսավաճառ եւ քրիստոսաշահ»...

Քրիստոս բաղադրիչով կազմուած այս անհամար բառերը կու գան հաստատելու այն իրողութիւնը թէ հայերէն լեզուն կը յատկանշուի իր բառակազմութեան լայն կարելիութիւններով եւ ճկունութեամբ:

Ա Ժ Ճ Ռ
Բ Ի Մ Ս
Գ Լ Յ Վ
Դ Խ Ն Տ
Ե Ծ Ծ Բ
Զ Կ Ո Յ
Է Հ Չ Ի
Ը Զ Պ Փ
Թ Ղ Զ Ք

Օ Ֆ

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Մեր Կիրակնօրեայ Դպրոցը հիմնուեցաւ ----- թուականին:

Այս տարի մեր դպրոցի հիմնադրութեան ----- Ամեական է:

2005 Թուականը Հայ Գիրերու գիւտին ----- Ամեական է:

**Ամբողջացո՛ւր ըստ Դուկասի Աւետարանին 2.9-12
աւետիս, Փրկիչը, Օծեալ, խանձարուրով, մանուկ, մսուրի,
լոյսի, Հրեշտակը**

Տիրոջ ----- անոնց երեւցաւ եւ Տիրոջ փառքը
----- պէս անոնց վրայ ծագեցաւ: Հովիւները սաստիկ
վախցան. հրեշտակը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք, ձեզի ----- մը պիտի տամ, որ
ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ:

Այսօր Դաւիթ քաղաքին մէջ ձեր ----- ծնաւ, որ

----- Տէրն է: Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի. - հոն

----- մը պիտի գտնէք՝ ----- փաթթուած եւ

----- մէջ դրուած:

Ոեւէ մէկը իր ընկերոջ անհրաւորութիւն թող չընէ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն**

1.- Ե՞րբ տեղի ունեցաւ Հայ Գիրերու
Գիւտը:

Ա.- 301

Բ.- 405

Գ.- 451

Դ.- 1003

Ա.- Երուսաղէմ

Բ.- Նազարէթ

Գ.- Բեթլեհէմ

Դ.- Երիքով

2.- Այս տարի հայ գիրերու գիւտին
----- Ամեակն է:

8.- Ո՞վ էր Հայաստանի Կաթողիկոսը
երբ Ս. Մեսրոպ Մաշտոց գտաւ հայ
Գիրերը:

3.- Ե՞րբ Հիմնուեցաւ Սուրբ Յակոբ
Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը:

9.- Ամբողջացո՞ւր Տաղ Սուրբ
Ծննդեան բառերը:

Ա.- 1929

Բ.- 1999

Գ.- 1980

Դ.- 1979

Այսօր տօն է սուրբ -----, անտի՛ս
Տեառըն մերոյ եւ -----, անտի՛ս:

4.- Այս տարի մեր Կիրակնօրեայ
Դպրոցին ----- Ամեակն
է:

10.- Գրէ մի քանի
նախադասութիւններու մէջ, թէ ինչպէ՛ս
կրնանք մենք բոլորս որպէս
Կիրակնօրեայ Դպրոց տօնել Հայ
Գիրերու 1600րդ Տարեդարձը:

5.- Հայերէնի գիրերը 38 հատ են, «Ա»
էն մինչեւ «Ֆ»: Ս. Մեսրոպ Մաշտոցը
գտաւ 36 գիրեր: Ո՞ր երկու գիրերը
չգտաւ:

6.- Գեղարդի վանքը Հայաստանի ո՞ր
մարզին մէջ կը գտնուի:

Ա.- Կոտայք

Բ.- Արագածոտն

Գ.- Արմաւիր

Դ.- Վայոց Ձոր

7.- Յիսուս ո՞ր քաղաքին մէջ ծնաւ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Հայ Գիրերու Գիւտը տեղի ունեցաւ
 ----- Թուականին: Այս տարի հայ
 գիրերու գիւտին ----- Ամեակն է:

Այսօր ----- արդարութեան, անտի՛ս.
 ----- ի մէջ մարդկան, անտի՛ս:

Քրիստոս ----- եւ -----:

2.- Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ
 Կիրակնօրեայ Դպրոցը հիմնուեցաւ
 ----- թուականին: Այս տարի մեր
 Կիրակնօրեայ Դպրոցին -----
 Ամեակն է:

8.- Այս տարի ե՞րբ է Սուրբ Սարգիսի
 Տօնը: -----

3.- Հայերէնի գիրերը 38 հատ են, «Ա»
 էն մինչեւ «Ֆ»: Ս. Մեսրոպ Մաշտոցը
 գտաւ 36 գիրեր «Ա» էն մինչեւ «Ք»:
 Ինչո՞ւ -----
 -----:

9.- Գրէ մի քանի
 նախադասութիւններու մէջ, թէ ինչպէ՛ս
 կրնանք տօնել Հայ Գիրերու 1600րդ
 Տարեդարձը:

4.- Գեղարդի վանքը կը գտնուի
 Հայաստանի ----- մարզին մէջ եւ
 կարուցուած է ----- դարուն:
 Նախապէս կը կոչուէր -----:

5.- Յիսուս ծնաւ -----
 քաղաքին մէջ որ Նազարէթէն
 մօտաւորապէս ----- օրուայ
 հեռաւորութիւն ունէր:

10.- Գրէ մի քանի
 նախադասութիւններու մէջ, թէ ինչպէ՛ս
 կրնանք տօնել մեր Դպրոցին 25
 Ամեակը:

6.- Ո՞վ էր Հայաստանի Կաթողիկոսը
 երբ Ս. Մեսրոպ Մաշտոց գտաւ հայ
 Գիրերը:

7.- Ամբողջացո՞ւր «Տաղ Սուրբ
 Ծննդեան» ի բառերը:

Այսօր տօն է սուրբ -----, անտի՛ս
 Տեառն մերոյ եւ -----, անտի՛ս:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1.- Հայերէնի գիրերը 38 հատ են, «Ա»
էն մինչեւ «Ֆ»: Ս. Մեսրոպ Մաշտոցը
գտաւ 36 գիրեր «Ա» էն մինչեւ «Բ»:
Երբ գտնուեցան «Օ» ն եւ «Ֆ»ն
-----:

2.- «Ֆ» հնչիւնը Մեսրոպ մաշտոցի
օրով Հայերէն ո՞ր գիրով կը
թարգմանուէր: Տո՛ւր օրինակ մը:

3.- Ո՞վ էր մեր եկեղեցւոյ Տէր հայրը
երբ հիմնուեցաւ մեր Կիրակնօրեայ
Դպրոցը:

4.- Ամբողջացո՛ւր: Յովհաննէսի
Աւետարանին մէջ կը կարդանք թէ
Յիսուս ըսաւ.

«Ես եմ...

Ա.- Ծշմարիտ -----

Բ.- Աշխարհի -----

Գ.- Յարութիւնը եւ -----

Դ.- Կեանքի -----

Ե.- Ծ-----, Ծ----- եւ
Կ-----:

5.- Ամբողջացո՛ւր:

Խորհուրդ մեծ եւ -----

որ յայսմ աւուր -----

հովիւք երգեն ընդ -----

տան ----- աշխարհի

6.- Այս տարի ե՞րբ է Յիսուսի
անուանակոչութեան տօնը:-----
1996 ին երբ էր: -----

7.- Չարենցաւանը Հայաստանի ո՞ր
մարզին մէջ կը գտնուի:

Ա.- Կոտայք

Բ.- Արագածոտն

Գ.- Արմաւիր

Դ.- Վայոց Ձոր

8.- Ամբողջացո՛ւր ըստ Ա. Կորնթացիս
13 ին: Ներկայիս, ուրեմն, միակ
կարեւոր բաներն են, -----,
-----, եւ -----.
Իսկ այս երեքէն մեծագոյնը ----- է:

9.- Ինչպէ՞ս կրնանք տօնել Հայ
Գիրերու 1600րդ Տարեդարձը: Դուն
ի՞նչ ձեւով կրնաս մասնակցիլ:

10.- Ինչպէ՞ս կրնանք տօնել մեր
Դպրոցին 25 Ամեակը: Դուն ի՞նչ ձեւով
կրնաս մասնակցիլ:

Դեկտեմբեր ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ

Պատասխաններ

Մանկապարտեզի անկիւն

Աճապարանքով, Մարիամն, մտորին,
հրեշտակը, կը զարմանային, կը խոկար

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. Գ.Որդի պիտի ունենաս եւ անունը Յիսուս դնես
2. ա.Եղիսաբեթին քով
3. Գ.Մոգերը
4. Գ. Բեթլեհեմ
5. Դ. Գտէք Յիսուս մանուկը որպէսզի ես ալ գամ եւ երկրպագեմ իրեն
6. Բ. Ոսկի կնդրուկ եւ զմուռս
7. Դ. մտորին մէջ
8. ա. Յունուար 6
9. ա. Յունուար 6
10. Դ.30 տարեկան

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. Դ. Դեկտեմբեր 27
2. Դ. Վայոց Ձոր
3. Պատերազմի Աւետարան
4. Գ. 1984
5. Սբ. Բարթողիմիոս կամ Նաթանայէլ
6. Սբ. Թադէոս
7. Ս. Ստեփանոս
8. Բ. Ս. Գրիգոր Նարեկացի
9. ա. Ս. Յակոբ Մծբնացի
10. Գ. Ստրուկ

Երկրորդականի անկիւն

1. Ձերբակալել եւ Երուսաղէմ բերել
2. Գետին ինկալ
3. Ձայն մը, որ իրեն կ'ըսէր «Սողոմ, Սողոմ, ինչո՞ւ զիս կը հալածես:
4. «Հիմա ոտքի ել եւ քաղաք մտիր»
5. Փորձեց իր շուրջը նայիլ, բայց ոեւէ բան չէր տեսներ:
6. Կոյր վիճակի մէջ սպասեց, ոչ կերաւ, ոչ խմեց
7. Ելաւ մկրտուեցաւ, եւ ապա կերակուր ուտելով՝ զօրացաւ
8. Ա. Կորնթացիս 13
9. Եփեսացիներուն
10. Ա., Բ. Տիմոթէոս, Տիտոս, Փիլիմոն

Մասնակցողներ

Մանկապարտեզ

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Ճեսիքա
Մաթէոսեան, Արին Անթեպեան, Յուլեր
Անթեպեան

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

Զոհրապ Կարապետեան, Ալէք
Կարապետեան, Դաւար Գաբթանճեան,
Մհեր Մաթէոսեան, Ռիթա
Մամիրոյեան, Սեւան Մելեքեան, Լորի
Զուխանճեան, Անի Զուխանճեան, :

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Շանթ Փարոյիտեան,
Դաւար Գաբթանճեան, Արազ
Գաբթանճեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գօգօ Մատթէոսեան, Հրայր
Մատթէոսեան, Արի Միրզայեան,
Ճօրճ Արմաղանեան, Արի Քէօսէյեան:

Երկրորդականի անկիւն

Կարօ Կարապետեան, Յովիկ
Կարապետեան, Փօլ Գիզիրեան:

Կարճ Լուրեր

Շնորհակալություն

"Maison Des Noix COCONUT" հայկական հաստատություն
Ս. Ծնունդի առթիվ մեր աշակերտներուն նուիրած
մրգեղէններուն համար:

ՀՕՄի Սօսէ մասնաճիւղին Ս. Ծնունդի առթիվ մեր
աշակերտներուն տրամադրած նուէրներուն համար:

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝

Ծաղիկ Պոյանեան

Աշխատակիցներ՝

Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխանեան, Գարուին
Գէպթանեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս
Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան
Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

*Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.-
Ոսուցիչներ՝ Իզապէլ Քուլլութեան, Սալբի Բակլաեան, Վերժին Գէպթանեան, Վերա Կարապետեան,
Երան Լոշխանեան, Գարուին Գէպթանեան, Յասմիկ Նաճարեան, Ծողիկ Նաճարեան, Աշխէն
Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան,
Պարբերաթերթ՝ Ծաղիկ Պոյանեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

Ամսակ

Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի
1980-2005

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 6

Փետրուար 2005

Կամք ընդդէմ բնագոյի
Այս տարի, Փետրուար ամսուան ընթացքին կը յիշատակուին երկու դէպքեր որոնք բարձրագոյն օրինակներ են մարդկային կամքի յաղթանակին բնագոյին վրայ:
Էջ 2

Վարդանանց պատերազմը սկիզբէն ի վեր, հայ ժողովուրդին համար հպարտութիւններ շնջող առիթ մը եղած է: Հայ ազգն ու եկեղեցին եթէ գոյութիւն ունին այսօր կարելի է ըսել թէ շնորհիւ Վարդանանց պատերազմին է:
Էջ 4

Ղեւոնդեանց սուրբեր: Աւարայրի ճակատամարտէն ետք, 452 թուականին սկիզբը, պարսիկները հայ նախարարներու կարգին աքսորած են նաեւ այս ինը վանականները:
Էջ 5

Տեառնընդհառաջը հայաստանեայց եկեղեցւոյ տէրունի տօներէն մէկն է: Ան յիշատակում է այն օրուան, ուր քառասնօրեայ մանուկ Յիսուսը բերուեցաւ տաճար ու ընծայուեցաւ Աստուծոյ:
Էջ 6

Ես այնպէս կը խորհիմ, թէ ներկայ ժամանակի չարչարանքները ոչինչ են գալիք փառքին քով՝ որ մեզի պիտի յայտնուի: Հետեւեալ համարը քաղուած է Պօղոս առաքելի Հռոմայեցիներուն ուղղուած նամակէն:
Էջ 3

Օտար ազգերու մօտ ծագում առած եւ Փետրուար 14-ին յիշատակուող valentine տօնը ամէն տարի շուքի տակ կը ձգէ զուտ հայկական Բարեկենդանի օրը, որ կը զուգորդուի գրեթէ նոյն թուականին:
Էջ 7

Մեծ պահքը կը սկսի բուն բարեկենդանի յաջորդող երկուշաբթին ու կը տեւէ մինչեւ Սուրբ Յարութեան աւագ շաբաթ օրը: Անոր կէս տեւողութեան զուգորդող օրը կը կոչուի Միջինք: Այս տարի Մեծ Պահքը կը սկսի Փետրուար 7-ին ու կ'աւարտի Մարտ 26-ին:
Էջ 14



Սրինիքի մարզի Ծաքի գիւղի ջրվեժը: Անոր դրացի Անգեղակոթ գիւղին մէջ կը գտնուի «Վարդան Զօրավար» ուխտատեղին:

Յայսմաւորք կամ՝ Գիրք, որուն մէջ տօնացոյցի յաջորդութեան կարգով զետեղուած են սուրբերու եւ վկաներու վարքերն ու վկայաբանութիւնները:
Էջ 7

Իմ անունս Պետրոս է. Յիսուս ինծի սորվեցուց մարդիկը սիրել. Ինք բոլորին կը սիրէր եւ բոլորին կը հոգար: Կ'ուզեմ ձեզի պատմել թէ ինչպէս անգամ մը Յիսուս հարիւրաւոր մարդոց հոգաց:
Էջ 10-11-12-13

Նաեւ
այս թիւով...

Պահուած բառ

Ո՞րն է ճիշդ
պատասխանը

Կարճ լուրեր
կիրակնօրեայէն

Փետրուար 2005

Կամք ընդդէմ բնազդի

Կիր.	Բշ.	Գշ.	Դշ.	Եշ.	Ուր.	Ծր.
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28					

1	Սուրբ Ղեւոնդեանց քահանայից
3	Սուրբ Վարդանանց զօրավարաց
5	Կ. Պոլսոյ ժողովի 150 հայրապետացն
6	Բուն Բարեկենդան
13	Արտաքսման կիրակի
14	Տեառնընդառաջ
20	Անատակին կիրակի
27	Տնտեսին կիրակի

Յիսուսի տաճար ընծայումը

Իսկ երբ Մովսէսի հաստատած Օրէնքին համաձայն անոնց ծիսկան մաքրութեան ժամանակը լրացաւ, Յովսէսին ու Մարիամը մանուկը Երուսաղէմ տարին Տիրող ընծայելու համար, որովհետեւ Տիրոջ Օրէնքին մէջ գրուած է. «Տիրոջ պէտք է նուիրուի ամէն արու զաւակ, որ մօրը առաջին զաւակն է». ինչպէս նաեւ Տիրոջ Օրէնքին համաձայն զոհ մատուցանելու «զոյգ մը տատրակ կամ աղանիի երկու ձագ»:

Այս տարի, Փետրուար ամսուան ընթացքին կը յիշատակուին երկու դէպքեր որոնք բարձրագոյն օրինակներ են մարդկային կամքի յաղթանակին բնազդին վրայ: Այդ տօներէն առաջինն է Վարդանանց պատերազմի յիշատակութիւնը, ուր հայ ժողովուրդը յաղթահարելով իր ապահովութեան եւ կեանքի բնազդը, յանդգնեցաւ ո՛չ ըսել ու դէմ դնել պարսիկին բռնատիրութեան: Երկրորդ իրողութիւնն է Սուրբ Յարութեան տօնը կանխող Մեծ Պահքի սկիզբը որ, կամքի ոյժով կամաւոր զրկանքն է մարդու բնազդային հաճոյքներէն:

Կամաւոր այս զրկանքը ներկայիս որոշ մարդոց կը թուի ծիծաղելի կամ՝ ոչ արդիական: Մեծ պահքը մարդիկ կը վերագրեն սովորութեան մը որ ժամանակին մեր եկեղեցին հաստատած է եւ որ այսօր, ինչպէս շատ մը այլ բաներ՝ իբր ժամանակավրէպ կը դատուի: Սակայն եթէ Մեծ պահքի խորքին նայուի, ի յայտ կու գայ թէ ան կը մնայ սերտօրէն կապուած մարդէակին յատուկ մէկ կարողութեան, որն է կամաւոր կերպով ինքն իր հաճոյքներէն զրկուելու, նկարագրի զօրութեան եւ նիւթական հաճոյքէն հեռանալով, հոգեւոր հարստութեան մօտենալու կարողութեան:

Մեծ պահքը սննդականոցի որոշ փոփոխութիւններու քառասնօրեայ շրջան մըն է, այո՛: Սակայն որոշ ուտեստեղէններէ զրկուիլը միջոց է միայն եւ ոչ՝ նպատակ: Մեզմէ իւրաքանչիւրին համար պահք բռնելու ձեւերը տարբեր կրնան ըլլալ սակայն բոլորին նպատակը կը մնայ նոյնը՝ կամաւոր կերպով մարմնականէն զրկուելով թափ տալ հոգեւորին, նիւթականէն ժամանակաւոր ձեւով զեղջելով՝ ոյժ տալ բարոյականին, քառասնօրեայ այս շրջանին անդադար ձգտելով ինքնաճանաչման, ներհայեցողութեան եւ նկարագրի կերտման:

Գալիք փառքը Հռոմայեցիներուն 8.18-30

Յիսուսի առաքելներէն, Պօղոս, Հռոմէն ներս քրիստոնէութիւն քարոզելու առաքելութիւնը ստացած էր: Ան իր ճամբորդութիւնը նախապատրաստելու համար Հռոմի եկեղեցիին կ'ուղղէ նամակ մը որուն ընդմէջէն կ'ուզէ բացայայտել հաւատքին եւ շնորհքին դերը քրիստոնէայ մարդուն կեանքին մէջ:

Հետեւեալ համարը քաղուած է Պօղոս առաքելի Հռոմայեցիներուն ուղղուած նամակէն:

Ես այնպէս կը խորհիմ, թէ ներկայ ժամանակի չարչարանքները ոչինչ են գալիք փառքին քով՝ որ մեզի պիտի յայտնուի: Եւ ամբողջ ստեղծագործութիւնը ակնդէտ կը սպասէ, որ Աստուած իր որդիները յայտնէ: Արդարեւ, ստեղծագործութիւնը ինք եւս մարդուն հետ ակամայ դատապարտութեան ենթարկուեցաւ Աստուծոյ հրամանովը, որ սակայն նաեւ սա յոյսը տուաւ, թէ ստեղծագործութիւնը ինք եւս պիտի ազատագրուի փնացումի դատապարտութենէն, մասնակից դառնալու համար Աստուծոյ որդիներուն ազատութեան ու փառքին: Եւ գիտենք թէ մինչեւ հիմա ամբողջ ստեղծագործութիւնը երկունքով կը հեծէ՝ այդ ազատագրութեան հասնելու համար: Բայց ոչ միայն ստեղծագործութիւնը, այլ մենք եւս, որ Սուրբ Հոգին ստացած ենք իբրեւ Աստուծոյ պարգեւներուն երախայրիքը, մենք եւս ներքնապէս կը հեծենք՝ ակնդէտ սպասելով որդեգրութեան՝ այսինքն մեր մարմինին փրկութեան: Այս յոյսով էր որ փրկուեցանք: Արդ, երբ յուսացուածը կը տեսնուի՝ ալ յոյս չէ. որովհետեւ մարդ ինչո՞ւ պիտի յուսայ բանի մը՝ որ արդէն կը տեսնէ: Ընդհակառակը, կը յուսանք բանի մը, որ չենք տեսներ եւ որուն կը սպասենք համբերութեամբ:

Ծիշդ նոյն ձեւով ալ, Սուրբ Հոգին օգնութեան կը հասնի մեր տկարութեան. որովհետեւ մենք որ կ'աղօթենք՝ չենք գիտեր թէ ի՞նչպէս պէտք է աղօթել. բայց Հոգին ինք մեզի համար կը բարեխօսէ անմունչ հառաչանքներով, եւ Աստուած որ սիրտերը կը քննէ՝ գիտէ թէ ի՞նչ կը խորհի Սուրբ Հոգին, որովհետեւ անիկա Աստուծոյ կամքին համաձայն կը բարեխօսէ հաւատացեալներուն համար:



Գիտենք թէ Աստուած բարիին համար գործակից կ'ըլլայ անոնց՝ որոնք կը սիրեն զինք եւ իր ծրագրին համաձայն իրեն կանչուած են: Որովհետեւ, Աստուած զանոնք սկիզբէն կը ճանչնար եւ սկիզբէն ալ սահմանեց որ իր Որդիին հարազատ պատկերը ըլլան, որպէսզի Յիսուս բազմաթիւ եղբայրներու մէջ անդրանիկը ըլլայ: Սկիզբէն այն սահմանուածները նաեւ կանչեց, եւ կանչուածները նաեւ արդարացուց, եւ արդարացածներն ալ փառաւորեց:

Վարդանանց կամ «Հայոց Պատերազմ»



Գիտէի՞ր թէ...

Յովսէփ Վայցոցձորեցի կաթողիկոս ձեռնադրուեցաւ Սուրբ Սահակ Պարթեւի եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի մահէն ետք: Աւարայրի ճակատամարտէն ետք, երբ պարսիկները սաստկացուցին իրենց հալածանքը հայ հոգեւորական դասակարգին դէմ, աքսորի ենթարկեցին Յովսէփ կաթողիկոս, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ հոգեւորականներ ինչպէս Աւարայրի ճակատամարտին մասնակից Ղեւոնդ երէց:

Վարդանանց պատերազմը սկիզբէն ի վեր, հայ ժողովուրդին համար հպարտութիւնը ներշնչող առիթ մը եղած է: Այդ ճակատամարտը վճռական պատասխան մըն էր պարսիկներու Յազկերտ Բ. արքային, որ կռապաշտութիւնը պարտադրելով հայերուն կ'ուզէր Հայաստանը ամբողջութեամբ ենթարկել իր տիրապետութեան:

Հայ ազգն ու եկեղեցին եթէ գոյութիւն ունին այսօր կարելի է ըսել թէ շնորհիւ Վարդանանց պատերազմին է:


Յովսէփ Վայցոցձորեցի կաթողիկոսի գահակալութեան տարիներուն էր որ տեղի ունեցաւ հայոց պատմութեան մեծագոյն իրադարձութիւններէն մէկը՝ յանուն քրիստոնէութեան պարսիկ բռնապետութեան դէմ մղուած այս պատերազմը: Հայոց պատմութեան մէջ այս պատերազմը յատուկ դէպք էր որովհետեւ անոր մասնակցեցաւ հայ ժողովուրդը իր ամբողջ կազմով, ղեկավար թէ պարզ ժողովուրդ, կրօնականներ թէ բանուորներ: Հասարակ զուգադիպութիւն մը չէ եթէ այդ օրերու ժամանակակից պատմիչ Եղիշէն պատերազմին տուաւ «Հայոց պատերազմ» անունը, ամբողջ հայութեան պատերազմը:

Աւարայրի ճակատամարտի հետեւանքով զոհ տրուած հայերուն տրուեցաւ Սուրբ Վարդանանց անունը: «Սուրբ», որովհետեւ իւրաքանչիւր նահատակ սրբացուեցաւ իբր Բրիստոսի համար զոհուած անձ, եւ «Վարդանանց» անունը ղեկավար Վարդան Մամիկոնեանի անուան համաձայն:

Ղեւնդեանց սուրբեր

Հայաստանեայց եկեղեցւոյ տօնացոյցը մեծապէս հարուստ է նահատակ սուրբերու յիշատակման օրերով: Բոլորին ծանօթ այդ սուրբերէն են սուրբ Սարգիս, սուրբ Գէորգ եւ սուրբ Ղեւնդեանց անուան տակ խմբուող նահատակ սուրբերու խումբ մը:

Ղեւնդեանց սուրբերու յիշատակը այս տարի կը տօնենք Փետրուար 1-ին, Բուն Բարեկենդանը նախորդող Երեքշաբթի օրով: Հինգերորդ դարուն ապրած այս սուրբերու խումբին կը տրուի «Ղեւնդեանց» անունը իրենց գլխաւորող անդամներէն Ղեւնդ Երէցի անուան յիշատակին: Ինը սուրբերէ բաղկացած այս խումբը ծանօթ է նաեւ «Քահանայից» անուան տակ:



Աւարայրի ճակատամարտէն ետք, 452 թուականին սկիզբը, պարսիկները հայ նախարարներու կարգին աքսորած են նաեւ այս ինը վանականները ու զանոնք գերութեան մէջ պահած մինչեւ 454 թուականը: Այդ տարիներուն, երբ պարսիկները սաստկացուցին իրենց հալածանքները քրիստոնեաներուն դէմ, մահուան դատապարտեցին ու նահատակեցին նաեւ Ղեւնդեանց սուրբերը:

Ղեւնդեանց սուրբերն են.-

Ղեւնդ Երէց

Յովսէփ կաթողիկոս

Սահակ Ռշտունի եպիսկոպոս

Մուշեղ Արծրունի

Արսէն Երէց

Քաջաջ սարկաւազ

Թաթիկ եպիսկոպոս

Սամուէլ քահանայ

Աբրահամ սարկաւազ

Պահուած բառ

տ	ր	ե	կ	զ	ա	հ	վ
ա	ղ	օ	բ	ր	ւ	ո	ս
կ	ի	մ	զ	ա	ր	խ	ո
ի	փ	տ	ո	հ	դ	ա	ս
ս	ք	ա	ջ	ւ	ց	չ	կ
ր	ա	զ	դ	է	տ	ն	ա
ա	ւ	ա	ր	ա	յ	ր	ւ
պ	ղ	ե	ւ	ո	ն	դ	ի

Պահուած բառը 7 գիր:
Նախորդ պահուած բառը՝ նուէր

Տղմուտ
Հազկերտ
աւարայր
զրահ
սուրբ
պարսիկ
հզօր

քաջ
տոսկալի
փիղ
խաչ
ղեւնդ
երէց
դէտ
ազատ

Տեառնընդառաջ կամ Տեառնընդառաջ

Տեառնընդառաջը հայաստանեայց եկեղեցւոյ տերունի տօներէն մէկն է: Ան յիշատակումն է այն օրուան, ուր քառասորեայ մանուկ Յիսուսը բերուեցաւ տաճար ու ընծայուեցաւ Աստուծոյ: Այս իսկ պատճառաւ, Տեառնընդառաջը անշարժ տօն մըն է ու կը զուգահիշի Սուրբ Ծնունդէն 40 օր վերջ, Փետրուար 14-ին:

Գիտէի՞ր թէ...

Տեառնընդառաջի մասին կարելի է միայն Ղուկասի աւետարանին հատուածներէն մէկուն մէջ կարդալ: Միւս աւետարանիչները չեն ակնարկած Յիսուսի կեանքի այս դէպքին:

Տեառնընդառաջի օրը եկեղեցիէն ներս կը մատուցուի պատարագ: Եկեղեցիին չորս անկիւնները կը կարդացուին աւետարանի համապատասխանող հատուածներ: Կը յիշատակուին նաեւ ծերունի Սիմոնն ու Աննա մարգարէուհին, երկու անձեր որոնք Յիսուսի տաճար ընծայման ներկայ գտնուած են:

Տեառնընդառաջը նախորդող երեկոյեան ժամերգութեան աւարտին, ծիսակատար քահանան Սուրբ սեղանին վրայի մոմերը կը վառէ եւ ներկայ հաւատացեալները այդ մոմերէն իրենց կարգին կը վառեն մոմեր ու լոյսը կը տանին տուն:



Տէրունի տօներ

Տէրունի կամ տէրունական կը կոչուին Քրիստոսի կեանքին վերաբերող Ամենակարեւոր դրուագները յիշատակող Տօները, որոնք քրիստոնեայ եկեղեցին փառաւոր ու մեծաշուք ձեւով կը տօնէ: Հայաստանեայց եկեղեցին ունի 7 Տէրունի տօներ, որոնք են հետեւեալները.-

Սուրբ Ծնունդ

Անուանակոչութիւն

Տեառնընդառաջ

Ծաղկազարդ, Աւագ շաբաթ, Սուրբ Զատիկ եւ համբարձում

Հոգեգալուստ

Վարդավառ կամ պայծառակերպութիւն

Վերափոխումն սուրբ Աստուածածնի

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՈՒԱՆ

Օտար ազգերու մօտ ծագում առած եւ Փետրուար 14-ին յիշատակուող Valentineի տօնը ամէն տարի շուքի տակ կը ձգէ զուտ հայկական Բարեկենդանի օրը, որ կը զուգադիպի գրեթէ նոյն թուականին: Այս տարի Բուն Բարեկենդանը կը զուգադիպի Փետրուար 6-ին: Ուրեմն յստակ է, թէ Բարեկենդանը, Զատնուան հետեւելով շարժական տօն մըն է, այսինքն ամեն տարի անոր թուականը կը տարբերի:

Իսկապէս ալ, Բուն Բարեկենդանը այն կիրակին է որ կը նախորդէ 48 օրեր տեւող Մեծ Պահքի սկիզբը նշող կիրակին: Եւ որովհետեւ ուտիքի վերջին շաբաթն է, յատուկ ճոխութեամբ կը նշուի ան:

Բարեկենդան բառը, ինչպէս կը տեսնենք, կազմուած է երկու արմատ բառերէ՝ Բարի եւ Կենդան: Ուրախութեան օր մը ըլլալուն, ժողովրդական սովորութիւն է դիմակներով ծպտուիլն ու ուրախ տօնակատարութիւններ կազմակերպելը: Այս սովորութիւնը կը վերագրուի հեթանոսական շրջաններէն մեզի հասած սովորութեան մը:

Գիտէ՞ր թէ...

Բուն Բարեկենդանը նախորդող շաբաթ երեկոյեան, ժամերգութեան ընթացքին սուրբ Խորանի վարագոյրը կը քաշուի, ու խորանը կը մնայ այդպէս փակ մինչեւ Սուրբ Յարութեան տօն, կամ Զատիկ:

Յայսմ ասուր յիշատակ է...

Այս նախադասութեամբ կը սկսին երեկոյեան ժամերգութենէն առաջ ընթերցուող հատուածները, որոնք կը պատմեն հայ սուրբերու կեանքին եւ գործունէութեան մասին վկայութիւններ:

Այս բառերուն հիման վրայ, սուրբերու կեանքին մասին վկայութիւններ պարունակող մեծածաւալ այս գիրքը կոչուած է «Յայսմասուրք»:

Մալխասեան «Հայերէն բացատրական բառարան»-ին մէջ ահա այսպէս կը սահմանուի «Յայսմասուրք» բառը.-

Գիրք, որուն մէջ տօնացոյցի յաջորդութեան կարգով գետեղուած են սուրբերու եւ վկաներու վարքերն ու վկայաբանութիւնները, որմէ, ժամանակին եկեղեցիներուն մէջ կը կարդային որեւէ սուրբի կամ վկայի կեանքը, անոր տօնը նախորդող երեկոյեան ընթացքին, ժամասացութենէն առաջ: Յայսմասուրք բառը առաջացած է «յայսմ ասուր» բառին ամէն օր երկու անգամ կարդացուելէն:»

Յայսմասուրքը կը կարդացուէր ատենանին մէջ, ծալապատիկ նստած: Ընթերցանութիւնը կը կատարուէր հետեւեալ ձեով: Օրինակ «Օգոստոս 15. Յայսմ ասուր տօն է ...». վարքագրութիւնը աւարտելէն վերջ կ'ըսուէր.- «Օգոստոս 16. Յայսմ ասուր տօն է..., որ վաղը երեկոյեան պիտի ընթերցուի:»

Ներկայիս Յայսմասուրքի ընթերցանութիւնը վերացած է մեր եկեղեցիներէն ներս:

Ծանոթացում Հայաստանի հետ՝ Սիւնիքի մարզ



Սիւնիքի մարզը կը գտնուի Հայաստանի հանրապետութեան հարաւային սահմանին վրայ: Անոր կեդրոնն է Կապան քաղաքը որ կը գտնուի Երեւանէն 316 քլմ. հեռաւորութեան վրայ: Մարզի սահմաններէն ներս կը գտնուին նաեւ Ագարակ, Գորիս, Դաստակերտ, Մեղրի, Սիսիան եւ Քաջարան քաղաքները:

Սիւնիքի մարզը հարուստ է զանազան հալածոներով ինչպէս պղինձ, ոսկի, երկաթ:

Սիւնիքի գաւառի Անգեղակոթ գիւղին մէջ կը գտնուի Վարդան Զօրավարի ուխտատեղին: Այս քաղաքի միջնադարուն եղած է Սիւնիքի հոգեւոր, մշակութային եւ վարչական կեդրոնը: Հոն պահպանուած են խաչքարեր, Վարդան Զօրավարի ուխտատեղիին վրայ կառուցուած կիսաժայռափոր եկեղեցի եւ 5-րդ դարու կոթողներու մնացորդներ: 5-րդ դարէն սկսեալ, մարդիկ այդտեղ Ուխտավայրի վերածած են, հաւատալով թէ հոն թաղուած են Աւարայրի ճակատամարտի հերոս առաջնորդ, Վարդան Մամիկոնեանը:

Նկարին մէջ կը տեսնենք Սիւնիքի մարզի Աղիտու գիւղի կոթողը, 10 մետր բարձրութեամբ, 5-6-րդ դարերուն կառուցուած եւ 1970-ին նորոգուած յուշարձան մը:



Գիտէ՞ր թէ...

Սիւնիքի մարզը կը կոչուի նաեւ Զանգեզուր: Ահա թէ ինչու...

Ժամանակին, Սիւնիքի մարզի սահմաններէն ներս կը գտնուէր Հաբանդ գաւառը: Գաւառի նահապետ Զագիկ հոն կը կառուցէ բերդ մը որ իր անունով կը կոչէ Զագեծորի բերդ: Հետագային, գաւառը ամբողջ կը ստանայ Զագեծոր անունը:

Ժամանակի ընթացքին, օտարները աղաւաղելով Զագեծոր անունը, կը կոչեն Զագեզուր, ապա՝ Զանգեզուր: Երկար ատեն գաւառը ծանօթ մնացած է **Հաբանդ-Զագեծոր** կրկնակ անուններուն տակ:



Սիւնիքի մարզի պատմաճարտարապետական ամենէն աւելի նշանաւոր յուշարձանն է Տաթևի վանքը, հիմնուած 9-րդ դարուն: Վանքի ամենէն հին շինութիւնն է Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցին: Եկեղեցիէն դէպի հարաւ կը գտնուի Սուրբ Գրիգոր եկեղեցին որուն ճարտարապետը կ'ենթադրուի ըլլալ Մովսիկ:

Տաթևի վանք այցելողներուն ուշադրութիւնը կը գրաւէ հետաքրքրական յուշարձան մը, «ճոճուող Գաւազանը», կառուցուած վանքի բակէն ներս, 10-րդ դարուն: 8 մետր բարձրութեամբ ճոճուող Գաւազանը վանքի միակ կառոյցն է որ երկրաշարժերու մատնուելով հանդերձ մնացած է անխաթար:

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն

Յիսուս 5000 հոգի կը կերակրէ



Իմ անունս Պետրոս է. Յիսուս ինծի սորվեցուց մարդիկը սիրել. Ինք բոլորին կը սիրէր եւ բոլորին կը հոգար: Կ'ուզեմ ձեզի պատմել թէ ինչպէս անգամ մը Յիսուս հազարաւոր մարդոց հոգաց:



Յիսուս նոր առած էր Յովհաննէս Մկրտիչի սպաննութեան լուրը, ան նաւ մը առաւ եւ գնաց տեղ մը ուր կրնար առանձին ըլլալ, սակայն շուտով ժողովուրդը զինք գտաւ եւ անոր շուրջ խմբուեցաւ:

Յիսուս չի ջղայնացաւ ժողովուրդը տեսնելով
այլ խղճաց անոնց. Շատեր հիւանդ էին եւ
օգնութիւն կը խնդրէին Յիսուսէն, ուստի Յիսուս
սկսաւ հիւանդները բժշկել եւ Տիրոջ մասին
քարոզեց բոլորին:



Օրը շուտով մթնցաւ, Յիսուսին միւս աշակերտներն
ու ես մտածեցինք որ ժողովուրդը կրնայ անօթի
ըլլալ ուստի մեր մտածումը փոխանցեցինք Յիսուսի
եւ ըսինք՝ «Հոս ամառի վայր է, խօսիր ժողովուրդին
որ հեռանան այտեղէն եւ մօտակայ գիւղերը երթալով
ճաշ գնեն իրենց համար»:

Յիսուս չհամաձայնեցաւ մեր առաջարկին ու ըսաւ, «Պէտք չունին այտեղէն հեռանալու, դուք իրենց ուտելիք կուտաք» ապա անելցուց, «Քանի՞ հաց ունիք»: Գտանք հաց եւ ձուկ ու մօտենալով Յիսուսին ըսինք «Հոս տղայ մը կայ որ 5 հաց եւ 2 ձուկ ունի»:



Յիսուս հացն ու ձուկը առաւ, ապա ժողովուրդին ըսաւ որ խոտին վրայ նստին, ու Ան սկսաւ աղօթել: Վերջը Յիսուս հացն ու ձուկը տուաւ մեզի որ մենք ժողովուրդին բաժնենք:

Զարմանալի բան մը պատահեցաւ եւ ուտելիքը
չպակսեցաւ, բոլորին բաւարարաչափ ուտելիք
կար, եւ բոլորը կշտացան: Իսկ մնացորդով
12 կողով կրցանք լեցնել:
Յիսուս 5,000-ը կերակրեց 5 հացով եւ 2
ձուկով:



Մտածէ՛
ասոր
մասին

Այս օրինակով Յիսուս ուզեց ցոյց
տալ որ ժողովուրդին պէտքերը
հոգալը կարելի է: Պէտք է մարդոց
ֆիզիքական պէտքերը հոգանք եւ
նաեւ Աստուծոյ սիրոյն պատգամը
փոխանցենք անոնց:


Մեն պահքի առթիւ

Հայաստանեայց եկեղեցւոյ յատկութիւններէն մէկն է Սուրբ Զատիկը նախորդող Քառասնօրեայ պահքը որ կը կոչուի Մեն Պահք: Աւագ շաբաթը ինք եւս պահքի շաբաթ ըլլալով, Մեն Պահքը կ'երկարի 48 օրերու վրայ, շուրջ 7 շաբաթներ:

Մեն պահքը կը սկսի բուն բարեկենդանի երկուշաբթին ու կը տեսէ մինչեւ Սուրբ Յարութեան աւագ շաբաթ օրը: Անոր կէս տնողութեան զուգադիպող օրը կը կոչուի Միջինք: Այս տարի Մեն Պահքը կը սկսի Փետրուար 7-ին ու կ'աւարտի Մարտ 26-ին:

Պահք բռնող բոլոր հասաւտացեալներուն եւ ընդհանրապէս բոլոր մեր ընթերցողներուն համար, Մաշտոցի Արձագանգի այդ թիւով կը վերարտադրենք Երջանկայիշատակ Մենի տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. կաթողիկոս (յետագային Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս)ի «Մեն Պահքը երբեակ իմաստով» գրգոյկէն հատուած մը:

Յիսուսի կեանքի պատկերին մէջ մենք կը տեսնենք որ Ան քառասուն օր անապատի մէջ առանձնացաւ, ինքզինք կերակուրներէ զրկեց, հոգեպէս զօրանալու համար: Աւետարանին մէջ մենք կը կարդանք թէ Ան պատուիրեց Իր հետետրոյցներուն եւ ըսաւ որ պէտք է պահք բռնել ո՛չ «ի ցոյց մարդկան», այլ ներքին ինքնամփոփումով, որպէսզի պահքը արժէք ստանայ եւ ծառայէ անձին վերանորոգութեան: Անոնք որոնք լաւ ուսումնասիրած են մարդ անհատի հոգեբանութիւնը կը վկայեն թէ մարդ սովորաբար չ'անդրադառնար իր յանցանքներուն կամ մեղքերուն մինչեւ չզրկուի որոշ բաներէ, մինչեւ չտառապի որոշ ցաւերէ: Առհասարակ ինքզինք առողջ զգացող մարդը յաճախ չի տարուիր անդրադառնալու իր մէջ գոյացած ախտերուն կամ ֆիզիքական տկարութիւններուն, մինչեւ որ օր մը բժիշկը իրեն չյայտնէ թէ ինք պէտք է հրաժարի այն



բաներէն որոնք յաճախ իրեն համար հաճելի կը թուին եւ որոնց վնասները, սակայն, ինք չի տեսներ կեանքի սովորական ընթացքին: Այդպէս ալ եթէ մարդ ինքզինք չզրկէ իր կեանքին մէջ կեղեւ կապած բաներէ՝ չի կրնար անդրադառնալ հոգեկան այն տկարացումներուն, որոնք անպայման յառաջ եկած կ'ըլլան իր նկարագրին ու կենցաղին մէջ:

Մեն Պահքի շրջանը ինքնաբժշկութեան գեղեցիկ եւ օգտաւէտ առիթ մըն է: Ու անոր բարերար արժէքը չենք կրնար

տեսնել մինչեւ չփորձենք եւ ճաշակենք անոր «դառն»ութիւնը որ իրականութեան մէջ մեր քաղցրութիւնն է...

Մարդ պէտք է իմաստութիւնն ու քաջութիւնը ունենայ ինքզինքին «նեղութիւն», «զրկանք», «չարչարանք» պատճառելու, դրական, առողջարար նպատակի համար, որպէսզի իրական նեղութիւնն ու չարչարանքը, վիշտն ու չարիքը նուազ կշռեն կեանքի իր նժարին մէջ: Կամաւորապէս կրուած զրկանքը նեղութիւն չէ: Դիւրն է երջանկութեան...

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Յիսուսի տաճար ընծայումը «Տեառներդառաջ, Փետրուար 14»

Ամբողջացո՛ւր ըստ Դուկաս 2.22- 32

Տիրոջ, տաւրակ, աղանիի, Սուրբ Հոգին, Յիսուսը, գոհաբանեց, նուիրուի, Սիմոն, Օծեալը

Յովսէփն ու Մարիամը մանուկը Երուսաղէմ տարին ----- ընծայելու համար որովհետեւ Տիրոջ Օրէնքին մէջ գրուած է. «Տիրոջ պէտք է ----- ամէն արու զաւակ, որ մօր առաջին զաւակն է». ինչպէս նաեւ Տիրոջ Օրէնքին համաձայն զոհ մատուցանելու զոյգ մը ----- կամ ----- երկու ձագ:

Այդ ժամանակ Երուսաղէմի մէջ ----- անունով մարդ մը կ'ապրէր: Սիմոն արդար եւ աստուածավախ մարդ մըն էր, ----- իրեն հետ էր եւ վստահեցուցած էր զինք՝ թէ Տիրոջ ----- չտեսած պիտի չմեռներ: Արդ, Սուրբ Հոգիէն առաջնորդուած՝ անկա տաճար գնաց: Երբ ծնողքը մանուկ ----- տաճար բերին, որպէսզի կատարեն այն ինչ որ Օրէնքը կը պահանջէր մանուկին համար, Սիմոն իր գիրկը առաւ փոքրիկը եւ ----- զԱստուած:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Յիսուս քանի՞ հացով եւ ձուկով կերակրեց 5,000 ժողովուրդը:

- ա.- 5 հաց 2 ձուկ
- բ.- 2 հաց 2 ձուկ
- գ.- 5 հաց 5 ձուկ
- դ.- 2 հաց 5 ձուկ

2.- 5,000 ժողովուրդը կշտանալէն ետք ո՞րքան ճաշ աւելցաւ:

- ա.- 1 կողով
- բ.- 2 կողով
- գ.- 12 կողով
- դ.- ճաշ չաւելցաւ

3.- Ի՞նչ կոչենք Վարդանանցի յաջորդող Կիրակին:

- ա.- Ղեւոնդեանց
- բ.- Բուն բարեկենդան
- գ.- Պահք
- դ.- Տեառնընդարաջ

4.- Վարդանանցը շաբթուան ո՞ր օրը կը տօնենք:

- ա.- Երկուշաբթի
- բ.- Երեքշաբթի
- գ.- Չորեքշաբթի
- դ.- Հինգշաբթի

5.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ Վարդանանց ճակատամարտը:

- ա.- 451
- բ.- 405
- գ.- 301
- դ.- 1666

6.Ի՞նչ կը նշանակէ Բարեկենդան:

- ա.- Հալովին
- բ.- Բարի կեանք
- գ.- Վարդանանք
- դ.- Բարի լուր

7. Յիսուս քանի՞ օրուայ էր երբ Տաճար ընծայուեցաւ:

- ա.- 8
- բ.- 20
- գ.- 40
- դ.- 365

8.Ամբողջացուր՝ ըստ Սաղմոս 117(ԾԺԶ) ի

Օրհնութեան երգ երգեցէք Տիրոջ, դուք
 բոլոր:

9. Ե՞րբ Հայաստան պետական ձեւով քրիստոնեայ դարձաւ:

- ա. 406
- բ. 306
- գ. 301
- դ. 506

10. Հետեւեալներէն ո՞ր տօնը կը տօնենք Փետրուարին:

- ա. Ս. Գրիգոր Լուսաւորիչ
- բ. Ս. Գէորգ
- գ. Ս. Ղեւոնդեանք
- դ. Ս. Յակոբ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

1.- Ե՞րբ կը տօնենք Սուրբ

Ղեւոնդեանցը:

ա.- Վարդանանցի յաջորդող
Երեքշաբթին

բ.- Վարդանանցի նախորդող
Երեքշաբթին

գ.- Վարդանանցի օրը

դ.- Վարդանանցի յաջորդող Շաբաթ
օրը

2.- Սուրբ Ծնունդին զիրար կ'ողջունենք
ըսելով « Քրիստոս ծնաւ եւ
յայտնեցաւ...

ա.- Օհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի

բ.- Զեզի մեզի մեծ աւետիս

գ.- Օհնեալ է յարութիւնն Քրիստոսի

դ.- Աստուած Օրհէ

3.- Ո՞վ էր Ամենայն Հայոց
Կաթողիկոսը 451 թուականին:

ա.- Գարեգին Ա.

բ.- Գարեգին Բ.

գ.- Յովսէփ

դ.- Մկրտիչ

4.- Հին Կտակարանի մէջ
Մարգարէներու քանի՞ գիրքեր կան:

ա.- 5 հատ

բ.- 10 հատ

գ.- 21 հատ

դ.- 17 հատ

5.- Հայատանի ո՞ր մարզին մէջ կը
գտնուի Վարդան Զօրավարի
ուխտատեղին:

6.- Հայատանի ո՞ր մարզին մէջ կը
գտնուի Տաթևի վանքը:

7.- Ո՞ր թուականին նահատակուեցաւ
Ս. Ղեւոնդ Երէցը:

ա.- 451

բ.- 454

գ.- 484

դ.- 301

8.- Այս տարի ե՞րբ է Մեծ Պահքի
առաջին օրը:

ա.- 6 Փետրուար

բ.- 7 Փետրուար

գ.- 8 Փետրուար

դ.- 15 Փետրուար

9.- Ի՞նչ կը կոչուի Բուն Բարեկենդանին
յաջորդող Կիրակին:

10.- Ի՞նչ կը կոչուի Անառակին
յաջորդող Կիրակին:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Երկրորդականի անկիւն

1- Վարդանանց ճակատամարտի տարին տեղի ունեցաւ 4րդ տիեզերական ժողովը որ հետագային մերժուեցաւ Հայերուն կողմէ: Ո՞ր տեղի ունեցաւ այդ ժողովը:

2- Վարդանանց ճակատամարտէն 33 տարիներ ետք Վահան Մամիկոնեան Պարսիկներուն հետ ստորագրեց դաշնագիր մը որ Հայ ժողովուրդին տուաւ ինքնավարութիւն, Հայ Եկեղեցիին տուաւ ազատ գործելու իրաւունք եւ քանդելու կարուցուած ատրուշանները: Ո՞ր ստորագրուեցաւ այդ դաշնագիրը

3-Հայ Եկեղեցին Փետրուարի ո՞ր օրը կը տօնէ Յիսուսի Տաճար ընծայումը:

4-Ո՞ր Աւետարանիչը գրած է Տեառնընդառաջի դէպքը:

ա.- Մատթէոս

բ.- Մարկոս

գ.- Դուկաս

դ.- Յովհաննէս

5-Հայաստանի Սիւնիքի մարզը ո՞ր երկրին սահմանակից է:

6- Սիւնիքի մարզը ի՞նչ կը կոչուի նաեւ:

7- Ե՞րբ տեղի ունեցաւ Տիեզերական այն ժողովը որուն մասնակից 150 հայրապետներուն տօնը որ այս տարի կը տօնենք Փետրուար 5 ին:

8- Յիսուս քանի՞ օրուայ էր երբ Տաճար ընծայուեցաւ:

9.- Վարդան Մամիկոնեանը Վահան Մամիկոնեանին հետ ի՞նչ ազգականական կապ ունէր:

10- Ամբողջացուր

ՔԱՆԶԻ ՀԱՅՐ ՄԵՐ

ԶՍՈՒՐԲ -----

ԳԻՏԵՄՔ ԵՒ ՄԱՅՐ

ԶԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿԷ

Յունուար ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ *Պատասխաններ* *Մասնակցողներ*

Մանկապարտէզի անկիւն

1980, 25, 1600, Հրեշտակը, աւետիս, փրկիչը, Օծեալ, մանուկ, խանձարուրով, մտորին

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. ք.405
2. 1,600
3. գ.1980
4. 25
5. Օ, Ֆ
6. ա. Կոտայք
7. գ. Բեթլեհէմ
8. Ս. Սահակ Պարթեւ
9. ծննդեան, յայտնութեան

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. 405, 1600
2. 1980, 25
3. Որովհետեւ Օ եւ Ֆ հնչիւնները չկային
4. Կոտայք, 4րդ դար, այրիավանք
5. Բեթլեհէմ, երեք
6. Ս. Սահակ Պարթեւ
7. ծննդեան, յայտնութեան, արեւն, երեւեցաւ
8. Յունուար 22

Երկրորդականի անկիւն

1. 12րդ դար
2. Փ, Փիլիսոփայ (Philosopher)
3. Տ. Արմէն աւագ քահանայ Իշխանեան
4. որթատունկը, լոյսը, կեանքը, հացը, ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը
5. սքանչելի, յայտնեցաւ, հրեշտակք, աւետիս
6. Յունուար 13, Յունուար 13
7. ա. Կոտայք
8. Հաւատքը, յոյսը եւ Սէրը. Սէրն

Մանկապարտէզ

Ճեսիքա Մաթէոսեան

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան, Յուլեր Անթեպեան, Յակոբ Գաբթանճեան, Անդո Նասոյեան, Անդրանիկ Նասոյեան, Տիգրան Խանօ, Րիթա Զափրազեան, Ծանթ Պալուզեան

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

Դալար Գաբթանճեան, Արազ Գաբթանճեան, Զոհրապ Կարապետեան, Մհեր Մաթէոսեան,

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Կարօ Պալուզեան,

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գօգօ Մատթէոսեան, Հրայր Մատթէոսեան, Արի Միրզայեան, Ճօրճ Արմաղանեան, Արի Քէօսէյեան:

Երկրորդականի անկիւն

Կարօ Կարապետեան, Յովիկ Կարապետեան, Փօլ Գիզիրեան:

Կարճ Լուրեր Կիրակնօրեայէն

Մեծ պահքի շրջանին Կիրակնօրեայի աշակերտները ունին իրենց յատուկ Պահքը :

Ա շաբաթ Փետրուար 7-13	«Արտաքսման» chips
Բ շաբաթ Փետրուար 14-20	«Անառակին» հեռատեսիլ եւ համակարգիչի խաղեր
Գ շաբաթ Փետրուար 21-27	«Տնտեսին» ծամոն
Դ շաբաթ Փետրուար 28- Մարտ 6	«Դատաւորին» կազային խմիչքներ
Ե շաբաթ Մարտ 7- 13	«Գալստեան» Տուրմ (chocolate)
Զ շաբաթ Մարտ 14-20	«Ծաղկազարդ» շաքար
Է շաբաթ Մարտ 21-27	«Զատիկ» Հաւկիթ

եւ յաւելեալ պարտականութիւններ

- Մանկապարտէզի Ա. եւ Բ. կարգերը գոց պիտի սորվին Տէրունական Աղօթքը եւ պիտի գունաւորեան իրենց յանձնուած տետրակները:
- Մանկապարտէզի Գ. եւ Նախակրթարանի Ա. եւ Բ. կարգի աշակերտները գոց պիտի սորվին Տասնաբանեան:
- Նախակրթարանի Գ. եւ Դ. կարգի աշակերտները գոց պիտի սորվին Հաւատամքը:
- Նախակրթարանի Ե. Զ. եւ Երկրորդականի աշակերտները գոց պիտի սորվին Հաւատով Խոստովանիմէն համարներ՝ եւ նաեւ Նոր Կտակարանի Գիրքերուն շարքը:

Իրենց պարտականութիւնները լաւագոյն կերպով կատարող աշակերտները ամառանքի հանդէսին պիտի ստանան նուէրներ:

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝

Շաղիկ Պոյաճեան

Աշխատակիցներ՝

Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարուիկ Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.- Ուսուցիչներ՝ Վերժին Գէպթանճեան, Սալբի Բակլաեան, Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Վերա Կարապետեան, Գարուիկ Գէպթանճեան, Շաղիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Շաղիկ Պոյաճեան:



ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 7

Մարտ 2005

Աւագ շաբթուան օրերէն իւրաքանչիւրը մեզի կը փոխանցէ կեանքի դաս մը: Այս դասերուն մէջ յատուկ տեղ կը գրաւէ եւ գեղեցիկ է խոնարհութեան դասը որ Յիսուս մեր բոլորին տուաւ այն վայրկեանին երբ խոնարհելով իր աշակերտներուն առջեւ լուաց անոնց ոտքերը:

Էջ 2

Բայց ո՛չ. Զրիստոս արդարեւ մեռելներէն յարութիւն առած է, որպէս առաջին օրինակ մեռելներու յարութեան: Ինչպէս մարդով մը սկիզբ առաւ մահը, նոյնպէս մարդով մը սկիզբ կ'առնէ մեռելներու յարութիւնը:

Էջ 3

Այս տարի, Մարտ ամսուան ընթացքին մենք կը հանդիպինք Մեծ Պահքի հինգերորդ կիրակի օրուան, որ կը կրէ «Դ ա տ ա լ ո Ր Ի Ն» անունը:

Էջ 3

Տասը կոյսերուն առակը: Իր բոլոր առակներուն պէս, Յիսուս այս առակը եւս օգտագործեց խորհրդանշներու միջոցաւ իր աշակերտներուն փոխանցելու խորհուրդ մը:

Էջ 4

Փակեալ Խորան, Միջինք, Արեւագալ եւ հսկում: Կարդացէք Մեծ Պահքի յարակից նիւթերու մասին:
Էջ 5

Յարութիւնը մարդոց համար, որոնք Յարութեալը տեսան, այլեւս կասկածէ վեր իրողութիւն էր, անդիմադրելիօրէն հզօր ոյժ մանաւանդ յուսահատեալներու համար, ինչպէս էին Իրեն առաջին հետեւորդները: Հատուած Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսէն:

Էջ 6

Սուրբ Յարութեան տօնը նախորդող «Աւագ» կոչուող շաբաթը Յիսուսի չարչարանքներու, խաչելութեան, թաղման եւ ապա յարութեան շաբաթն է: Աւագ շաբաթը կը պարունակէ նաեւ այլ խորհուրդ մը Աստուծոյ կողմէ աշխարհի արարման շաբթուան եօթը օրերէն իւրաքանչիւրը:

Էջ 7

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն Յիսուս կը խաշուի: Ես Յովհաննէսն եմ, եւ ես Յիսուսի աշակերտներէն մէկն եմ: Քեզի պիտի պատմեմ իմ կեանքիս ամենատխուր օրուան մասին:

Էջ 10, 11, 12, 13

Հայ ժողովուրդը, որպէս վկայութիւն իր խոր սիրոյն եւ հաւատքին մեր լուսաւորիչին հանդէպ, հիւսած է աւանդութիւններ անոր կեանքին շուրջ:

Էջ 14

Ծանօթացում Հայաստանի հետ՝ Տաւուշի մարզ Տաւուշի մարզը կը գտնուի Հայաստանի հանրապետութեան Հիւսիս Արեւելքը:

Էջ 8,9

Յարեալ, չէ՛ աստ*



Նաեւ այս թիւով...

**Պահուած բառ
Էջ 9**

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Էջ 14, 15, 16, 17, 18, 19**

**Նկարչական Մրցում
Էջ 20**

**Ժամանակացոյց Աւագ
Շաբթուայ
Էջ 20**

**Կարճ Լուրեր Կիրակնօրեայէն
Էջ 22**

* (Յարութիւն առաւ, այստեղ չէ)

ՄԱՐՏ 2005

Կիր.	Բշ.	Գշ.	Դշ.	Եշ.	Ուր.	Ծր.
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30	31		

2	Միջինք
5	Քառասուն մանկունք
6	Դատաւորին կիրակի
12	Ս. Գրիգոր Լուսաւորչի մօտն ի վիրապ
13	Գալստեան կիրակի
19	Յիշատակ Ղազարի յարութեան
20	Ծաղկազարդ
24	Աւագ հինգշաբթի, վերջին ընթրիք, ոտնլուայ, խաւարում
25	Խաչելութիւն եւ թաղում
26	Ճրագալոյց Սուրբ Յարութեան
27	Սուրբ Զատիկ



Խոնարհութեան մէջ մեծութիւն


Սուրբ Յարութեան տօնը եւ անոր նախորդող Աւագ Ծաբաթը հարուստ են խորհրդաւոր այն դրուագներով որոնք եկան ամբողջացնելու Քրիստոսի մարմնաւոր կեանքը աշխարհի վրայ եւ սկիզբը տուին, Յարութեան «հրաշքով» մարդ արարածի անմահութեան:

Աւագ շաբթուան օրերէն իւրաքանչիւրը մեզի կը փոխանցէ կեանքի դաս մը: Այս դասերուն մէջ յատուկ տեղ կը գրաւէ եւ գեղեցիկ է խոնարհութեան դասը որ Յիսուս մեր բոլորին տուաւ այն վայրկեանին երբ խոնարհելով իր աշակերտներուն առջեւ լուաց անոնց ոտքերը:

Խոնարհութիւնը մարդու հոգիին խաղաղութիւն եւ երջանկութիւնը պարգեւող առաքինութիւն մըն է: Ան կը նշանակէ ըլլալ գոհ եւ երախտապարտ մեզի վերագրուած իրավիճակէն ու ամբարտաւանութեամբ եւ անհագ ցանկութիւններով չլեցնել մեր կեանքը: Խոնարհ անձը աւելի բարձր է քան ան որ անդադար փառասիրութեամբ տարուած է: Որովհետեւ խոնարհ անձը գիտէ թէ իր մեծութիւնը իր համեստութեան եւ պարզութեան մէջ է եւ թէ կեանքի արժէքները փառքին ու պատիւի արժանանալուն մէջ չեն կայանար անպայման:

Պատահական խօսք չէր երբ Յիսուս կը պատուիրէր իր աշակերտներուն որ անոնցմէ ամենէն մեծը պէտք էր որ ամենէն խոնարհն ու ծառայողն ըլլար: Վերջ ի վերջոյ մարդս իր խոնարհութեամբ է որ նկարագրի բարձրութիւն ցուցաբերած կ'ըլլայ եւ խոնարհութեամբ է որ քայլ մը եւս յառաջացած կ'ըլլայ մարդկային կատարելագործութեան ընթացքին մէջ:

Մեր յարութիւնը Ա. Կորնթացիներուն 15.12-22



Արդ, քանի մենք կը քարոզենք թէ Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է, ի՞նչպէս ձեր մէջէն ոմանք կ'ելլեն ըսելու՝ թէ «Մեռելներու յարութիւն չկայ»: Եթէ մեռելներու յարութիւն չկայ, ուրեմն Քրիստոս ալ յարութիւն չէ առած. եւ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, զուր է մեր քարոզութիւնը, զուր է նաեւ ձեր հաւատքը: Այդ պարագային մենք Աստուծոյ համար սուտ վկայած կ'ըլլանք, քանի վկայեցինք՝ թէ Աստուած Քրիստոսը յարուցանեց. մինչդեռ եթէ ընդունինք թէ մեռելները յարութիւն չեն առներ, ըսած կ'ըլլանք նաեւ՝ թէ Աստուած Քրիստոսը չյարուցանեց: Որովհետեւ երբ կ'ըսենք՝ «Մեռելները յարութիւն չեն առներ», Քրիստոսի յարութիւնն ալ մերժած կ'ըլլանք: Իսկ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ինքնախաբէութիւն է ձեր հաւատքը. ինչ որ կը նշանակէ՝ թէ տակաւին ձեր մեղքերուն մէջ էք: Ուրեմն ի՞նչ. անոնք որոնք Քրիստոսի հաւատացին եւ մեռան՝ կորսուա՞ծ են ընդմիշտ: Եթէ այդպէս է, եւ միայն այս կեանքին համար յոյս դրած ենք Քրիստոսի վրայ, մարդոց մէջ ամենէն խղճալիներն ենք:

Բայց ո՛չ. Քրիստոս արդարեւ մեռելներէն յարութիւն առած է, որպէս առաջին օրինակ մեռելներու յարութեան: Ինչպէս մարդով մը սկիզբ առաւ մահը, նոյնպէս մարդով մը սկիզբ կ'առնէ մեռելներու յարութիւնը: Ինչպէս Ադամէ ծնածները բոլորն ալ կը մեռնին, այնպէս ալ Քրիստոսէ ծնածները բոլորն ալ պիտի կենդանանան:

Դատաւորի կիրակին

Մեծ պահքի կիրակիներէն իւրաքանչիւրը ունի յատուկ անուն մը, ներշնչուած օրուան կարդացուող աւետարանի համապատասխան համարէն:

Այս տարի, Մարտ ամսուան ընթացքին մենք կը հանդիպինք Մեծ Պահքի հինգերորդ կիրակի օրուան, որ կը կրէ «Դատաւորին» անունը:

Ինչպէս անունը կ'ըսէ, Դատաւորի կիրակիի պատարագի ընթացքին կը կարդացուի Դուկասի աւետարանէն 18-րդ գլխին այն բաժինը որ կը պարունակէ Դատաւորին եւ Մաքսաւորին առակները, որոնք նաեւ կը յիշատակուին օրուան շարականներուն մէջ: Այս տարի Դատաւորին կիրակին կը զուգադիպի Մարտ 6-ին:

«Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախճար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ անոր կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. «Թէեւ Աստուծմէ չեմ վախճար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինծի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ»:

Յիսուսի իւրաքանչիւր առակի պէս, Դատաւորին առակն ալ խորհրդանշաններու դիմելով կու գայ մարդոց փոխանցելու իմաստուն խօսք մը: Եւ թէեւ առակին իմաստը պրպտելու ձեւը մեզմէ իւրաքանչիւրին համար կրնայ ըլլալ տարբեր, սակայն ընդհանուր գաղափարը այս առակին այն է թէ ճիշդ այնպէս ինչպէս այրի կինը անդադար խնդրեց դատաւորէն եւ վերջ ի վերջոյ ստացաւ իր փափաքածը, նոյնպէս ալ մարդ արարածը, շարունակ աղօթելու եւ խնդրելու է Աստուծմէ, որ պիտի չմերժէ իր հաւատացեալներուն խնդրանքներուն պատասխանել:

Տասը կոյսերուն առակը

Զատիկը նախորդող Աւագ շաբթուան երեքշաբթի օրը՝ Յիսուս իր աշակերտներուն տուաւ Տասը կոյսերու առակը:

«Տասը կոյսեր կային, որոնք իրենց լապտերները առած՝ փեսան դիմաւորելու ելան: Անոնցմէ հինգը յիմար էին, իսկ միւս հինգը՝ իմաստուն: Յիմարները առին իրենց լապտերները, բայց իրենց հետ պահեստի ձեթ չառին, մինչդեռ իմաստունները իրենց լապտերներուն հետ սրուակով ձեթ առին: Եւ երբ փեսան ուշացաւ գալու, բոլորն ալ թմրեցան ու քնացան:

Կէս գիշերին կանչ մը լսուեցաւ. «Ահա փեսան կու գայ, զայն դիմաւորելու եկէք»: Կոյսերը արթնցան եւ սկսան իրենց լապտերները կարգին դնել: Յիմար կոյսերը իմաստուններուն ըսին. «Ձեր ձեթէն քիչ մը մեզի տուէք, որովհետեւ մեր լապտերները ահա կը մարին»: Իմաստուն կոյսերը պատասխանեցին. «Ո՛չ, որովհետեւ կրնայ ըլլալ որ մեզի եւ ձեզի չքաւէ. աւելի լաւ կ'ըլլայ որ երթաք խանութպաններուն եւ ձեզի համար ձեթ գնէք»:

Երբ անոնք ձեթ գնելու գացին, փեսան եկաւ, եւ պատրաստ եղողները փեսային հետ հարսանիքի մտան, եւ դուռը գոցուեցաւ: Քիչ ետք եկան միւս կոյսերը եւ ըսին. «Տէ՛ր, Տէ՛ր,

դուռը բա՛ց մեզի»: Փեսան պատասխանեց. «Իսկապէս որ չեմ ճանշնար ձեզ»:

Ապա Յիսուս եզրակացուց.

–Ուրեմն, արթո՛ւն մնացէք, որովհետեւ չէք գիտեր Մարդու Որդին գալուն ո՛չ օրը եւ ո՛չ ալ ժամը:»

Իր բոլոր առակներուն պէս, Յիսուս այս առակը եւս օգտագործեց խորհրդանշներու միջոցաւ իր աշակերտներուն փոխանցելու խորհուրդ մը:

Իրապէս ալ, տասը կոյսերը կը խորհրդանշեն ամբողջ մարդկութիւնը, բոլոր մարդերը: Լապտերներու ձեթը ողորմութիւնն ու մարդասիրութիւնն են: Մեզմէ ոմանք ունին այս երկու առաքինութիւնները, ուրիշներ՝ ոչ, ճիշդ այնպէս ինչպէս կոյսերէն ոմանք ունէին աւելորդ ձեթ, իսկ միւսները՝ ոչ:

Կոյսերուն քուն անցնիլը մարդուն մահուան կը համապատասխանէ, իսկ փեսային գալուստը՝ գերեզմանէն վեր ելլելն ու յարութիւն առնելը: Իմաստուն կոյսերը որոնք պահածոյ ձեթ ունենալուն շնորհիւ ընկերակցեցան փեսային, աշխարհի վրայ այն արարածներն են որոնք իրենց հոգիներէն ներս տեղ տուած են ողորմութեան, մարդասիրութեան եւ որոնք իրենց կեանքը նուիրած են բարի գործին: Անոնք են միայն որ յարութիւն պիտի առնեն:



Մեծ պահք եւ յարակից նիւթեր

Փակեալ խորան

Մեծ պահքի շրջանին, եկեղեցիներէն ներս խորանները կը մնան փակ: Միակ բացառութիւնն է Սուրբ Գրիգոր Լուսաւորչի «Մուտն ի Վիրապ» տօնի առիթով մատուցուած պատարագը որ կը կատարուի բաց խորանով:

Միջինք

Մեծ պահքի ճիշդ կէսը յատկանշող օրը կը կոչուի Միջինք: Այս օրը երկարատեւ պահքի շրջանին կէսը նուաճած ըլլալու աւետումն է ու խնդութեան առիթ կը նկատուի: Սեղաններ կը սարքուին պահքի յատուկ ուտելիքներով:

Հին աւանդութիւն էր որ Միջինքի օրը տուններէն ներս պատրաստուէր բաղարջ կոչուած հաց մը որուն մէջ կը պահուէր մանր երկաթեայ դրամ մը: Երբ տեղի կ'ունենար ընտանեկան հաւաքոյթ, հացը մաս առ մաս կը բաժնուէր եւ բոլորին ուշադրութիւնը կը կեդրոնացար գտնելու համար տարուան այն բախտաւոր անձը որուն հացի բաժնին մէջէն պիտի ելլեր երկաթեայ դրամը:

Արեւագալ եւ հսկում

Մեծ պահքի շրջանին, Հայաստանեայց առաքելական եկեղեցին իր հաւատացեալներուն կը հրամցնէ աղօթքի եւ ինքնամփոփման խորհրդաւոր արարողութիւններ: Այս արարողութիւնները կը կրեն Արեւագալ անունը երբ կը կատարուին Արեւածագին, ինչպէս անունը ցոյց կու տայ, եւ Հսկում երբ կը կատարուին երեկոյեան ժամերուն:

Արեւագալը գրեթէ ամբողջութեամբ լոյսի փառաբանութիւն մըն է: Այս իրողութեան ողջ փաստերէն են Ներսէս Շնորհալիի հեղինակութեամբ շարականները որոնք կու գան ճոխացնելու, բացառիկ իմաստ եւ գեղեցկութիւն տալով անոնց, Արեւագալի արարողութիւնները: Այս շարականներէն մէկը հետեւեալ տողերը կը պարունակէ, որոնք, ինչպէս պիտի տեսնենք, իսկապէս ալ լոյսի փառաբանութիւն են.-

«Յարեւելից մինչ ի մուտ. ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ. ամենայն ազգ եւ ազինք, յօրհնութիւն նոր օրհնեցէք զարարիչն արարածոց, որ ծագեաց զլոյս արեգականն այսօր աշխարհս:»

«Արեւելքէն մինչեւ Արեւմուտք, Հիւսիսէն Հարաւ, աշխարհի ազգեր եւ ցեղեր, փառք տուէք արարածներու արարիչին, որ այսօր աշխարհի վրայ ծագեցուց արեգակի լոյսը:»

Յարութեան իմաստը այսօրուան մեր կեանքին մէջ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս

«Յարեաւ, չէ՛ աստ»: Յարութիւն առաւ, այստեղ չէ:

Երեք բառեր:

Կարճ, կտրուկ, անսեթեւեթ, պարզ ու մեկին:

Հաստատումը իրողութեան մը, դէպքի մը, երեւոյթի մը, որուն փորձառութիւնը վեր կը մնար– եւ կը մնայ– մարդու կեանքի պարուանակէն: Մեռեալը, գերեզմանի մէջ երեքօրեայ ամփոփեալը, հսկայածանր վէմով կնքեալը, հռոմէական լէգէոնական զինուորներով պահպանեալն ու հսկեալը ահա դուրս էր եկեր գերեզմանէն, յարութիւն էր առեր, մահացեալ գոյավիճակէն եւ նոյնիսկ երեւացեր էր բազմիցս եւ բազմաց՝ բարեպաշտ իւղաբեր կիներէն սկսեալ մինչեւ առաքեալները եւ հարիւրաւոր պարզ մարդիկ:

Քրիստոսի քարոզութիւնները Իր խաչելութեամբ ու թաղմամբ «աւարտուած», Իր անմիջական շրջանակի մէջ շատ շատ յիշողութեան մը պիտի վերածուէին՝ ինչպէս Իրմէ առաջ եւ իր ժամանակ շատերու քարոզութիւններու ճակատագիրը եղած էր: Գեղեցիկ մտածումներ, բարոյական բարձր սկզբունքներ, քաղցր դէմքի մը ժպիտին հետ պիտի մնային որպէս Քրիստոսի ժառանգութիւնը դարերու տարեգրութեանց մէջ իրենց յատուկ տեղը ունեցող:

Եթէ...

Եթէ պատահած չըլլար աներեւակայելի, աննախընթաց եւ անիմանալի յարութիւնը ի մեռելոց: Յարութիւնը եղաւ կնիքը, կամ այլ բացատրութեամբ, գազաթնակէտը, գմբէթացումը Իր ուսուցումներուն եւ անոնց մէջէն բերած եւ մարդոց փոխանցած ճշմարտութիւններուն:



Բոլորդ ալ լաւ կը յիշէք Աւետարանի էջերէն թէ ինչպէ՛ս Յիսուսի դատապարտութեամբ, խաչելութեամբ եւ մահուամբ Երուսաղէմի մէջ ծայր տուած խռովքը վերջ գտած էր եւ Յիսուսի պատմութեան վերջակէտն էր դրուած: Նոյնիսկ իր Առաքեալները եւ անմիջական այլ հետեւորդներ յուսահատ վիճակի մը մատնուած էին: Ծիշդ էր որ իրենց Վարդապետը խօսած էր Իր յարութեան մասին: Բայց մարդկային պարզ բանականութեամբ՝ դժուար էր հաւատալ, մանաւանդ ոմանք կը զարմանային թէ Յիսուս ինչպէս չկարողացաւ ինքզինք ազատել խաչի մահէն:

Անկարելին եղաւ Կարելի.

Աներեւակայելին մարմին զգեցաւ,
Յիսուս յարեա՛ւ...

Որքան ալ մարդկային միտքը իր բնական կարողութեամբ անգոր է ճանչնալու այս ճշմարտութիւնը, տուեալ իրականութիւնը սակայն վեր է միտքի հասողութենէն: Յարութիւնը մարդոց համար, որոնք Յարութեալը տեսան, այլեւս կասկածէ վեր իրողութիւն էր, անդիմադրելիօրէն հզօր ոյժ մանաւանդ յուսահատեալներու համար, ինչպէս էին Իրեն առաջին հետեւորդները:

Աւագ շաբաթն ու արարչութեան շաբաթը

Սուրբ Յարութեան տօնը նախորդող «Աւագ» կոչուող շաբաթը Յիսուսի չարչարանքներու, խաչելութեան, թաղման եւ ապա յարութեան շաբաթն է:

Մէկ շաբթուան ընթացքին Քրիստոսի կեանքէն ներս պատահեցան յաջորդաբար այս դէպքերը, որպէսզի ըստ Աստուծոյ կամքին, մեղաւոր մարդուն տրուի յարութեան պարգեւով, անմահութեան շնորհքը:

Աւագ շաբաթը կը պարունակէ նաեւ այլ խորհուրդ մը Աստուծոյ կողմէ աշխարհի արարման շաբթուան եօթը օրերէն իւրաքանչիւրը:

Աւագ շաբթուան առաջին օրը՝ Ծաղկազարդի Կիրակին է: Քրիստոսի փառաւոր մուտքը Երուսաղէմ: Ծաղկազարդը կը խորհրդանշէ արարչութեան առաջին օրը, երբ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը եւ լոյս սփռելով, խաւարը վերացուց:

Աւագ Երկուշաբթին, ուր Յիսուս անիծեց անպտուղ թզենին, կը զուգադիպի արարչութեան երկրորդ օրուան, երբ Աստուած ջուրը ստեղծեց:

Աւագ Երեքշաբթին արարչութեան երրորդ օրուան կը համապատասխանէ, այն օրը երբ Աստուած երկրի վրայ կանաչ բոյսեր եւ պտղատու ծառեր աճեցուց: Այս օրն էր որ Յիսուս իր աշակերտներուն կը ներկայացնէ Տաւը կոյսերու առակը:

Աւագ Չորեքշաբթին, մատնութեան օրը, կը զուգադիպի այն օրուան երբ Աստուած փոխանցեց Քրիստոսի ծննդեան աւետիսը:

Աւագ Հինգշաբթին, ծուկերու եւ թռչուններու ստեղծման օրն է: Քրիստոսի կեանքի դրուագներէն ամենէն ուշագրաւներէն մէկուն է որ կը պատահի այս օր, վերնատունին մէջ վերջին ընթրիք, ոտնլուայ, եւ մանաւանդ պատարագի խորհուրդի հաստատումը:

Աւագ Ուրբաթը, արարչութեան վեցերորդ օրը, Աստուած ստեղծեց Ադամը ու անոր նմանութեամբ ու անոր կողէն՝ Եւան: Այդ օրը Ադամն ու Եւան կերան արգիլուած պտուղը ու պատճառ դարձան մարդու արտաքսման դրախտէն: Այդ օր, Քրիստոսի ձերբակալութեան, չարչարանքներու, խաչելութեան եւ մահուան օրն է նաեւ:


Շաբաթը կ'աւարտի Աւագ Շաբաթով, Քրիստոսի թաղման օրով: Արարչութեան եօթերորդ օրն է այս, ուր Աստուած հանգչեցաւ:



Ծանոթացում Հայաստանի հետ Տաուլշի մարզ



Տաուլշի մարզը կը գտնուի Հայաստանի հանրապետութեան Հիւսիս Արեւելքը: Անոր Կեդրոնն է Իջեւան քաղաքը, որուն անունը կը վերագրուի հոն շինուած մեծ թիւով իջեւաններուն, ուր հին ժամանակներուն, առեւտրականներ իրենց ճամբորդութեան ճամապարհին կը գիշերէին ու կը կենային հանգչելու համար:



Մարզի սահմաններէն ներս է նաեւ Տիւիշանը, որ իր մաքուր օդին ու տաք արեւին շնորհիւ դարձած է հանրապետութեան բուժավայրերէն մէկը:

Տաուշի մարզի ամենէն աւելի ծանօթ երկու վանքերն են Հաղարծինն ու Գոշավանքը:



Գոշավանքը, որ կը կոչուի նաեւ Նոր Գետիկ գետի ափին գտնուելու համար, կառուցած է Մխիթար Գոշը որ ալապէս ծանօթ է մեզի իր առակներով:

Գոշավանքը եւս միջնադարեան հայաստանի կրօնական եւ մշակութային հռչակաւոր վանքերէն մէկն է:



Հաղարծինը, միջնադարեան Հայաստանի մշակութային գործօն կեդրոններէն մէկը, կառուցուած է 10-րդ դարուն, Տիլիջան քաղաքէն 18 քիլոմետր հեռաւորութեան վրայ, անտառներով շրջապատուած գեղատեսիլ վայրի մը մէջ:

Պահուած բառ

յ	ա	ր	ո	ւ	թ	ի	լ	ն
ն	հ	ո	ի	պ	ա	ր	ա	պ
ի	ր	փ	կ	զ	տ	ա	ս	ը
մ	ա	ա	ա	է	ա	տ	ե	տ
ր	շ	ռ	ր	ա	ք	գ	տ	ի
ա	ք	յ	ի	ս	ո	ւ	ս	թ
մ	ա	ա	կ	ւ	ո	տ	ռ	ա
հ	կ	ժ	ա	ռ	ա	ն	գ	գ

յարութիւն
ժայռափոր
Յիսուս
Կիրակի
Հայր
Ժառանգ
մարմին
քար
տէր
հրաշք
պարապ
առտու
տեսաւ
տասը
գտար
թագ

**Պահուած բառ հինգ
գիրերով՝
Նախորդ պահուած բառը՝
Վարդան**


Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն

Յիսուս կը խաչուի
Ո՞րն է կեանքիդ ամենատխուր օրը:


Ես Յովհաննէսն եմ, Յիսուսի աշակերտներէն մէկը: Քեզի պիտի պատմեմ իմ կեանքիս ամենատխուր օրուան մասին:



Բոլոր աշակերտները Յիսուսի հետ կ'ընթերէին: Այդ գիշեր Յիսուս մեզի ըսաւ որ ան շուտով պիտի հեռանայ մեզմէ. Չհասկցանք թէ ինչ ըսել կ'ուզէր Ան. աւելի ուշ հասկցանք որ Ան պիտի մեռներ:




Ընթրիքէն ետք
 Յիսուս պարտէզ
 գնաց աղօթելու, հոն
 զինք ձերբակալեցին
 եւ դատապարտեցին
 խաչելութեան :
 Աստուծոյ որդին
 պիտի խաչուէր
 աւազակի մը պէս :
 Ես կեցած էի Յիսուսի
 մօր քով, եւ Ան մեզ
 այդպէս տեսաւ ու
 ըսաւ մօրը «Մայր՝
 ահա զաւակդ»,
 յետոյ ինծի նայելով
 ըսաւ «Ահաւասիկ
 մայրդ» . Այդ օրէն
 ետք Յիսուսի մայրը
 իմ հետս ապրեցաւ :
 Թէեւ կէսօր էր,
 սակայն արեւը
 խաւարեցաւ եւ ամէն
 կողմ մթնեցաւ : Ապա



Յիսուս ըսաւ «Ամէն ինչ վերջացած է»:

Յանկարծ գետինը շարժեցաւ եւ տաճարին վարագոյրը վերէն վար երկուքի բաժնուեցաւ: Յիսուս ըսաւ՝ «Հայր, ձեռքերուդ մէջ կ'աւանդեմ հոգիս», ու շնչեց վերջին անգամ ըլլալով: Հռոմէացի զինուորները վախցան, անոնցմէ մէկը ըսաւ «Իրաւ որ այս մարդը Աստուծոյ որդին էր»:



Անկէ ետք Յովսէփ՝ որ Արիմաթիա քաղաքէն էր եւ Յիսուսի հետեւորդներէն էր, վերցուց Անոր մարմինը, զայն փաթթեց կտաւներով եւ դրաւ

Խաչին վրայ մահանալով, Յիսուս իր վրայ առաւ բոլոր մարդոց գործած մեղքերուն պատիժը:

Ժայռափոր նոր
գերեզմանի մը մէջ,
իսկ մուտքը գոցեց
հսկայ քարով մը:



Վարագոյրը տաճարը կը բաժնէր երկու մասի,
մէկ կողմը կը գտնուէր ժողովուրդը, իսկ միւս
կողմը քահանայապետը: Ժողովուրդին
արտօնուած չէր վարագոյրին ետեւ երթալ, իսկ
քահանայապետը հոն կ'երթար տարին միայն
մէկ անգամ:

Մտածէ՛
ասոր
մասին

Յիսուսի աշակերտները շատ տխուր
էին որովհետեւ զԻնք շատ կը
սիրէին: Յիսուս կը հասկնար անոնց
տխրութիւնը սակայն Ան պէտք է
մահանար որպէսզի մենք, օր մը,
կարենանք Իր հետ ապրիլ
Դրախտին մէջ:

Աւանդութիւններ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի մասին Լուսաւորչի «Մուտն ի Վիրապ»-ի առթիւ

Հայաստանեայց առաքելական եկեղեցին յատուկ կարեւորութեամբ կը նշէ իր մեծագոյն դէմքերէն Գրիգոր Լուսաւորչի Խոր Վիրապ մտնելուն յիշատակը: Այդ դէպքը կը յիշատակենք Մեծ Պահքի 34րդ օրը որ Գալստեան Կիրակիին նախորդ Ծաբաթ օրն է, այս տարի կը զուգադիպի Մարտ 12 ին: Այդ օր, եկեղեցիէն ներս բացառաբար կը բացուի Մեծ Պահքի շրջանին համար փակուած խորանը, որպէսզի լուսաւորչի յիշատակին պատարագ մատուցուի:

Ինչպէս ամէն բացառիկ պատմակրօնական դէմքերուն պարագային, Գրիգոր Լուսաւորչի պարագային ալ, հայ ժողովուրդը, որպէս վկայութիւն իր խոր սիրոյն եւ հաւատքին մեր լուսաւորչին հանդէպ, հիւսած է աւանդութիւններ անոր կեանքին շուրջ: Ահա այդ աւանդութիւններէն մէկը որ կը գտնուի Աւանդապատում գիրքին մէջ, այլ աւանդութիւններու կողքին:

« Ապարան գաւառի մասին

Արագածի շորս գագաթներին, առանց պարանի –անպարան– կախուած է Գրիգոր Լուսաւորչի արտասուքներով լի կանթեղ: Էդ կանթեղը մշտավառ է եւ միայն արդարներին տեսանելի: Դրա համար էլ գաւառը կոչուել է Անպարան, որ բերանից–բերան դարձել է Ապարան:

Հայոց Տրդատ թագաւորը արձակում է մեղքից իր Հաւլունի թուրը եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ձեռքով նետում Սեպուհ լեռների կողմը: Սակայն թուրը գետին չի ընկնում եւ խաչի ձեւով մնում է օդի մէջ կախուած: Խաչի շուրջը սկսւում է շրջանակաձեւ մի շող փայլիլ: Ասում են, թէ դա Լուսաւորչի մշտավառ կանթեղի լոյսն է, որը առանց պարան, կախուած է երկնքից: Լուսաւորչի կանթեղի պէս Տրդատի թուրը եւս տեսանելի է միայն արժանաւորների:»



*Քրիստոսը դաւանող վկայ ճշմարիտ,
Բազմաշարժար նահատակ Գրիգոր Հայրապետ:
Տիրոջ չարչարանաց պակասը քու մարմնոյդ վրայ լրացուցիր
Որով կը ցնծայ Եկեղեցին Սիոնի որդւոց փառքով:
Աստուածային սիրով մեզի հոգեւոր ծնունդ տուիր,
Գորովագութ Հայր պանծալի, Գրիգոր Հայրապետ,
Մարմնիդ չարչարանքով մեզ մեղքի աղտէն մաքրեցիր
Լուսաւոր քարոզութեամբդ որդիներ ծնար:*

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն**



«Հոս չէ ան, որովհետեւ յարութիւն առաւ» «Այս տարի

Յարութեան Տօնը Մարտ --- ին է:»

Ամբողջացո՛ւր ըստ Մատթէոս 28.1- 7

Մարիամ, Մարիամը, երկրաշարժ, հրեշտակը, քարը, նստաւ,
սարսափեցան, մի՛ վախճաք, խաշուած, յարութիւն, ըսէք, առաջ, տեսնէք
Ծաբաթ երեկոյէն ետք, երբ Կիրակին կը բացուէր, -----
Մագդաղենացին եւ միւս ----- գերեզմանը տեսնելու եկան:
Յանկարծ զօրաւոր ----- մը եղաւ, եւ Աստուծոյ
----- երկինքէն իջնելով՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած
----- եւ ----- անոր վրայ: Անոր տեսքը փայլակի կը նմանէր,
եւ հագուստները ձիւնի պէս ճերմակ էին: Պահապանները երբ ասիկա
տեսան, ----- եւ մեռելի պէս եղան: Հրեշտակը կիներուն
ըսաւ « Դուք ----- . գիտեմ որ ----- Յիսուսը կը
փնտռէք: Հոս չէ, որովհետեւ ----- առաւ ինչպէս ըսած էր:
Եկէք եւ տեսէ՛ք այն տեղը ուր դրուած էր: Անմիջապէս գացէք եւ -----
իր աշակերտներուն՝ թէ յարութիւն առաւ: Անիկա ձեզմէ ----- Գալիլիա
կը հասնի եւ հոն պիտի ----- զինք. ահա ըսի ձեզի:

Ուժով ամէն ինչ չ'ըլլար, խելք է պէտք

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1. Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուալով ինչի՞ դաս մը տուաւ անոնց:

- ա. համբերութեան
- բ. մաքրութեան
- գ. խոնարհութեան
- դ. ծուլութեան

2. Վերջին ընթրիքին Յիսուս ի՞նչ հաստատեց:

- ա. Սուրբ հաղորդութիւնը
- բ. Սուրբ Սահակը
- գ. Սուրբ կեանքը
- դ. Սուրբ պսակը

3. Ո՞վ Յիսուսը ուրացաւ 3 անգամ:

- ա. Յակոբ
- բ. Պետրոս
- գ. Պօղոս
- դ. Յուդա

4. Յիսուս իր ձերբակալութենէն առաջ ի՞նչ կ'ընէր

- ա. կ' ուտէր
- բ. կը խմէր
- գ. կ' աղօթէր
- դ. կ' աշխատէր

5. Ամբողջացու՞ր

Ե՛ս եմ եւ կեանքը:
Ան որ ինձի կը,
թէպէտեւ մեռնի՝ պիտի:
Յովհ. 11.25:

6. Ամբողջացու՞ր աղօթք:

Հայր -----Աստուած-----, որ
առաքեցեր զորդիդ քո ----- ի
խնդիր մոլորեալ----- մեղայ
-----եւ առաջի քո:

7. Ի՞նչ ըսել է Աբրահամ:

- ա.- սուրբ մարդ
- բ.- բազմաթիւ ժողովուրդներու հայր
- գ.- չար գործերու հայր
- դ.- քահանայ

8. Ի՞նչ է նոր կտակարանին մեծագոյն պատուիրանը:

- ա.- պատուէ հայրդ եւ մայրդ
- բ.- մի՛ շնար
- գ.- մի՛ գողնար
- դ.- Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ մտքովդ: Սիրէ ընկերդ քու անձիդ պէս:

9. Այս տարի ո՞ր օրն է Ս. Զատիկը:

- ա.- Կիրակի 27 Մարտ
- բ.- Ծաբաթ 26 Մարտ
- գ.- Ուրբաթ 25 Մարտ
- դ.- Հինգշաբթի 24 մարտ

10. Նշէ Նոր Կտակարանին չորս աւետարանիչներու շիտակ կարգը:

- ա.- Դուկաս, Յովհաննէս, Մարկոս, Մատթէոս
- բ.- Մատթէոս, Մարկոս, Դուկաս, Յովհաննէս
- գ.- Յովհաննէս, Դուկաս, Մարկոս, Մատթէոս
- դ.- Մարկոս, Դուկաս, Մատթէոս, Յովհաննէս

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Հետեւեալներէն որո՞նք Յիսուսի քովն էին
իր խաչելութեան ընթացքին:

ա.- Յովհաննէս եւ մայրը Մարիամ

բ.- Պետրոս եւ Յովհաննէս

գ.- Յովհաննէս

դ.- Յակոբոս եւ Պետրոս

2.- Աւագ Ծաբաթ կը կոչուի

ա.- Ս. Ծնունդին յաջորդող շաբաթը

բ.- Ծաղկազարդին յաջորդող շաբաթը

գ.- Ս. Զատիկէն մինչեւ Համբարձում

դ.- Ս. Զատիկի նախորդող շաբաթը

3.- Աւագ Ծաբթուայ իւրաքանչիւր օր ունի
յիշատակ մը:

Աւագ Երկուշաբթի -----

Աւագ Երկուշաբթի -----

Աւագ Չորեքշաբթի -----

4.- Աւագ Ծաբթուայ իւրաքանչիւր օր ունի
յիշատակ մը:

Աւագ Հինգշաբթի -----

Աւագ Ուրբաթ -----

5.- Աւագ Ծաբաթ օրը կը կոչուի Ծրագալույց
Ս. Զատիկի, իսկ Ս. Զատիկը Յիշատակն է
Յիսուսի Յարութեան: Ս. Զատկուայ
յաջորդող Երկուշաբթին յիշատակն է
-----:

6.- Տասնաբանեայ պատուիրաններէն ո՞ր
մէկը կ'ըսէ «չըլլա՛յ որ սպանութիւն ընես»:

ա.- վեցերորդը

բ.- հինգերորդը

գ.- առաջինը

դ.- երկրորդը

7.- Պահքի ո՞ր կիրակին կը կոչուի
Ծաղկազարդ «Առաջին հաշուելով
Արտաքսման Կիրակին»:

ա.- երկրորդ

բ.- չորրորդ

գ.- վեցերորդ

դ.- երրորդ

8.- Ի՞նչ էր Ղուկաս Աւետարանիչի արհեստը:

ա.- ատաղձագործութիւն

բ.- բժշկութիւն

գ.- ուսուցչութիւն

դ.- ձկնորսութիւն

9.- Հսկումի ընթացքին ի՞նչ աղօթք կը
կարդանք:

ա.- Հաւատամք

բ.- Առաւօտ լուսոն

գ.- Հաւատով խոստովանիմ

դ.- Մատեան ողբերգութեան

10.- Ամբողջացու՛ր աղօթքը:

Ով Երկնային, ով - - - - - Դուն մեր -
- - - - - , Հայր բարի, տուր մեզի - - - ,
շնորհք ու - - - , իմաստութիւն եւ - - - - -
- - - :

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1- Ի՞նչ կը կոչուի Ս. Զատկուան
նախորդող 3 կիրակիները:

ա.- ----- Կիրակի
բ.- ----- Կիրակի
գ.- ----- Կիրակի

2- Ամբողջացուր նախադասութիւնը
ըստ Ա. Կորնթացիս 15.22 ի:

«Ինչպէս Ադամէ ծնածները բոլորն
ալ կը -----, այնպէս ալ
Քրիստոսէ ծնածները բոլորն ալ պիտի
-----:»

3-Ի՞նչ է Դատաւորին Առակին
նպատակը:

4- Ո՞ր օրը Յիսուս տասը կոյսերուն
առակը պատմեց:

Աւագ -----:

5-Ի՞նչ կը նշանակէ:

Յարեաւ, չէ աստ:

6-Ո՞վ կառուցած է Գոշավանքը:

7-Լուսաւորչի կանթեղը որ լերան վրայ
կախուած է:

8-Յուդա յանձն առաւ Յիսուսը մատնել
աւագ ----- օրը:

9-Զատկական ընթրիքը տեղի ունեցաւ
աւագ ----- օրը:

10-Աշակերտներուն ոտքերու
լուացումը տեղի ունեցաւ աւագ
----- օրը:

11-Պետրոսի ուրացումը տեղի ունեցաւ
աւագ ----- օրը:

12-Յիսուս աղօթեց Գեթսեմանիի
պարտէզին մէջ աւագ
----- օրը:

13-Յիսուս խաչուեցաւ աւագ
----- օրը:

14-Երկինքը խաւարեցաւ երեք ժամ
աւագ ----- օրը:

15-Կիրակի օրերը Քրիստոսի
յարութենէն առաջ կը կոչուէին՝
----- :

Փետրուար ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ

Պատասխաններ

Մանկապարտէզի անկիւն

Տիրոջ, նուիրուի, տատրակ, աղանիի,
Սիմոն, Սուրբ Հոգին, Օծեալը,
Յիսուսը, գոհաբանեց

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. ա. 5 հաց եւ 2 ձուկ
2. գ. 12 կողով
3. բ. Բուն Բարեկենդան
4. դ. Հինգշաբթի
5. 451
6. բ. Բարի Կեանք
7. գ. 40
8. ազգեր
9. գ. 301
10. գ. Ս. Ղեւոնդեանք

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. բ. Վարդանանցի նախորդող Երեքշաբթին
2. ա. եւ բ. Օհնեալ է յայտնութիւնն
- Քրիստոսի կամ Զեզի մեզի մեծ աւետիս
3. Յովսէփ
4. դ. 17 հատ
5. Սինիք
6. Սինիք
7. բ. 454
8. բ. Փետրուար 7
9. Արտաքսման
10. Տնտեսին

Երկրորդականի անկիւն

1. Քաղկեդոն
2. Նուարսակ
3. 14
4. գ. Ղուկաս
5. Իրան եւ Ատրպէյճան
6. Զանգեզուր
7. 381
8. 40
9. Հօրեղբայրն էր
10. Աւետարանն, Եկեղեցին

Մասնակցողներ

Մանկապարտէզ

Ճեսիքա Մաթէոսեան

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան,
Յուլեր Անթեպեան, Յակոբ
Գաբթանճեան, Տիգրան Խանո,
Թամար Տեմիրճեան

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

Արազ Գաբթանճեան, Մհեր
Մաթէոսեան

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Դալար
Գաբթանճեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գօգօ Մատթէոսեան, Հրայր
Մատթէոսեան, Արի Միրզայեան,
Ճօրճ Արմաղանեան, Արի Քէօսէյեան,
Մարիա Դանիէլեան, Անի Մելքեան, :

Երկրորդականի անկիւն

Կարօ Կարապետեան, Յովիկ
Կարապետեան, Փօլ Գիզիրեան:

Նկարչական Մրցում

«Աստուածաշունչէն առնուած նիւթ մը»

Հովանաւորութեամբ Գանատայի Ազգային Առաջնորդարանին եւ կազմակերպութեամբ Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին, Փետրուար 19-20, 2005ին տեղի ունեցաւ Յուցաբանդէս-Մրցանք Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու ինքնադրութեան 75 Ամեակին Առթիւ:

Աւելի քան 150 Մոնթրէալահայ մասնակցողներու խումբին մաս կը կազմէին նաեւ մեր Կիրակնօրեայ Դպրոցէն 25 աշակերտներ Ստորեւ կուտանք մրցումին արդիւնքները: Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի «ՍՅԿԴ» աշակերտներուն անունները **BOLD** են:

Փոքրեր «Նախ. Ա., Բ. եւ Գ.»

1. Մարիա Մաթոսեան
 2. Առէն Պապիկեան «ՍՅԿԴ Նախ. Գ.»
 3. Կորին Գոյունեան
- Մասնաւոր Գնահատանքի արժանացան՝
Սերենա Քիւլիքեան «ՍՅԿԴ Նախ. Բ.»
 Սիմա Ռոզ Խաչաթ
 Սերոբ Թաշճեան
Գէորգ Պուլիքեան «ՍՅԿԴ Նախ. Բ.»

Միջակներ «Նախ. Դ., Ե. եւ Զ.»


1. Լորա Սարիմանուկեան «ՍՅԿԴ Նախ. Զ.»
 2. Անի Անտոնեան
 3. Մարալ Մարկոսեան
- Մասնաւոր Գնահատանքի արժանացան՝
Հրակ Նարեկեան «ՍՅԿԴ Նախ. Ե.»
Հրայր Մաթոսեան «ՍՅԿԴ Նախ. Դ.»
 Սիւզաննա Աւետիսեան
Թամար Պուլիքեան «ՍՅԿԴ Նախ. Զ.»

Մեծեր «Երկրորդական»


- Մասնաւոր Գնահատանքի արժանացան՝
Կարօ Կարապետեան «ՍՅԿԴ Երկր. Դ.»
Թամար Գիզիրեան «ՍՅԿԴ Երկր. Ե.»



«Անառակ Որդին»
 Առէն Պապիկեան Նախ. Գ.



«Յիսուս կը հանդարտեցնէ փոթորիկը»
 Լորա Սարիմանուկեան Նախ. Զ.



«Հաւատք եւ Հրաշք»
 Կարօ Կարապետեան Երկր. Դ.

Ժամանակացույց Ծաղկազարդի, Աւագ Ծաբթուայ եւ Ս. Զատկուայ

Սիրելի Ծնողք՝

Ձեր ուշադրութեան կ'ուղենք յանձնել, թէ Կիրակի **20 Մարտ 2005-ին Ծաղկազարդի տօնին առթիւ Կիրակնօրեայ Դպրոցը փակ է առիթ տալու համար մեր աշակերտներուն մասնակցելու եկեղեցական արարողութեան եւ Մանուկներու Թափօրին:**

Դպրոցը կը շարունակէ իր սովորական ընթացքը Զատկուայ Կիրակին՝ 27 Մարտ 2005 ին:

Կ'ուղենք յիշեցնել թէ Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցին ունի հետեւեալ ժամանակացույցը Ծաղկազարդի եւ Աւագ Ծաբթուան ընթացքին

Ծաղկազարդ Կիրակի 20 Մարտ 2005

Առաւօտեան Ժամերգութիւն	Ժամը 10:00
Ս. Պատարագ եւ մանուկներու Թափօր	Ժամը 11:00
Դռնբացէք	Երեկոյեան Ժամը 5:00

Աւագ Երեքշաբթի 22 Մարտ 2005

Երեկոյեան Ժամերգութիւն	Ժամը 7:00
------------------------	-----------

Աւագ Հինգշաբթի 24 Մարտ 2005

Առաւօտեան Ժամերգութիւն եւ Ս. Պատարագ	Ժամը 11:00
Կարգ Ոտնլուայի	Երեկոյեան Ժամը 6:00

Հետաքրքրուողներ պարտին հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ 331-5445 ext 202

Կարգ Խաւարման	Գիշերուան	Ժամը 9:00
---------------	-----------	-----------

Աւագ Ուրբաթ 25 Մարտ 2005

Կարգ Խաչելութեան եւ Թաղման	Երեկոյեան	Ժամը 7:00
----------------------------	-----------	-----------

Աւագ Ծաբաթ եւ Ծրագալոյց 26 Մարտ 2005

Ս. Հաղորդութիւն	Առաւօտեան	Ժամը 10:00
Աստուածաշնչական գիրքերու ընթերցում	Երեկոյեան	Ժամը 6:00
Ս. Պատարագ	Երեկոյեան	Ժամը 7:00

Կարճ Լուրեր

Դասախօսություն

Մաշտոցի Հետքերով... Հիւսիսային Ամերիկայի մէջ **1,600** տարիներ ետք

Ո՞ր : Մոնթրէալի հայ Կեդրոն, Ահարոնեան Սրահ
Ե՞րբ : Հինգշաբթի 17 Մարտ 2005 կ.ե. ժամը 8:00 ին
Դասախօս : Ծաղիկ Պոյաճեան
Առիթ : 25-Ամեակ Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝ Ծաղիկ Պոյաճեան

Աշխատակիցներ՝ Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարուիկ
Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս
Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իրաքանչիւր օրուան
Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՅԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

*Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.-
Ուսուցիչներ՝ Վերժին Գէպթանճեան, Սալբի Բակլաեան, Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Վերա
Կարապետեան, Գարուիկ Գէպթանճեան, Ծողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան,
Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Ծաղիկ Պոյաճեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ
Սուրբ Յակոբ, Մոնթրէալ

Ամսակ

Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի
1980-2005

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 8

Ապրիլ 2005

Հայ ազգի պարագային
ալ նոյնպէս, մեզ
յ ա տ կ ա ն շ ո ղ
իրագործումներն ու
յատկութիւնները շատ
են: Սակայն անոնցմէ
ամենէն յատկանշականը,
որով մեր ժողովուրդը կը
յիշուի մարդկութեան
պատմութեան մէջ մեր
Քրիստոնէութիւնն է:
Էջ 2

«Պատգամը, որ իրմէ
լսեցինք եւ ձեզի կը
փոխանցենք, սա է՝
թէ Աստուած լոյս է
բնաւ խաւար չկայ
անոր մէջ»: Հատուած
Յովհաննէս առաքելի
առաջին նամակէն:
Էջ 3

Սուրբ Խաչի երեւման
տօն: Հայաստանեայց
եկեղեցին իր տօնացոյցին մէջ
լայնօրէն տեղ տուած է
Քրիստոնէութեան
ազնուագոյն խորհրդանշին՝
սուրբ խաչին:
Էջ 4

Յովհաննէս Մկրտիչ
նաեւ ծանօթ է
Յովհաննէս Կարապետ
անուան տակ: Ան
Մկրտիչ կոչուած է Յորդանան
գետին մէջ թէ՛ Յիսուս եւ թէ՛
իր քարոզչութեան հետեւող
ալլ անհատներ մկրտելուն
համար:
Էջ 6

Մենք այսօր,
աշխարհի չորս
ծագերուն վրայ,
համեմատականօրէն
այնքան դիւրակեաց
պայմաններու շրջագծին
մէջ երբ կ'ապրինք
փաստօրէն, ի՞նչ ձեռով
կը վկայենք մեր
քրիստոնէական
հաւատքին ու ազգային
պատկանելիութեան
մասին: Հատուած
«Անցեալը անցած չէ,
Ուխտագնացութիւն ի Տէր
Զօր» գիրքէն
Էջ 5

«Մ ա շ տ ո ց ի
Ա ր ձ ա գ ա ն գ » - ի
ապրիլի թիւով
կ'արտատպենք Զարեհ
ե պ ի ս կ ո պ ո ս
Ա զ Գ ա լ ո Ր Ե ա ն ի
«Ծարական Ապրիլեան
Ն ա հ ա տ ա կ ա ց » - Է Ե
հատուած մը. անոր
ա շ խ ա ր հ ա բ ա ր
թարգմանութիւնը կատարեց
եկեղեցւոյ հովիւ՝ Տէր
Գառնիկ քինյ. Գոյունեան:
Էջ 7

Անունո՛վդ ապրիս:
Տարուան այն ամիսը որ
ընդհանրապէս հայ ազգին
համար կը յատկանշուի
ապրիլեան եղեռնի
յիշատակումներով,
տ ա ր օ Ր ի Գ ա կ
զուգադիպութեամբ մը եւ
հակասականօրէն «Ապրիլ»
անունը կը կրէ:
Էջ 14



*Շիրակի մարզի Կիւմրի քաղաքի
Սուրբ Աստուածածին եկեղեցին*

Ծանօթացում
Հայաստանի հետ՝
Շիրակի մարզ
Շիրակի մարզը կը գտնուի
Հայաստանի
հանրապետութեան
Հիւսիս-Արեւմտեան կողմը:
Մարզի ամենէն աւելի ծ
անօթ քաղաքն է Կիւմրին
յատկապէս Դեկտեմբեր
1988-ի երկրաշարժին առ
թիւ իր կրած հսկայական
վնասներով:
Էջ 8,9

Պահուած բառ
Էջ 10

Աստուծոյ սէրը
մարդոց հանդէպ
Էջ 10

Ո՞րն է ճիշդ
պատասխանը
Էջ 15,16,17,18

Աստուածաշունչը՝
պ ա տ մ ու ա ծ
փ ո ք Ր ի կ Ե Ր ու Ե
Վ ե Ր Ջ ի Ե
Ն ա խ ա ճ ա շ ը Ա Ե ու Ե
Պետրոս Է. Կ'ուզեմ ձեզի
պատմել իմ վերջին
ձ կ Ե ո Ր ս ու թ Ե ա ն
պատմութիւնս: Ծատ կը սիրեմ
ձուկ որսալ: Երկար ատեն
ձկնորսութեամբ ապրեցայ:
Վերջը հանդիպեցայ
Յիսուսին:
Էջ 11,12,13

Ապրիլ 24, 1915-2005
Ոգեկոչենք Մեծ Եղեռնի
զոհներուն անմահ յիշատակը
նաեւ՝
• Ապրելով Հայակնիք
կեանք մը
• Վառ պահելով
Հայաստանեայց Եկեղեցւոյ
տօներն ու ազգային
աւանդութիւնները
Էջ 14

Ապրիլ 2005

Կիր.	Բշ.	Գշ.	Դշ.	Եշ.	Ուր.	Շբ.
					1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30

2	Յիշատակ գլխատման սուրբ Յովհաննէս Մկրտչի
3	Նոր Կիրակի, կրկնազատիկ
7	Սուրբ Կոյս Մարիամին աւետում
10	Կանաչ կիրակի- աշխարհամատրան
17	Կարմիր կիրակի
24	Յիշատակ Նահատակաց Երեւումն Սուրբ Խաչի

Ողջո՞ւնք եղ, Աստուած, Արարիչ երկնի եւ երկրի, Աղբիւր կենաց, Հայր գթութեան, Դատաւոր արդար, Հայր Ամենակալ, հայեացքդ գէթ այսօր արեւէ՛ մեր վրայ, որպէսզի ան դառնայ լո՞յս մեր միտքերուն մէջ, դառնայ յո՞յս մեր սրտերուն մէջ, դառնայ հաւատք մեր հոգիներուն մէջ, դառնայ սէ՛ր մեր կեանքերուն մէջ:

*Գարեգին Բ. Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ*

Հայուն քրիստոնեայ ինքնութիւնը

Իւրաքաչիւր ազգ մարդկութեան պատմութեան մէջ իր դրոշմը կը ձգէ իր իրայատուկ նկարագրով կամ իրագործումներով: Այս ազգային իրայատկութիւնները թիւով մեծ կրնան ըլլալ, սակայն կայ անոնցմէ մէկը որ միւսներէն աւելի իշխող կ'ըլլայ եւ ազգի մը առաջնահերթ յատկանիշը կը նկատուի:

Հայ ազգի պարագային ալ նոյնպէս, մեզ յատկանշող իրագործումներն ու յատկութիւնները շատ են: Սակայն անոնցմէ ամենէն յատկանշականը, որմով մեր ժողովուրդը կը յիշուի մարդկութեան պատմութեան մէջ, մեր Քրիստոնէութիւնն է: Եւ առաւել մեր առաջին ազգը ըլլալը որ Քրիստոնէութիւնը ընդունեց իբր պետական կրօն եւ յետագային, ա՛յս քրիստոնեայ ինքնութեան համար մատնուեցաւ 20-րդ դարու առաջին եւ տակաւին անպատիժ մնացած Յեղասպանութեան:

Քրիստոնեայ ինքնութիւնը հայէն անբաժան է: Տարիներու ընթացքին, հայ անհատներու փոխարաքերութիւնը իրենց կրօնին ու հաւատքին հետ կրնայ փոփոխութեան ենթարկուած ըլլալ, տարբեր ժամանակաշրջաններու բերած ելեւէջներուն համեմատ: Սակայն ինչ որ ալ ըլլայ հայ անհատին կապը իր քրիստոնեայ կրօնին հանդէպ այսօր, պատմական այն եղելութիւնը ըստ որուն 90 տարիներ առաջ մեր ազգակիցները գիտակցաբար նահատակութիւն յանձն առին քրիստոնեայ հաւատքին համար, կը մնայ անխախտ: Այս յիշատակը ամէն հայու վրայ ծանր կը կշռէ: Ոմանք կը գիտակցին ու հաղորդ են այդ ծանրութեան, ուրիշներ՝ նուազ գիտակից:

Հարց տանք միայն մենք մեզ. այսօր, իբր հայ, ինչպիսի՞ն է մեր կապը քրիստոնեայ մեր ինքնութեան հետ, ո՞րն է մեր կեցուածքը մեր կրօնին հանդէպ, նոյն այդ կրօնը որուն համար 90 տարիներ առաջ, մեր ազգը 1,500,000 նահատակներ տուաւ...

Յովհաննէսի առաջին ընդհանրական նամակը

Յովհաննէս առաքելի առաջին նամակի առաջնադրոշմը նպատակն է ընթերցողը քաջալերել որ ապրի Աստուծոյ եւ Քրիստոսի միացած կեանք մը, շեշտելով թէ այդ ընելու միակ միջոցը սիրոյ պատուիրանը գործադրելն է:

Աստուած լոյս է, լոյսի մէջ քալենք

Պատգամը, որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է, բնա խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք՝ «Հաղորդակից ենք իրեն», եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք ահա եւ ճշմարտութիւնը չենք գործադրեր: Իսկ եթէ լոյսի մէջ քալենք, ինչպէս ինք լոյսի մէջ է, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

Եթէ ըսենք՝ «Մեղք չունինք», մենք մեզ կը խաբենք եւ մեր մէջ ճշմարտութիւն չկայ: Իսկ եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք՝ թէ Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն: Եթէ «Մեղք չգործեցինք» ըսենք, ստախոս կը հանենք զԱստուած, եւ մեր մէջ իր խօսքը չկայ:



*Պրոնզէ ձեռքի խաչ,
11-րդ կամ 12-րդ դար*

Քրիստոս մեր բարեխօսը

Որդեակներս, այս բաները կը գրեմ ձեզի, որպէսզի մեղքի մէջ չիցնաք: Իսկ եթէ ոեւէ մէկը մեղքի մէջ իյնայ, Հօրը քով բարեխօս ունինք միակ Արդարը՝ Յիսուս Քրիստոսը: Անկեա՛ր է մեր մեղքերը քաւող Զոհը, որ ինքզինք մատուցանեց՝ մեր մեղքերը սրբելու համար. եւ ո՛չ միայն մեր, այլ նաեւ ամբողջ աշխարհի մեղքերը սրբելու համար:

ԶԱստուած ճանչցողը անոր պատուիրանները կը պահէ

Եթէ գործադրենք իր պատուիրանները, այն ատեն միայն կը գիտնանք՝ թէ զինք կը ճանչնանք թէ ոչ: Ով որ կ'ըսէ՝ «Ես կը ճանչնամ զայն», բայց անոր պատուիրանները չի կատարեր, սուտ կը խօսի եւ իր մէջ ճշմարտութիւն չկայ: Իսկ ով որ կը կատարէ անոր խօսքը, ատով իսկ ցոյց կու տայ՝ թէ իրապէս իր մէջ կատարեալ է Աստուծոյ հանդէպ սէրը: Ահա այսպէ՛ս կրնանք գիտնալ թէ Քրիստոսի միացած կը մնանք: Ով որ կ'ըսէ թէ Քրիստոսի միացած կը մնայ, պէտք է ապրի այնպէս, ինչպէս Քրիստոս ինք ապրեցաւ:

Սուրբ խաչի երեւման տօն

Հայաստանեայց եկեղեցին իր տօնացոյցին մէջ լայնօրէն տեղ տուած է Քրիստոնէութեան ազնուագոյն խորհրդանիշին՝ սուրբ խաչին:

Այս շարժական տօնը որ հայերը կը տօնեն Ջատիկէն շուրջ ամիս մը ետք կը վերաբերի այն դէպքին որ պատահած է 351 թուականին, Երուսաղէմի մէջ:

Ըստ աւանդութեան, Հոգեգալստեան տօնի առտուն կանուխ, լուսաւոր խաչ մը, երկարող ձիթենաց լեռէն մինչեւ Գողգոթայ, կը յայտնուի երկնքին մէջ: Փառաւոր խաչը երկնքին մէջ այնքան երկար կը յայտնուի որ տեսանելի կը դառնայ Երուսաղէմի ամբողջ ժողովուրդին կողմէ, ու մարդիկ հմայուած անմիջապէս եկեղեցի կը փութան փառք ու գոհունակութիւն յայտնելու Աստուծոյ:

Ժողովուրդը այնուհետեւ առիթը կ'անմահացնէ ու տօնելի օրուան մը կը վերածէ:

Ինչպէ՞ս կը կոչուին խաչի մը հինգ մասերը...

Կեդրոնը կը կոչուի Ակն

Կեդրոնէն վեր երկարող բաժինը՝ Թագ

Կեդրոնէն վար մնացող բաժինը՝ Բուն

Իսկ երկու կողմերը կը գտնուին աջ եւ ձախ թելերը

Գիտէի՞ր թէ...

Եկեղեցիէն ներս գործածուող Խաչերը ընդհանրապէս արծաթէ են կամ պղինձէ կ'ըլլան, որպէսզի տոկուն եւ դիմացկուն ըլլան: Ամէն խաչ որ եկեղեցոյ մէջ պիտի գործածուի պէտք է որ օրհնուի իր հինգ մասերէն...



Սուրբ Սեղանի խաչ, 19-րդ դար, Ախալցխա

Անցեալը անցած չէ Ուխտագնացութիւն ի Տէր Զօր

Գարեգին Բ. Կաթողիկոս

Այսօր, մէկուկէս միլիոն մեր նահատակները երկինքէն կը նային մեզի եւ այժմ կը վկայեն մե՛ր մասին: Արժանի՞ ենք իրենց նայուածքին մէջ ծաղկելիք ժպիտին, որ երկնային դատաստանի նախանշոյլը ունի իր մէջ: Դարձեալ նայինք մեր շուրջը.- միութեան, ընկերային, կենցաղային պայմաններու բարելաւումը զուգընթաց կը քալէ՞ մեր հոգեկան ապրումներուն, քրիստոնէական հաւատքին, մարդկային եւ ազգային արժանիքներու եւ արժէքներու նուիրումին, սիրոյ եւ զոհողութեան կամքին, պատրաստակամ յանձնառութեան կեցուածքին: Տառապանքի, թշուառութեան, անօգնականութեան, անձկութեան, աննկարագրելիօրէն դժխեմ պայմաններու տակ անոնք տուին իրենց վկայութիւնը: Չմոռնանք Տէր Զօրն ու Տէր Զօրանման բոլոր դժոխակեաց պայմանները...: Մենք այսօր, աշխարհի չորս ծագերուն վրայ, համեմատականօրէն այնքան դիւրակեաց պայմաններու շրջագծին մէջ երբ կ'ապրինք փաստօրէն, ի՞նչ ձեւով կը վկայենք մեր քրիստոնէական հաւատքին ու ազգային պատկանելիութեան մասին: Աւետարանի սկզբունքները եւ հայոց պատմութեան յաղթակերտ գաղափարները եւ զանոնք կեանքի վերածող անձնամատոյց ինքնատուչութեան ոգին ի՞նչ տարողութեամբ ներկայ են մեր այսօրուան կեանքին մէջ: Քանի այսպէս «վկաներու մեծ

բազմութիւն մը ունինք մեր շուրջը», պէտք է մէկ կողմ թողուլ, մեր կեանքէն դուրս վաճել ինքնագոհ, ինքնաբաւ «հպարտութեան» ոգին եւ բոլոր այն սայթաքումները, մեղքերը, որոնք մեզ կը հեռացնեն վկայութեան ստեղծագործ սկզբունքներէն, կենդանի նահատակութեան լուսահայեաց ճամբաներէն, որոնց հորիզոններուն վրայ միայն կը պայծառագործուի յարութեան տեսիլքը: Հաւատքի «Զօրագլուխ»ին նայելով՝ մենք պատրաստ պէտք է ըլլանք խա՛չը շալկելու, որովհետեւ խաչը շալկել չգիտցող մարդուն ուսերուն վրայ մեղքին ընկճող բեռն է որ կապարի մամն կը ծանրանայ: Խաչակրութեան, զոհողութեան յանձնառումին մէջ պատիւ կայ, այսինքն՝ «արհամարհանքը ամօթ»ին: Խաչը իր ուսին վրայ կամաւորապէս վերցնող անձը սիրոյ ուղիք մըն է մարդկային կեանքին մէջ: Խաչին մէջ չարչարանք, ամօթ տեսնող անձը, կեանքի գնացքին իսկ մէջ անշարժ գերեզման մըն է...



**Տէր Զօրի Սուրբ Նահատակաց եկեղեցւոյ
«Անձանօթ զինուոր»-ի խորհուրդը
մարմնացնող անմար կրակը**

Վերջին մարգարեն՝ Յովհաննէս Մկրտիչ

Հայաստանեայց եկեղեցին Յովհաննէս Մկրտիչի նուիրում չորս տօներ ունի որոնցմէ երկուքն են անոր ծնունդը եւ գլխատման յիշատակը: Այս տարի, Ապրիլ 2-ին կը զուգադիպի անոր գլխատման յիշատակութիւնը: Այս տօնը շարժական տօն մըն է որովհետեւ կը ճշդուի ըստ Զատիկուան թուականին: Ան կը զուգադիպի Կրկնազատիկին հետ, այսինքն Զատիկը յաջորդող Կիրակի օրը նախորդող շաբաթ օրուան հետ:

Յովհաննէս Մկրտիչ նաեւ ծանօթ է Յովհաննէս Կարապետ անուան տակ: Ան Մկրտիչ կոչուած է Յորդանան գետին մէջ թէ՛ Յիսուս եւ թէ՛ իր քարոզչութեան հետեւող այլ անհատներ մկրտելուն համար, իսկ Կարապետ, որ մը նշանակէ առաջնեկ, Անոր յայտնուելէն առաջ իսկ, Քրիստոսի գործունէութիւնը նախապատրաստած ըլլալուն համար:

«Ահա պատգամաբերս քու առջեւդ պիտի դրկեմ որ քեզի համար ճամբայ պատրաստէ»: Հին կտակարանի մէջ գտնուող այս մարգարէութիւնը կ'ակնարկէ Յովհաննէս Մկրտիչի, որ պիտի պատրաստէր ճամբան Յիսուսի քարոզչութեան եւ գործունէութեան առջեւ:

Յովհաննէս Մկրտիչի գործունէութիւնն ու քարոզչութիւնները շատ ազդու եղած են հասարակութեան վրայ: Անոր ամենամեծ պատգամը եղած է ապաշխարութիւնը, որմով համոզած է մարդոց արժանի դառնալ երկնքի արքայութեան: Այս պատգամը ընդունող բոլոր անձերը մկրտեց ան, մկրտութիւնը ապաշխարութեան շօշափելի արտայայտութիւն մը նկատելով: Նոյն այդ գետին մէջ երբ ան մկրտեց Քրիստոս, Սուրբ Հոգին աղանիի մը կերպարանքով կը յայտնուի Յիսուսի գլխուն վերեւ եւ մկրտիչը կը տեսնէ թէ Ան էր սպասուած «Մեսիան»:



Յովհաննէս Մկրտիչ զաւակն էր Զաքարիայի եւ Մարիամ Աստուածածնի ազգական՝ Եղիսաբէթին: Ան Յիսուսէն վեց ամիս մեծ է միայն: Մկրտիչին ծնունդը, անունն ու գործունէութիւնը յայտնած է Գաբրիէլ հրեշտակը իր հօր, Զաքարիային, երբ ան կը սպասաւորէր տաճարի սեղանին առջեւ:

«Զաքարիա, մի՛ վախճար, Աստուած լսեց աղօթքդ: Կինդ՝ Եղիսաբէթը մանչ զաւակ մը պիտի ծնի եւ զայն Յովհաննէս պիտի կոչես: Անիկա քեզի ուրախութեան եւ ցնծութեան պատճառ պիտի ըլլայ եւ շատեր անոր ծնունդով պիտի ուրախանան: Անիկա մեծ պիտի ըլլայ Տիրոջ աչքին: Գինի եւ օղի պիտի չխմէ: Անիկա տակաւին չծնած՝ Սուրբ Հոգիով պիտի լեցուի եւ Իսրայէլի ժողովուրդէն շատեր իրենց Տէր Աստուծոյն պիտի դարձնէ: Անիկա Տիրոջ առջեւէն պիտի քալէ՝ Եղիայի հոգիով եւ զօրութեամբ լեցուած, որպէսզի հայրերը իրենց որդիներուն հետ հաշտեցնէ եւ անհնազանդները առաջնորդէ արդարներու իմաստութեան, եւ այսպիսով Տիրոջ գալուստին նախապատրաստուած ժողովուրդ մը պատրաստէ:»


Ծարական Ապրիլեան Գահատակներուն

1989-ի Ապրիլ 29 թուականին, օրուան Ամենայն Հայոց կաթողիկոս Տ.Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետ, միասնական հաղորդագրութեամբ մը յայտարարեցին թէ հայկական ցեղասպանութեան 75-ամեակին առիթով պիտի կատարուէին նախապատրաստական աշխատանքներ սրբադասումը կատարելու համար մեր 1.5 միլիոն Գահատակներուն:

Սրբադասումը ըսելով կը հասկցուի մեր Գահատակներուն «ստորք» հռչակումը եւ եկեղեցական տօներու կարգին անցնիլը:

Այս առիթով, երջանկայիշատակ Զարեհ Եպիսկոպոս Ազնաւորեան գրեց «Ծարական Ապրիլեան Նահատակաց» խորագրով շարական մը որ պիտի օգտագործուէր սրբադասման յաջորդող եկեղեցիէն ներս կատարուելիք տօնակատարութեանց ընթացքին:

«Մաշտոցի Արձագանգ»-ի Ապրիլի թիւով կ'արտատպենք սրբազանին շարականէն հատուած մը. հատուածի աշխարհաբար թարգմանութիւնը կատարեց եկեղեցւոյ հովիւ՝ Տէր Գառնիկ քհնյ. Գոյունեան:



Այսօր բերկրեալ Եկեղեցի Հայաստանեայ՝
տօնէ հանդիսի ըզիշատակ նորոց վկայից,
որք մատնեցին զանձինս իրեանց
Գահատակութեամբ առաքինութեան՝
վասըն հաւատոց եւ հայրենեաց.
աղօթիք սոցա, Տէ՛ր, պահեա՛ զմեզ:

Այսօր տիեզերք սոսկացեալ՝ հիացմամբ տեսին
նոր Յորդանան արեամբ ձեւացեալ,
եւ ի վերուստ երկինք պատառեալ,
ուստի Հօրն ձայն վըկայեալ՝
«Դոքա որդիք եմ իմ ընտրեալ».
աղօթիք սոցա, Տէ՛ր, օրհնեա՛ զմեզ:

Այսօր խաչտաչ նշխարեալ երկիրն մեր Հայաստան
ընդ խմբումըն տօնի Նահատակցս Ապրիլեան,
զի սերմանեալ նշխարըք սոցա ընդ ամենայն
կողմանս իւր՝
նորոյ գարնան կենդանութեան
տան աւետիս յուսոյ լըրման.
աղօթիք սոցա, Տէ՛ր, կանգեա՛ ըզսա:

Այսօր հայաստանեայց եկեղեցին մեծ ուրախութեամբ
եւ հանդիսատրապէս կը տօնէ յիշատակը նոր վկաներուն
որոնք իրենց անձերը առաքինութեամբ
Գահատակութեան մատնեցին՝
վասն հաւատքի եւ հայրենիքի.
ասոնց աղօթքներով, Տէ՛ր, պահե՛ մեզ:

Այսօր տիեզերքը սոսկաց եւ հիացումով տեսաւ
արիւնով ձեւ առած նոր Յորդանանը,
իսկ վերէն՝ երկինքը պատռուեցաւ
եւ հոնկէ Հօր ձայնը վկայեց՝
«Ատոնք իմ ընտրեալ որդիներն են».
ասոնց աղօթքներով, Տէ՛ր, օրհնե՛ մեզ:

Այսօր կը խաչտաչ մեր նշխարացած երկիրը՝ Հայաստան
Ապրիլեան Գահատակներու տօնախմբութեան առիթով,
իր բոլոր կողմերուն վրայ ասոնց նշխարներու
սերմանումով
կենսատրոփ նոր գարնան՝
կու տան աւետիսը յոյսի լրումին.
ասոնց աղօթքներով, Տէ՛ր, կանգուն պահե՛
(Հայաստան երկիրը):

Ծանոթացում Հայաստանի հետ Ծիրակի մարզ



Ծիրակի մարզը կը գտնուի Հայաստանի հանրապետութեան Հիւսիս-Արեւմտեան կողմը: Մարզի ամենէն աւելի ծանօթ քաղաքն է Կիւմրին որ մեր բոլորին ծանօթ է յատկապէս Դեկտեմբեր 1988-ի երկրաշարժին առթիւ իր կրած հսկայական վնասներով:

Կիւմրի քաղաքը դարերու ընթացքին բազմաթիւ անգամ անուն փոխած է: Այսպէս, հին ատեն ան կը կոչուէր Կումայրի, ապա Կիւմրի, յետոյ Ալեքսանտրապոլ, Լենինական եւ 1990-էն սկսեալ՝ դարձեալ Կիւմրի:

Կիւմրի բառը ինքնին ծագում առած է հնդեւրոպական «Կոմէ» բառէն որ կը նշանակէ «բնակավայր»:



**1988-ի երկրաշարժի առթիւ,
աշխարհաճիւղի երգիչ Շարլ Ազնաւուրի
հասցուցած մեծ օգնութեան առ ի
գնահատանք, Ազնաւուր հրապարակը՝
Կիւմրիի մէջ**



Կիւմրին ճարտարապետական յուշարձաններով հարուստ քաղաք մըն է։ Անոր տեսարժան վայրերէն են Մայր Հայաստան յուշարձանը, ինչպէս նաեւ Աւետիք Իսահակեանի պրոցէ յուշարձանը։

Ծիրակի մարզը ծննդավայրն է հայ գրականութեան եւ արուեստի հանրածանօթ բազմաթիւ դէմքերու։ Այսպէս, Ծիրակի մարզէն են բանաստեղծներ Յովհաննէս Ծիրազ եւ Աւետիք Իսահակեան, թուաբանագէտ եւ աստղագէտ Անանիա Ծիրակացի, երաժիշտ Արմէն Տիգրանեան որուն «Անուշ» օփերան առաջին անգամ հանրութեան ներկայացուեցաւ Կիւմրիի մէջ, 1912-ին։



Տեսարան մը Կիւմրիի թաղերէն

Նուէր Ափիւղքի հայութեանը

Մի ծաղիկ չի տայ օտար հողը քեզ,
Բայց թէկուզ ծաղկես օտար դաշտերին,
Թէ հայրենիքում մի գաւաթ չունես,
Գինիդ արցունք է քո էլ շուրթերին։

Օտար աշխարհը մի հիւղ չի տայ քեզ,
Բայց թէ պալատ էլ տայ արեւի տակ,
Թէ հայրենիքում մի խրճիթ չունես,
Մոռացուած որբ ես օտար լուսնի տակ։

Բիր լեզու գիտես օտար աշխարհում,
Բայց թէ մայրենիդ խորթ է քեզ համար,
Հուր լեզուդ պոկած հաւք ես վանդակում,
յաւէտ կորած ես Հայրենեաց համար...

Քո հայրենիքը Հայաստանն է նոր,
Ուր ամուլ ժայռն էլ ծաղիկ է ծնում,
Ուր թաղուած Մեսրոպ Մաշտոցն ամէն օր
ինձնով քո բախտի մասին է հարցնում...

Յովհաննէս Ծիրազ

Աստուծոյ սէրը մարդոց հանդէպ

Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց
աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին
որդին տուաւ, որպէսզի անոր
հաւատացողը չկորսուի, այլ
յաւիտեանական կեանք ունենայ:

Յովհաննէս 3:16

Շրջանակի մէջ առ վերոյիշեալ համարին բոլոր
բառերը որոնք զետեղուած են այս ցանցին
վրայ, տարբեր տարբեր ուղղութիւններով:

Ա	Ն	Ր	Ա	Է	Ս	Ղ	Ի			Ֆ
Ա	Ա	Ր		Ա	Ջ	Ա	Ք	Ա	Ա	Ա
Կ	Ա	Զ	Ն	Ր	Ղ	Ի	Ա		Յ	Լ
Ա	Ս	Ա	Խ	Վ	Ք	Ա	Ա	Ե	Կ	Ա
Ա	Ս	Ի	Ն	Ա	Ֆ		Լ	Ն	Ն	Ս
Ե	Ն	Ս	Ր	Ր	Ր	Ե		Լ	Ր	Ա
Ս	Լ	Կ		Ե	Յ	Ֆ	Ս	Ա	Ս	Գ
Ի	Ա		Ր	Ա	Գ		Ր	Ե	Ն	Ն
Լ	Լ		Ի		Ա	Ջ	Լ	Ա	Լ	Ղ
Ա		Մ	Ի	Ա	Ծ	Ի	Ա	Ա	Ի	Ր
Ջ	Ա	Ս	Ս	Ն	Լ	Ա	Ծ	Ջ		

Պահուած բառ

Ա	Ա	Ֆ	Ա	Ս	Ա	Կ	Ե	Ա
Ղ	Ա	Ա	Ղ	Ե	Լ	Ն	Ե	Ջ
Կ	Ր	Գ	Յ	Կ	Ա	Լ	Ր	Ս
Ա	Ի	Ռ	Ի	Ա	Ղ	Ս	Ի	Կ
Ր	Լ	Ա	Կ	Ր	Ա	Մ	Ս	Ա
Ջ	Ն	Լ	Զ	Ա	Ր	Ճ	Ա	Ա
Ն	Ս	Կ	Ն	Ր	Ս	Ե	Ս	Ք
Ջ	Ա	Ա	Լ	Ի	Զ	Ր	Ա	Մ
Ս	Ա	Ղ	Ա	Լ	Ա	Կ	Ր	Է
Ի	Ա	Մ	Ա	Ա	Ր	Ն	Ղ	Կ

Ամանը
Անի
Ապրիլ
աղջիկ
աւագ
աւիշ
այտ
երիտասարդ
զաւակ
կին
կուտ
կան
կրամ
կար
հաց
ձեր
մէկ
յոյս
յուշարձան
նահատակ
ոսկոր
պզտիկ
սան
տեսք

Պահուած բառը 5 գիր

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն Վերջին ճախանաշը



Անունս Պետրոս է. Կ'ուզեմ ձեզի պատմել իմ վերջին ձկնորսութեան պատմութիւնս: Ծատ կը սիրեմ ձուկ որսալ: Երկար ատեն ձկնորսութեամբ ապրեցայ: Վերջը հանդիպեցայ Յիսուսին:

Օր մը, Յիսուսի Յարութիւն առնելէն վերջ ձկնորսութեան գացի, Յիսուսի քանի մը այլ առաքեալներուն հետ: Առաքեալները ուռկանով կ'որսային: Ամբողջ գիշերը որսացինք սակայն ոչինչ կրցանք բռնել: Երբ արեւը սկսաւ փայլիլ, տակաւին ոչինչ բռնած էինք:

Այն ատեն լճափին կանգնած մարդ մը մեր հետ խօսելով ըսաւ. «Տղաք, ուտելու բան չունի՞ք», «չունինք» պատասխանեցինք: «Ուռկանը ճաւաղին աջ կողմը նետեցէք եւ հոն ձուկ կը գտնէք» ըսաւ ան:





Մտիկ ըրինք իրեն եւ ուռկանը նետեցինք նաւակին աջ կողմը: Հազիւ ուռկանը ջուր նետեցինք, 150 ձուկէ աւելի լեցուեցան մէջը: Այնչափ շատ ձուկ կար որ չկրցանք ուռկանը դուրս քաշել: Այն ժամանակ Յովհաննէս ըսաւ ինձի «Տէրն է»:

Երբ այդ լսեցի անմիջապէս նետուեցայ ջուր ու սկսայ դէպի ցամաք լողալ: Յիսուս արդէն կրակ մը վարած էր, հաց եւ ձուկ կ'եփէր: Երբ առաքեալները նաւակով հասան լճափ, անոնց օգնեցի եւ ձուկերով լեցուն ուռկանը քաշեցի ցամաք:

«Եկէք եւ նախաճաշեցէք» ըսաւ Յիսուս: Նախաճաշէն վերջ Յիսուսի ըսաւ ինձի,


«Պետրոս, Զիս ասոնցմէ աւելի կը սիրե՞ս»:

«Այո Տէր» պատասխանեցի «դուն գիտես որ շատ կը սիրեմ Քեզ»:

**Մտածէ՛
ասոր
մասին**

Երբ ցուցմունքներ կը տրուին քեզի, կը
հնազանդի՞ս առանց հարցնելու:

Պետրոս այդպէս ըրաւ, ան չէր ճանչնար
ցուցմունքները տուող Մարդը, սակայն ան շատ
ուրախացաւ երբ այդչափ ձուկ բռնեց: Դուն ալ
ուրախ պիտի ըլլաս երբ հնազանդիս Յիսուսի:



«Արածէ՛ գառնուկներս » ըսաւ Ան:

Յիսուս դարձեալ հարցուց .

«Պետրոս, Զիս կը սիրե՞ս»:

«Այո Տէր» պատասխանեցի «դուն գիտես որ շատ կը սիրեմ Քեզ»:

«Արածէ՛ ոչխարներս» ըսաւ Ան:

Յիսուս տակաւին չէր վերջացուցած. «Պետրոս» ըսաւ ան

դարձեալ, «Զիս կը սիրե՞ս»:

Նեղացուցիչ էր որ Յիսուս երեք

անգամ կը հարցնէ ինծի, «Տէր,

դուն ամէն բան գիտես»

պատասխանեցի, «դուն գիտես որ

շատ կը սիրեմ Քեզ»:

«Արածէ՛ իմ ոչխարներս» աւելցուց Ան:

Երեք անգամ ուրացեր էի

Յիսուսը. Հիմա երեք անգամ

կրկնեցի որ Զինք կը սիրէի:

Կեանքիս մնացած օրերը

անցուցի ժողովուրդին Յիսուսի

մասին խօսելով:

Յիսուս առաքեալներուն

երեւցաւ երկու ուրիշ

անգամներ եւս, այս մասին

կրնաս կարդալ Յովհաննէսի

Աւետարանին 20:19 եւ 20:26

բաժիններուն մէջ:

Անունո՛վդ ապրիս...

Տարուան այն ամիսը որ ընդհանրապես հայ ազգին համար կը յատկանշուի ապրիլեան եղեռնի յիշատակումներով, տարօրինակ զուգադիպությամբ մը եւ հակասականօրէն «Ապրիլ» անունը կը կրէ:

Հայ ժողովուրդը այս ոչնչացման շարժումէն վերապրած ըլլալու շատ մը փաստեր կրնայ տալ: Այդ փաստերէն մէկն է հայկական ազգանուններու եւ առական թէ իգական անուններու գործածութիւնը երբ հայ ընտանիքներ զաւակներ կ'ունենան: Հայկական անունները ունին իմաստ եւ տարրողութիւն: Ապրիլ ամսուան թիով ահա կը ներկայացնենք հայկական անուններու մասին էջ մը:

Անուններ հայկական...

քիչ թէ շատ գործածական

Վանենի	Սէթ
Փարելի	Շաւասպ
Փերուզակ	Նորազն
Վառվառէ	Մլենի
Սիրիկ	Մժէն
Քաջազ	Մերուժան
Օշին	Պարետ
Ֆրիկ	Պատրիկ
Սեւադա	Յովնաթան

Կար ժամանակ, դարեր առաջ,
Մեր անուններն էին աղուոր.
Մեր իշխաններն հպարտ ու քաջ,
Մեր ասպետներն հրոշակաւոր
Կը կրէին խորհրդաւոր
Տոհմանուններ նաչիրական...

Սարգիս Սահակեան

Հետեւեալ անուններէն իւրաքանչիւրին համար գտիր համապատասխանող իմաստը


Անուններ.-

Հուրի, Մարտիկ, Պերճ, Վահան, Յարութիւն, Աւետիս, Շանթ, Ասպետ, Զեփիւն, Ժիրայր


Իմաստներ.-

բարի լուր, ազնուական ձիաւոր, աշխատասէր մարդ, զինուոր, փառաւոր, թեթեւ հով, վերակենդանութիւն, կրակ, պաշտպանութեան զրահ, կայծակ


Գծագրէ հետեւեալ անունները



Սօսի



Նիզակ



Հրայր

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Յիսուս չորս Ձկնորսներ կը կանչէ

Ամբողջացո՛ւր ըստ Մարկոսի Աւետարան 1.14-20

Աւետարանը, հետեւեցան, Յովհաննէսը, բանտարկութենէն, ապաշխարեցէք, ձկնորսներ, մարդու, անմիջապէս, ուռկանները

Յովհաննէսի ----- ետք, Յիսուս Գալիլիա եկաւ:
Անկա Աստուծոյ ----- կը քարոզէր, ըսելով.

- Փրկութեան ժամանակը հասած է եւ եկած՝ Աստուծոյ Արքայութիւնը.
----- եւ հաւատացէ՛ք Աւետարանին:

Յիսուս երբ Գալիլիայի լիճին եզերքէն կ'անցներ, տեսաւ երկու
-----՝ Սիմոնը եւ անոր եղբայրը՝ Անդրէասը, որոնք ուռկանը
ջուրը նետած՝ ձուկ կ'որսային: Յիսուս ըսաւ անոնց.

- Հետեւեցէ՛ք ինծի, եւ ես ձեզի ----- որսորդ պիտի ընեմ:

Անոնք ----- ձգեցին ուռկանները եւ հետեւեցան Յիսուսի:

Քիչ մը առաջ երթալով, Յիսուս տեսաւ Ջեբեդէոսի որդիները՝ Յակոբոսը
եւ եղբայրը՝ -----, որոնք նաւակին մէջ էին եւ իրենց
----- կարգի կը դնէին: Իսկոյն զանոնք ալ կանչեց: Անոնք
իրենց հայրը՝ Ջեբեդէոսը վարձականներուն հետ ձգեցին նաւակին մէջ եւ
----- Յիսուսի:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն**

- | | |
|--|--|
| <p>1. Յիսուսի յարութենէն առաջ Կիրակի օրերը ի՞նչ կը կոչուէին:
-----շաբթի</p> | <p>6. Այս տարի Մեծ Եղեռնին քանի՞երրորդ ամեակն է:
ա. 80
բ. 90
գ. 75
դ. 25</p> |
| <p>2. Պետրոս առաքեալ քանի՞ անգամ ուրացաւ Յիսուսը:

ա. Հինգ
բ. Չորս
գ. Երեք
դ. Երկու</p> | <p>7. Ո՞վ է վերջին մարգարէն:
ա.- Յովհաննէս Մկրտիչ
բ.- Մովսէս
գ.- Եղիա
դ.- Աբրահամ</p> |
| <p>3. Յիսուսը որո՞ւ հարցուց եթէ զինք կը սիրէր:

ա. Յակոբ
բ. Պետրոս
գ. Պօղոս
դ. Յուդա</p> | <p>8. Ի՞նչ է Յովհաննէս Մկրտիչի հօրը անունը:
ա.- Զաքարիա
բ.- Մաղաքիա
գ.- Գրիգոր
դ.- Պօղոս</p> |
| <p>4. Ի՞նչ կը կոչուի Զատիկին յաջորդող Կիրակին:

ա. Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ
բ. Կանաչ Կիրակի
գ. Կարմիր Կիրակի
դ. Աշխարհամատրան</p> | <p>9. Ի՞նչ է Յովհաննէս Մկրտիչի մօրը անունը:
ա.- Մարիամ
բ.- Եղիսաբէթ
գ.- Մարթա
դ.- Հռութ</p> |
| <p>5. Ո՞ր տարին տեղի ունեցաւ Մեծ Եղեռնը:

ա. 1915
բ. 1918
գ. 1988
դ. 1991</p> | <p>10. Ի՞նչ է Նոր Կտակարանի վերջին բառը:
ա.- Ամէն
բ.- Յիսուս
գ.- Երկինք
դ.- Երկիր</p> |

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր քաղաքն է հայաստանի Ծիրակ
մարզի կեդրոնը:

ա.- Կիւմրի

բ.- Ախուրեան

գ.- Հրազդան

դ.- Սեւան

մատուցանեց՝ մեր մեղքերը սրբելու
համար.

5.- Ինչպէ՞ս կը կոչուին խաչի մը հինգ
մասերը:

2.- Ո՞րն է շիտակ շարքը Զատկուան
յաջորդող Կիրակիներուն:

ա.- Նոր Կիրակի, Կարմիր Կիրակի,
Կանաչ Կիրակի

բ.- Կանաչ Կիրակի, Նոր Կիրակի,
Կարմիր Կիրակի

գ.- Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի,
Նոր Կիրակի

դ.- Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ,
Կանաչ Կիրակի կամ

աշխարհամատրան, Կարմիր Կիրակի

6.- Յիսուս որո՞ւ կողմէ մկրտուեցաւ:

7.- Ո՞վ գրեց «Ծարական Ապրիլեան
Նահատակաց» 1990 ին:

3.- Յովհաննէս Առաքեալ քանի՞
ընդհանրական նամակներ գրեց:

ա. Հինգ

բ. Զորս

գ. Երեք

դ. Երկու

8.- Ո՞վ Յիսուսէն առաջ ղրկուեցաւ
որպէսզի Յիսուսին «ճամբան
պատրաստէ»:

ա.- Առաքեալները

բ.- Եսայի մարգարէն

գ.- Յովհաննէս Մկրտիչ

դ.- Դանիէլ մարգարէն

4.- Ամբողջացուր ըստ Յովհաննէս
Առաքեալի Առաջին ընդհանրական
նամակին:

Իսկ եթէ ոեւէ մէկը մեղքի մէջ իյնայ,
Հօրը քով բարեխօս ունինք միակ
Արդարը՝

-----:

Անիկա՛ է մեր մեղքերը քաւող

-----, որ ինքզինք

9.- 7րդ դարու ո՞ր հայ հանրածանօթ
թուաբանագէտ եւ աստղագէտը ծնած է
Հայաստանի Ծիրակ մարզին մէջ:

----- Ծիրակացի

10.- Յիսուս իր յարութենէն քանի՞ օր
ետք համբարձաւ:

Յիսուսի համբարձումը շաբթուան ո՞ր
օրը կըլլայ:

-----շաբթի

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1.- Կիւմրի քաղաքը Հայաստանի ո՞ր մարզին կեդրոնն է:

ա.- Արարատեան

բ.- Գեղարքունիք

գ.- Արմաւիր

դ.- Ծիրակ

ա.- -----

բ.- -----

գ.- -----

դ.- -----

2.- Ո՞րն է շիտակ շարքը Ջատկուան յաջորդող Կիրակներուն:

ա.- Նոր Կիրակի, Կարմիր Կիրակի, Կանաչ Կիրակի

բ.- Կանաչ Կիրակի, Նոր Կիրակի, Կարմիր Կիրակի

գ.- Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի, Նոր Կիրակի

դ.- Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ, Կանաչ Կիրակի կամ աշխարհամատրան, Կարմիր Կիրակի

7.- Ո՞վ գրեց Նոր Կտակարանի 5րդ գիրքը:

Որ Աւետարանին շարունակութիւնը կը համարուի:

3.- Նոր Կտակարանի 27 գիրքերէն քանի՞ հատ գրուեցան Յովհաննէս Առաքեալի կողմէ:

ա. Հինգ

բ. Չորս

գ. Երեք

դ. Երկու

8.- Ճշգրիտ յաջորդականութեամբ թուէ Յիսուսի 4 Առաքեալները որոնք Ընդհանրական Նամակներ գրած են, «» մէջ նշելով նամակներուն թիւը

ա.-

բ.-

գ.-

դ.-

4.- Նոր Կտակարանի ո՞ր գիրքը բոլորէն վերջը գրուեցաւ:

5.- Նոր Կտակարանի 27 գիրքերէն 14ը գրուեցան Պօղոս Առաքեալի կողմէ: Թուէ ասոնցմէ այն 4ը որոնք ուղուած են անձերու ճշգրիտ յաջորդականութեամբ:

9.- Յիսուս որո՞ւ ըսաւ «Արածէ իմ ոչխարներս»:

10.- Ո՞ւր գրուած է «Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ:»

-----3.16

Մարտ ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ

Պատասխաններ

Մանկապարտէզի անկիւն

Մարիամ, Մարիամը, երկրաշարժ,
հրեշտակը, քարը, նստաւ, սարսափեցան, մի՛
վախնաք, խաշուած, յարութիւն, ըսէք,
առաջ, տեսնէք

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. խոնարհութեան
2. ա. Սուրբ Հաղորդութիւնը
3. ք. Պետրոս
4. գ. կ'աղօթէր
5. Յարութիւնը, հաւատալ, ապրի
6. Երկնաւոր, Ճշմարիտ, սիրելի, ոչխարին,
յերկինս
7. ք. բազմաթիւ ժողովուրդներու հայր
8. դ. Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ
սրտովդ, ամբողջ հոգիովդ, եւ ամբողջ
մտքովդ: Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս:
9. ա. Կիրակի մարտ 27
10. ք. Մատթէոս, մարկոս, Դուկաս,
Յովհաննէս

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ա. Յովհաննէս եւ մայրը Մարիամ
2. ք. եւ դ. Ծաղկազարդի յաջորդող շաբաթը
կամ Ս. Զատիկին յաջորդող շաբաթը
3. Արարչագործութեան, Տասը Կուսանաց,
Մատնութեան
4. Վերջին ընթրիք եւ ոտնլուայ, Յիսուսի
Չարչարանքներուն, խաչելութեան եւ թաղման
5. Մեռելոց
6. ա. վեցերորդը
7. գ. վեցերորդը
8. ք. Բժշկութիւն
9. գ. Հաւատով Խոստովանիմ
10. Հրաշալի, Աստուած, Տէր, սէր,
խնդրութիւն

Երկրորդականի անկիւն

1. Ծաղկազարդ, Գալստեան, Դատաւորին
2. մեռնին, կենդանանան
3. յարատեւութիւն
4. Երեքշաբթի

Մասնակցողներ

5. Յարութիւն առաւ, այստեղ չէ
6. Մխիթար Գոշը
7. Արագած
8. Չորեքշաբթի
9. Հինգշաբթի
10. Հինգշաբթի
11. Հինգշաբթի
12. Հինգշաբթի
13. Ուրբաթ
14. Ուրբաթ
15. Մէկշաբթի

Մանկապարտէզ

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան,
Յուլեր Անթեպեան, Ճեսիքա
Մաթէոսեան

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

Արագ Գաբթանճեան, Մհեր
Մաթէոսեան

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Դալար
Գաբթանճեան, Ալեք Կարապետեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գօգօ Մատթէոսեան, Հրայր
Մատթէոսեան, Արի Միրզայեան,
Ճօրճ Արմաղանեան, Արի Քէօսէյեան,
Պետիկ Նազարեան:

Երկրորդականի անկիւն

Կարօ Կարապետեան, Յովիկ
Կարապետեան, Փօլ Գիզիրեան:

Ապրիլ 24, 1915 - 2005



**Ոգեկոչենք Մեծ Եղեռնի ճախատակներուն
անմահ յիշատակը նաեւ՝**

- Ապրելով **Հայակնիք** կեանք մը,
 - Վառ պահելով Հայաստանեայց եկեղեցւոյ
ուօներն ու ազգային ամանդութիւնները,
 - Լսելով, մտիկ ընելով ու երգելով Հայանուագ
շարականներն ու երգերը,
 - Ամուր կառչած մնալով մեր Հայավայել բարի
բարքերուն ու սովորութիւններուն,
 - Կարդալով ու կեանքի վերածելով մեր
Հայագրեալ Աստուածաշունչը
 - եւ մանաւանդ **ՍԻՐԵԼՈՎ** Հայը
- Այս է մեր Մեծ Եղեռնի
Նախատակներուն պատուիրանը.
Սիրել Հայը:**

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝ Շաղիկ Պոյաճեան
Աշխատակիցներ՝ Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան,
Գարուիկ Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ
Թորոս Պապիկեան:

«Ծաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Ծաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան
Ծաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

*Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.-
Ոսուցիչներ՝ Վերժին Գէպթանճեան, Սալբի Բակլեան, Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Վերա
Կարապետեան, Գարուիկ Գէպթանճեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան,
Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Շաղիկ Պոյաճեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ
Սուրբ Յակոբ, Մոնթրէալ

Ամսակ

Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի
1980-2005

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 9

Մայիս 2005

Կրօնաբարոյական

ողջ օրինակ Մայիս ամսուան ընթացքին կը յիշատակուի Մայրերու տօնը: Նաեւ նոյն այս ամիսը ամբողջութեամբ իբր Աստուածածնի ամիս ճանչցուած է:

Էջ 2

Աստուած Սէր է Ա.

Յովհաննէսի 4.7-21 Սիրելիներ, սիրե՛նք իրար, Որովհետեւ սէրը Աստուծոյ պարգեւն է. ուստի ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է եւ զԱստուած կը ճանչնայ:

Էջ 3

Համբարձում եւ

Հ ո գ ե գ ա լ ու ս տ Համբարձման եւ հոգեգալստեան տօները թէեւ երկու տարբեր տօներ են, իրարմէ տասը օր հեռաւորութեամբ, սակայն կը մնան իրարու սերտօրէն կապուած երկու դրուագներ:

Էջ 4

Համբարձման օրուան

Վիճակը Համբարձման օրուան աւանդութիւններէն ամենէն աւելի ծանօթն ու ընդհանրացածը Վիճակի խաղն է:... Համբարձման առթիւ շարադրուած բախտագուշական այս տողերը իրենց կարգին գրական ոճ մը ստեղծած են կարծես: Կարդա՛ անոնցմէ օրինակներ:

Էջ 5

Յովնաթանեաններ

Էջ 7

Ծանօթացում

Հայաստանի հետ՝

Լոռիի մարզ Լոռիի մարզը կը գտնուի հանրապետութեան հիւսիսը: Մարզին ամենէն աւելի ծանօթ յուշարձաններն են Օձունի տաճարը, ինչպէս նաեւ Հաղպատի եւ Սանահինի վանքերը:

Էջ 8,9

Էջմիածին

Հոն ուր իջաւ Աստուծոյ միածին Որդին

Էջմիածնի Մայր տաճարը բազմաթիւ անգամներ քանդուած ապա վերակառուցուած է: Կ'ըսուի թէ Մայր տաճարը կանգնած է նոյն այդ վայրին վրայ ուր կը գտնուէր Սանդարամետի մեհեանը:

Էջ 6,7

Աստուածաշունչի

մայրեր Աստուածաշունչի մէջ մայրերու հասցէին ակնարկները շատ են: Սուրբ Գիրքին մէջ մենք կը հանդիպինք մեծ թիւով մայրերու որոնցմէ մի քանին կը ներկայացնենք հոս:

Էջ 10

Կիրակնօրեայ Դպրոցի Հանդէս

Կիրակի՝ 12 Յունիս 2005

Կ. Ե. Ժամը 1:30 ին

Բասդրմաճեան Սրահ



Լոռիի մարզի Օձունի տաճարը

Աստուածաշունչը՝

պատմութեան փոքրիկներուն

Համբարձում՝ Յիսուս

աշակերտներէն կը

բաժնուի Քառասուն օրեր

անցած էին Յիսուսի յարութենէն,

այդ ժամանակամիջոցին Յիսուս

մեզի շատ բաներ ըսած էր

Աստուծոյ մասին, ան նաեւ

մեզի պատմած էր

պատահելիք դէպքերու

մասին: Ապա ժամանակը

եկաւ որ Յիսուս հեռանայ

մեզմէ:

Էջ 11,12,13

Պահուած բառ

Էջ 14

Ո՞րն է ճիշդ

պատասխանը

Մանկապարտէզի անկիւն

Էջ 15

Նախակրթարանի Ա. Բ.

Գ. դասարաններու անկիւն

Էջ 16

Նախակրթարանի Դ. Ե.

Ջ. դասարաններու անկիւն

Էջ 17

Երկրորդականի անկիւն

Էջ 18

Ապրիլ ամսուան

Պատասխաններ եւ

Մասնակցողներ

Էջ 19

Կարճ լուրեր

Կիրակնօրեայէն

Էջ 20

Մայիս 2005

Կիր․	ԲԶ․	ԳՆ 2․	ԴԶ․	ԵԶ․	Ուր․	ՇԲ․
1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22	23	24	25	26	27	28
29	30	31				

1	Զատնույց վեցերորդ կիրակի
5	Համբարձում
8	Երկրորդ Ծաղկազարդ
15	Հոգեգալուստ
22	Յիշատակ Եղիա մարգարեին
23	Ս․ Հռիփսիմեանք
24	Ս․ Գայիանեանք
28	Սուրբ Գրիգոր Լուսավորչի Եւն ի Վիրապէն
28	Հայաստանի Ա․ Հանրապետութեան Տարեդարձ
29	Տօն Սուրբ Էջմիածնի

Հոգեգալուստ



Քու բարի Հոգիդ զիս ուղիղ ճամբով թող
առաջնորդէ
Սաղմոս ԺՆԲ(143), 10

կամենալը կարենալ է

Կրօնաբարոյական ողջ օրինակ

Մայիս ամսուան ընթացքին կը յիշատակուի Մայրերու տօնը։ Նաեւ նոյն այս ամիսը ամբողջութեամբ իբր Աստուածածնի ամիս ճանչցուած է։ Այս երկու նշումները կու գան շեշտելու մայրութիւնը ընդհանրապէս եւ Քրիստոսի մօր յիշատակը յատկապէս։

Մայրերու դերը իրենց զաւակներու աճման եւ նկարագրի կերտման մէջ այլեւս կասկածի նիւթ չէ, անշուշտ երբ մայրը գիտակից է իր պարտականութեանց եւ իրեն վստահուած դժուար այս գործի տարողութեան։ Շատ կը խօսուի մայր-զաւակ առողջ փոխյարաբերութեան դրական ազդեցութեան մասին մանուկներու ֆիզիքական, մտային եւ հոգեկան աճման վրայ։ Այսպիսի դրական յարաբերութիւն մը նաեւ լաւագոյն ձեւը կրնայ ըլլալ մանուկներու մօտ քրիստոնէական դաստիարակութիւն եւ հոգեւոր արժէքներ գոյացնելու։

Ներկայ ընկերութիւնը ընդհանրապէս ընդունած է թէ մանուկներու հոգեւոր եւ կրօնական դաստիարակութիւնը պէտք է առաւել ձեւով վստահիլ ընտանիքին եւ ծնողներուն, որովհետեւ կրօնաբարոյական հասկացողութիւնները չափազանց ենթակայական են եւ կը վերաբերին իւրաքանչիւր ընտանիքի ըստ իր յատկութիւններուն։ Այս իսկ պատճառաւ, կարելի է շեշտել մօր մը դերը իր զաւակի կրօնաբարոյական դաստիարակութեան մէջ։ Եւ որովհետեւ բարոյական եւ կրօնական դաստիարակութիւնը առարկայ չէ, անոր ուսուցումը կարելի է կատարել միայն կենդանի օրինակ տալով, այսինքն կրօնա-բարոյական կեանք ապրելով, ընդունելով նոյն ատեն թէ կրօնաբարոյականի սահմանումը մեզմէ իւրաքանչիւրին մօտ տարբեր ձեւով կը կիրարկուի։

Այս բոլորը մեզի կը մղէ մտածելու թէ որքան կարեւոր է որ մենք՝ մայրերս, ըլլանք աստուածավախ, համեստ, հաւատացեալ, ուղղաբարոյ, սիրալիր որպէսզի մեր կենցաղով օրինակ դառնանք մեր երեխաներուն։ Պարտականութիւնը հսկայական է, եւ սպասուածը՝ ծանր։ Սակայն ծնողական փորձառութիւնը ընթացք մըն է, ու թէեւ կրօնաբարոյ օրինակ հանդիսանալը այսօր կրնայ անկարելի կամ դժուար թուիլ, սակայն ընթացքը կը շարունակուի եւ կրօնաբարոյական կենցաղը կամաց կամաց կրնայ որդեգրուիլ։

Աստուած սէր է Ա. Յովհաննէսի 4.7-21

Սիրելիներ, սիրե՛նք իրար,
Որովհետեւ սէրը Աստուծոյ պարգեւն է.
ուստի ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է
եւ զԱստուած կը ճանչնայ:
Իսկ ով որ չի սիրեր՝ զԱստուած չի ճանչնար,
որովհետեւ Աստուած սէր է:
Աստուծոյ սէրը հետեւեալ ձեւով
մեզի յայտնուեցաւ.-
Աստուած իր միածին Որդին ղրկեց աշխարհ,
Որպէսզի անով կեանք ունենանք:
Այս է ահա ճշմարիտ սէրը.
Ո՛չ թէ մենք սիրեցինք զԱստուած,
այլ Աստուած ինք սիրեց մեզ
եւ իր որդին ղրկեց
մեր մեղքերը քաւող իբր Զոհ:

Սիրելիներ, եթէ Աստուած այսպէս սիրեց մեզ, ապա ուրեմն մենք եւս պէտք է իրար սիրենք:

Ոեւէ մէկը բնաւ զԱստուած չէ տեսած: Եթէ իրար սիրենք, կը նշանակէ թէ Աստուած մեզի միացած կը մնայ: Ապացոյցը, թէ մենք Աստուծոյ միացած կը մնանք եւ Աստուած՝ մեզի, նոյնինքն իր Հոգին է, որ Աստուած մեզի տուաւ: Եւ մենք տեսանք ու կը վկայենք, թէ Հայրը իր Որդին ղրկեց, որպէսզի անիկա աշխարհի Փրկիչը ըլլայ: Ով որ կը դաւանի թէ Յիսուս Աստուծոյ Որդին է՝ Աստուծոյ միացած կը մնայ եւ Աստուած ալ անոր: Եւ մենք հաւատացինք ու ճանչցանք այն սէրը, որ Աստուած ունի մեզի հանդէպ:

Աստուած սէր է: Ով որ սիրոյ մէջ կը մնայ՝ անիկա Աստուծոյ միացած կը մնայ եւ Աստուած ալ՝ իրեն միացած: Եթէ Աստուծոյ հանդէպ սէրը այսպէս կատարեալ է մեր մէջ, դատաստանին օրը համարձակ կերպով կը կանգնինք Աստուծոյ դիմաց, որովհետեւ այս աշխարհի մէջ կ'ապրինք ճիշդ այնպէս, ինչպէս Քրիստոս ինք ապրեցաւ: Սէր ունեցողը վախ չունի, որովհետեւ կատարեալ սէրը ամէն վախ կը փարատէ: Արդարեւ վախը պատիժի հետ կապ ունի, եւ ով որ կը վախնայ՝ սիրոյ մէջ կատարեալ չէ:

Հետեւաբար՝ մենք սիրե՛նք զԱստուած, որովհետեւ նախ ինք մեզ սիրեց: Այն մարդը որ կ'ըսէ՝ «Ես կը սիրեմ զԱստուած», բայց իր եղբայրը կ'ատէ, ստախոս մըն է: Ով որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ, ի՞նչպէս կրնայ սիրել զԱստուած որ չի տեսներ: Միջոցաւ Քրիստոսի մեզի տուած պատուէրը սա է.- Ով որ զԱստուած կը սիրէ, պէտք է իր եղբայրն ալ սիրէ:

Համբարձում եւ Հոգեգալուստ

Հայաստանեայց եկեղեցին իր տօնացոյցի տնօրինական տօներուն կարգին տեղ մատուցած է Սուրբ Յարութեան յաջորդող երկու դէպքերու՝ Քրիստոսի համբարձման եւ Սուրբ Հոգիի գալստեան:

Համբարձման եւ հոգեգալստեան տօները թէեւ երկու տարբեր տօներ են, իրարմէ տասը օր հեռաւորութեամբ, սակայն կը մնան իրարու սերտօրէն կապուած երկու դրուագներ: Իսկապէս ալ, երբ համբարձաւ, Յիսուս արդէն իսկ յայտնեց թէ շուտով կու գար Սուրբ Հոգին, կամ Հոգեգալուստը:

Յարութիւն առնելէ ետք, Յիսուս աշխարհի վրայ մնաց քառասուն օրեր եւս: Այս օրերու ընթացքին, այն յայտնուեցաւ բազմաթիւ անձերու իբր ապացոյց թէ իսկապէս ան յարութիւն առնելով վերակենդանացաւ:

Չատիկէն 40 օրեր ետք, Յիսուս յայտնեց իր աշակերտներուն թէ կը վերադառնար իր Հօր մօտ՝ «Բայց հիմա կ'երթամ զիս ղրկողին մօտ...» ըսելով: Նոյն առթիւ, ան անմիջապէս յայտնեց թէ իր մեկնումէն ետք միայն Սուրբ Հոգին պիտի ընծայուէր աշակերտներուն, ու այդ հոգիով զօրացած անոնք պիտի սկսէին քարոզել Աստուծոյ մասին:

«**Ձեզի** համար լաւ է որ ես երթամ, որովհետեւ եթէ չերթամ՝ Միսիթարիչը պիտի չգայ ձեզի. իսկ եթէ ես երթամ՝ զայն պիտի ղրկեմ ձեզի:»

Յիսուս յարութիւն առնելէ ետք բազմաթիւ առիթներով երեցաւ աշխարհի երեսին, ինչպէս օրինակ Մարիամ Մագդաղենացիին ապա միատեղ խմբուած հինգ հարիւրէ աւելի հետեւորդներու:

«Յիսուս յարութիւն առնելէ ետք, Կիրակի առաւօտ կանուխ, նախ երեցաւ Մարիամ Մագդաղենացիին, որմէ ետքը չար ոգիներ դուրս հանած էր: Մարիամ գնաց իր ընկերակիցներուն պատմեց ասիկա, մինչ անոնք կը սգային ու կու լային: Սակայն անոնք չհաւատացին, երբ լսեցին թէ ողջ է եւ Մարիամ տեսեր է զայն:

Մարկոս 16.9



Գիտէի՞ր թէ...

Տէրունի կը կոչուին այն տօները որոնք կապուած են Յիսուսի յայտնութեան, կեանքին, հրաշագործութեանց, փրկչական գործունէութեան, խաչելութեան եւ յարութեան հանգրուաններուն հետ: Այս Տէրունի տօներու կարգին կ'անցնին այս տարուան Մայիս ամսուան ընթացքին յիշատակուող Համբարձումը եւ Հոգեգալուստը:

Համբարձման օրուան Վիճակը

Հարբարձման օրուան աւանդութիւններէն ամենէն աւելի ծանօթն ու ընդհանրացածը Վիճակի խաղն է: Ահա թէ ինչպէս կը նկարագրուի այդ աւանդութիւնը որ կը կոչուի նաեւ «Զանկիւլիւմ»:

Համբարձման նախորդող օրը, երիտասարդ աղջիկներ որոնք կը փափաքին իրենց ապագան գուշակել, յատկապէս ընտրուած ծաղիկներով կը զարդարեն խորունկ ջուրի աման մը ու անոր մէջ կը լեցնեն 7 տարբեր առուններէ եկած ջուր: Այդ ջրամանին մէջ, իւրաքանչիւր երիտասարդուհի մը նետէ իրեն պատկանող փոքրիկ անձնական առարկայ մը, ինչպէս մատանի կամ օղ: Այսպէս պատրաստուած ջրամանը կը տանին քահանային որպէսզի զայն օրհնէ: Ապա ջրամանը այսպէս զարդարուած ու լեցուն կը ձգեն լուսնի լոյսի տակ ամբողջ գիշերը: Յաջորդ առաւօտ, աղջիկները կը մեկնին դաշտ, երգով ու պարով: Իրենց հետ կը տանին նաեւ փոքրիկ աղջնակ մը, նախապէս ընտրուած ու զարդարուն հագուստներով հագցուած ու մազերը ծաղիկներով զարդարուած: Փոքրիկ աղջնակին աչքերը կը ծածկեն որպէսզի ան չտեսնէ ջրամանին մէջի առարկաները: Ու կը սկսի իրենց ապագայով հետաքրքրուած երիտասարդուհիներուն ամենէն սիրած խաղը՝ վիճակահանութիւնը, որով անոնցէ իւրաքանչիւրը պիտի գիտնար թէ ի՞նչ վերապահած է ապագան իրենց համար. բախտաւորութիւն թէ՛ դժբախտութիւն:

Ուրեմն, փոքրիկ աղջիկը ըստ բախտի ջրամանէն դուրս կը քաշէ հոն նետուած առարկաներէն մէկը, ու անոր տիրոջ համար կ'ընդերցուի տող մը որուն բովանդակութիւնը կը վերածուի իրեն վերագրուած բախտի:

Համբարձման առթիւ շարադրուած բախտագուշական այս տողերը իրենց կարգին գրական ոճ մը ստեղծած են կարծես: Ահա անոնցմէ օրինակներ. -

Անգուգական եար ես դուն,
Ակնաշող գոհար ես դուն.
Քեզ փնտռողը չի գտներ,
Բախտի ճամբով կու գաս դուն:

Բախտը երբ գրեց Աստուած,
Ճակտիս գիրն էր պահուած.
Հայրս գահ ալ տայ ինծի՝
Բախտս ճակտիս է գրուած:

Բերածս ընտիր նուշ է,
Լեզուդ մեղրէն անուշ է.
Եա՛ր, մենք իրար սիրեցինք,
Ո՛վ ինչ ըսէ՛ ա՛լ ուշ է:

Ալիւր մաղեցի, մաղս կախեցի,
Իմ ծնողքէս միշտ աղօթք լսեցի.
Կեանքիս ուրախ ու դառն օրերը
Ես ճակատագրիս վերագրեցի:

Յորեն խաշեմ ձաւարի,
Տունս տուին աւարի.
Հայուն տունը թալլողին
Ամբողջ կեանքը խաւարի:

Էջմիածին «Հոն ուր իջաւ Աստուծոյ միածին Որդին»



Էջմիածնի Մայր Տաճար



Էջմիածնի Ս. Հռիփսիմե Վանքը

Այս տարի, Մայիս ամսուան 29-րդ օրը կը տօնենք Սուրբ Էջմիածնի տօնը: Դժուար է անշուշտ Էջմիածնի մասին ամբողջական տեղեկություններ տալ ամփոփ ձևով, սակայն «Մաշտոցի Արձագանգ»-ի այս թիվը կը ներկայացնենք Էջմիածնի Մայր Տաճարին ծանոթներու կողմէ թելադրուած մի քանի ընդհանուր տեղեկություններ:

Նախքան Էջմիածին կոչուիլը, «հայկական Հոռմ» կամ «հայկական Երուսաղէմ» որակուած այս քաղաքը կոչուած է Վարդգեսաւան, Վաղարշապատ, Կայնեպոլիս, ապա նորէն Վաղարշապատ:

Էջմիածին կամ «Հոն ուր իջաւ Աստուծոյ միածին Որդին»

301 թուականին իսկ, Վաղարշապատը կը դառնայ հայ ժողովուրդի հոգեւոր մայրաքաղաք եւ սրբազան ուխտավայր: Ագաթանգեղոս պատմիչ կը հաստատէ թէ Գրիգոր Լուսաւորիչ տեսիլք մը կ'ունենայ ըստ որուն Քրիստոս երկնքէն կ'իջնէ եւ ձեռքի ոսկի մուրճով ցոյց կու տայ այն վայրը ուր պէտք էր կառուցել աղօթքի տուն: Կատարելով աստուածային այս ցուցմունքը, Գրիգոր Լուսաւորիչ, Տրդատ թագաւորի օրերուն եւ ժողովուրդի օգնութեամբ այդտեղ իսկ կը կառուցէ տաճար մը ու զայն կը կոչէ ԷԶՄԻԱԾԻՆ, հոն ուր իջաւ Աստուծոյ միածին Որդին:

Էջմիածնի Մայր տաճարը բազմաթիւ անգամներ քանդուած ապա վերակառուցուած է: Կ'ըսուի թէ Մայր տաճարը կանգնած է նոյն այդ վայրին վրայ ուր կը գտնուէր Սանդարամետի մեհեանը:

Մայր տաճարի շինութիւնը ամբողջացած է 301-303 թուականներուն ու 364-ին կը կործանուի պարսիկներու յարձակումներուն հետեւանքով: Ապա, 484-485 թուականներուն, ամբողջութեամբ կը վերակառուցուի Վահան Մամիկոնեանի օրով:



Լջմիածնի Ս. Գալանե վանքը



Յովնաթան Յովնաթանեան՝ «Նոյի զոհաբերութիւնը», Ալէքս եւ Մարի Մանուկեան գանձատուն, Լջմիածին

Լջմիածինը նստավայրն է Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ութսունական թուականներուն Մայր տաճարին միացուեցաւ Թանգարան մը, որ իր բարերարներու անունով կոչուեցաւ Ալէքս եւ Մարի Մանուկեան թանգարան: Ան կը պարփակէ 800-է աւելի եկեղեցական արուեստի բացառիկ արժէք ներկայացնող իրեր, ինչպէս գաւազաններ, գօտիներ, թագեր, վարագոյրներ, մատանիներ, գորգեր, գրամատեաններ, միւլոնի սափորներ, կաթսաներ, շուրջառներ եւայլն:

Յովնաթանեաններ...

Յովնաթանեան մականունը կը կրեն ճկարիչներու այն ընտանիքը որոնց անդամներէն շատերուն արուեստի կտորները կը զարդարեն Սուրբ Լջմիածնի մայր տաճարը ինչպէս նաեւ անոր կից թանգարանը:

Արուեստագէտներու այս տոհմի հիմնադիրն է Յովնաթանեան Յովնաթան: Անոր զաւակը՝ Մարգար, գրիչ եւ մանրանկարիչ էր: Կրտսեր որդին էր Նաղաշ: Մարգարի որդին՝ Հայրապետը գրիչ էր: Նաղաշի որդին՝ Նաղաշ Յակոբ՝ աշուղ, մանրանկարիչ եւ գեղանկարիչ էր: Նաղաշի միւս որդին, Յարութիւն եւս արուեստագէտ մըն էր:

Տոհմի յաջորդ սերունդի ներկայացուցիչ կը ճկատուի Մկրտում Յովնաթանեան որ դիմանկարիչ էր: Մկրտումի որդիները Յակոբ եւ Աղաթոն ամենէն աւելի ծանօթ են իբր դիմանկարիչներ:

Ծանոթացում Հայաստանի հետ Լոռիի մարզ



Լոռիի մարզը կը գտնուի հանրապետութեան հիւսիսը: Մարզին ամենէն աւելի ծանօթ յուշարձաններն են Օձունի տաճարը, ինչպէս նաեւ Հաղպատի եւ Սանահինի վանքերը



Լոռիի մարզի ամենէն աւելի նշանաւոր քաղաքներն են Սպիտակն ու Ստեփանաւանը: Մարզի կեդրոնն է Վանաձոր քաղաքը: Լոռիի մարզը 1988-էն ի վեր ճանչցուեցաւ իբր երկրաշարժէն ծանրօրէն տուժած շրջան, յատկապէս Սպիտակի կոտորումով եւ Վանաձորի ու Ստեփանաւանի կրած ծանր վնասներով:


Տեսարան Լոռիի մարզի Ստեփանաւան քաղաքէն



Հաղպատի վանքը

Սանահինն ու Հաղպատը 10-րդ դարին մեզի հասած շինություններ են: Հաղպատ կը նշանակէ «հսկայ պատ» իսկ Սանահին «միւսէն աւելի հին» հաւանաբար, բաղդատութիւն կատարելով Հաղպատի հետ: 1996 թուականին անոնք անցան Unesco World Heritage list-ին վրայ: Անոնք երկուքն ալ եղած են միջնադարեան Հայաստանի կրօնական եւ մշակութային ճանշցուած կեդրոններէն, ուր պահուած են, ուրիշ գանձերու կարգին, անհամար ձեռագրեր:

Սանահինի վանքը



Սանահինի այլ տեսարժան մէկ վայրն է նաեւ Միկոյեան եղբայրներու թանգարանը: Իրապէս ալ, Սանահինը ծննդավայրն է Միկ օգանաները շինող Արտեմ Միկոյեանի եւ անոր եղբոր՝ Անաստասի:

Աստուածաշունչի մայրեր

Աստուածաշունչի մէջ մայրերու հասցէին ակնարկները շատ են: Սուրբ Գիրքին մէջ մենք կը հանդիպինք մեծ թիւով մայրերու որոնցմէ մի քանին կը ներկայացնենք հոս:

Մարիամ՝ Յիսուսի մայրը



«Եղիսաբէթի յղութեան վեցերորդ ամսուն մէջ, Աստուած Գաբրիէլ հրեշտակը ղրկեց Գալիլիայի Նազարէթ քաղաքին մէջ ապրող կոյսի մը մօտ: Կոյսին անունը Մարիամ էր: Ան նշանուած էր Յովսէփ անունով մարդու մը հետ: Մարիամ աստուածավախ ու համեստ էր:

Հրեշտակը մօտենալով մարիամի, ըսաւ. «Ուրախացի՛ր, շնորհալի՛ կոյս, որովհետեւ բոլոր կիներէն Աստուած ընտրած եւ օրհնած է քեզ... Ահա դուն պիտի յղանաս եւ որդի մը պիտի ծնիս, եւ անոր անունը Յիսուս պիտի դնես»:

Սառա՝ Իսահակի մայրը

«Աստուած չէր մոռցած Աբրահամին եւ Սառային տուած իր խոստումը: Ան ըսած էր որ պիտի գայ ժամանակ, երբ Սառա զաւակ պիտի ունենայ: Այդպէս ալ եղաւ: Այցելուներուն ըսած ժամանակին Սառա զաւակ ունեցաւ: Հայրը՝ Աբրահամ իր տղուն անունը Իսահակ դրաւ:»

Եւա՝ Կայէնի եւ Աբելի մայրը

«Ադամ եւ Եւա դրախտէն արտաքսուելէ ետք, զաւակ մը ունեցան: Եւա զայն Կայէն կոչեց: Ապա, երկրորդ զաւակ մը ունեցան եւ զայն կոչեցին Աբել: Աբել ոչխարներու հովիւ եղաւ, իսկ Կայէն՝ հողը կը մշակէր:»

Եղիսաբէթ՝ Յովհաննէս մկրտիչի մայրը

«Օր մը, Զաքարիա Աստուծոյ տաճարին մէջ կը խնկարկէր, իսկ ժողովուրդը դուրսը կ'աղօթէր: Յանկարծ խունկի սեղանին մօտ անոր երեւցաւ Աստուծոյ հրեշտակը: Հրեշտակը կանգնած էր սեղանին աջ կողմը: Երբ Զաքարիա տեսաւ հրեշտակը, շփոթեցաւ ու վախցաւ: Հրեշտակը Զաքարիային ըսաւ. «Մի՛ վախճար, Աստուած լսեց աղօթքդ: Քու կինդ՝ Եղիսաբէթը որդի մը պիտի ծնի: Անոր անունը Յովհաննէս պիտի դնես: Ան քեզ շատ պիտի ուրախացնէ: Ան գինի եւ օղի պիտի չխմէ ու տակաւին չծնած՝ Սուրբ Հոգիով պիտի լեցուի եւ Իսրայէլի ժողովուրդէն շատերը դէպի Աստուած պիտի դարձնէ:»




Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն

Համբարձում Յիսուս աշակերտներէն կը բաժնուի



Բնաւ պէտք ունեցա՞ծ էք ձեզի սիրելի
անձէ մը բաժնուիլ:
Ես Պետրոսն եմ, եւ ես ստիպուեցայ
Յիսուսին ցտեսութիւն ըսել:

Քառասուն օրեր անցած էին
Յիսուսի յարութենէն, այդ
ժամանակամիջոցին Յիսուս
մեզի շատ բաներ ըսած էր
Աստուծոյ մասին, ան նաեւ
մեզի պատմած էր
պատահելիք դէպքերու
մասին: Ապա ժամանակը
եկաւ որ Յիսուս հեռանայ
մեզմէ:



Օր մը մնացեալ աշակերտներն ու ես Յիսուսի հետ Երուսաղէմ կը գտնուէինք, ան մեզի ըսաւ հոն սպասել Հօր խոստումը:



Ապա Յիսուս սկսաւ բարձրանալ դէպի երկինք, Ան կը վերադառնար իր տունը, իր Հօր մօտ, անոր բարձրանալը դիտեցինք եւ շուտով Ան ամպերուն մէջ կորսուեցաւ:

Ո՛վ Գալիլեացիներ», յանկարծ ծայն մը լսուեցաւ, երկու հրեշտակներ էին ճերմակ հագած : «Ինչո՞ւ կեցած դէպի երկինք կը նայիք» հարցուցին մեզի: «Նոյն Յիսուսը որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսաք»:



Մօտիկ բարեկամ մը ունէ՞իր որ ուրիշ քաղաք փոխադրուեցաւ: Նեղու՞ած էիր իրմէ բաժնուելուդ համար: Պետրոսն ու միւս աշակերտները նեղուած էին որովհետեւ անոնք Յիսուսէն բաժնուեցան: Բայց Յիսուս խոստացաւ որ նորէն պիտի վերադառնայ օր մը: Ան իր բոլոր ընկերները հետը դրախտ պիտի տանի:



Համբառնալ ըսել է դէպի վեր բարձրանալ: Յիսուսի վերադարձը դէպի Աստուած կը կոչուի նաեւ համբարձում որովհետեւ ան դէպի երկինք բարձրացաւ:

Մտածէ՛
ասոր
մասին

Հաւատացեալներուն տրուած գեղեցիկ խոստումը այն է որ օր մը Յիսուս պիտի գայ ու մեզի իր հետ Դրախտ բարձրացնէ:

Պահուած բառ

փ	ն	ա	կ	ա	ն	օ	ր	կ
ա	ա	հ	ա	ն	թ	ա	ն	կ
ն	կ	ն	յ	ա	օ	ն	ա	ա
ա	ա	ա	ք	վ	ն	ն	ւ	ձ
բ	ծ	է	ս	ա	ա	ա	տ	ր
ա	ա	ա	կ	մ	ա	ր	դ	ա
ն	ր	լ	ա	ն	ա	յ	ժ	մ
ե	ե	ժ	ա	մ	կ	ն	չ	ա
լ	ն	ե	ր	ն	դ	գ	ա	հ
ա	լ	ե	ն	ց	ա	բ	ր	ս



Փառաբանել
սրբացնել
անժամանակ
ժամկոչ
կայք
ծէս
այժմ
մարդ
մոմավառ
ներող
փառք
գահ
համարձակ
կանոն
ներածական
կրօնական
թանկ
անօթ

պահուած բառը 7 գիր

Նախորդ պահուած բառը՝ ԵՂԵՌՆ

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ կը մկրտէ Տրդատ
թագաւորը եւ Հայ իշխանները**

Երանի՜ այն ազգին, որուն Աստուածը Տէրը ի՛նքն է
Սաղմոս ԼԲ(33), 12

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Յիսուսի Համբարձումը

Ամբողջացո՛ւր ըստ Ղուկասի Աւետարանին 24.45-53

զօրութիւն, Սուրբ Գրքերը, բարձրանալով, յարութիւն, Բեթանիա, ուրախութեամբ

Յետոյ անոնց միտքերը բացաւ, որպէսզի հասկնան
-----, եւ ըսաւ անոնց.

- Գրուած է, որ Քրիստոս այսպէս պէտք էր չարչարուէր եւ երեք օր
ետք -----առնէր. անոր անունով ապաշխարութիւն եւ
մեղքերու թողութիւն պէտք էր քարոզուէր բոլոր ժողովուրդներուն՝
Երուսաղէմէն սկսեալ: Դուք այս բոլորին վկան էք: Եւ ահա ես ձեզի
պիտի ղրկեմ Հօրս տուած խոստումը: Մնացէ՛ք Երուսաղէմի մէջ, մինչեւ
երկինքէն ----- ստանաք:

Ապա տարաւ զանոնք մինչեւ ----- եւ ձեռքերը վեր
բարձրացնելով՝ օրհնեց զանոնք: Եւ մինչ կ'օրհնէր, բաժնուեցաւ անոնցմէ,
դէպի երկինք -----: Անոնք երկրպագեցին Յիսուսի եւ մեծ
----- վերադարձան Երուսաղէմ: Ամէն օր տաճարին
մէջ էին՝ գովելով ու օրհնաբանելով զԱստուած:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1. Յիսուս իր յարութենէն քանի՞ օր ետք երկինք բարձրացաւ:

- ա. Ութ
- բ. Քառասուն
- գ. Երեք
- դ. Յիսուն

2. Յիսուսի երկինք բարձրանալը ի՞նչ կը կոչուի:

3. Յիսուսի երկինք բարձրանալէն ետք քանի՞ հրեշտակներ երեւցան:

- ա. Երկու
- բ. Երեք
- գ. Չորս
- դ. Չերօ

4. Ի՞նչ կը կոչուի Համբարձումէն 10 օր ետք եկող Կիրակին:

5. «Հոն ուր իջաւ Աստուծոյ միածին Որդին» կը կոչուի

6. Այս տարի մեր Կիրակնօրեայ Դպրոցին քանի՞երրորդ ամեակն է:

- ա. 80
- բ. 90
- գ. 75
- դ. 25

7. Ի՞նչ է Յիսուսի առաքեալին անունը որ «Մ» գիրով կը սկսի:

Մ-----

8. Ի՞նչ են Յիսուսի երկու առաքեալներուն անունները որոնք «Թ» գիրով կը սկսին:

Թ-----

Թ-----

9. Ամբողջացո՛ւր:

- ա. ----- Յիսուսի մայրն է
- բ. ----- Իսահակի մայրն է
- գ. ----- Կայէնի եւ Աբելի մայրն է
- դ. ----- Յովհաննէս Մկրտիչի մայրն է

10. Հայաստանի ո՞ր մարզին մէջ կը գտնուին Հաղպատի եւ Սանահինի վանքերը:

- ա. Լոռի
- բ. Արարատեան
- գ. Արմաւիր
- դ. Ծիրակ

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1. Ո՞ր քաղաքն է Հայաստանի Լոռի մարզի կեդրոնը:

ա.- Վանաձոր

բ.- Ստեփանաւան

գ.- Սպիտակ

դ.- Սեւան

2. Ի՞նչ կը կոչուի Համբարձումին յաջորդող Կիրակին:

ա.- Կրկնազատիկ

բ.- Հոգեգալուստ

գ.- Երկրորդ Ծաղկազարդ

դ.- Տօն երեւման Ս. Խաչի

3. Յիսուսի յարութենէն քանի՞ օր ետք Պենտեկոստէ կը կոչուի:

ա. Հինգ

բ. Յիսուն

գ. Քառասուն

դ. Երեք

4. Յիսուսի յարութենէն քանի՞ օր ետք Հոգեգալուստը կը տօնենք:

ա. Հինգ

բ. Յիսուն

գ. Քառասուն

դ. Երեք

5. Հայաստանի ո՞ր մարզին մէջ կը գտնուի Օձունի տաճարը:

ա. Լոռի

բ. Արարատեան

գ. Արմաւիր

դ. Ծիրակ

6. - Երբ տեղի ունեցաւ Սպիտակ Քաղաքին երկրաշարժը

ա. 7 Դեկտեմբեր 1988

բ. 7 Դեկտեմբեր 1968

գ. 7 Դեկտեմբեր 1918

դ. 7 Դեկտեմբեր 1998

7.- Ո՞վ է Մխիթարիչը զոր Յիսուս խոստացաւ ղրկել իր Համբարձումէն ետք:

8. Ո՞ր կը կարդանք Հոգեգալուստին մասին:

ա.- Մատթէոսի Աւետարան

բ.- Մարկոսի Աւետարան

գ.- Յովհաննէսի Աւետարան

դ.- Առաքեալներուն Գործերը

9. Ե՞րբ էր Էջմիածնի Մայր տաճարին շինութեան ամբողջացումին 1700 ամեակը:

ա. 2003

բ. 2001

գ. 1999

դ. 1991

10. Ո՞ր աւետարանիչը գրեց Առաքեալներուն Գործերը գիրքը:

ա.- Ս. Մատթէոս Աւետարանիչ

բ.- Ս. Մարկոս Աւետարանիչ

գ.- Ս. Յովհաննէս Աւետարանիչ

դ.- Ս. Դուկաս Աւետարանիչ

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1. Վանաձոր քաղաքը Հայաստանի ո՞ր մարզին կեդրոնն է:

- ա.- Արարատեան
- բ.- Լոռի
- գ.- Արմաւիր
- դ.- Թիրակ

2. Ո՞րն է շիտակ շարքը հետեւեալ Կիրակիներուն:

- ա.- Երկրորդ Ծաղկազարդ, Հոգեգալուստ, Յիշատակ Եղիա մարգարէին, Տօն Ա. Էջմիածնի
- բ.- Երկրորդ Ծաղկազարդ, Տօն Ա. Էջմիածնի, Հոգեգալուստ, Յիշատակ Եղիա մարգարէին
- գ.- Երկրորդ Ծաղկազարդ, Յիշատակ Եղիա մարգարէին, Տօն Ա. Էջմիածնի, Հոգեգալուստ
- դ.- Հոգեգալուստ, Երկրորդ Ծաղկազարդ, Տօն Ա. Էջմիածնի, Յիշատակ Եղիա մարգարէին

3. Ա. Էջմիածնի տօնին նախորդող Երկուշաբթին տօնն է:

4. Ա. Էջմիածնի տօնին նախորդող Երեքշաբթին տօնն է:

5.- Նոր Կտակարանի 27 գիրքերէն որ գիրքին մէջ կը կարդանք Հոգեգալուստին մասին:

6. Սուրբ Հոգին ի՞նչ ձեւով հանգչեցաւ առաքեալներուն վրայ:

7. Առաքեալները ի՞նչպէս որոշեցին թէ ո՞վ պիտի փոխարինէ Յուդան:

Աղօթեցին եւ -----
ձգեցին:

8. Ո՞վ փոխարինեց Յուդան:

- ա. Մատաթիա
- բ. Բարսաբա
- գ. Յովսէփ
- դ. Արդար

9. Այս տարի երբ է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Ելն ի Վիրապէն տօնին յիշատակը:

10. Ի՞նչ տօն է է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Ելն ի Վիրապին յաջորդող Օրը:

Ապրիլ ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ

Պատասխաններ

Մանկապարտեզի անկիւն

Բանտարկութենէն, Աւետարանը,
ապաշխարեցէք, ձկնորսներ, մարդու,
անմիջապէս, Յովհաննէսը, ուռկանները,
հետեւեցան

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. Մէկշաբթի
2. գ. Երեք
3. ք. Պետրոս
4. ա. Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ
5. ա. 1915
6. ք. 90
7. ա. Յովհաննէս Մկրտիչ
8. ա. Զաքարիա
9. ք. Եղիսաբէթ
10. ա. Ամէն

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ա. Կիւմրի
2. դ. Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ,
Կանաչ Կիրակի կամ աշխարհամատրան,
Կարմիր Կիրակի
3. գ. Երեք
4. Յիսուս Քրիստոսը, Զոհը
5. Ակն, Բուն, Թագ, Թել, Թել
6. Յովհաննէս Մկրտիչ
7. Զարեմ Եպիսկոպոս Ազնաւորեան
8. գ. Յովհաննէս Մկրտիչ
9. Անանիա
10. 40, Հինգշաբթի

Երկրորդականի անկիւն

1. դ. Ծիրակ
2. դ. Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ,
Կանաչ Կիրակի կամ աշխարհամատրան,
Կարմիր Կիրակի
3. ա. Հինգ
4. Յովհաննէսի Յայտնութիւնը
5. Տիմոթէոս Ա., Տիմոթէոս Բ., Տիտոս,
Փիլիմոն
6. Յովհաննէս Մկրտիչ
7. Ղուկաս Աւետարանիչ, Ղուկասի

Աւետարանից

8. ա. Յակոբոս (1)
բ. Պետրոս (2)
գ. Յովհաննէս (3)
դ. Յուդա (1)
9. Պետրոսի
10. Յովհաննէսի Աւետարան 3.16

Մասնակցողներ

Մանկապարտեզ

Ճեսիքա Մաթէոսեան

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան,
Յուլեր Անթեպեան, Անդրանիկ
Նասոյեան, Յակոբ Գէպթանճեան

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

Դաւար Գէպթանճեան, Արազ
Գէպթանճեան, Մհեր Մաթէոսեան,
Նարեկ Նասոյեան, Ծանթ Փարդիտեան,
Նազարեան Քրիստոսափոր
Անսխալ պատասխանողներ
Առէն Պապիկեան, , Ալէք
Կարապետեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գօգօ Մատթէոսեան, Հրայր
Մատթէոսեան, Արի Միրզայեան,
Ճօրճ Արմաղանեան, Պետիկ
Նազարեան, Լորա Սարիմանուկեան,
Ռիթա Գօճեան, Մարիա Դանիէլեան,
Ժան-Յակոբ Զուխանճեան, Հրակ
Նարեկեան, Անի Մելեքեան, Թամար
Պուքեան, Քրիստինա Կարապետեան:

Երկրորդականի անկիւն

Կարօ Կարապետեան, Յովիկ
Կարապետեան, Փօլ Գիզիրեան:

Կարճ Լուրեր

Կիրակնօրեայ Դպրոցի Հանդես 12 Յունիս 2005, կեսօրէ ետք Ժամը 1:30ին Բասդրմանեան Սրահ

Մուտքը ազատ

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝

Շաղիկ Պոյանեան

Աշխատակիցներ՝

Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխանեան,
Գարուին Գէպթանեան, Նիկոլ Դանիէլեան եւ
Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան
Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ
կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

*Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը. –
Ոսուցիչներ՝ Վերժին Գէպթանեան, Սալբի Բակլաեան, Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխանեան, Վերա
Կարապետեան, Գարուին Գէպթանեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան,
Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Շաղիկ Պոյանեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆՔ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ
Սուրբ Յակոբ, Մոնթրէալ
1980 - 2005

Ամսակ
25

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 10

Յունիս 2005

Կիր.	Բ2.	Գ2.	Դ2.	Ե2.	Ուր.	Շբ.
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30		



4	Ս. Մեծն Ներսէս Հայրապետ
7	Ս. Կոստանդին Կայսր եւ իր մայրը Ս. Հեղինէ
11	Ս. Գրիգոր Լուսաւորիչ «Գիւտ ճշխարաց»
16	Սուրբ թարգմանիչներ «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ»
18	Ս. Տրդատ Թագաւոր եւ Աշխէն թագուհի
25	Քրիստոսի Տասներկու Սուրբ Առաքեալներ եւ Պօղոս տասներեքերորդ Առաքեալը
26	Բարեկենդան Վարդավառի Պահքի

Տեսարան Սեւանայ լիճի կղզիէն եւ անոր վրայ կառուցուած վանքերէն

Այս տարուան վերջին թիւով...

Ծանօթացումը Հայաստանի Հանրապետութեան Գեղարքունիքի մարզին հետ

Աստուածաշունչը պատմուած փոքրիկներուն.- Կաղին բուժումը

Մայիս ամսուան պատասխաններ եւ մասնակցողներ

Կարճ լուրեր կիրակնօրեայէն

Սէր՝ առանց կեղծիքի. ասելով չարը՝ յարիլ բարիին. եղբայրասիրութեան մէջ, իրարու հանդէպս գթասիրտ. պատուելու մէջ՝ առաջ նետուիլ. ջանասիրութեան մէջ չըլլալ վեհերոտ. հոգիով եռացէք. Տիրոջ ծառայեցէք. յոյսով ուրախացէք. նեղութեան համբերեցէք. ստէպ աղօթեցէք. հաղորդակից եղէք սուրբերու կարիքներուն. հետամուտ եղէք հիւրասիրութեան:

Ծանոթացում Հայաստանի հետ Գեղարքունիքի մարզ



Գեղարքունիքի մարզը կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան Արեւելեան մասին մէջ եւ կ'ընդգրկէ Սեւանայ լճի ջրաւազանը: Անոր ծանօթ քաղաքներէն են Մարտունի, Ճամբարակ, Սեւան: Գիւղերէն ամենէն մեծն է Վարդենիկ Գիւղը, իսկ մարզի կեդրոնն է Գաւառ քաղաքը:

Մարզի ծանօթ վայրերէն մէկն է Նորատուս Գիւղը ուր պահպանուած են տարբեր տարբեր դարաշրջաններէ հասած յուշարձաններ: Գիւղի կեդրոնը կը բարձրանայ Սուրբ Աստուածածին եկեղեցին, կառուցուած 9-րդ դարու վերջը: Նորատուսի մէկ այլ ծանօթ վայրն է ճաւել Նորատուսի ընթարցակ գերեզմանոցը, ուր տեղադրուած են 13-րդ մինչեւ 17-րդ դարու բազմաթիւ խաչքարեր:



Գիտէի՞ր թէ...

Սեւանայ լճի կղզին այժմ... թերակղզի մըն է: Իսկապէս ալ, ճախքան Սեւանայ լճի մակարդակին ցածնալը կղզի էր ան, իսկ այժմ՝ ջուրի մակարդակի նուազման հետեւանքով՝ թերակղզի:

Կղզիին վրայ 8-րդ դարուն հաստատուած վանականները կառուցած են երկու վանքեր, ինչպէս ճաւել խուցեր եւ այլ օժանդակ շինութիւններ: Այս երեքէն պահպանուած են երկու վանքերի Սուրբ Առաքելոյ եւ Սուրբ Աստուածածին, երկուքն ալ կառուցուած 871 թուականին:



Սեւանայ լիճ


Սեւանայ լիճը կը գտնուի շուրջ 1900 մետր բարձրութեան վրայ: Այսպիսով ան կը նկատուի աշխարհի երկրորդ ամենէն բարձր դիրքի վրայ գտնուող լիճը: Ան կը կոչուի նաեւ Գեղամայ կամ Գեղարքունեաց ծով: Քաղցրահամ լիճ է որուն մէջ կը թափին շուրջ 28 գետեր ու գետակներ որոնցմէ ամենէն աւելի մեծերն են Զկնագետը, Վարդենիկը, Կարճաղբոյրը, Մասրիկը: Իսկ այդ լիճէն ծնունդ կ'առնէ բոլորին ծանօթ Հրազդան գետը:

Սեւանայ լիճին մէջ կ'աճի Իշխանաձուկը, Կողակը եւ սիգը որոնք շատ համեղ են

Սեւանայ թերակղզիին վրայ կը գտնուի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցը որ հիմնուած է 1990 ին:

Տրդատի Դուռը

Էջմիածնի մայր տաճարէն դէպի վեհարան գացող ճամբւն վրայ կը գտնուի կամառաձեւ Տրդատի Դուռը: Մեծն Տրդատ թագաւոր 301 թուականին այս տեղէն յայտարարեւ է թէ Հայաստան որպէս պետական կրօն կէ ճանչնայ Քրիստոնէութիւնը: Եւ այս դուռը իր անունով կը կառուցուի: Այս տարի Ս. Տրդատ թագաւոր եւ Աշխէն թագունիի տօնը կը յիշատակենք Յունիս 18 ին:



Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն

Կաղ անձ մը բժշկուեցաւ




Բարեւ: Ես Յովհաննէսն եմ: Պետրոսը եւ ես Յիսուսի առաքեալներէն էինք: Երկար ատեն իրար հետ եղած ենք եւ միասին էինք երբ իմացանք որ Յիսուս մեռելներէն յարութիւն առեր էր: Յիսուսի դրախտ երթալէն ետք, Պետրոս եւ ես շատերու Իր մասին կը խօսէինք: Կ'ուզեմ ձեզի պատմել թէ ինչ պատահեցաւ օր մը:

Պետրոս եւ ես տաճար կ'երթայինք աղօթելու: Երբ մօտեցանք, տեսանք որ մարդ մը գետինը գորգի մը վրայ պառկած էր: Ան ծնած օրէն կաղ էր: Ամէն օր կը պառկէր տաճարի մուտքին եւ անցորդներէն ողորմութիւն կը խնդրէր:





Երբ կաղը մեզ տեսաւ,
մեզմէ ալ բան մը խնդրեց:
Պետրոս անոր նայեցաւ ու
ըսաւ՝ «Արժաթ եւ ոսկի
չունիմ, բայց ինչ որ ունիմ՝
քեզի կուտամ: Յիսուսի
Քրիստոսի անունով կ'ըսեմ
քեզի՝ ոտքի ել ու քալէ»:




Ան քաշեց կաղին աջ ձեռքէն եւ
կանգնեցուց զայն: Կաղին ոտքերը
զօրացան, ան տեղէն վեր ցատկեց ու
կեանքին առաջին անգամ ըլլալով
սկսաւ քալել: Կաղը ցատկուտելով մեր
հետ տաճար մտաւ, աղօթեց ու
զԱստուած օրհնաբանեց:

Նոր կտակարանի ժամանակներուն անդամալուծ մարդիկը
զիրենք փոխադրող անիւով աթոռներ չունէին, այլ անոնց
բարեկամները իրենց կը գրկէին եւ կը տանէին իրենց
ուզած տեղը:

Երբ Պետրոս կը բուժէր մարդոց, կ'ըսէր «Յիսուս
Քրիստոսի անունով»: Ան կ'ուզէր որ մարդիկ գիտնան որ
Յիսուսն էր զիրենք բժշկողը: Առանց Յիսուսի ուժին
Պետրոս պիտի չի կրնար բժշկել:

Մարդիկ այս հրաշքը տեսնելով զարմացան: Պետրոս ըսավ անոնց «Ինչո՞ւ կը զարմանաք ու ապշած մեզի կը նայիք, կը կարծեք որ մենք մե՞ր զօրութեամբ այս մարդուն քալել տուինք: Ո՛չ: Յիսուս ինք բժշկեց այս մարդը, որ դուք կը տեսնէք եւ կը ճանչնաք, որովհետեւ ան Յիսուսի անուան կը հաւատար: Հաւատքն էր որ այս մարդուն առաջնութիւն տուաւ: Ապաշխարեցէք եւ հաւատացէք Յիսուսի, որպէսզի ձեր մեղքերն ալ ջնջուին:» Այդ օրը շատ մարդիկ սկսան հաւատալ Յիսուսի:



**Մտածէ՛
ասոր
մասին**

Կաղ մարդը Յովհաննէսէն եւ Պետրոսէն դրամ ուզեց: Երեւակայեցէք որչափ զարմացաւ ան երբ անոնք փոխանակ իրեն դրամ տալու զինք բժշկեցին: Երբ Աստուծմէ բան մը կը խնդրենք, Ան երբեմն մեր ուզածէն շատ աւելին կուտայ:

Մայիս ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ Պատասխաններ

Մանկապարտէզի անկիւն

Սուրբ Գրքերը, յարութիւն, զօրութիւն,
Բեթանիա, բարձրանալով, ուրախութեամբ

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. Բ. Քառասուն
2. Համբարձում
3. ա. Երկու
4. Հոգեգալուստ
5. Էջմիածին
6. դ. 25
7. Մատթէոս
8. Թաղէոս, Թովմաս
9. ա. Մարիամ, Բ. Սառա, գ. Եւա, դ. Եղիսաբէթ
10. ա. Լոռի

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ա. Վանաձոր
2. գ. Երկրորդ Ծաղկազարդի
3. Բ. Յիսուն
4. Բ. Յիսուն
5. ա. Լոռի
6. ա. 7 Դեկտեմբեր 1988
7. Սուրբ Հոգին
8. դ. Առաքեալներուն Գործերը
9. ա. 2003
10. դ. Ս. Ղուկաս Աւետարանիչ

Երկրորդականի անկիւն

1. Բ. Լոռի
2. ա. Երկրորդ Ծաղկազարդ, Հոգեգալուստ, Յիշատակ Եղիա մարգարէին, Տօն Սուրբ Էջմիածնի
3. Ս. Հռիփսիմէ
4. Ս. Գայիանէ
5. Առաքեալներուն Գործերը
6. Հրեղէն լեզուներու
7. Վիճակ
8. ա. Մատաթիա
9. Մայիս 28
10. Տօն Ս. Էջմիածնի

Մասնակցողներ

Մանկապարտէզ

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան,
Յուլեր Անթեպեան, Ճեսիքա
Մաթէոսեան

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

Արագ Գաբթանճեան, Մհեր
Մաթէոսեան

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Դալար
Գաբթանճեան, Ալեք Կարապետեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գօգօ Մատթէոսեան, Հրայր
Մատթէոսեան, Արի Միրզայեան,
Ճօրճ Արմաղանեան, Պետիկ
Նազարեան, Լորա Սարիմանուկեան,
Ռիթա Գօճեան, Մարիա Դանիէլեան,
Ժան-Յակոբ Չուխաճեան, Հրակ
Նարեկեան, Անի Մելեքեան, Թամար
Պուքեան, Քրիստինա Կարապետեան:

Երկրորդականի անկիւն

Կարօ Կարապետեան, Յովիկ
Կարապետեան, Փօլ Գիզիրեան:

ՄԱՇՏՈՑԻ ԱՐԶԱԳԱՆԳ

ԺԲ. Տարի

Խմբագրական Կազմ

Խմբագիր՝
Աշխատակիցներ՝

Շաղիկ Պոյաճեան
Յասմիկ Նաճարեան
Գարուլ Գաբթանճեան
Երան Լոշխաճեան
Շողիկ Նաճարեան
Նիկոլ Դանիէլեան
Թորոս Պապիկեան

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐԶԱԳԱՆԳ»ը Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք

www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն

«Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի
կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու
Աւետարանի հատուածները...

*Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը.-*

*Ուսուցիչներ՝ Վերժին Գէպթանճեան, Սալբի Բակլաեան, Յասմիկ
Նաճարեան, Երան Լոշխաճեան, Վերա Կարապետեան, Գարուլին
Գէպթանճեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ
Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ
Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Շաղիկ Պոյաճեան:*